# Լավագույն փորձի ուղեցույց Բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի համար

ԵԱՀԿ

ԵԱՀԿ

Եվրոպայում Անվփանգության և Համագործակցության Կազմակերպությունը (ԵԱՀԿ) համաեվրոպական անվփանգության մարմին է, որի 55 մասնակից պեփությունները սփռված են Վանկուվերից մինչև Վլադիվոսփոկ ընկած աշխարհագրական փարածքում: Միացյալ Ազգերի Կանոնադրության VIII-րդ Գլխով որպես փարածաշրջանային կազմակերպություն, ԵԱՀԿ-ն հանդիսանում է իր փարածքում նախորոք փեղեկացման, հակամարփությունների կանխարգելման, ճգնաժամերի կառավարման և հակամարփություններին հեփևող վերակառուցման առաջնային գործիք: ԵԱՀԿ ուշադրության կիզակեփում են անվփանգությանն առնչվող մի շարք հիմնախնդիրները, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, սպառազինության վերահսկումը, վսփահության և անվփանգության ձևավորման միջոցառումները, ազգային փոքրամասնությունները, դեմոկրափացումը, հասարակական կարգի պահմամանն առնչվող ռազմավարությունները, հակա-ահաբեկչությունը, ինչպես նաև փնփեսական և բնապահպանական գործունեությունը:

Սույն հրապարակության մեջ օգփագործված նյութերը ներկայացվում են միայն ի գիփություն: Չնայած սույն հրապարակության բովանդակության ճշգրփության և ամբողջականության ապահովման նպապակով ԵԱՀԿ կողմից գործադրված բոլոր ջանքերի՝ ներկայացված փեսակեփներն, բացահայփումները, մեկնաբանություններն և եզրակացությունները պափկանում են հեղինակներին և նյութեր փրամադրողներին և պարփադիր չէ որ արփահայփեն ԵԱՀԿ և դրա մասնակից երկրների պաշփոնական դիրքորոշումը: ԵԱՀԿ-ն չի ընդունի սույն հրապարակությունում զեփեղված փեղեկափվության վրա հիմնվելու արդյունքում կրած վնասների նկափմամբ ցանկացած փեսակի պափասխանափվություն:

Դիմել: Մամուլի և Հանրային Տեղեկափվության Բաժին

ԵԱՀԿ Քարփուղարություն

Կաերփներ Ռինգ 5-7

Ա-1010 Վիեննա, Ավսփրիա

Հեռ.: +43 1 514 36 180

Էլ-Փոսփ: info@osce.org

և 2006 Եվրոպայում Անվփանգության և Համագործակցության Կազմակերպություն (ԵԱՀԿ); www.osce.og

ISBN-10: 3-9502218-0-8

ISBN-13: 978-3-9502218-0-0

Բոլոր իրավունքները պաշփպանված են: Սույն հրապարակությունը ամբողջությամբ կամ դրա մի մասը առանձին չի կարող արփափպվել, փեղակայվել փեղեկափվության փնփրման որևէ համակարգում, կամ փոխանցվել ցանկացած ձևով կամ եղանակով. (ներառյալ էլեկփրոնային, մեխանիկական, բազմացման, ձայնագրման) առանց հրապարակողի նախնական գրավոր թույլփվության:

# Բովանդակություն


6 *Նախաբան*

8 *Երախտիքի խոսք*

10 *Ներդիրների, աղյուսակների և գծապատկերների ցուցակ*

11 *Ներածություն*

12 Նախապատմություն

12 Ո՞րն է Ուղեցույցի առանձնահատկությունը

13 Մեթոդաբանություն

13 Ինչպես օգտագործել Ուղեցույցը

14 Համառոտագիր

18 *Գլուխ 1. Բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի կարևորությունը*

19 Ի՞նչ է «գործարար և ներդրումային միջավայրը»

19 Բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի կարևորությունը

20 Անբարենպաստ գործարար միջավայրի բացասական հետևանքները

20 ՕՈւՆ-ների կարևորությունը

21 Իռլանդիայի փնտեսական հրաշքը

26 Եզրահանգումներ և առաջարկներ

28 *Գլուխ 2. Ներդրումային բարենպաստ միջավայրի համար որոշիչ է գործարարության նպաստող քաղաքական և իրավական միջավայրը*

29 Մաղաքական միջավայրի կարևորությունը և հիմնական պայմանները

29 Անվտանգություն

30 Ներդրողների իրավունքների պաշտպանություն և երաշխավորում

31 Օրենսդրական կայունություն

33 Թափանցելիություն

35 Կաշառակերություն

40 Պատշաճ կառավարում

42 Եզրահանգումներ և առաջարկներ

44 *Գլուխ 3. Գործարար և ներդրումային միջավայրի համար մակրոտնտեսական կայունության ու տնտեսական աճն ապահովող քաղաքականությունների կարևորությունը*

45 Կայուն մակրոտնտեսական միջավայրի կարևորությունը

45 Կորպորատիվ ներդրողների կողմից կիրառվող մակրոտնտեսական ցուցանիշներ

50 Փակ և բաց տնտեսությունները

50 Արդյունահանող ոլորտների վրա ստեղծված տնտեսությունների բազմակողմանի զարգացման կարևորությունը

53 Մակրոտնտեսական կայուն միջավայրի ստեղծում

54 Եզրահանգումներ և առաջարկներ

56 *Գլուխ 4. Կառավարության ձեռնարկած միջոցառումներն ու քաղաքականությունները ուղղված գործարար միջավայրի բարելավմանը*

57 Գործարար միջավայրի բարելավում

57 Հարկային քաղաքականություն

61 Զբաղվածության քաղաքականություն և աշխատանքի շուկայի ճկունություն

63 ԵԱՀԿ երկրներում աշխատուժի շուկայում տեղի ունեցած բարեփոխումները

63 Ներդրումներն ենթակառուցվածքում

68 Ներդրումներ մարդկային կապիտալի մեջ

69 Միջազգային և տարածաշրջանային ինտեգրում

72 Պետական սեփականությամբ ընկերությունների մասնավորեցում

76 Առաջարկներ

*80* *Գլուխ 5. Տնտեսական զարգացման համար օրենսդրության և նորմատիվ-իրավական կարգավորման կարևորությունը*

81 Մասնավոր սեփականության իրավունքներն ու ազատությունները

81 Պաշտպանություն առանց փոխհատուցման բռնագանձման դեպքերից

83 Գույքի բիզնես հնարավորությունների նկատմամբ իրավունքների կանոնակարգում և քայքայում

86 Անշարժ գույք

89 Պայմանագրային իրավունքներ և ազատություններ

90 Ձեռնարկատիրական գործունեության իրականացման ձևերը

91 Կորպորատիվ կառավարում

94 Անձնական գույք և պաշտպանված գործարքներ

95 Սնանկության մասին օրենսդրություն

97 Կապիտալ շուկաներ

98 Բանկային օրենսդրություն և քաղաքականություն

99 Շահույթների և կապիտալի փոխանցում

101 Արտարժութային կարգավորում

101 Մրցակցային օրենսդրություն և քաղաքականություն

104 Մտավոր սեփականության և էլեկտրոնային առևտրի վերաբերյալ օրենսդրություն

110 Պետական գնումներ

112 Օրենքի կիրառում և մասնավոր իրավունքների պաշտպանություն

115 Երկկողմ ներդրումային համաձայնագրեր

117 Եզրահանգումներ և առաջարկություններ

126 *Գլուխ 6. Ներդրումների խթանում*

127 Ներդրումների խթանում

127 Ներդրումների խթանման գործակալություններ (ՆԽԳ-ներ)

133 Ներդրումային խթաններ

134 Ֆիսկալ արտոնություններ

136 Կարիքավոր գոտիներ

137 Ազատ գոտիներ/հատուկ տնտեսական գոտիներ (ՀՏԳ-ներ)

137 Արդյունաբերական պարկեր

142 Ներդրումային երաշխիքներ և ապահովագրություն քաղաքական ռիսկից

144 Եզրահանգումներ և առաջարկություններ

| | |
|---|---|
| 146 | *Գլուխ 7. Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ների) զարգացում և խթանում* |
| 147 | ՓՄՁ զարգացման կարևորությունը |
| 147 | ՓՄՁ-ների տնտեսական ազդեցությունը |
| 149 | ՓՄՁ-ների նվազող ազդեցությունը շնորհիվ ստվերային տնտեսության |
| 149 | ՓՄՁ-ների ներուժի ապահովում բարեփոխված գործարար միջավայրի միջոցով |
| 151 | ՓՄՁ օժանդակող քաղաքականության դաշտի ստեղծում |
| 152 | ՓՄՁ-ների բեռի նվազեցում |
| 153 | ՓՄՁ-ներին հատուկ խոչընդոտների վերացման միջոցառումներ |
| 154 | ՓՄՁ զարգացման պետական աջակցության ծրագրի ձևավարում |
| 154 | ՓՄՁ-ների հարկային արտոնություններ |
| 155 | ՓՄՁ-ների համար ձեռնարկատիրական մշակույթի և մարդկային կապիտալի զարգացում |
| 156 | ՓՄՁ-ների ֆինանսավորման խոչընդոտնենը |
| 157 | Ֆինանսավորման այլընտրանքային մեխանիզմներ |
| 160 | Ձեռնարկությունների օժանդակման ծառայությունների նկատմամբ հասանելիություն |
| 165 | Շուկաների հասանելիություն և կլաստերների զարգացում |
| 168 | Եզրահանգումներ և առաջարկություններ |
| 170 | *Գլուխ 8. Առավել բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի հաստատում և ամրապնդում* |
| 171 | Կայուն զարգացում |
| 171 | Շրջակա միջավայրի պաշտպանություն |
| 173 | Սոցիալական զարգացում |
| 173 | Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն (ՄՍՊ) |
| 175 | ԿՍՊ և պետական հատված |
| 175 | Ոլորտային վարքագծի կանոններ |
| 176 | ԿՍՊ. տնտեսական հիմնավորում |
| 178 | Եզրահանգումներ և առաջարկություններ |
| 181 | ***Հավելված*** |
| 185 | ***Օգտագործված գրականության ցանկ*** |
| 195 | ***Բառարան*** |
| 201 | ***Հապավումների ցանկ*** |

# Նախաբան

Ուրախ եմ Ձեր ուշադրությանը ներկայացնել ԵԱՆԿ-ի *«Լավագույն փորձի ուղեցույցը բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի համար»*: Սույն Ուղեցույցը մշակվել է ներդրումների ներգրավման և փոքր ու միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման բնագավառում տեղեկատվության հասանելիության և լավագույն փորձի փոխանակման գործում Կազմակերպության առավել դերակատարության վերաբերյալ ԵԱՆԿ մասնակից պետությունների կողմից ներկայացված պահանջին ի կատարումն:

Անվտանգության համապարփակ իր կոնցեպցիային ամբողջական համահունչությամբ, ԵԱՆԿ-ն տեսնում է բարենպաստ ներդրումային միջավայրի կայացմանն աջակցության ցուցաբերումը որպես տնտեսական և բնապահպանական ուղղությունում իր աշխատանքների համար կարևորագույն գերակայություն: ԵԱՆԿ բազմաթիվ երկրներում, և որը հատկապես կարևոր է ԵԱՆԿ տեսանկյունից՝ զարգացող և անցումային տնտեսություններում, օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈւՆ) հանդիսանում են արտաքին ֆինանսավորման խոշորագույն աղբյուրը: ՕՈւՆ-ները ունեն ներուժ ստեղծել աշխատատեղեր, բարձրացնել արտադրողականությունը, փոխանցել հմտություններ և տեխնոլոգիաներ (ինչը անշուշտ բարենպաստ է անդրադառնում արտահանման ծավալների վրա), ինչպես նաև նպաստում են երկարատև տնտեսական զարգացմանը: ՕՈւՆ ներգրավման համար նախագծված արդյունավետ ներդրումային քաղաքականությունները խրախուսում են տեղական ներդրումներ և զարգացնում ՓՄՁ ոլորտը՝ ստեղծելով լրջագույն նախադրյալներ կայուն տնտեսական աճի ապահովման համար:

Ուղեցույցը ներկայացնում է հիմնական սկզբունքներն ու լավագույն փորձը կենտրոնանալով ԵԱՆԿ այն անդամ պետությունների վրա, որոնք վերջին տարիներին գործարար միջավայրի բարելավման և տնտեսական զարգացման կատարելագործման բնագավառում նշանակալից ձեռքբերումներ են արձանագրել: Առաջատարների լավագույն փորձի ուսումնասիրությունը անգնահատելի կլինի դրանց օրինակին հետևել ցանկացող այլ երկրների համար:

Ուղեցույցը քննարկում է բարենպաստ և դինամիկ գործարար և ներդրումային միջավայրի համար կրիտիկական նախադրյալները: համահունչ և կայուն քաղաքական, տնտեսական, օրենսդրական և վարչական միջավայրը, որն ուղեկցվում է պատշաճ կառավարմամբ, թափանցելիությամբ, կանխատեսելիությամբ և տնտեսության ազատականությամբ: Այն նույնպես շեշտում է այնպիսի հիմնարար քաղաքականության շրջանակի կարևորությունը, որն վերաբերում է մրցակցությանը, սեփականաշնորհմանը, հարկային և մաքսային վարչարարությանը, աշխատանքային իրավահարաբերություններին, կրթությանը, ֆինանսական համակարգին և ֆիզիկական ենթակառուցվածքին: Առանձին գլուխ է նվիրված «օրենքներին և կարգավորմանը», քանի որ սույն ոլորտը կրիտիկական է ձեռնարկատիրական և ներդրումային գործունեության իրականացման համար բարենպաստ միջավայրի կայացման տեսանկյունից: Քննարկված հիմնախնդիրների շրջանակում են գույքային և պայմանագրային իրավունքները, ազգայնացման նկատմամբ պաշտպանությունը, կորպորատիվ կառավարումը, շահույթների փոխանցումը և սնանկության օրենսդրությունը:

Ուղեցույցը անդրադառնում է նաև ՓՄՁ համապատասխան քաղաքականություններին, ինչպիսիք են՝ ֆինանսական ռեսուրսների, շուկաների, տեխնոլոգիաների, փորձի, ինչպես նաև համապատասխան ձեռնարկատիրության օժանդակման ծառայությունների հասանելիությունը: Վերջում, Ուղեցույցը ուշադրություն է հրավիրում կայուն զարգացման կարևորության վրա, ընդգծելով, որ անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձվի սոցիալական և բնապահպանական հիմնախնդիրներին, եթե իրականացվող քաղաքականությունների արդյունքում նախատեսվում է հասնել համաչափ երկարաժամկետ զարգացմանը:

Անկեղծ հույս ունեմ, որ սույն Ուղեցույցը օգտակար գործիք կլինի իրենց երկրներում գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված նոր քաղաքականությունների, ռազմավարությունների և կառույցների նախագծման և զարգացման նպատակ հետապնդող քաղաքականություն մշակողների և իրականացնողների համար: Ես նև հուսով եմ, որ այս նախաձեռնությունը կոգեշնչի հետագա քննարկումներ և համագործակցություն ուղղված բարենպաստ ներդրումային և գործարար միջավայրի կայացման միջոցով տնտեսական զարգացման առաջընթացին, ոչ միայն ԵԱՀԿ մասնակից երկրների միջև, այլ նաև ազգային իշխանությունների ու հիմնական այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ:



ԵԱՀԿ Տնտեսական և Բնապահպանական

Գործունեության Համակարգող

# Երախտիքի խոսք

ԵԱՀԿ-ն ցանկանում է հուսռուկ շնորհակալություն հայտնել սույն Ուղեցույցը մշակող փորձագետների թիմին՝ **Պրն Բարրի Կոլոդկինին**, Խմբի ղեկավար և ներդրումների գծով ավագ խորհրդատու; **Տկն Օլգա Մորեվային**, Փոքր և Միջին Ձեռնարկությունների գծով խորհրդատու; և **Պրն Շոն Սալլիվանին**, օրենսդրության և իրավունքի հարցերով խորհրդատու:

ԵԱՀԿ-ն նույնպես երախտապարտ է Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպությանը, Միացյան Ազգերի Առևտրի և Զարգացման Համաժողովին, Միգրացիայի Միջազգային Կազմակերպությանը, Միացյալ Ազգերի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովին, և Եվրոպական Հանձնաժողովին: Նմանապես շնորհակալություն է հայտնվում հետևյալ անհատներին, որոնք նպաստել են Ուղեցույցի մշակման աշխատանքներին՝ նյութերի տրամադրման և կարծիքների հայտնման միջոցով:

**Արտաքին փորձագետներ:**

- **Սոֆիյա Այսագալիևվա**, Գործադիր Տնօրեն, Ղազախստանի Գործարարների Միություն;
- **Նիկո Օրվելաշվիլի**, Տնտեսական Գլխավոր Փորձագետ, Վրաստանի Տնտեսական Զարգացման Ինստիտուտ;
- **Նիկոլայ Պլատոնով**, Ծառայությունների և Ներդրումների բաժնի պետի տեղակալ, Առևտրային Բանակցությունների Վարչություն, Ռուսաստանի Դաշնության Տնտեսական Զարգացման և Առևտրի նախարարություն;
- **Ջոնաթան Կոպպել**, Ավագ տնտեսագետ, Ներդրումների բաժանմունք, Ֆինանսական և Ձեռնարկատիրական հարցերով վարչություն, ՏՀԶԿ;
- **Անտոնիո Ֆանելլի**, Կառավարիչ, Հարավ-Արևելյան Եվրոպայի Ներդրումային Համաձայնագիր, ՏՀԶԿ;
- **Կալման Կալոտայ**, Ներդրումների, Տեխնոլոգիաների և Ձեռնարկությունների Զարգացման բաժանմունք, ՄԱԱԶՀ:

**ԵԱՀԿ:**

- **Նինա Լինդրոս-Կոպոլո**, Ծրագրերի Կրտսեր Համակարգող և Ծրագրի Ղեկավար, ԵԱՀԿ Տնտեսական և Բնապահպանական Գործունեության Համակարգողի գրասենյակ;
- **Ալեքսեյ Ստուկալո**, Փոխհամակարգող, ԵԱՀԿ Տնտեսական և Բնապահպանական Գործունեության Համակարգողի գրասենյակ;
- **Սերգեյ Ռունյակ**, Տնտեսական Զարգացման Մասնագետ, Ուկրաինայում ԵԱՀԿ Ծրագրերի Համակարգողի գրասենյակ;
- **Տիգրան Սուքիասյան**, Ավագ Տնտեսական Խորհրդատու, ԵԱՀԿ Երևանյան Գրասենյակ;
- **Ինա Ջուրասին**, պրակտիկանտ, ԵԱՀԿ Տնտեսական և Բնապահպանական Գործունեության Համակարգողի գրասենյակ:

ԵԱՀԿ-ն շնորհակալություն է հայտնում Ուղեցույցի հարցաշարը լրացրած բոլոր հետևյալ կազմակերպություններին՝ Մալթայի, Սլովակիայի, Սլովենիայի, Ղրղզստանի, Ղազախստանի, Ալբանիայի, Մոնտենեգրոյի, Մակեդոնիայի Ներդրումների խթանման և զարգացման գործակալություններին; Տաջիկիստանում ՄՖԿ-ի և Եվրասիա հիմնադրամի գրասենյակներին, Լիտվական Զարգացման գործակալությանը, ՄՖԿ Ռուսաստանյան գրասենյակին; Ռուսաստանի ՓՄՁ Տեղեկատվական կենտրոնին; Ղազախստանի Արտաքին գործերի նախարարությանը; Եվրասիա հիմնադրամի Ղազախստանի ներկայացուցչությանը, Արևմտյան Ղազախստանի ՓՄՁ Աջակցության հիմնադրամին; Ղազախստանի ՓՄՁ Ասոցիացիային; Սլովակիայի ՓՄՁ Զարգացման ազգային գործակալությանը, Բաց հասարակության վրացական հիմնադրամին; Վրաստանի ՎՁԵԲ ԲԽԾ Ծրագրին; Եվրասիա հիմնադրամի ներկայացչությանը Վրաստանում; Եվրասիա հիմնադրամի ներկայացչությանը Ղրղզստանում; և մի շարք այլ անկախ փորձագետներին:

ԵԱՀԿ-ն նույնպես ցանկանում է շնորհակալություն հայտնել Ջոն Նիկոլսոնին Ուղեցույցի խմբագրման համար:

Սույն ծրագիրը ֆինանսական օժանդակություն է ստացել ԵԱՀԿ-ում Բելգիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների պատվիրակությունների կողմից:

# Ներդիրների ցանկ


1.1 Տնտեսական առաջընթացը Բալթյան երկրներում. Կրկնօրինակման հնարավորություն դեպի արևելք

2.1 Էստոնիայի առաջընթացը դատական անկախ համակարգի կայացման ուղղությամբ
2.2 Ադրբեջանում կաշառակերության դեմ ձեռնարկված քայլերը

3.1 ԵԱՀԿ երկրներում բաց զարգացող և անցումային տնտեսությունների ձևավորում. Արևելյան Ասիայի թ՞Ե Լատինական Ամերիկայի մոդել
3.2 Թուրքիայում վերջերս արձանագրված մակրոտնտեսական հաջողությունները
3.3 Ղազախստանի ջանքերն ուղղված տնտեսության բազմակողմանի զարգացմանը

4.1 Գործարար միջավայրի ազդեցությունն ընկերությունների վրա
4.2 Մաքսային վարչարարության կանոնակարգումը պետական միջոցների խելամիտ ներդրում է
4.3 Տրանսպորտի, որպես 2006 թվականի առանցքային խնդրի ԵԱՀԿ կողմից արված շեշտադրումը
4.4 Ճանապարհային ենթակառուցվածքը Հունգարիայում
4.5 Ներդրումային համաձայնագրեր

5.1 Առևտրային և արդյունաբերական օգտագործման համար հողի սակավության հաղթահարում
5.2 ԵԱՀԿ ընտրված երկրներում եկամտի և կապիտալի վերադարձման լիբերալ քաղաքականություններ
5.3 Էլեկտրոնային գնումների համակարգը Ռումինիայում

6.1 Չեխինվեստ. Արևելյան Եվրոպայի առաջատար ՆԽԳ
6.2 Ուկրաինայում միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումների տարածաշրջանային խթանում
6.3 Քաղաքային ձեռնարկությունների գոտիները Միացյալ նահանգներում
6.4 Էգեյան ազատ գոտու փորձերը. Ազատ գոտիների զարգացման առումով
6.5 Քաղաք Նյու Յորքում շահագրգիռ կողմերի ընդգրկումն, որպես լավագույն փորձ
6.6 Արդյունաբերական պարկերը Չեխիայի հանրապետությունում և Հունգարիայում
6.7 Արդյունաբերական պարկերը Ռումինիայում և Սերբիայում
6.8 ՆԲԵԳ -ը Մոսկվայում

7.1 ՓՄՁ քաղաքականությունը Ղազախստանում
7.2 ԵԱՀԿ աջակցությունն ուղղված Թուրքմենիստանի գյուղացիական ասոցիացիաներին
7.3 Դրամական փոխանցումների կապակցում ռիսկային կապիտալ ՓՄՁ-ների համար: Սիլիկոն Հայաստանի օրինակ
7.4 Բիզնես օժանդակման կենտրոնների օրինակներ
7.5 Հայաստանի Գորիս քաղաքում բիզնես ինկուբատորի ծրագրի մեկնարկ
7.6 Միացյալ թագավորության Օքսֆորդ քաղաքում գործող նորարարական կենտրոններ
7.7 Փոքր նորարարական կազմեկերպություններին աջակցության Ռուսական հիմնադրամ (ՓՆԿԱՌՀ)
7.8 Անդրազգային ընկերություններն ու ՓՄՁ-ները Ռուսաստանում
7.9 ՓՄՁ կլաստերները Ուկրաինայում

8.1 Բնապահպանական ներդրումների հնարավորությունները Ռուսաստանում
8.2 Միավորված ազգերի Գլոբալ համաձայնագրի սկզբունքները
8.3 Սոցիալական պատասխանատվության ՓՄՁ օրինակ. Թուրքիա

# Գծապատկերների և աղյուսակների ցուցակ


| | |
|---|---|
| Գծապատկեր 2.1 | Ընկերությունների եկամտից փրվող կաշառքների մասնաբաժինը |
| Գծապատկեր 4.1 | ՕՈւՆ աճը ԱՀԿ անդամակցությունից հետո, Բուլղարիա |
| Գծապատկեր 4.2 | ՕՈւՆ աճը ԱՀԿ անդամակցությունից հետո, Էստոնիա |
| Գծապատկեր 7.1 | Աղքատության հաղթահարման ծանապարհների ընկալումը |
| Գծապատկեր 7.2 | Զբաղվածության և ՀՆԱ մեջ մասնաբաժին |
| Գծապատկեր 7.3 | ՓՄՁ հասանելիության պահանջները |
| Գծապատկեր 7.4 | Տարեկան վարչական ծախսերը մեկ աշխատակցի կտրվածքով |

| | |
|---|---|
| Աղյուսակ 1.1 | 2004 թ.-ին ԵԱՀԿ անդամ երկրների առաջին փասնյակը. ՕՈւՆ ներհոսքի ծավալները, որպես տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ (միլիոն ԱՄՆ դոլար) |
| Աղյուսակ 2.1 | Թրանսփարենսի Ինթերնեյշնլ կազմակերպության Կաշառակերության ընկալման ցուցանիշի 2005 թվականի տվյալները մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի հինգ ամենաբարձր և ամենացածր ծավալներ ունեցող ԵԱՀԿ անդամ երկրներում |
| Աղյուսակ 5.1 | Պայմանագրերի կատարման ապահովումը Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի ու կենտրոնական Ասիայի երկրներում |
| Աղյուսակ 7.1 | Զարգացած երկրներում ՓՄՁ-ների զարգացման և խթանման հիմնական ցուցանիշները |
| Աղյուսակ 7.2 | Անցումային տնտեսություններում ՓՄՁ զարգացվածության միջին ցուցանիշը |
| Աղյուսակ 7.3 | Բիզնես օժանդակող կենտրոնների կողմից մատուցվող տիպային ծառայություններ |



# Ներածություն

«Մենք գիտակցում ենք, որ գործարար միջավայրի բարեփոխումը դոնորների և կառավարությունների համար հանդիսանում է համաշխարհային զարգացման օրակարգի առավել կարևորագույն ոլորտը:»

Փոքր և Միջին Ձեռնարկությունների Զարգացման հարցերով դոնոր կազմակերպությունների Համաժողով.
Գործարար Միջավայրի բարեփոխմանը նվիրված միջազգային համաժողով.
Կահիրե, 29 Նոյեմբեր - 1 Դեկտեմբեր 2005թ.: «Համաժողովի Արդյունքները»:

## Նախապատմություն

2004թ.-ին Բուլղարական նախագահության ներքո, ԵԱՀԿ-ն հատուկ ուշադրություն է դարձրել տնտեսական զարգացման և համագործակցության համար ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունների ձևավորման հիմանndրին: Առաջնային ուշադրություն է դարձվել օտարերկրյա և տեղական ներդրումների խրախուսմանը, Փոքր և Միջին Ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտի զարգացմանը, և մարդկային կապիտալի հզորացմանը: ԵԱՀԿ 12րդ Տնտեսական Վեհաժողովի և Դուբլինում կայացած Նախապատրաստական Սեմինարի ընթացքում քննարկվեց ներդրումների ներգրավման և ՓՄՁ ոլորտի զարգացման նպատակ հետապնդող երկրների համար բարենպաստ գործարար միջավայրի ձևավորման կարևորությունը: Համաձայնություն ձեռք բերվեց, որ բարենպաստ գործարար միջավայրի համար հիմնական նախադրյալներ են հանդիսանում՝ տարածաշրջանային անվտանգությունն ու համագործակցությունը, խելամիտ տնտեսական քաղաքականության վրա խարսխված մակրոտնտեսական կայունությունը, պատշաճ կառավարումն ու օրենքի գերակայությունը, բավարար ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունները, և վերջապես զարգացած ֆինանսական և ֆիզիկական ենթակառուցվածքի առկայությունը: Խրախուսում ստացավ բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրերին օժանդակության ցուցաբերման ուղղությամբ իշխանությունների և քաղաքականություն մշակողների հետ համատեղ ԵԱՀԿ կողմից տարվող աշխատանքի շրջանակների ակտիվացումն ու ընդլայնումը՝ հատկապես ներդրումային և ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար բարենպաստ իրավաօրենսդրական և ինստիտուցիոնալ միջավայրի զարգացմանն աջակցության ցուցաբերման, ձեռնարկատիրության զարգացման (ՓՄՁ զարգացումը մասնավորապես) խրախուսմանը միտված պատշաճ կառավարման եղանակների և լավագույն փորձի կիրառման, ինչպես նաև պետություններում աջակցության ենթակառուցվածքի համակարգի կայացման միջոցով: Լավագույն փորձի կիրառումն խրախուսող և դրա մասին տեղեկատվության փոխանակմանը նպաստող սույն Ուղեցույցի մշակման վերաբերյալ ԵԱՀԿ կողմից որոշման կայացումը հանդիսացավ Վեհաժողովի առաջարկությունների և Տնտեսական ու Բնապահպանական Գործունեության մասին ԵԱՀԿ Ռազմավարական Փաստաթղթի արդյունքը: Մինչդեռ առկա են գործարար և ներդրումային միջավայրերի բարելավմանն նվիրված բազմաթիվ հրատարակություններ, սույն Ուղեցույցը նախատեսվում է օգտագործել որպես ԵԱՀԿ անդամ զարգացող և անցումային տնտեսությունների առանձնահատուկ կարիքներին նպատակաուղղված գործնական փաստաթուղթ:

## Ինչո՞վ է տարբերվում Ուղեցույցը

Ուղեցույցը տարբերվում է, օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈւՆ), փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) զարգացման, ձեռնարկատիրական միջավայրի զարգացման բնագավառում հայտնի, սույն ոլորտներում նշանակալից փորձ, ռեսուրսներ և փորձագիտություն կուտակած կառույցների կողմից մշակված փաստաթղթերից: Այդ կազմակերպություններն են՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ), Համաշխարհային բանկը, Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ), Օտարերկրյա ներդրումների խորհրդատվական ծառայությունը (ՕՆԽԾ), Բազմակողմանի ներդրումների երաշխավորման գործակալությունը (ԲՆԵԳ), Միավորված ազգերի Առևտրի և զարգացման համաժողովը, և Միավորված ազգերի Արդյունաբերական զարգացման կազմակերպությունը: Առաջատար փորձագետների կողմից կատարված աշխատանքի կրկնօրինակման փոխարեն Ուղեցույցը, օգտագործելով հիշատակված կազմակերպությունների կողմից մշակված հիմնական գաղաբարներն ու մոտեցումները, ԵԱՀԿ մասնակից պետություններին ուշադրությանն է առաջարկում իր հաջողությունը ապացուցած լավագույն փորձը; նպատակը կայանում է հստակ և գործնական եղանակով քաղաքականություն մշակողներին ներկայացնել հիմնական մոտեցումներն ու լավագույն փորձը: Ուղեցույցի առանձնահատկություններն են նաև՝

1. Ուշադրության կենտրոնում են ԵԱՀԿ մասնակից պետությունների, և մասնավորապես Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) տնտեսությունները;

2. Իր բնույթով տեխնիկական լինելու փոխարեն այն կենտրոնանում է գործնական առաջարկությունների վրա, որոնք իրենց էությամբ ընկալելի են ոչ միայն փորձագետների ու գիտնականների, այլ նաև քաղաքականություն մշակողների, պաշտոնյաների և կարծիք ձևավորողների համար;

3. Ուղղակիորեն ցուցումներ տալու փոխարեն, այն քաղաքականության ուղեցույց է առաջարկում գործարար միջավայրի բարելավման և տնտեսության զարգացման բնագավառում վերջին տարիներին նշանակալից նվաճումներ արձանագրած ԵԱՀԿ մասնակից պետությունների լավագույն փորձի օրինակներից:

## Մեթոդաբանություն

Տնտեսական զարգացման մասին բազմաթիվ աշխատություններ առանձնացված են դիտարկում ՕՈւՆ խթանումը և ՓՄՁ խրախուսումը զարգացումը: ՕՈւՆ և ՓՄՁ զարգացումը դեռևս տնտեսական աճի և աշխատատեղերի ստեղծման երկու, փոխադարձ աջակից և առավելագույնս նշանակալից խթաններից են, և հակառակը՝ գործարար և ներդրումային միջավայրերի բարելավումը ստեղծում է ՕՈւՆ նոր հոսքեր և նպաստում է ՓՄՁ զարգացմանը: Ահա թե ինչու Ուղեցույցում դիտարկվում ինչպես ՕՈւՆ այնպես էլ ՓՄՁ զարգացումը:

Ուղեցույցի մշակումը համակարգվել է ԵԱՀԿ Տնտեսական և Բնապահպանական Գործունեության Համակարգողի Գրասենյակի կողմից: Ուղեցույցի պատրաստման վրա աշխատող փորձագիտական խումբը ուսումնասիրել է գործարար և ներդրումային միջավայրի բարելավման վերաբերյալ առաջավոր բազմակողմանի և դոնոր կազմակերպությունների կողմից հրապարակված գրականությունը: Ուղեցույցի քննարկման և տեսակետների փոխանակման նպատակով այցելություններ են իրականացվել ՏՀԶԿ, Եվրոպական Հանձնաժողով, ՄԱԱԶՀ և ՄԱԱԶԿ: Կատարված հետազոտությունների շրջանակում թիմի կողմից առաջնային տեղեկատվություն է հավաքագրվել ներդրումներ խրախուսող գործակալություններին, ՓՄՁ գործակալություններին, և Արևելյան ու Հարավ-Արևելյան Եվրոպայում, Անդրկովկասում և Միջին Ասիայում ԵԱՀԿ ներկայացուցչություններին հարցաշարերի տարածման միջոցով: Նախնական տարբերակը քննարկման է ներկայացվել 2006թ-ի Մարտին Վիեննայում կայացած ԱՊՀ և Միջին Ասիայի երկրների փորձագետներից բաղկացած հանձնաժողովին: Ի լրումն, նախագիծը ներկայացվել է արտաքին գրախոսներին: Ներկայացված կարծիքների զգալի մասը արտացոլված է Ուղեցույցի հավելվածում:

## Ինչպես օգտագործել Ուղեցույցը

Ուղեցույցի նպատակն է աջակցել պետություններին, մասնավորապես ԵԱՀԿ տարածաշրջանի, մշակելու ներդրումային և գործարար միջավայրերի բարելավմանը միտված նոր մոտեցումներ: Այն հատկապես կազմվել է քաղաքականություն մշակողների և գործարար ու ներդրումային համայնքներում ակտիվ մասնակիցների կողմից օգտագործման համար, և իր մեջ պարունակում է ԵԱՀԿ մասնակից պետություններից քաղված արդյունավետ, նորարարական քաղաքականություններ և լավագույն փորձի վերլուծություն: Գործարար միջավայրի համար բարենպաստ միջոցառումների տեխնիկական հիմնավորման վրա կենտրոնանալու փոխարեն, Ուղեցույցը ներկայացնում է առաջարկություններ, երկրների օրինակներ, ինչպես նաև աղբյուրներ՝ ընթերցողներին շահագրգռելու և խնդրի վերաբերյալ սեփական հետազոտություններ կատարելու համար անհրաժեշտ մեխանիզմներ տրամադրելու նպատակով:

Ուղեցույցը ընդերծելիս անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ գոյություն չունի ներդրումների ներգրավման միասնական մոդել. յուրաքանչյուր պետությունը պետք է մշակի իր սեփական ռազմավարությունը՝ հիմնված իր առանձնահատուկ նախադրյալների ու միջավայրի, ինչպես նաև ձևավորված իր կարիքների ու ռեսուրսների վրա: Ուղեցույցում արված համեմատությունները նպատակ չեն հետապնդել գովաբանելու բարենպաստ գործարար միջավայր ունեցող երկրներին և քննադատել չունեցողներին: Զգտումը կայա-

նում է ամրապնդել գործարար և ներդրումա-յին միջավայրերի նշանակալիության գիտակ-ցությունը, և շեշտադրել որ միջավայրի բա-րելավման ցանկություն ունեցող երկիրը կա-րող է նպաստել իր տնտեսական բարգավաճ-մանը:

2006թ.-ի Մայիսին Ուղեցույցի պաշտոնա-կան ներկայացումից հետո առաջարկվեց կազմակերպել մասնագիտացված ազգային և/կամ միջազգային սեմինարներ՝ շահագրգիռ երկրներում քաղաքականություն մշակողնե-րին և իրականացնողներին Ուղեցույցի առանձին ոլորների առավել մանրամասն քննարկման հնարավորության ընձեռնման նպատակով:

Նպատակը կլինի աջակցել սեմինարների մասնակիցներին ոչ միայն ծանոթանալ այլ երկրներում իրականացված արդյունավետ փորձին, այլ նաև քննարկել թե ինչպես Ուղե-ցույցում ներկայացված կոնկրետ քաղաքա-կանությունները կարող են տեղայնացվել կամ զարգացվել իրենց երկրների տնտեսական իրավիճակի առանձնահատուկպայմաններին համապատասխանելու, ինչպես նաև գործա-րար և ներդրումային միջավայրների համար բարենպաստ հիմնական միջոցառումները բացահայտելու նպատակով:

Ուղեցույցը և համապատասխան սեմի-նարները կօգնեն նաև բազմաթիվ ազգային իշխանությունների և այլ շահագրգիռ կողմե-րի միջև հետագա երկխոսությունների և բա-նակցությունների համար հիմքի ստեղծմանը, ինչպես նաև ուղղակիորեն կնպաստեն ԵԱՀԿ անդամ պետությունների միջև ներդրումների խրախուսման և ձեռնարկատիրության զար-գացման արդյունավետ (և ոչ այնքան) քաղա-քականությունների և փորձի վերաբերյալ տե-ղեկատվության փոխանակմանը:

## Համառոտագիր

Սույն ներածական գլխին հաջորդող Գլուխ 1-ը ներկայացնում է ցանկացած երկրում գոր-ծարար և ներդրումային միջավայրի կարևո-րությունը, ուշադրություն դրաձնելով այն հանգամանքի վրա, որ առավելագույնս արագ տեմպերով գործարար միջավայրը բարելա-վող ԵԱՀԿ անդամ պետությունները (հատկա-պես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներ) վերջին տարիների ընթացքում ար-ձանագրել են ՕՈւՆ և ՀՆԱ աճի առավել բարձր մակարդակներ: Շեշտվում է տնտեսա-կան զարգացման գործում ՕՈւՆ-ների ունե-ցած դերը, ինչպես նաև զարգացող տնտեսու-թյամբ երկրներում ՕՈւՆ-ների հնարավորու-թյունները: 2004 թ-ին ՕՈւՆ-ների համաշխար-հային ներհոսքի 42%-ը իրականացվել է զար-գացող երկրներ: ՕՈւՆ և տնտեսական աճի տեմպերը ավելացնել ցանկացող զարգացող երկրները կարող են դասեր քաղալ Իռլան-դիայի տնտեսական հրաշքից, որի դեպքում առևտրի ազատականացումը, արդար և պարզ հարկային համակարգը, պետական և մասնա-վոր հատվածների երկխոսությունը, ենթակա-ռուցվածքի զարգացումը, և նպատակաուղղ-ված ներդրումային քաղաքականությունը նպաստեցին Իռլանդիայի, որպես Եվրոպա-յում առավելագույնս դինամիկ տնտեսությամբ երկրի կայացմանը: Մերձբալթյան պետու-թյուններում իրականացված քաղաքականու-թյուններն ու ծրագրերը նույնպես օգտակար օրինակներ են տրամադրում: Գլուխը ավարտ-վում է դիտարկմամբ, որ կառավարություննե-րի դերը կայանում է ոչ թե տնտեսության կա-ռավարման կամ շուկայական գործընթացներ ներխուժման, այլ բարենպաստ գործարար միջավայրի ապահովման միջոցով ձեռնար-կություններին բարգավաճման հնարավորու-թյան ընձեռնման մեջ: Սա հատկապես կարևոր է բնական պաշարների սակավու-թյուն ունեցող երկրների համար: Գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը հանդիսանում է առկա լավագույն տարբերա-կը, և եթե կառավարությունն ունի քաղաքա-կան կամք, ապա դա կարող է ավարտի հասց-վել:

Գլուխ 2-ը քննարկում է կայուն քաղա-քական միջավայրի կարևորությունը ՕՈւՆ ներգրավման և ձեռնարկությունների զար-գացման գործում: Ներդրողներին հիասթա-փեցնում են անվտանգության և կայունության մասին մտահոգությունները, և ողեշնչում՝ թա-փանցելիության մեծացումը և պատճաչ կա-ռավարումը: Գլխում դիտարկվում են նաև ներդրողների իրավունքների պաշտպանու-թյան և օրենսդրական կայունության ավելաց-ման մի շարք մեխանիզմներ:

Յուրաքանչյուր դիտարկվող երկիր պո-տենցիալ ներդրողներին պետք է ապահովի

կանխատեսելիության և անվտանգության զգացում: Գլխում բացահայտվում է ներդրումների և ձեռնարկատիրության վրա կաշառակերության բացասական ազդեցությունը և քննարկվում են այդ երևույթի դեմ պայքարի եղանակները՝ ներառյալ Կաշառակերության դեմ Պայքարի Լավագույն Փորձեր ԵԱՀԿ Ուղեցույցում առաջարկվածները:

3-րդ Գլխում դիտարկվում է ներդրողների կողմից առաջադրվող հաջորդ պահանջը, որը խրախուսող մակրոտնտեսական միջավայրի առկայությունն է: Մակրոտնտեսական կայունությունը և ՀՆԱ աճը հանդիսանում են ներդրումային հոսքերի ավելացման հիմնական նախապայմամմերը: Ուղեցույցում քնարկվում է Արևելյան Ասիայի պետությունների մեծամասնության կողմից ընդունված տնտեսական ազատականացման և «բաց» տնտեսության մոդելի առավելությունները՝ Լատինական Ամերիկայի որոշ երկրների կողմից ընդունված առավել փակ մոդելի համեմատությամբ: Թուրքիայի կողմից իրականացված տնտեսության ազատականացումը հանդիսանում է մակրոտնտեսական քաղաքականության լավագույն փորձերից մեկի ցայտուն օրինակ: Գլուխը ավարտվում է արդյունահանող արդյունաբերության վրա հիմնված տնտեսությամբ երկրների դիվերսիֆիկացման անհրաժեշտության վրա կենտրոնանալով և խորհուրդ է տրվում մշակել այնպիսի մակրոտնտեսական քաղաքականություններ, ինչպիսիք են կառավարության միջնաժամկետ տնտեսական քաղաքականությունը, կանոնավոր ֆիսկալ քաղաքականությունը, միջազգային առևտրին հստակ քաղաքականությամբ աջակցությունը և միջազգային կապիտալի ներհոսքի խրախուսումը:

Գլուխ 4-ը ուսումնասիրում է գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականությունները և դիտարկում առավել պարզ և արդար հարկային համակարգերի կողմից ձեռք բերված նվաճումները: Հարկային դրույքաչափերի ընդհանուր ցածրությունն ու պարզեցված հարկերի կիրառումն, ընդհանուր առմամբ, առավել են նպաստում տնտեսական զարգացմանը քան ըստ ներդրումների ծագման երկրի կամ ոլորտի տրամադրվող հարկային արձակուրդների և արտոնությունները բարդ համակարգը: Ավելին, մինչ դեռ հարկերը կարող են ազդեցություն ունենալ մեկ տարածաշրջանի շրջանակում օտարերկրյա ներդրողի կողմից ներդրման իրականացման երկրի ընտրության վրա՝ հարկային արտոնությունների առկայության փաստը չի կարող այլ առավել մրցունակ երկրներից գրավել ներդրողներին Արևելյան Եվրոպա կամ Միջին Ասիա: Իսկապես, միայն նման «հարկային մրցակցությունը» կիրառումը կարող է անարդյունավետ լինել եթե երկիրը անտեսել է իր ընդհանուր գործարար միջավայրը: Աշխատուժի շուկայի ճկունությունը տնտեսական աճի ռազմավարությունների մեկ այլ կարևոր տարրերից է: սլովակիայում 2003թ.-ին իրականացված աշխատուժի շուկայի բարեփոխումները ուսանելի օրինակ են հանդիսանում: Սույն գլխում առաջարկվում է ներդրումների իրականացումը մարդկային ռեսուրսներում և ենթակառուցվածքներում, հատկապես ներառյալ տրանսպորտային ենթակառուցվածքը՝ որը հանդիսանում է սոցիալական և տնտեսական զարգացման հիմնական բաղադրիչը և ԵԱՀԿ 14-րդ Տնտեսական Վեհաժողովի թեման: Գլուխը եզրափակում է պետական սեփականությամբ ընկերությունների մասնավորեցման քննարկմամբ, որի արդյունքում կառավարության դերը տնտեսական գործունեության սուբյեկտից փոխվում է անկախ կարգավորողի և խրախուսողի: Մասնավորեցման գործընթացը պետք է լինի թափանցիկ և բաց ինչպես տեղացի այնպես էլ օտարերկրյա հայտատուների համար, ինչպես նաև պետք է իրականացվի առանց ընկերությունների եկամտաբերությունը խարխլող հետմասնավորեցման պարտավորությունների կիրառման:

5-րդ Գլխում վերլուծվում է օրենսդրական և վարչական համակարգերի կիրառումը տնտեսական քաղաքականությունների իրականացման գործընթացում: Կայուն և բարենպաստ գործարար միջավայրի պարագայում օրենքը ճանաչում, պաշտպանում և հստակեցնում է կողմերի իրավունքներն ու պարտականությունները հողի, անձնական գույքի, և պայմանագրային դրույթների նկատմամբ: Մրցակցային օրենսդրությունը ևս հանդիսանում է կարևոր գործիք, որի միջոցով կառավարությունները կարող են խթանել տնտեսական արդյունավետությունը և ապահովել շուկայական ուժերի, որպես տնտեսական գործունեության հիմնական և որոշիչ գործոն հանդիսանալու իրողությունը: Կայացած գործարար և ներդրումային միջավայրը ստեղծում է ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և ընդլայնման համար փոխառու և սեփական կապիտալի հասանելիությունն խրախուսող նախադրյալներ:

Օրենսդրական և կանոնակարգող համակարգերն կարող են նպաստել սույն ջանքերին՝ ընկերություններում բաժնետերերի իրավունքների և պարտականությունների պատշաճ կանոնակարգման, կապիտալի շուկաների ձևավորման և կառավարման, պարտատերերի իրավունքների գործուն և արդյունավետ պաշտպանության միջոցով: Օրենսդրական և կանոնակարգող համակարգերի այս և այլ մոտեցումները պահանջում են ավելին քան լավ օրենքների և կանոնակարգերի զուտ ընդունումը: Հզոր և անկախ արդարադատության համակրգի և վեճերի այլընտրանքային լուծման եղանակների (ինչպիսին է միջնորդ դատարանը) միջոցով առևտրային իրավունքների և պարտականությունների կիրառման ապահովման գործում երկրի նվաճումների որակը հանդիսանում է գործարար միջավայրի կայուն բարելավման համար մեկ այլ կրիտիկական գործոն:

Գլուխ 6-ում դիտարկվում է ներդրումների խթանման գործակալությունների դերը և քննարկվում են դրանց հիմնական գործառույթները, ինչպիսիք են քաղաքականության քարոզումը, իմիջի խթանումը, ներդրումների ներգրավումն և ներդրողներին մատուցվող ծառայությունները: Գլխում դիտարկված լավագույն կառույցների շարքում են Չեխինվեստ գործակալությունը և Ինվեստինռիվնե Ուկրաինայում գործող ԵԱՀԿ ծրագիրը: Ներդրումային խթաններն ու մեխանիզմներն, ինչպիսիք են՝ ազատ գոտիները և ֆիսկալ արտոնություններն արդյունավետ են միայն բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի առկայության պարագայում: Եթե ընդունվում են նման խթաններ, ապա դրանք պետք է կիրառվեն առանց խտրականության: Անհրաժեշտ հանգամանքների առկայության պարագայում արդյունաբերական պարկերը և ներդրումային երաշխիքներն ևս կարող են հանդիսանալ ներդրումների խթանման քաղաքականության օգտակար տարրեր:

7-րդ Գլուխը նվիրված է ՓՄՁ զարգացմանը և խրախուսմանը: Կարևորվում է ՓՄՁ-ների վարչական բեռի նվազեցումը, քանզի այս ընկերություններն առավելապես են ենթարկվում այնպիսի հիմնախնդիրների ազդեցության, ինչպիսիք են բարդ հարկային համակարգը, բյուրոկրատիան, իշխանությունների կողմից հաճախակի իրականացվող ստուգումներն և այլն: Ուշադրություն է դարձվում տնտեսական զարգացումը խթանող միջազգային լավագույն փորձին, որն նպաստում է ՓՄՁ-ների համար շուկաների, ֆինանսական միջոցների և ձեռնարկատիրության օժանդակման ծառայությունների հասանելիության ապահովմանը: Քննարկվում են նաև միկրովարկավորում իրականացնող կազմակերպությունները, մասնագիտացված միկրովարկավորող բանկերն և վարկային երաշխիքներն, որ ՓՄՁ-ների համար ապահովում են ֆինանսավորման այլընտրանքային լուծումներ: Գլխում շեշտադրում է իրականացվում գիտելիքի, վերապատրաստման և տեղեկատվության հասանելիության կարևորության վրա, ինչպես նաև բացատրվում է ՓՄՁ-ների զարգացման խթանման նպատակով ձեռնարկատիրական գործունեության օժանդակման կենտրոնների և ինկուբատորների համար նախագծված ծրագրերի շրջանակը:

8-րդ Գլխում քննարկվում է կայուն զարգացման դերը գործարար և ներդրումային միջավայրին օժանդակման և դրա բարելավման գործում: Կայուն զարգացումն ենթադրում է տնտեսական աճ, բնության պահպանություն և սոցիալական զարգացում: Կառավարությունը օժտված է պատասխանատվությամբ այնպես հավասարակշռել բնապահպանական գործունեությունը մասնավոր հատվածի զարգացման խրախուսման հետ, որպիսզի կարճաժամկետ արդյունքներն չվտանգեն ապագան: Արդյունաբերության վարքագծի կանոններն ու Միավորված ազգերի Գլոբալ համաձայնագիրը բարենպաստ դաշտ են ապահովում Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խրախուսման համար:

Ուղեցույցը ունի նաև Հավելված, որն իր մեջ ներառում է Ուղեցույցի Հարցաշարի պատասխանների համառոտագիր ու տեխնիկական տերմինների Բառարան:



Գլուխ 1

# Բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի կարևորությունը



Բարենպաստ գործարար միջավայրը կարևոր է օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներգրավման և փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) զարգացման համար: Անբարենպաստ գործարար միջավայրը, որը բարձր գներ, ծախսումներ և ռիսկեր առաջացնելով գործարարների համար է, խոչընդոտում է տնտեսական զարգացմանը և նվազեցնում ՕՈՒՆ-ների հոսքերը: ՕՈՒՆ-ները արտաքին ֆինանսավորման խոշորագույն աղբյուր է հանդիսանում զարգացող և անցումային տնտեսությունների համար: Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի երկրները ՕՈՒՆ-ների համար մրցելու համար [illegible] ներդրումների և ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը խոչընդոտող բարդություններ, օրենքներ և լավագույն փորձեր: Այսպես վկայում է [illegible] զեկույցը, համաձայն ՕՈՒՆ-ների համեմատաբար ցածր մակարդակն ունեցող երկրները գործարար միջավայրի բարեփոխման հարցերում հաղորդակցության շարունակում են վերանալու են Լատինական Ամերիկայից ՕՈՒՆ-ների ներհոսքի ծավալները:

## *Ի՞նչ է «գործարար և ներդրումային միջավայր»*

Չկա հստակ սահմանում «գործարար և ներդրումային միջավայրի» համար: Համաշխարհային Բանկը գործարար և ներդրումային միջավայրը սահմանում է որպես հնարավորություններ և խթաններ ընկերությունների համար արդյունավետ ներդնելու, աշխատատեղեր ստեղծելու և ընդլայնվելու համար: Համապատասխանաբար, Ուղեցույցի նպատակներից ելնելով, գործարար և ներդրումային միջավայրը օտարերկրյա և տեղական ընկերությունների համար հանդիսանում է նախադրյալների համակարգ տվյալ երկրում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու և շահույթներ ստանալու համար:

Ներդրումային միջավայրը կարելի է սահմանել փոփոխականների երեք համապարփակ խմբերով՝

- Մակրոտնտեսական քաղաքականություններ, ինչպիսիք են ֆինանսական, դրամա-վարկային և առևտրային քաղաքականությունները;
- Կառավարում և հաստատություններ, և
- Ենթակառուցվածք:

Գործարար և ներդրումային միջավայրը միայն հարկային դրույքաչափերն ու ընկերություններին հասանելի ֆինանսական խթանները չեն: Այլ կարևոր բաղադրիչներն են՝ քաղաքական կայունությունը, օրենքի գերակայությունը, մակրոտնտեսական իրավիճակը, կառավարության ընկալումն ու կարգավորիչ միջավայրը:

## *Բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի կարևորությունը*

Յուրաքանչյուր երկրի գործարար և ներդրումային միջավայրը կարևոր գործոն է հանդիսանում օտարերկրյա ներդրումների ներգրավման և փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացման համար: Անդրազգային կորպորացիաները նախընտրում են ներդրում կատարել առողջ գործածար միջավայր ունեցող երկրների ձեռնարկություններում, որտեղ նվազագույնի են հասցված գների մակարդակը, ձգձգումներն ու ռիսկերը: Ի լրումն, ՓՄՁ-ներն առավել լավ են բարգավաճում այն միջավայրում, որտեղ նրանք գերծանրաբեռնված չեն հարկերով և կանոնակարգերով: Համաշխարհային Բանկի ինտերնետ էջում գրված է հետևյալը. «Բարենպաստ գործարար միջավայրը երկրի ռազմավարության հենասյունն է տնտեսական աճը խթանելու նպատակով, որն իր հերթին աղքատ մարդկանց հնարավորություն է ընձեռում ունենալ առավել լավ աշխատանք և ավելի բարձր եկամուտ»[1]:

Ամբողջ աշխարհում և ԵԱՀԿ շրջանակում առավել բարգավաճ են հանդիսանում այն երկրները, որ ձգտում են ունենալ գործարար և ներդրումային առավել բարենպաստ միջավայր: Առկա է հստակ կապ տնտեսական աճի և բարգավաճման, ներդրումների և գործարար միջավայրի միջև: Արևելյան Եվրոպայի շատ երկրներ, չունենալով էներգակիրների կամ հումքի մեծ պաշարներ, բայց բարեփոխելով գործարար և ներդրումային միջավայրը դարձրել են իրենց տնտեսությունները ՕՈւՆ-ների համար առավելագույնս գրավիչ նպատակակետերից: Համաձայն Էյթի Քեռնիի 2004 թվականի Հոկտեմբերի ՕՈւՆ Վստահության Ցուցանիշի, ՕՈւՆ-ների համար նպատակակետ երկրների համեմատական գրավչությունը գնահատելու նպատակով կորպորացիաների ղեկավարների կարծիքի ուսումնասիրության արդյունքում Լեհաստանը զրավել է 12-րդ, իսկ Չեխիայի Հանրապետությունը 14-րդ տեղը, առաջ անցնելով ասիական այնպիսի վագրերի, ինչպիսիք են Մալազիան, Սինգապուրը և Թայվանը, ինչպես նաև այնպիսի զարգացող գիգանտի, ինչպիսին է Բրազիլիան[2]:

Կառավարությունները հաճախ թերագնահատում են գործարար միջավայրի կարևորությունը, երբ օտարերկրյա ուղղակի ներդրում են ներգրավում: Նրանք հակված են հիմնվել շուկայի ծավալի, բնական ռեսուրսների հասանելիության և գների վրա: Չնայած այս բոլոր գործոնների կարևորությանը, ներդրումային միջավայրը շատ որոշիչ գործոն է և չպետք է այն թերագնահատել:

Ուղեցույցի հարցաշարի պատասխանները

Սլովակիայի Կառավարությունը ներդրողներ է ներգրավում բարեփոխելով գործարար (ընդհանուր) միջավայրը: Այդ նպատակով կատարվել են շատ բարեփոխումներ, որոնցից են, օրինակի համար նշենք միայն մի քանիսը՝ հարկային համակարգի, աշխատանքային շուկայի, կենսաթոշակային, և բանկային համակարգի բարեփոխումներ:

Ռուսաստան ՕՈւՆ-ների ներհոսքը ավելացել է շնորհիվ ձեռնարկված մի շարք միջոցառումների և ընդհանուր բարեփոխումների:

(Մալթայում) Չափազանց բարդ է առանձնացնել ներհոսող ՕՈւՆ-ների վրա ազդող միայն մեկ գործոն: Դա գործոնների մի ամբողջության արդյունքում է, որ ընկերությունը ներդրում է կատարում որևէ կոնկրետ տարածքում:

## Անբարենպաստ գործածար միջավայրի բացասական հետևանքները

Ներդրողները իրենց ներդրումների կանխատեսելի և ընդունելի վերադարձ են ակնկալում. «Փողը վախկոտ է» - ահա մի շատ հայտնի աֆորիզմ: Մրցունակ վերադարձի ապահովման նպատակով ներդրողը պետք է խուսափի երեք հիմնական խոչընդոտներից, որոնք են բարձր գինը, ձգձգումն ու ռիսկը: Եթե անբարենպաստ գործարար միջավայրը հարկերի, վարձավճարների, տուգանքների, կաշառակերության և ծառայությունների (իրավաբաններ, հաշվապահներ, խորհրդատուներ, և այլն) հավելյալ անհրաժեշտության արդյունքում բարձրացնում է ներդրումային գործարքի գինը, ապա ներդրողը, հավանական է, որ նախընտրի այլ տեղում ներդրում կատարել, նույնիսկ եթե մրցակցային լինեն աշխատուժի, տրանսպորտի և էներգիայի համար պահանջվող ծախսերը: Նմանապես, եթե համակարգում առկա խոչընդոտները զգալիորեն հետաձգում են շահույթի ստացման մեկնարկը, ապա ներդրողները կարող են ներդրում կատարելու այլ տեղ փնտրել, նույնիսկ չնայելով մրցակցային գներին: Ի վերջո, անգամ եթե նախնական ծախսերը և ձգձգումները վճռական գործոն չեն, բայց ներդրողը անհանգստանում է քաղաքական հեղաշրջումից, ակտիվների բռնագրավումից կամ օրենսդրական փոփոխություններից, որոնք կարող են նվազեցնել հասույթները, ապա վերջինս ռիսկը նվազեցնելու նպատակով կարող է նախընտրել սակավ գրավիչ հասույթներ ներդրում կատարելով մեկ այլ տեղում:

## ՕՈւՆ-ների կարևորությունը

Գլոբալիզացիա ապրող այսօրվա աշխարհում տնտեսական աճը և աշխատատեղերի ստեղծումը զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում կախված են երկու գլխավոր գործոններից՝ ՕՈւՆ-ներ և ՓՄՁ զարգացում: Զարգացող երկրներում ՕՈւՆ-ները արտաքին ֆինանսավորման խոշորագույն աղբյուր են հանդիսանում: Օտարերկրյա ուղղակի ներդրումը կարող է բարձրացնել ֆիքսված կապիտալի ձևավորումը և օգնել վճարումների հաշվեկշռին: ՄԱԱՋՀ-ի տեսանկյունից, ՕՈւՆ-ները նոր աշխատատեղերի ստեղծման, արդյունավետության բարձրացման, հմտությունների և տեխնոլոգիաների փոխանցման, արտահանման բարելավման, ինչպես նաև աշխարհի զարգացող երկրների համար երկարաժամկետ տնտեսական զարգացումն ապահովելու ներուժ ունի: Անդրազգային 64,000 կորպորացիաների (ԱԱԿ) օտարերկրյա մասնաճյուղերում աշխատում են 53 միլիոն մարդ[3]:

Ավելին, զարգացող երկրները մեծ թափով են օտարերկրյա ներդրումներ ներգրավում: Համաձայն ՄԱԱՋՀ-ի, զարգացող երկրները ներգրավել են գլոբալ ՕՈւՆ-ների հոսքերի 42 տոկոսը և նրանց կողմից ներգրաված ՕՈւՆ-ները առավել արագ են ավելացել, քան 2004 թվականին զարգացած երկրներում: Զարգացող երկրներ ՕՈւՆ-ների ներհոսքի ծավալը (ՕՈւՆ-ների ներհոսքի ծավալ ասելով հասկանում ենք նոր և արդեն գոյություն ունեցող ներդրողների կողմից գրանցված ուղղակի ներդրումների հանրագումարը) կազմում է նրանց ՀՆԱ-ի մեկ երրորդը, որը նշանակալից ավելացում է ի համեմատ 1980 թվականի 10 տոկոսի:

Տնտեսագետները վիճաբանում են, արդյոք տնտեսական աճը ՕՈւՆ-ների հետևանք է, թե ՕՈւՆ-ները տնտեսական աճի հետևանք են: Ակադեմիական վիճաբանությունների ար-

դյունքում առաջացած բանաձևը պնդում է, որ ՕՈւՆ-ների աճը և տնտեսական աճը ուղեկցում են միմյանց:

***Առաջարկի տեսանկյունից ՕՈւՆ-ների վրա ազդում է ներդրումային կապիտալի հասանելիությունը, որն առաջանում է միաժամանակ շահույթներից կամ վարկերից, որոնց վրա էլ իրենց հերթին ազդում է տեղական տնտեսական պայմանները, ներառյալ աճը: Պահանջարկի տեսանկյունից աճող օտարերկրյա շուկաները սպիտում են ԱԱԿ-ների (Անդրազգային Կորպորացիաներ) առավել շատ ներդնել, մինչ թերզարգացած շուկաները խոչընդոտում են նրանց: Անցած երկու տասնամյակների ընթացքում ՕՈւՆ-ների համաշխարհային կտրուկ աճին հաջորդեցին տնտեսական բարձր աճի ժամանակահատվածներ, մինչ անկումներին հաջորդեցին դանդաղ աճի ժամանակահատվածներ: 2001 և 2002 թվականներին ՕՈւՆ-ների հոսքերի անկումը հետևեց 1990-ականների վերջերին ՕՈւՆ-ների արագընթաց աճին: Նույն պատկերն է տիրում 1980-ականների վերջերին և 1990-ականների սկզբին, ինչպես նաև 1982-ին և 1983-ին: Վերջին դրական տնտեսական միտումների համաձայն ենթադրվում է, որ ՕՈւՆ-ների աճը հանդիսանում է վերջերս տեղի ունեցած ներդրումային ակտիվության անկման հետևանք:***

Աղբյուր. Օտարերկրյա ուղղակի ներդրումների հեռանկարներ և անդրազգային կորպորացիաների ռազմավարություններ, 2005-2008 (Համաշխարհային Բանկ):

ԵԱՀԿ զարգացող և անցումային տնտեսությունների հեռանկարները լավն են: Կանխատեսվում է, որ ԵԱՀԿ զարգացող տնտեսությունները 2006 թվականին կհասնեն տնտեսական առավել բարձր աճի, քան զարգացած երկրները: Համաձայն Համաշխարհային Բանկի, սպասվում է, որ 2005 և 2006 թվականներին Հարավային Ասիան, Արևելյան Ասիան, Արևելյան Եվրոպան և Կենտրոնական Ասիան կարձանագրեն 5.5 տոկոսից ավել աճ: Սպասվում է, որ ցանկացած այլ զարգացող տարածաշրջան յուրաքանչյուր տարի կունենա 3.5-ից 5 տոկոս աճ:

Ներդրումներին աջակցելու նպատակով կարևոր է ձևավորել մակրոտնտեսական հիմք և խթանել ներդրումային բարենպաստ միջավայրը:

ԵԱՀԿ շատ անդամ երկրներ ունեն համեմատաբար բարձր ՕՈւՆ-ների ներհոսքի ծավալներ որպես տոկոս իրենց ՀՆԱ-ի նկատմամբ. Ադրբեջանի, Էստոնիայի, Կիպրոսի, Չեխիայի Հանրապետության, Հունգարիայի, Իռլանդիայի, Ղազախստանի և Մալթայի վերաբերյալ վերջերս նշվել է, որ այդ երկրներում բարեփոխման է ենթարկվել տնտեսական իրավիճակը: Նրանց այս հարցում օժանդակել են ՕՈւՆ-ները: Լյուքսեմբուրգը և Հոլանդիան նույնպես ունեն ՕՈւՆ-ների ներհոսքի ամենաբարձր ծավալներ որպես տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ, մասնակիորեն, ի շնորհիվ ֆինանսական կենտրոններ լինելու իրենց հազվագյուտ դերի և այլ երկրների ընկերությունների համար միաժամանակ կորպորատիվ կենտրոն ծառայելու: Աղյուսակ 1.1-ում ներկայացված է ԵԱՀԿ անդամ երկրների առաջին տասնյակը՝ ըստ ՕՈւՆ-ների ներհոսքի ծավալների որպես տոկոս իրենց ՀՆԱ-ի նկատմամբ:

ՕՈւՆ-ների ներհոսքի սակավ ծավալներ որպես տոկոս իրենց ՀՆԱ-ի նկատմամբ ունեցան կամ մեծ տնտեսությամբ, կամ էլ ներդրումային պակաս բարենպաստ միջավայր և հետևաբար փակ տնտեսություն ունեցող ԵԱՀԿ անդամ երկրները: Միացյալ Նահանգները, չնայած որ հանդիսանում են ՕՈւՆ ստացող աշխարհի ամենախոշոր երկրներից մեկը, ունեն ՕՈւՆ-ների ներհոսքի ցածր ծավալներ որպես տոկոս իրենց ՀՆԱ-ի նկատմամբ՝ տնտեսության և ներքին շուկայի ծավալների պատճառով:

## Իռլանդիայի տնտեսական հրաշքը

Իռլանդիան կարող է հիանալի օրինակ հանդիսանալ, որպես մի երկիր որտեղ գործարար ու ներդրումային խիստ բարենպաստ միջավայրը խթանել է ՕՈւՆ-ներին, և որի տնտեսության վրա այն մեծ ազդեցություն է ունեցել: 1970-ականներին և 1980-ականներին Իռլանդական աշխատուժի մասսայական արտագաղթ սկսվեց դեպի Միացյալ Նահանգներ և այլ երկրներ՝ որպես գործազրկության բարձր մակարդակի և տնտեսական դանդաղ աճի արդյունք: 1980-ականների կեսերին, Իռլանդիայում գործազրկության մակարդակը կազմեց մոտ 20 տոկոս, իսկ մեկ շնչի կտրվածքով պարտքը աշխարհում ամենամեծն էր:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.1

**2004 թ.-ին ԵԱՀԿ անդամ երկրների առաջին փասնյակը. ՕՈւՆ ներհոսքի ծավալները, որպես փոկոս ՀՆԱ-ի նկապմամբ (միլիոն ԱՄՆ դոլար)**

| Երկիր | ՕՈւՆ ներհոսքի ծավալներ | ՀՆԱ | ՕՈւՆ ներհոսքի ծավալները որպես փոկոս ՀՆԱ-ի նկապմամբ |
|---|---|---|---|
| Լյուքսեմբուրգ | 182 894 | 31 783 | 575.4 |
| Ադրբեջան | 13 408 | 8 540 | 157.0 |
| Իռլանդիա | 229 241 | 181 520 | 126.3 |
| Էսփոնիա | 9 530 | 11 196 | 85.1 |
| Հոլանդիա | 428 803 | 577 985 | 74.2 |
| Բելգիա | 258 875 | 352 000 | 73.5 |
| Մալփա | 3 557 | 5 389 | 66.0 |
| Հունգարիա | 60 328 | 99 347 | 60.7 |
| Ղազախսփան | 22 399 | 40 754 | 55.0 |
| Կիպրոս | 8 132 | 15 419 | 52.7 |

Աղբյուր. ՄԱԱԶՀ

Իռլանդիայում մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն իր հարևան Միացյալ Թագավորության միայն 63 փոկոսն էր կազմում: 1990-ականներին, Իռլանդիան կափարեց հիանալի փնփեսական անցում դառնալով մեկ շնչի կփրվածքով Եվրոպայի ամենահարուսփ երկրներից մեկը՝ Նորվեգիայից և Շվեյցարիայից հեփո: Իռլանդիայի նմանությունն ԱՄՆ-ին, նրա անգլիախոս բնակչությունը, Եվրոպական Միությանն (ԵՄ) անդամակցությունն իհարկե օժանդակեցին վերջին 15 փարիների ընթացքում արձանագրված փնփեսական աճին: Բայց Իռլանդիայի օրինակը հափուկ է նրանով, որ չունենալով ձևավորված արդյունաբերական բազա կամ նշանակալից բնական պաշարներ, այդ երկիրը որոշեց կիրառել իր բնածին առավելությունները սփեղծելով կափարյալ գործարար միջավայր և իրականացնելով խելամիփ քաղաքականություն: Իռլանդիան կայուն զբաղեցնում է իր դիրքը համաշխարհային առաջափարների շարքում համաձայն հեփևյալ միջազգային ցուցանիշների՝ «Օփարերկրյա ներդրումների նկափմամբ բաց», «գլոբալիզացված» և «ձեռնարկափիրական գործունեության իրականացման պարզություն»:

Իռլանդիան բարեփոխել է իր գործարար միջավայրը և առաջարկել ձեռնարկափիրական գործունեության իրականացման համար հնարավորությունների լայն շրջանակ.[4]

- Եվրոպայում ամենացածր շահութահարկի դրույքաչափ՝ 12.5 փոկոս;
- Մրցունակ գներ պայմանավորված երիփասարդ, հմուփ աշխափուժի առկայությամբ, որը պափրասփ է աշխափելու համեսփ վարձափրության դիմաց;
- Միջավայր, որն ազափ է կառավարության միջամփություններից և կենփրոնացած է մրցակցության և վարչարարության նվազեցման վրա;
- Ենթակառուցվածք, որն իր մեջ ներառում է Եվրոպական և Հյուսիս Ամերիկյան երկրներում բազմաթիվ նպափակակեփերին հասանելիություն ունեցող լավ միջազգային օդանավակայան, ինչպես նաև համալսարանների և փեխնոլոգիական ինսփիփուփների լավ բազա;
- Համագործակցություն կառավարության, աշխափավորների և արդյունաբերության միջև; և

- Զարգացման նկատմամբ մեծ հետաքրքրություն և մտահոգություն ներգրավելու մեծ ընկերություններին Իռլանդիա:

Շատերը մատնանշում են Իռլանդիայի ցածր հարկերը որպես ՕՈւՆ-ների ներհոսքի ծավալների հիմնական պատճառ: Բայց ցածր հարկերը միայն մեկ գործոն են ընկերությունների ներգրավման լայնածավալ ծրագրում: Ինչպես Իռլանդիան դարձավ Կելտիկ Վագր: Կորպորատիվ շահութահարկը մինչև 10 տոկոս ֆիքսված դրույքաչափի իջեցնելու որոշումը Իռլանդիայի կառավարության ձեռնարկած ամենահայտնի քայլն է: Ինչպես բացատրեց Իռլանդիայի Արդյունաբերական Զարգացման Գործակալության գլխավոր տնօրեն Շոն Դորգանը. «Իռլանդիայի մրցունակությունը հիմնված չէ հարկային արտոնությունների և գների վրա միայն, բայց գիտելիքների, նորարարության, ճկունության և լավ հաղորդակցված լինելու վրա և, թե ինչպես են այդ բոլոր գործոնները աշխատում միասին»[5]:

Իռլանդիայի հրաշքի կայացման գործում հարկային դրույքաչափերից զատ իրենց դերակատարությունն են ունեցել նաև մի շարք այլ կարևոր գործոններ.

- *Մարդկային կապիտալի զարգացում.* Իռլանդիան կարևորում է իր աշխատուժի որակը ուշադրություն դարձնելով միջնակարգ և համալսարանական կրթության վրա միասին; ուշադրությունն ուղղվում է «հմտությունների ամբողջության վրա» (SS հմտություններ, օրինակ), որոնք գրավիչ են օտարերկրյա ընկերությունների համար:

- *Ենթակառուցվածքում ազգային ներդրումների իրականացման ուժեղ քաղաքականություն.* Իռլանդիայի տնտեսական առաջընթացը մասամբ ի շնորհիվ ԵՄ-ին անդամակցությանն է: Բայց ԵՄ-ն տրամադրել է ավելին քան հասանելիությունն է շուկաներին և կառուցվածքային հիմնադրամներին. այն ապահովել է պլանավորման կարգ, որն օգտակար է ցանկացած երկրի, անկախ այն բանից, թե այն թեկնածու երկիր է, թե ոչ: Նախկինում ներդրումը կապարվում էր ոչ համակարգված: «Ասենք, ճանապարհը (կամ դրա մի մասը) կառուցվում էր մինչև որ փողերը վերջացան, և նրանք դադարեցնում էին շինարարությունը և կարող է շարունակեին այն կամ ոչ, կամ էլ գնային և ճանապարհ կառուցեին մեկ այլ տեղ: Կառուցվածքային հիմնադրամների միջոցները, քանի որ դրանք պլանավորվել էին 6-ամյա ժամկետի կտրվածքով, նշանակում էին, որ զարգացման կամ տնտեսության պլանը պետք է նախագծվի յուրաքանչյուր 6 տարին մեկ, այսպիսով ի հայտ էր գալիս երկարաժամկետ պլանավորման հեռանկարը»[6]: ԵՄ ֆինանսավորումը իռլանդական իշխանություններին պլանավորման կարգապահություն պարտադրեց:

- *Համագործակցություն աշխատուժի և արտադրության միջև – «սոցիալական համագործակցություն».* Միությունները համաձայնեցին արդար, բայց համեստ աշխատավարձերին փոխարենը կառավարությունից ակնկալելով օժանդակություն «ընդհանուր բարեկեցության պետության» կայացմանը: Համագործակցության հանձնաժողովները շարունակական աջակցություն ապահովեցին տնտեսական հարցերով որոշումների կայացման գործում: Պետական և մասնավոր հատվածների միջև համակարգված երկխոսություն ստեղծվեց:

- *Ներդրումների նպատակային խթանում.* Իռլանդիայում օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանումը նույնպես նպատակային էր և կենտրոնացած էր չորս ոլորտների վրա: Առաջին հատվածը SS արդյունաբերությունն է՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները: Ներդրողներների շարքում էին Intel, Dell, IBM (ներկայումս Lenovo) և Hewlett Packard ընկերությունները: Երկրորդ հիմնական ուղղությունը դեղագործական և առողջապահական արդյունաբերությունն է: Երրորդ հատվածը միջազգային ֆինանսական ծառայությունների ոլորտն է: Վերջին տարիներին առավելագույն զարգացում ունեցած ոլորտը միջազգային ծառայությունների արդյունաբերությունն է՝ ծրագրային ապահովում, սպառողների սպասարկում և աջակցություն, և բաժանված ծառայությունների մատուցում: Իռլանդիայի տնտեսությունում, որի ազգաբնակչությունը կազմում է ընդամենը 3.5 միլիոն մարդ, կապարված ուղղակի ներդրումների ընդհանուր ծավալը կազմում է ավելի քան 17 միլիարդ դոլար: Իռլանդիան ապացուցեց նաև, որ ներդրումների խթանումը փալիս է իր արդյունքները:

Պարզ է, որ իռլանդական հրաշքը հնարավոր չէ կրկնել ամենուրեք, բայց ԵԱՀԿ անդամ երկրները կարող են ՕՈւՆ-ներ ներգրավել օգտագործելով իրենց մրցակցային առավելություններն ու զարգացնելով գործարար և ներդրումային միջավայրը:

Իռլանդական տնտեսական հրաշքից քաղված դասերը կարելի է կիրառել Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները գրավիչ են ՕՈւՆ-ների համար ոչ միայն այն պատճառով, որ գտնվում են Եվրոպայում և ունեն ցածր գներ, բայց նաև որովհետև կատարել են փոփոխություններ իրենց համապատասխան գործարար միջավայրերում (Ներդիր 1.1): ԵԱՀԿ անդամ ոչ բոլոր երկրները հնարավորություն ունեն անդամակցել ԵՄ-ին, բայց նրանք բոլորն էլ հնարավորություն ունեն ստեղծելու գործարար և ներդրումային բարենպաստ միջավայր:

ՆԵՐԴԻՐ 1.1

## Տնտեսական առաջընթացը Բալթյան երկրներում. Կրկնօրինակման հնարավորություն դեպի արևելք

Բալթյան երկրները՝ Էստոնիան, Լատվիան և Լիտվան, որպես մոդել են ծառայում ԵԱՀԿ զարգացող երկրների համար: Սրանք երկրներ են, որոնք նախկինում ունեցել են կենտրոնական պլանավորվող տնտեսական համակարգեր, երկրներ են, որոնք չունեն հարակից սահման Արևմտյան Եվրոպայի հետ, չունեն բնական հարուստ պաշարներ և ունեն փոքրաթիվ բնակչություն, բայց, այնուհանդերձ, նրանց հաջողվել է դառնալ Եվրոպայի ամենաարագ զարգացող երկրներից: Միևնույն ժամանակ առկա է աշխարհագրական առավելություն, որն է սկանդինավյան երկրների և Ռուսաստանի հետ նրանց հարևանությունը, չնայած սկանդինավյան երկրների զարգացած տնտեսություններին, դրանք չեն համարվում մեծ, իսկ Ռուսաստանը դեռևս համարվում է միջին եկամուտ ունեցող երկիր: Խոշոր միջին եկամուտ ունեցող կամ զարգացած տնտեսության հետ հարևանելը տնտեսական զարգացման երաշխիք չէ:

Բոլոր երեք երկրները ձեռնարկատիրական գործունեության իրականացման պարզության ցուցանիշների տեսանկյունից միջազգային մասշտաբով առաջատարներ են համարվում: Ուղեցույցի հարցաշարին պատասխանելու ժամանակ ներդրումների ներգրավման լիտվական գործակալությունը նշել է Լիտվայի «ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմանների ճշգրտման և փոփոխության կարողության» մասին: Այս երկրները նույնպես ապահովում են զարգացման համեմատաբար բարձր մակարդակ մրցունակ գներով: Pricerunner 2004 զեկուցում նշվում է, որ Լիտվան համարվում է Եվրոպայում նվազագույն թանկ երկիրը:

Որո՞նք են Բալթյան երկրների զարգացման հիմնական նախադրյալները.

- *Ազատ գոտիների խելամիտ օգտագործում.* Լիտվան մատնանշեց իր ազատ գոտիների հաջողությունը և դրանց կողմից մեկ կանգառի ծառայությունների և հարկային արտոնությունների տրամադրման մասին:
- *Կորպորատիվ շահութահարկի ցածր դրույքաչափեր.* Բոլոր երեք երկրներն էլ ունեն ցածր և միասնական դրույքաչափով հարկվող շահութահարկ:
- *Տեխնոլոգիաների կիրառում և ՏՏ հայտված.* Բոլոր երեք երկրներում զարգացած է համակարգչային և ինտերնետային ծառայությունների համակարգը և նրանց հաջողվել է ենթակապալառության լավ պայմաններ ստանալ Հարավային Եվրոպայից և ԱՄՆ-ից: Էստոնիան, մասնավորապես, ՏՏ ծրագրերի համար մրցակցային գների պատճառով դիտարկվում է որպես «Հարավային Ֆինլանդիա»:
- *Կենտրոնացում մրցակցելիության վրա.* Դադարեցվել է կոնկրետ արտադրությունների սուբսիդավորումը:
- *Հեռևողական ֆիսկալ և դրամավարկային քաղաքականություններ.* Բալթյան պետությունները ունեն ընթացիկ հաշվի համեմատաբար ցածր դեֆիցիտ, թույլ են տալիս կապիտալի ազատ հոսք և ունեն ազատ փոխարկվող արտարժույթ:

Լիտվական ՆԽԳ-ն նույնպես նշեց ներմուծման-արտահանման ապահովագրման, ենթակառուցվածքներին տրամադրվող սուբսիդիաների, աշխատուժի ուսուցանման, քաղաքային հողի հարկից և գույքահարկից ազատման, և ներդրումային երաշխիքների որպես ՕՈւՆ-ների և տնտեսական աճի վրա դրական ազդեցության ունեցող նախադրյալների:

Չնայած արձանագրված առաջընթացի, ՆԽԳ-ն նշեց նաև դեռևս առկա խոչընդոտների մասին. լավ դիրք ունեցող ազատ տարածքների սակավություն, բարձր որակավորում ունեցող աշխատուժի և մրցակիցության համար անհրաժեշտ այլ խթանների պակաս: Այնուամենայնիվ, Լիտվան և Բալթյան մյուս պետությունները վերջին տարիների ընթացքում արձանագրելով ՕՈւՆ-ների և ՀՆԱ-ի աճի բարձր ցուցանիշներ կարող են օրինակ ծառայել քաղաքականության իրականացման առումով: Հուշագրավ է ՆԽԳ հիշատակումը, որ ներդրումային գործակալությունների աշխատանքի, խթանման և կլաստերային ծրագրերի իրականացման հարցում այն հետևում է Չեխիայի Հանրապետության, Իռլանդիայի և Սլովենիայի օրինակներին:

## *Եզրահանգումներ և Առաջարկներ*

*Զարգացող և անցումային այն տնտեսությունների համար, որոնք չունեն բնության կողմից տրված այնպիսի ընձեռներ, ինչպիսիք են նավթն ու գազը, ո՞ր է գործարար միջավայրի բարելավման այլընտրանքը:* Իռլանդիայի և Բալթյան պետությունների ուսումնասրությունը ցույց է տալիս, որ արդյունահանող արդյունաբերությունները չեն հանդիսանում տնտեսական զարգացման միակ մեխանիզմը:

Նման պաշարներ չունեցող երկրները մրցունակության ապահովման նպատակով պետք է բարելավեն իրենց գործարար միջավայրը: Էլ ինչպե՞ս կարող են նրանք լրացուցիչ ներդրումներ ներգրավել և նպաստել տեղական ընկերությունների զարգացմանը: Գործարար միջավայրի որակը բնութագրող գրեթե բոլոր ցուցանիշները ակնհայտորեն վկայում են, որ բարձր և միջին եկամտով երկրներն ունեն առավել բարենպաստ կամ ավելի արագ բարեփոխվող գործարար միջավայրեր և, որ երկրները, որոնք քայլեր են ձեռնարկել իրենց գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ արժանացել են առավել մեծ չափաբաժին ՕՈւՆ-ների և բարելավել են իրենց տնտեսությունը: Մինչդեռ մասնավոր ընկերություններն իրենք պետք է պատասխանատու լինեն սեփական հաջողությունների համար, այնուամենայնիվ կառավարությունները լավագույն նախադրյալներ պետք է ստեղծեն այդ ընկերությունների հաջողակ գործունեության համար:

Ընդհանրապես կառավարություններն ունեն միջոցներ նպաստելու մարդկանց ձեռնարկատիրական գործունեություն առավել հեշտությամբ իրականացնելու համար: Տեխնոլոգիայի ընդհանուր մակարդակի բարձրացումը կամ տնտեսական աճի արագացումը բարդություն հանդիսացող և դժվար իրագործելի են, բայց աշխատանքային օրենսդրության փոփոխումը, թույլտվությունների և արտոնագրման ընթացակարգերի պարզեցումը, հողի ազգային ռեգիստրի ստեղծումը, կամ ենթակառուցվածքի զարգացմանն աջակցումը միջոցառումներ են, որոնք կառավարությունը կարող է իրագործել: Եթե կառավարությունները ցանկանում են ՕՈւՆ-ներ ներգրավել, ապա նրանք պետք է վարեն հետևողական քաղաքականություն: Վարչական կարգավորման թույլ ռեժիմները և/կամ ինստիտուցիոնալ թույլ կարողությունների հետևանքով առաջացող անմրցունակ շուկայական հզորությունները կամ չհավաքված հարկերը անպայման բացասական ազդեցություն են ունենում ՕՈւՆ-ների վրա:

Սույն Ուղեցույցի մնացած գլուխներում քննարկվում են այն միջոցառումները, որոնք կարելի է ձեռնարկել տնտեսությունները մակրո-մակարդակի վրա առավել մրցունակ դարձնելու և միկրոմակարդակի վրա ձեռնարկատիրական գործունեության իրականացումն պարզեցնելու նպատակով:

Իրենց ներդրումային միջավայրը ընդհանուր առմամբ գնահատելու նպատակով երկրները կարող են որպես համապարփակ գործիք կիրառել ՏՀԶԿ-ի *Ներդրումային Քաղաքականության Շրջանակը (ՆՔՇ):* ՆՔՇ-ը տեղեկատվական հղումներ պարունակող կոնկրետ հարցեր ընդգրկող ցանկ է, որն օգնում է կառավարություններին վերլուծել իրենց գործարար և ներդրումային միջավայրը: Ուղեցույցը խրախուսում է որոշում կայացնող մարմիններին կիրառել ՆՔՇ-ն, կամ ՏՀԶԿ հետ պաշտոնական համագործակցության միջոցով, կամ էլ որպես ներքին գնահատման և պլանավորման գործիք:

## ՀՂՈՒՄՆԵՐ

---

[1] Համաշխարհային Բանկ, "Ներդրումային Միջավայր", <www.worldbank.org/investmentclimate>

[2] Էյթի Քեռնի, ՕՈւՆ Վստահության Ինդեքս, Համաշխարհային Գործարար Քաղաքականության Խորհուրդ, Հոկտեմբեր 2004, <http://www.atkearney.com/main.taf?p=5,3,1,89>

[3] ՄԱԱԶՀ, *Ներդրումների Համաշխարհային Զեկույց 2005,* <http://www.unctad.org/Templates/Page.asp?intItemID=1465և lang=1>

[4] Իռլանդիայի Արդյունաբերական Զարգացման Գործակալության ինտերնետային էջ <www.idaireland.com>

[5] Տես նույն աղբյուրը

[6] Բրեֆնի Օ'Ռուռկ, ԵՄ-ն. Ինչպես Իռլանդիան կայացրեց իր «Կելտիկ վագրի տնտեսությունը» (Մաս 1), Ազատություն Ռադիոկայան:

# Գլուխ 2

## Ներդրումային բարենպաստ միջավայրի համար որոշիչ է գործարարության նպաստող քաղաքական և իրավական միջավայրը



[illegible]

## *Քաղաքական միջավայրի կարևորությունը և հիմնական պայմանները*

Կառավարությունները հաճախ տնտեսական և ֆինանսական պայմանները դիտարկում են որպես օտարերկրյա ներդրումների ներգրավման ամենակարևոր գործոնները: Իհարկե, տնտեսական և ֆինանսական պայմանները կարևոր են, բայց գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման համար ամենակարևոր գործոնը հավանաբար քաղաքական և իրավական միջավայրն է: Երկրները կարող են առաջարկել ցածր հարկային դրույքաչափեր և անվճար հողատարածք, բայց եթե ներդրողներին վախեցնի ակտիվների բռնագանձումը, արտոնությունների վերացումը, անհանգստությունը աշխատավորների շրջանում, քաղաքացիական պայքարը, կամ բնական աղետների հետ պայքարելու անկարողությունը, ապա նրանք այլևս հակված չեն լինի ներդնում կատարել: Ներդրողները պետք է վստահ լինեն, որ տվյալ երկիրը կարևորում և աշխատում է ներդրումներ ներգրավելու ուղղությամբ և, որ արված ներդրումները ապահով կլինեն: Քաղաքական անկայուն միջավայրը բարձրացնում է ռիսկը, որից ներդրողները, սովորաբար, գերադասում են խուսափել: Բացի այդ, քաղաքական գործոնները, ինչպիսիք են կաշառակերությունը, բյուրոկրատիան, օրենքի գերակայության պակասը ոչ միայն ռիսկեր են հանդիսանում, այլ նաև ինքնին ուղակի ծախս են ավելացնում ներդրման վրա: Սևծովյան տնտեսական համագործակցության Գործարար խորհուրդը Սևծովյան տարածաշրջանում ՕՈւՆ-ների համեմատաբար քիչ չափերը բացատրում է հղում կատարելով ներդրողների բողոքներին ուղղված վարչական խոչընդոտների անընդունելի չափերին, ոչ հստակ, կրկնվող և հաճախակիորեն փոփոխվող օրենսդրությանը, և կաշառակերությանը:[1]

ԵԱՀԿ տնտեսապես ամենազարգացած անդամ երկրների մեծամասնությունը ետ-պատերազմական ժամանակահատվածում կարողացել են պահպանել քաղաքականության տեսակետից կայուն կառավարություններ շեշտը դնելով թափանցելիության, պատշաճ կառավարման, կառավարությունների կազմակերպված անցումների վրա: Պատահականություն չէ, որ այս երկրները ՕՈւՆ-ներ տրամադրող և ընդունող ամենաբարձր տոկոս ցույց տվող պետություններն են: Անցումային երկրները նույնպես կարող են հաջողություն ունենալ ՕՈւՆ-ների համար մրցակցությունում: 1980-ական և 1990-ական թվականներին Կենտրոնական Եվրոպայի երկրները սկսեցին օգտվել այդ արժեքներից և ներկայումս հանդիսանում են աշխարհում ՕՈւՆ-ների համար ամենագրավիչ նպատակակետերից: Հարավ արևելյան Եվրոպայի երկրները (մասնավորապես՝ Բուլղարիա, Խորվաթիա և Ռումինիա) քաղաքական առավել գրավիչ միջավայրի ստեղծման մեջ առաջընթաց են արձանագրել և, հետևաբար, զգալիորեն բարձրացրել ՕՈւՆ-ների ներհոսքի ծավալները:

Գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրին նպաստող քաղաքական միջավայրի ստեղծման համար ամենակարևոր գործոններն են՝

- Անվտանգություն;
- Օտարերկրյա ներդրողի իրավունքների պաշտպանություն և երաշխավորում;
- Օրենսդրական կայունություն;
- Թափանցելիություն;
- Ազատություն կաշառակերությունից; և
- Պատշաճ կառավարում:

## *Անվտանգություն*

ՄԱԱԶՀ-ի *Օտարերկրյա ուղակի ներդրումներ և անդրազգային կորպորացիաների ռազմավարություններ 2005-2008* աշխատության մեջ հարցումների միջոցով գնահատվում է ՕՈւՆ-ների գլոբալ հեռանկարները: ՕՈւՆ-ների հոսքերին վտանգող հիմնական ռիսկերի մասին հարցին ՕՈւՆ-ների փորձագետների կողմից երկրորդ ամենից հաճախ նշվող ռիսկը (պատասխանողների 81%) գլոբալ ահաբեկչության վտանգն էր: Ներդրումների խթանման գործակալությունների շրջանում արված ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ «քաղաքական անկայունությունը և քաղաքացիական պատերազմները» հանդիսանում են երրորդ ամենից հաճախ նշված վտանգը: Եթե ընկերությունները վստահ չլինեն, որ իրենց աշխատողները և ակտիվները անվտանգ կլինեն, ապա նրանք վստահ չեն լինի նաև իրենց ներդրումների անվտանգության վերաբերյալ: Ավելին, նման միջոցառումների ձեռնարկման անհրաժեշ-

փությունը, որպիսին են մարդկանց և ՏՏ անվտանգության ապահովումը, ներգաղթած աշխատողների համար հավելյալ ապահովագրական ծախսերի և կացության գումարների տրամադրումը հավելյալ ծախսի ձևով ավելանում են ներդրման վրա: Մի շարք ոլորտների, մասնավորապես արդյունաբերության համար արտադրական գործընթացի պարբերական դադարեցումը և կրկին մեկնարկումը բավականին թանկ հաճույք է: 2005 թվականին Դավոսում կայացած Համաշխարհային Տնտեսական համաժողովում «Բիզնես անելու համար լավագույն վայրերը» թեմայի շուրջ արված եզրահանգումներից մեկն այսպես ամփոփվեց՝ «Հաշվետվությունը ցույց է տալիս, որ սեպտեմբերի 11–ից հետո անվտանգությունը գերխնդիր է դարձել յուրաքանչյուրի համար»[2]: Անվտանգությանը սպառնող ռիսկերը չեն սահմանափակվում զինված հակամարտություններով: Համաճարակները, ինչպիսին է թռչնագրիպը կարող է թուլացնել ներդրողի հետաքրքրությունը: Կառավարությունները պետք է իրենց պատրաստակամությունն հավասպեն հակամարտելու անվտանգությանը սպառնող համաճարակների, բնական աղետների և այլ նման դեպքերի դեմ:

## *Ներդրողի իրավունքների պաշտպանություն և երաշխավորում*

Նույնիսկ եթե երկիրն անվտանգ է և կառավարությունները խաղաղորեն իրար են հաջորդում, ընկերությունները ցանկանում են վստահ լինել իրենց իրավունքների պաշտպանության մեջ: Համաձայն *Բիզնեսի իրականացում; Ներդրողների պաշտպանություն* ուսումնասիրությանը, փաս երկրներից երեքը, որտեղ ներդրողները առավել քիչ են պաշտպանված ԵԱՀԿ անդամ երկրներ են: Ներդրողը պետք է հավատա, որ ներդրումը ապահով է, որ երաշխավորված է արդար և հավասար մոտեցում և, որ վեճերին արդար և պատշաճ լուծում կտրվի:

***Մեծ է ներդրողների պաշտպանությանն ուղղված աշխատանքների արդյունքը: Երբ սահմանափակվում են ոչ նշանակալից բաժնեմաս ունեցող ներդրողների վրա ճնշումները, ապա մեծանում է բաժնետիրական կապիտալի ներդրումը և ցածրանում սեփականության կենտրոնացումը: Ներդրողները արժեթղթերի փաթեթների բազմազանություն են շահում: Ձեռնարկատերերը կանխիկ դրամի նկատմամբ հասանելիություն են ձեռք բերում: Եթե չի պաշտպանվում ներդրողը, ապա ձախողվում է կապիտալի շուկաների զարգացումը և բանկերը դառնում են ֆինանսավորման միակ աղբյուրը: Մինչդեռ գրավադրման կամ գույքի գրանցման ոչ բավարար համակարգերը շատ բիզնեսների արգելափակման պատճառ են դառնում աղքատ երկրներում: Արդյունք. բիզնեսներն արդյունավետորեն չեն ընդլայնվում ֆինանսավորման պակասի պատճառով և փնտեսությունը անկում է ապրում:***

Աղբյուր. Բիզնեսի իրականացում. Ներդրողների պաշտպանություն (Համաշխարհային բանկ)

Օտարերկրյա ներդրողները ցանկանում են «ազգային մոտեցման» արժանանալ, այլ խոսքերով ասած, որպեսզի նրանց վերաբերեն այնպես, ինչպես տեղացի ձեռնարկություններին: Ազգային անվտանգությանն առընչվող կոնկրետ տնտեսական ենթա-հատվածները կարող են առանձին մոտեցում պահանջել օտարերկրյա և տեղացի ձեռնարկությունների համար: Ինչևիցե, «հովանավորչությունը» նպաստավոր չի դիտարկվում ներդրողների կողմից: ՄԱԱՁՀ-ի ուսումնախջրության ժամանակ ՕՈւՆ-ների փորձագետներն ու անդրազգային կորպորացիաների ներկայացուցիչները նշեցին, որ հովանավորչությունը մեծ խոչընդոտ է հանդիսանում ՕՈւՆ-ների համար: Ընդհանրապես, գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրեր ունեցող երկրները միևնույն մոտեցումն ունեն, թե օտարերկրյա, և, թե տեղական ներդրումների նկատմամբ և առավելագույն մրցակցային միջավայր են ապահովում: Այն երկիրը, որն արտադրության որոշ ճյուղերում օտարերկրյա ներդրողներին ֆիսկալ արտոնությունների համակարգ է սահմանում և մերժում օտարերկյա ներդրումն այլ հատվածներում նպաստում է սակավ մրցակցային տնտեսության ձևավորմանը, որի կառավարումը թանկ է նստում թե կառավարությունների, և թե ընկերությունների համար:

Կան պաշտպանությունների և երաշխիքների մի քանի հիմնական և հստակ եղանակներ, որոնք ցանկանում է տեսնել ներդրողը: Ներդրողի հիմնական սկզբունքները ներառում են հետևյալ իրավունքները՝

- Հավասար և անկողմնակալ վերաբերմունք օտարերկրյա և տեղացի ներդրողների նկատմամբ, մասնավորապես պայմանագրերի կատարման և պետությանը պարտքի վճարման առումով;
- Ներդրում կատարել բոլոր ոլորտներում, կորպորատիվ բոլոր կառույցների ներքո, ցանկացած ձևով (ուղղակի, փաթեթային, և այլն), ինչպես թույլատրում և կարգավորում է օրենքը;
- Ազգայնացման, սեփականության բռնագանձման կամ նման այլ քայլերից պաշտպանություն, ինչպես նաև արդար փոխհատուցման ապահովում, եթե ազգային անվտանգության նկատառումներից ելնելով առաջացել է դրա անհրաժեշտությունը;
- Օրենքի սահմաններում և հարկերի ու տուգանքների վճարումից հետո ազատ փոխանցել շահույթներն օտարերկրյա փարադրամով արտասահման;
- Օգտվել ներդրման հնարավորություններից օրենքով պահանջվող ժամկետների և պայմանների շրջանակներում;
- Օգտվել հողի նկատմամբ սեփականության իրավունքից;
- Ունենալ մտավոր և արդյունաբերական գույքի նկատմամբ պաշտպանություն, և
- Այլընտրանք ունենալ տեղական դատարանում լուծում տալ վեճերին, եթե այն արդար է և անկախ կամ վեճի լուծումը գտնել տեղական կամ միջազգային միջնորդ դատարանում:

Երկրների կողմից ձեռնարկվող հնարավոր քայլերը հետևյալն են՝

- Ներդրողի համար «իրավունքների փաստաթղթի» կամ օտարերկրյա ներդրումների մասին օրենքի մշակում, որով կսահմանվի ներդրողին տրամադրվող իրավական պաշտպանությունը;
- Բազմակողմանի համաձայնագրերին և մեխանիզմներին միացում, որոնք խթանում են ներդրողի իրավունքները, գույքային իրավունքներին, և այլն: Դրանք են՝ Միավորված ազգերի Ճանաչման մասին և Միջնորդական դատարանների վճիռների պարտադիր կատարման մասին կոնվենցիաները, Համաշխարհային բանկի Ներդրումային վեճերի լուծման Միջազգային կենտրոնը և Միջազգային ներդրումների և բազմակողմանի գործունեություն ծավալող ձեռնարկությունների վերաբերյալ ՏՀԶԿ Հայտարարագիրը;
- Երկկողմ և բազմակողմ ներդրումային պայմանագրերի կնքում, որոնք ներդրման պաշտպանություն ու երաշխիքներ են իրենց մեջ ներառում;
- Կոնկրետ օրենսդրության մշակում, որով խստորեն սահմանափակվում է սեփականությունից զրկումը և կանոնակարգվում դրա կիրառումը, և որի շրջանակերում տրամադրվում է փոխհատուցում սեփականության զրկման դեպքում, և
- Հնարավորություն ընձեռել օտարերկրացիներին գնել և սեփականաշնորհել հող, կամ թափանցելի և խելամիտ ձևով ձեռք բերել երկարաժամկետ վարձակալության իրավունք:

## Օրենսդրական կայունություն

***«Նշանակություն չունի, արդյոք շահութահարկը 17% է, թե 21%: Իհարկե, 17%-ն ավելի լավ է: Կարևորն այն է, որ Հարկային օրենսգիրքը նույն է մնացած հինգ տարիների համար և ես գիտեմ, թե ինչ հարկեր պետք է վճարեմ»:***

Մեջբերում սպառողական ապրանքներ թողարկող անդրազգային կորպորացիայի նախկին Բալկանյան տարածաշրջանային տնօրենի 2004 թվականին ասված խոսքերից:

Գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրին նպաստող քաղաքական միջավայրի ստեղծման ամենակարևոր գործոններից մեկը օրենսդրական կայունությունն է: Հաճախակի փոփոխվող օրենսդրությունը խանգարում է ներդրողներին ծրագրավորել ներդրումից ստացված օգուտները: Ավելին, ձեռնարկատիրական գործունեության իրականացման մեխանիզմների ճշգրտումը, ինչպիսիք են հաշվահական հաշվառումը և աուդիտը, բնապահպանական արդյունքներն ու աշխատուժի կառավարումն ավելացնում է ներդրողի ծախսերը: Բացի այդ, եթե նույնիսկ այդ ժամանակ պայմանները բարենպաստ են, անկայուն օրենսդրական միջավայրից ելնելով ներդրողները կարող են կարծել, որ մեծ է անբարենպաստ պայմանների առաջացման ռիս-

կը, որը և եփ կկանգնեցնի նրանց ներդրում կապարելու գաղափարից:

Վաճառքի ենթակա բաժնեմասերի ցուցակում, Կենտրոնական Ասիայում գործող Արևմտա-եվրոպական հանքաարդյունահանող ընկերությունը արել է հետևյալ հայտարարությունը. «Հաշվեկշռում ներկայացված և հետախուզության համար նախատեսված ծախսերի վերականգնողականությունը կախված է տնտեսապես ձեռնտու պաշարների հայտնաբերումից, հանքային հիմնական հայտերի նկատմամբ հետաքրքրության հավաստումից (և) կենտրոնական Ասիայի քաղաքական, տնտեսական և օրենսդրական կայունությունից, որտեղ այդ ընկերությունն աշխատում է… »[3]: Սա ներդրողների պահանջն է, որով նրանք ուղղակիորեն զգուշացնում են բաժնետերերին, որ ներդրումի դիմաց սպացվելիք իրենց օգուտի վրա բացասապես է ազդում այն երկրների օրենսդրական կայունությունը, որտեղ նրանք աշխատում են: Եթե ռիսկի գործոնը գերակշռի ներդրումից սպացված օգուտին, ապա օտարերկրյա ներդրողները կգերադասեն իրենց կապիտալը ներդնել մեկ այլ տեղ: Էլեկտրաէներգետիկ ազգային համակարգերին աջակցելու վերաբերյալ քննարկումների ժամանակ Եվրոպական հանձնաժողովը շեշտում է, որ համակարգի ցանկացած անկայունություն բերում է ներդրումային բարձր ռիսկերի, որի հետևանքում մեծանում են սպառողների ծախսերը:

Հետևյալ երեք միջոցառումները կարող են աջակցել ԵԱՀԿ երկրներին ստեղծելու առավել կայուն օրենսդրություն՝ առավել թափանցելի և կանխատեսելի դարձնելով թե օրենսդրությունը և, թե օրենքների ստեղծման գործընթացը.

- *Մտածել առևտրային օրենսդրության ընդունման մասին, որը համեմատելի կամ նման է Acquis Communitaire Եվրոպական միության օրենսդրությանը;* Այս աջառարկությունն ընդգծում է առևտրային օրենսդրության անհրաժեշտությունը, որը ծանոթ է ներդրողներին և համադրելի միջազգային չափանիշների հետ:

  Եվրոպական Միությունում, Acquis Communitaire առաջարկում է օրենքների հանրաճանաչ օրենսգիրք, որը ծանոթ և ըմբռնելի է ներդրողների համար: Նման բնույթի օրենքների ընդունումը, իհարկե առանց ԵՄ և ԵԱՀԿ երկրների նկատմամբ խտրականության, ներդրողներին կանխատեսելիության և ծանոթ լինելու վստահություն է ներշնչում և ստեղծում է ներդրում կապարելու մտադրություն: Եվ եթե ներդրողները ներկայումս ներդրում են կապարում օրենսդրական և վարչական հստակ դաշտ ունեցող երկրներում, ապա նրանց համար առավել հեշտ և էժան է ընդլայնվելու դեպի նույն կամ նման օրենսդրական դաշտում գործող շուկաներ:

  Սույն Ուղեցույցը չի առաջարկվում, որ ԵՄ-ի ընդլայման գործընթացին պաշտոնապես մաս չհանդիսացող երկրները մասնավորապես անպայման համապատասխնեն Acquis–ին: ԵԱՀԿ անդամակցող յուրաքանչյուր երկիր ինքնիշխան է և ունի իր երկրի իրավական և մշակութային ավանդույթների վրա հիմնված օրենքներ, անկախ այն բանից, թե, այդ ավանդույթը ինչ է՝ ընդհանուր օրենք, քաղաքացիական օրենք կամ մեկ այլ ուրիշ բան: Առաջակվում է, որպեսզի այս երկրներին պատշաճ խորհրդատվություն տրամադրվի առևտրային օրենքի բարեփոխում կապարելուն ընդառաջ գալու և խտրականություն չդնող Acquis-ին ճանաչելիորեն նման օրենքների ընդունման համար:

---

### Ուղեցույցի հարցաշարի պատասխաններ

Մասնավոր հատվածի ներկայացուցիչների և առավել շատ օտարերկրյա ներդրողների հետ կապարելագործված քաղաքականության վերաբերյալ երկխոսությունը կնպաստի բարեփոխումների իրականացման առաջնահերթ խնդիրների գնահատմանը և դրանց իրականացման գործընթացի վերահսկմանը, որի արդյունքում էլ բարեփոխումների օպտիմիզացման և արագացման հնարավորություն կընձեռնվի: Ավելին, գործող օտարերկրյա ներդրողները, որոնք արդեն կապարել են որևէ տվյալ երկրում ուղղակի ներդրումներ անցումային տնտեսությունների դեպքում հաճախ այդ երկրի ամենալավ և ամենավստահելի դեսպաններն են պոտենցիալ ներդրողների համար:

---

- *Առևտրային օրենսդրության նախագծի վերաբերյալ դիտողությունների և մեկնաբանությունների ներկայացման ժամանակահատվածի հաստատում.* Կառավարությունները կարող են ցանկանալ ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ օրենսդրությանը դիտողությունների և մեկնաբանությունների ներկայացման 30-օրյա ժամանակահատված տրամադրել և 90 օր առևտրային էական ազդեցությամբ օրենսդրությանը՝ որևէ կենտրոնական ինտերնետային էջում տեղադրելով օրենսդրության նախագիծը և ակտիվ ծանուցում իրականացնելով հետաքրքրվող և/կամ գրանցված մարդկանց համար: Անկանխատեսելի դեպքերի և չսպասվող հրամանների վրա ներդրողները մեծ ուշադրություն չեն դարձնում, բացառությամբ այն դեպքերի և դրանք ընդունվում են որպես լուծում առանձնահատուկ և հայտնի խնդրին: Օրենսդրության նախագծի նախօրոք տրամադրումը ներդրողներին և գործարարներին զգուշացում է հանդիսանում, որ կարող է նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման ձևը փոխելու անհրաժեշտություն առաջանալ: Բացի այդ, գործարարների կողմից արված ցանկացած «դիտողություն» սովորաբար բարելավում է առևտրային օրենսդրությունը: Գործարար միջավայրի վրա դրական է ազդում նաև գործարար համայնքի կարծիքը:

  Ամենաարագ զարգացող տնտեսություններ և ՕՈւՆ-ների ներգրավման խոշորագույն ծավալներ ունեցող ԵԱՀԿ երկու անդամ երկրներ Սլովակիան և Էստոնիան, օրենսդրության վերաբերյալ պաշտոնական ծանուցման և խորհրդատվության պաշտոնական պահանջներ ունեն: Այս ուղղությամբ քայլեր է ձեռնարկել նաև Հայաստանը: Հայաստանում 2003 թվականին օրենքի գերակայությանն ու առևտրային օրենքները գնահատած Հայկական միջազգային հետազոտական խումբը կատարել է հետևյալ դիտարկումը. «Պետք է նշել նաև, որ հայաստանյան այլ օրենքներ «դիտողություն և մեկնաբանություն» նորմատիվի պահանջով նույնպես ապահովում են հանրության մասնակցությունը նորմատիվների կազմման գործընթացում: Արժեթղթերի շուկայի մասին հայաստանյան օրենքն, օրինակ, որը հիմնված է ԱՄՆ մոդելի վրա, պահանջ է պարունակում, համաձայն որի Հայաստանի արժեթղթերի հանձնաժողովի կանոնակարգերի նախագծերը պետք է հրապարակվեն նախապես դրանց ուժի մեջ մտնելուց առաջ՝ հանրությանը իր մեկնաբանությունը տալու հնարավորություն ընձեռելու համար»[4]: Դիտողությունների և մեկնաբանությունների տրամադրման համար ինտերնետի օգտագործումը ընդհանրապես դիտարկվում է որպես ամենալավ եղանակ: Այն ծանուցումը հասանելի է դարձնում առավել լայն շրջանակների համար և հնարավորություն ընձեռում, որպեսզի օրենսդրության ամբողջ նախագիծը հնարավոր լինի գտնել մեկ կենտրոնական տեղում: Միաժամանակ, ինտերնետում օրենսդրության նախագծի առկայության մասին էլեկտրոնային ծանուցումը կարելի է ուղարկել հետաքրքրված և/կամ գրանցված կողմերին:

- *Պարբերաբար տեղի ունեցող օրենսդրական իրադարձությունների օրացույցի ստեղծում.* Հիմնական նպատակն է օրենսդրական փոփոխությունների մեջ կանխատեսելիության հաստատումը: Օրինակ, հարկային դրույքաչափերի ուսումնասիրությունը կարելի է կատարել տարին մեկ կամ երկու անգամ նախանշված որևէ կոնկրետ ժամանակահատվածում:

## Թափանցելիություն

Վերը նշված երեք միջոցառումներն իրենց մեջ ներառում են հրապարակայնություն և հաշվետվելիություն, որոնք թափանցելիության հիմնական գործոններն են: Միավորված ազգերի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) թափանցելիությունը սահմանում է որպես տեղեկատվության փոխանակման և գործունեության թափանցելի իրականացում: Թափանցելիությունը թույլ է տալիս շահագրգիռ կողմերին հավաքել տեղեկատվություն, որը կարող է էական լինել չարաշահումների հայտնաբերման և իրենց շահերի պաշտպանության հարցում: Թափանցիկ համակարգերը իրենց մեջ ներառում են հանրության մասնակցությամբ որոշումների կայացման հստակ ընթացակարգեր և շահագրգիռ կողմերի ու պաշտոնյաների միջև հաղորդակցման թափանցիկ կապ, ինչպես նաև հանրության համար հասանելի են դարձնում լայնածավալ տեղեկատվություն:

***Ներդրում կատարելու մասին որոշում ընդունելիս տեղացի և օտարերկրյա ներդրողները շատ են կարևորում ներդրումների հետ կապված օրենքների և կանոնակարգերի իրականացման և փոփոխման մասին թափանցիկ տեղեկատվությունը: Թափանցելիությունն ու կանխատեսելիությունը առանձնահատուկ ձևով կարևոր են օտարերկյա ներդրողների համար, որոնք կարող են գործ ունենալ շատ տարբեր վարչական համակարգերի, մշակույթների և վարչական շրջանակների հետ: Ներդրմանն առընչվող թափանցելի և կանխատեսելի կանոնակարգող դաշտն օգնում է բիզնեսներին լավ տեղեկացված լինել և ժամանակին գնահատել ներդրումային պոտենցիալ հնարավորությունները, այդպիսով կարճացնելով ներդրման հետգնման սակզբին նախորդող ժամանակահատվածը:***

Աղբյուր. ՏՀԶԿ Ներդրումային քաղաքականության շրջանակ:

Թափանցելիությունը հաճախ առավել կարևոր է զարգացող և անցումային երկրների համար, որովհետև նրանցում կատարված ներդրումների ցածր ծավալը ներդրումային նախապատմություն չի տրամադրում: Օրինակ, Չինաստանում թափանցելիության պակաս չկա, ի շնորհիվ հսկայածավալ շուկայի և հաջողակ ներդրված միլիարդավոր եվրոների: ԵԱՀԿ զարգացող և անցումային տնտեսությունները, որոնք չունեն չինաստանի նման պետություն ունենալու համեմատական առավելություն, կարող են օգտագործել առավել թափացիկ միջավայր առավել շատ ներդրումներ ներգրավելու նպատակով: *Զարգացմանն ուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումներ* ՏՀԶԿ ուսումնասիրությունում ասվում է, որ ընկերությունները կարող են ցանկանալ ներդրում կատարել իրավական և կանոնակարգիչ կայուն դաշտ ունեցող երկրներում, որոնք այլապես չեն կարող համարվել «ներդրումային տեսանկյունից հարմար», քանի որ ընկերությունները կարող են ձեռք բերել բավարար աստիճանի հստակություն այն միջավայրի մասին, որտեղ պետք է գործեն: Եվ հակառակը, հաստատ կլինեն թափանցելիության ցածր սահմաններ, որից ներքև ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմաններն այնքան թույլ և աղոտ են դառնում, որ ոչ մի ներդրող չի ցանկանում ինչ որ բան ձեռնարկել, անկախ շարժառիթի աստիճանից:

Հստակության բացակայության ցուցանիշը (Opacity Index) Կուռցման խմբի կողմից մշակված մեխանիզմ է թափանցելիության գնահատման համար: Հստակության բացակայության ցուցանիշը ստեղծողների կարծիքով «ամենօրյա, փոքրամասշտաբ ռիսկերն» են, որ թափանցելիության պակասին գումարվելով խոչընդոտներ են ստեղծում համաշխարհային ներդրումների և առևտրի համար: Ցուցանիշը կիրառում է CLEAR (պարզ) կոչված մեթոդաբանությունը. C - կաշառակերություն, L – իրավական համակարգ, E – տնտեսական քաղաքականություններ, A – հաշվապահական հաշվառում և ֆինանսական ավանդույթներ և R – կանոնակարգող միջավայր: Հարցերի շարք է տրվում, սովորաբար իրենց բնույթով երկակի և վերոհիշյալ բնագավառներից յուրաքանչյուրի համար, որոնց պատասխանները օգտագործվում են միավորների ստացման համար: Դժբախտաբար, Հստակության բացակայության ցուցանիշը չի ներառում հարավ-արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրները: Ինքնին հասկանալի է, որ զարգացման առավել բարձր մակարդակ ունեցող երկրներում սովորաբար «հստակության հացակայությունը ավելի քիչ է»: Ֆինլանդիան, Միացյալ Թագավորությունը, Դանիան, Շվեդիան և ԱՄՆ-ը Հստակության բացակայության ցուցանիշի համապատասխան առաջին հինգ տեղերը զբաղեցնող ԵԱՀԿ անդամ երկրներն են:

Չնայած կիրառման մասշտաբների, այս ուսումնասիրությունը մի շարք հետաքրքիր կետեր է ի հայտ բերել: Կուրցմանի խումբը պնդում է, որ ցուցանիշի վրա հստակության բացակայության մեկ կետ աճի համար յուրաքանչյուր մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն նվազում է 986 ԱՄՆ դոլարով, իսկ մեկ շնչին բաժին ընկնող ՕՈւՆ-ները իջնում են մեկ տոկոսով:

2005 թվականի մայիսին նախկին Հարավսլավիայի հանրապետություն Մակեդոնիայի Տնտեսական ծրագրում հատուկ շեշտ է դրվում թափանցելիության վրա: Մեծագույն թափանցելիություն է պահանջվում սեփականաշնորհման, ետ-սեփականաշնորհման ժամանակահատվածի և ֆինանսական ապակենտրոնացման գործընթացներում, և ակնկալվում է, որ Կենտրոնական բանկն ու ֆինանսների նախարարությունը ակտիվ հաղորդակցության մեջ կմտնեն հանրության հետ: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆՄԶԳ) նախկին Հարավսլավիայի հանրապետություն Մակեդոնիային է տրամադրել

տեխնոլոգիական աջակցություն կառավարության ծառայությունների թափանցելիությունն ու արդյունավետությունը բարելավելու նպատակով: Հարավսլավիայի հանրապետություն Մակեդոնիայի առաջընթացը նկատվել է ԵՄ-ի կողմից: 2005 թվականի դեկտեմբերի 16-ին, Եվրոպական միությունը նախկին Հարավսլավիայի հանրապետություն Մակեդոնիային է շնորհել անդամության թեկնածու երկրի կարգավիճակ:

Կայունացման և ասոցիացման մասին 2005 թվականի Եվրոպական հանձնաժողովի միջանկյալ հաշվետվության մեջ հատուկ նշվել է Ալբանիայի մասին վերջինիս առավել թափանցելի դառնալու ուղղությամբ ջանքեր գործադրելու համար: Ալբանիայի կողմից ձեռնարկված միջոցառումները հետևյալն են՝ պառլամենտական մշտական հանձնաժողովների քանակի կրճատում, իրավական բարեփոխումների հանձնաժողովի ստեղծում, պառլամենտական նոր ընթացակարգեր օրենսդիր իշխանության մեջ, քաղաքացիական ծառայողների համար դասընթացների կազմակերպում, ներառյալ ինտերնետի օգտագործման ուսուցում: 2004 թվականին դիտվել է ՕՈւՆ-ների 41 տոկոս աճ և ՕՈւՆ-ների ամենաշատ ներհոսք երկրի պատմության մեջ:

Ստորև ներկայացված են ԵԱՀԿ անդամ երկրների մի շարք հաջողված փորձեր ուղղված կառավարության թափանցելիության մակարդակի բարձրացմանը.

- *Էլեկտրոնային կառավարման լայն կիրառում.* Էլեկտրոնային կառավարման տարածված և համապարփակ կիրառումը ընդլայնում է տեղեկատվության տարածման հնարավորությունները, նվազեցնում է զաղտնի գործելու հնարավորությունը և արագացնում աշխատանքների ստուգումն ու առուծախը: Էլեկտրոնային կառավարումը մեծապես նպաստում է օրենսդրության և կանոնակարգերի տարածմանը, սեփականաշնորհման գործընթացների և կառավարության կողմից հայտարարված մրցույթների իրականացմանը:

  Ինտերնետի միջոցով առևտրային օրենսդրության և կարևորություն ներկայացնող դատական որոշումների ազգային և անգլերեն լեզուներով հրապարակումը ոչ միայն թափանցելիության խթանման հիանալի ձև են, այլ նաև ակնհայտորեն նպաստում են օտարերկրյա ներդրողների հետ երկխոսությանը:

- *Վարչական որոշումների, ներառյալ պետական մրցույթների մասին որոշումների հրապարակում և քննարկում.* Վարչական որոշումների հրապարակումն ու քննարկումը վստահեցնում են հանրությանը, որ կառավարությունը հաշվետու է իր որոշումների համար և պատրաստ է առերեսել հանրության քննությունը:

- *Աջակցություն անկախ զանգվածային լրատվության միջոցներին և մամուլին:* Թափանցելիությունն աճում է, երբ կա անկախ մամուլ, որն ունակ է ուսումնասիրության առնել և քննարկել կառավարության քաղաքականությունն ու ձեռնարկած գործողությունները առանց պատժված լինելու վախի: Կառավարությունները պետք է խուսափեն զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ ճնշում գործադրել և պաշտոնական դիրքորոշումներ պարտադրել՝ տնտեսական լծակների կիրառմամբ կամ տեղեկատվությունը դադարեցնելու սպառնալիքով:

- *Հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշների ընդունում.* Հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշների կիրառումը նպաստում է ձեռնարկությունների և ներդրումային ծրագրերի ֆինանսական փորձաքննությանը: Այս չափանիշների կիառումը օտարերկրյա ընկերությունների համար առավել ընկալելի է դարձնում ձեռնարկությունների ֆինանսական հաշվետվությունները:

## Կաշառակերություն

***«2-4 տարի: Վեց ամիս, եթե պատրաստ ես վճարել»:***

Ահա 2005 թվականի սեպտեմբերին Ուկրաինայի քաղաքացիական հասարակության կազմակերպություններից մեկի ղեկավարի պատասխանը այն հարցին, թե ինչքան ժամանակ է պահանջվում մեծ ներդրումային ծրագիր, օրինակ գործարանի կառուցում իրականացնելու համար:

Հարցաշարին տրված պատասխանների զգալի մասն այն կարծիքն է արտահայտում, որ տնտեսության առավել զարգացմանն ուղղված բազմաթիվ խոստումնալից բարետո-

խումներ փապալվել են կաշառակերության պատճառով, որի արդյունքում առանձնակիորեն փուժել են ՓՄՁ-ները: Այս դիտարկումները համահունչ են թեմատիկ գրականության մի շարք աղբյուրներում պարունակվողների հետ, ներառյալ 158 օտարերկրյա ընկերությունների շրջանում Ռուսաստանի Դաշնության Օտարերկրյա ներդրումների խորհրդատվական խորհրդի կողմից անց կացված ուսումնասիրության արդյունքներին: Այդ հարցման մասնակիցների 71 տոկոսը նշեց, որ երկրում նոր ներդրումներ իրականացնելուն առավելագույնս խոչընդոտում է կաշառակերությունը: Ի՞նչ է կաշառակերությունը: Համաձայն Եվրոպական խորհրդի, կաշառակերություն նշանակում է կաշառքի, կամ որևէ այլ անօրինական առավելության տրամադրման կամ խոստման ուղղակի կամ անուղղակի ձևով ստանալու խնդրանք կամ տալու առաջարկ, կամ տալը կամ ընդունելը, որը խաթարում է ցանկացած աշխատանքի պատշաճ կատարում կամ կաշառք ստացողի վարքագիծը: Մինչ տարբեր մշակույթներ կարող են տարբեր ձևով դիտարկել կաշառակերությունը, մեկ փաստ ակնհայտ է. կաշառակերությունը կործանարար է ինչպես օտարերկյա ուղղակի ներդրումների, այնպես էլ ՓՄՁ-ների զարգացման համար: Մինչ ներդրողները փորձում են պայքարել կաշառակերության դեմ լոբինգի, հարաբերությունների կառուցման, զանգվածային լրատվական միջոցների և այլ հնարքների միջոցով, փաստը փաստ է մնում, որ կաշառակերությունը ներդրողների համար թե ծախսատար, և թե ժամանակատար է:

Կաշառակերության ամոթից և փռածությունից զատ, հաշվարկվել է, որ կաշառակեր միջավայրում աշխատելը կարող է ավելացնել ներդրողի ծախսը իր ընդհանուր ծախսի 4 տոկոսի չափով: Չորս տոկոսը բավականին ազդեցիկ գործոն է հանդիսանում ներդրողի որոշման վրա ազդելու համար: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) աշխատակից Սամուել Ֆանքհաուզերը կազմել է գծապատկեր (Գծապատկեր 2.1), որտեղ հաշվվում է կենտրոնական Եվրոպայում, հարավ-արևելյան Եվրոպայում և ԱՊՀ երկրներում կաշառքի համար օգտագործվող եկամտի չափաբաժինը: Զարմանալի չէ, որ կենտրոնական Եվրոպայում, որը հանդիսանում է մեկ շնչին ընկնող ամենաբարձր ՕՈւՆներ և ՀՆԱ ունեցող տարածաշրջան, արձանագրվել է կաշառքի համար տրամադրվող եկամտի միջին ամենացածր չափաբաժին; դրան հաջորդում է հարավ-արևելյան Եվրոպան է, իսկ ԱՊՀ երկրները ունեն եկամտից կաշառքի համար տրամադրվող ամենամեծ չափաբաժինը: Համաձայն ՎԶԵԲ-ի, բոլոր երկրներում, բացառությամբ մեկի, 2002 թվականին արձանագրած կաշառքների համար տրամադրված չափաբաժինը կրճատվել է 2005 թվականին և այստեղ նկատելի առաջընթաց է արձանագրվել Վրաստանի, Ղրղզստանի, Ռումինիայի և Ալբանիայի կողմից:

Կաշառակերության և պետության բարգավաճման միջև փոխկապակցության հետագա գնահատումից ակնհայտ է դառնում, որ ամենահարուստ ԵԱՀԿ անդամ երկրները նրանք են, որոնք միջազգային դիտորդների կողմից ճանաչվել են որպես նվազագույնս կոռումպացված: Աղյուսակ 2.1–ում համեմատվում են մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ամենաբարձր միավորները վաստակած ԵԱՀԿ հինգ և ամենացածր միավորները վաստակած մյուս հինգ երկրները՝ ըստ Թրանսփարենսի Ինթերնեյշնլ կազմակերպության Կաշառակերության ընկալման ցուցանիշի (ԿԸՑ): Լյուքսեմբուրգը, որը ԵԱՀԿ անդամ պետությունների շարքում և ամբողջ աշխարհում ունի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ամենաբարձր միավորը, ԿԸՑ-ի ցանկում գրավել է տասներորդ տեղը: Իսլանդիան, որը ԿԸՑ-ի ամենաբարձր միավորին արժանացած երկիրն է, ԵԱՀԿ երկրների շարքում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցանկում վեցերորդ տեղն է գրավում: (Նշում. Սան Մարինոն մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ծավալով հինգերորդ տեղում է գտնվում, բայց չի երևում աղյուսակում, որովհետև չունի ԿԸՑ միավոր):

Ուղեցույցը ուղղակի փոխկապակցում չի դնում կաշառակերության ընկալման և տնտեսական բարգավաճման միջև: Բայց ուղեցույցում շեշտվում է, որ կաշառակերությունը գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրի ակնհայտորեն ամենամեծ ցուցանիշն է հանդիսանում, և, եթե երկրները ցանկանում են օտարերկրյա ուղղակի ներդրումների և ՓՄՁ-ների զարգացմամբ նպաստել տնտեսական աճին, ապա նրանց կառավարությունները պետք է պայքար սկսեն կաշառակերության դեմ: ԵԱՀԿ բոլոր երկրներում ԿԸՑ միավորները համապատասխանում են մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ին: Արևմտյան Եվրոպայի երկրներում արձանագրվել է մեկ շնչին ընկնող ամենաբարձր ՀՆԱ, ինչպես նաև ամենալավ ԿԸՑ միավորներ: Արևմտյան Եվրոպայի երկրներին հաջորդում են Կենտրոնական Եվրոպայի, որոնց էլ Հարավ-արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների մեծամասնությունը;

**ՆԿԱՐ 2.1**




Միջին մակարդակը 2005թ.-ին

Զարգացած շուկայական փնտեսությամբ երկրներ

**ԱՂՅՈՒՍԱԿ 2.1**

**Թրանսփարենսի Ինթերնեյշնլ կազմակերպության Կաշառակերության ընկալման ցուցանիշի 2005 թվականի փվյալները մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի հինգ ամենաբարձր և ամենացածր ծավալներ ունեցող ԵԱՀԿ անդամ երկրներում**

| Երկիր | Մեկ շնչին ընկնող ՀՆԱ | ԹԻ ԿԸՑ 2005-ի միավոր |
|---|---|---|
| Լյուքսեմբուրգ | ‰ 62,700 | 8.5 |
| Նորվեգիա | ‰ 42,400 | 8.9 |
| Միացյալ նահանգներ | ‰ 41,800 | 7.6 |
| Շվեյցարիա | ‰ 35,000 | 9.1 |
| Իսլանդիա | ‰ 34,600 | 9.7 |
| ԵԱՀԿ միջինը | | 5.3 |
| Սերբիա և Մոնտենեգրո | ‰ 2,600 | 2.8 |
| Մոլդովա | ‰ 2,100 | 2.9 |
| Ուզբեկիստան | ‰ 1,900 | 2.2 |
| Կիրգիզստան | ‰ 1,800 | 2.3 |
| Տաջիկստան | ‰ 1,200 | 2.1 |

**Աղբյուրներ: Թրանսփարենսի Ինթերնեյշնլ և ՄԱԱԶՀ**

Ներկայացնենք կաշառակերության դեմ պայքարում առաջընթաց արձանագրած մի շարք երկրների կողմից ձեռնարկված միջոցառումները.

- *Կաշառակերության դեմ պայքարի անկախ գործակալության կամ վարչության ձևավորում.* Կաշառակերության դեմ պայքարող անկախ գործակալությունը, որին լիիրավ գործելու իրավունք է տրվում, դրականորեն է ազդում երկրի կաշառակերության դեմ պայքարի վրա: Ռումինիայի կաշառակերության դեմ պայքարի գործակալությունը վերջերս հետաքննություն է սկսել կաշառակերության մեջ կասկածվող բարձրաստիճան պաշտոնյաների և գործարարների դեմ, լուծելով պետական կառավարման որակի բարձրացման խնդիրը և արդյունքում բահցրացնելով Ռումինիայի հեղինակությունը ներդրումների շուկայում:

- *Վարչարարական պարզեցում.* Բյուրոկրատիան հանդիսանում է կաշառակերության համար պարարտ հող: Այնտեղ որտեղ նկատվում է ներդրումային ծրագրի մերժում կամ դանդաղեցում՝ ակնհայտ է կաշառքի գոյթակղությունը բյուրոկրատի և ներդրողի համար: Ավելորդ վարչական խոչընդոտների վերացումը նվազեցնում է կաշառակերության հնարավորությունները: ԵՄՏԿ զարգացող և անցումային տնտեսությունների համար որպես լավ մոդել կարող է հանդես գալ Սլովակիան: Գործարար և ներդրումային միջավայրի վերաբերյալ մեր հարցին ի պատասխան Սլովակիայի Ներդրումային գործակալության ներկայացուցիչը նշեց, որ *Բիզնեսի իրականացում* Համաշխարհային բանկի տվյալների բազայում Սլովակիան բարեփոխումները լավագույնս իրականացնող, իսկ համաշխարհային մակարդակով չորրորդ երկիրն է:

- *Անկախ դատական համակարգի ձևավորում:* ԱՊՀ և կենտրոնական Ասիայի երկրների մեծամասնությունը սահմանադրական դրույթներ ունեն դատական համակարգի համար: Այնուամենայնիվ, նրանցից շատ քչերն ունեն իրապես անկախ դատական համակարգեր. գործադիրի գերիշխանության պատճառով: Անկախ, լավ վճարվող և բավարար չափով կրթված դատական համակարգի աշխատողների առկայությունը օրենքի գերակայության ապահովման գլխավոր գործոններն են հանդիսանում:

**ՆԵՐԴԻՐ 2.1**

### Էստոնիայի առաջընթացը դատական անկախ համակարգի կայացման ուղղությամբ

Էստոնիայի սահմանադրության մեջ մեծապես կարևորվում է անկախ դատական համակարգը: 2002 թվականի հուլիսին Էստոնիան ընդունեց նաև Դատարանների մասին օրենք, որը նպաստեց էստոնական դատարանների անկախությանը և վարչարարության որակի բարձրացմանը: ՎԶԵԲ-ի կարծիքով. «Ձնայած դատարաններում աշխատանքի արդյունավետության բարձրացման և վճիռների կատարման գործընթացի բարելավման կարիք կա, այնուամենայնիվ այն երկրների շարքում, որտեղ Բանկը գործունեություն է ծավալում, Էստոնիայում ամենամեծն է հանրային վստահությունը պայմանագրային իրավունքները պաշտպանող իրավական համակարգի նկատմամբ և արագ տեմպերով շարունակվում են դատական համակարգի վարչարարարկան բարեփոխումները»[5]:

- *Քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի բարձրացումը և նրանց արհեստավարժության խթանումը:* Բացի դատավորների լավ վճարվելուց, քաղաքացիական ծառայողները նույնպես պետք է բավարար աշխատավարձ ստանան կաշառք վերցնելու գայթակղությանը դիմադրելու համար: Եթե քաղաքացիական ծառայողները չկարողանան ապահովել իրենց համար պատշաճ կյանքի պայմաններ, ապա կաշառակերությունն անխուսափելի կլինի: Եթե կառավարությունները հակված են ունենալ ազնիվ, նպատականուղղված և արհեստավարժ աշխատանքային ուժ, նրանք պետք է ապահովեն արդար աշխատավարձեր վերջինիս համար: Առավել աղքատ երկրներում, որտեղ ավելի ցածր են աշխատավարձերը և կառավարության եկամուտները սահմանափակ են, հրամայական է առավել բարձր աշխատավարձերի վճարման համար ֆինանսական միջոցների ի հայտ բերումը: Որպես ձեռնարկված միջոցառումներից մեկը, կառավարությունները պետք է ջանեն բարելավելու գործարար միջավայրը, ինչպես նաև նվազեցնեն վարչական խոչընդոտները, ինչը ևս դյուրին կդարձնի աշխատավարձերի բարձրացումը: Ոչ անհրաժեշտ գոր-

ծողությունների կրճատումն առավել շատ ֆինանսական միջոցների հասանելիություն է ապահովում աշխատողների ընթացիկ աշխատավարձերի համար:

**ՆԵՐԴԻՐ 2.2**

### Ադրբեջանում կաշառակերության դեմ ձեռնարկված քայլերը

2005 թվականի հունվարի 1-ից Ադրբեջանում ուժի մեջ է մտել կաշառակերության դեմ նոր օրենքը: Համաձայն այդ օրենքի, նորաստեղծ հանձնաժողովը իրավասու կլինի պետական պաշտոնյաներից պահանջելու ֆինանսական բոլոր հաշվետվությունները: Ադրբերջանը նույնպես քայլեր է ձեռնարկել բարեփոխելու իր քաղաքացիական ծառայության համակարգը, և քայլերից մեկն է պետական պաշտոնյաների աշխատավարձերի էական բարձրացումը: 2003 թվականի հունվարին, Հարկային նախարարության ներսում բարեփոխմանն ուղղված միջոցառումներից մեկն էր աշխատողների 40 տոկոսի կրճատումը, որի արդյունքում մնացածների աշխատավարձը կրկնապատկվեց: Գործարարների շահերը ներկայացնող խմբեր, ինչպես օրինակ, Առևտրի ամերիկյան պալատը, նշել են Ադրբերջանի հարկային համակարգում նկատված բարեփոխման մասին: Կառավարությունը մի շարք այլ ոլորտներում նույնպես 50-100 տոկոսով բարձրացրել է քաղաքացիական ծառայողների աշխատավարձերը, ներառյալ առողջապահական և կրթական համակարգերը:

Ավելին, միջին ժամկետներում, գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը կարող է հավելյալ հարկային եկամուտներ ապահովել:

Քաղաքացիական ծառայողներից կպահանջվի նաև էթիկայի կանոնագիրք սորագրել և անցնել էթիկայի դասընթացներ: ԵԱՀԿ-ն, ԱՄՆՄԶԳ-ն և այլ դոնոր կազմակերպություններ ներկայումս կազմակերպում կամ կազմակերպել են նման դասընթացներ ԵԱՀԿ անդամ մի շարք երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանը, Ղազախստանը, Հայաստանը և Ալբանիան:

- *Գործակալի պաշտպանության մասին օրենք:* Նրանք, ովքեր կաշառակերության վկա են դառնում հաճախ չեն հայտնում դրա մասին վախենալով քաղաքացիական ծառայողի պաշտոնից ազատման կամ պաշտոնի իջեցման ձևով վրեժխնդրությունից, քաղաքական պատժից և այլն: Եթե հայտնողը պետական ծառայող է, ապա վերջինս պետք է ազատ լինի իր քայլերի մեջ կաշառակերության դեպքերի մասին մարդու իրավունքների պաշտպանին, կաշառակերության դեմ պայքարող գործակալություններին կամ ընդհանուր դիտորդներին հայտնելու համար: ԵԱՀԿ անդամ երկրների համար օրինակելի է Միացյալ Թագավորության Հանրային շահի հրապարակման մասին օրենքը (ՀՇՀՕ): ՀՇՀՕ-ն խթանում է հաշվետվելիությանն ու պատշաճ կառավարմանը, ևս մեկ անգամ հավաստիացնելով աշխատողներին, որ նրանք կարող են իրենց ապահով զգալ և հնարավոր համարել հայտնելու իրենց մտահոգությունը իրենց իսկ կազմակերպությունում գործունեության իրականացման կամ այլ կազմակերպության մեջ նկատվող անօրինականությունների մասին: Օրենքին համապատասխան իրենց մտահոգության մասին հայտնած աշխատողների համար ապահովվում է ամբողջական և անմիջապես պաշտպանություն աշխատանքի ազատումից և հետապնդումներից:[6]
- *Կաշառակերության դեմ օրենքների ընդունում և կիրառում:* Ոչ շատ վաղուց, Արևմտա-եվրոպական մի շարք երկրներ փաստորեն թույլ էին տալիս ընկերություններին հարկման ենթակա եկամուտներից նվազեցնել արտասահմանում տրված կաշառքները: Զարգացող և անցումային տնտեսություններում պետական շրջանակներում առկա կաշառակերությունը դիտվում էր որպես կյանքի իրողություն և զարգացած շատ քիչ երկրներ էին մտահոգված այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար: Ինչևիցե, մեր օրերում, Կաշառակերության դեմ պայքարի ՏՀԶԿ և Միավորված ազգերի կոնվենցիաների[7] նման միջազգային համաձայնագրերի ընդունմամբ շատ ազգեր փորձում են ուղղել այդ սխալները, թե իրենց երկրներում, թե դրսում: Այն երկրները, որոնք դեռևս չունեն համապարփակ հակակոռուպցիոն օրենսդրություն, կարող են ի հայտ բերել կիրառելի իրավական շրջանակներ նման օրենքների մշակման համար: Ինչևիցե, ինչպես նշված է Ուղե-

ցույցում, քաղաքականության կամ օրենքի ընդունումը ամբողջովին անարդյունավետ կլինի, եթե չիրականացվեն համապատասխան միջոցառումներ կամ չապահովվի օրենքի կիրառումը: Բացի հզոր և անկախ դատարաններից, իրավական և գործնական իշխանություն պետք է ունենան դատախազները պետական կաշառակերության դեպքերի ի հայտ բերման և հետապնդման համար:

Համաձայն ԵԱՀԿ Նախարարական և Մշտական խորհրդի որոշումների և 2003 թվականին Տնտեսական և բնապահպանական բնագավառների վերաբերյալ ընդունված ռազմավարական փաստաթղթի, ԵԱՀԿ-ն իր մեծ դերն ունի կաշառակերության դեմ պայքարում, սերտ համագործակցելով գործընկեր կազմակերպությունների հետ, ինչպիսին է օրինակ Միավորված ազգերի Թմրադեղերի և հանցագործության դեմ պայքարի գրասենյակը (ՄԱԹԿՊԳ): ԵԱՀԿ և ՄԱԹԿՊԳ համատեղ աշխատանքներին ներառում է Կաշառակերության դեմ ՄԱԿ-ի Կոնվենցիյի դրույթների խթանումը:

Կաշառակերության դեմ պայքարի լավագույն փորձի մասին ԵԱՀԿ Տեղեկատուն օգտակար ուղեցույց է հանդիսանում օրենսդիրների, պետական պաշտոնյաների, ՀԿ-ների, գործարարների և քաղաքացիական հասարակության համար, որոնք աշխատում են կաշառակերության դեմ պայքարի իրենց օրենսդրության, ազգային գործողությունների պլանի կամ ռազմավարությունների նախագծերի վրա: Տեղեկատուն առաջին անգամ հրապարակվել է 2004 թվականին և մինչ օրս թարգմանվել ալբաներեն, հայերեն, ադրբեջաներեն, դրղզերեն, ռուսերեն, սերբերեն, փաջիկերեն և ուզբեկերեն: Դրա հետ կարելի է ծանոթանալ նաև ԵԱՀԿ ինտերնետային էջում, որի հասցեն է www.osce.org/eea. Հիանալի աղբյուր է նաև ՄԱԿ-ի Կաշառակերության դեմ պայքարի գործիքների համակարգը:

## Պատշաճ կառավարում

***«Ներկայումս պատշաճ կառավարումը դիտարկվում է որպես լավ գործող շուկաների, և հետևաբար, ներդրումային գրավիչ նախադրյալների ու ներդրումային կապիտալի կայուն բաշխման համար վճռորոշ նախապայման»:***

Պատշաճ կառավարում և ներդրումային քաղաքականության և խթանման լավագույն փորձ, ՆԶՊ-ների դեպքը. Մեհմետ Օգուտսուի զեկույցը Ներդրումների խթանման արդյունավետ և թափանցիկ փորձին նվիրված, 2002 թվականի հունիսի 6-7-ը Ժնևում կայացած ՄԱԱԶՀ աշխատանքային հանդիպման ժամանակ:

Գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ երկրների ամենապարզ քայլերից մեկն է ուղղակի լավ կառավարումը: Կոռումպացված, անկայուն կամ անպատասխանատու միջավայրը կխրտնեցնի ներդրողներին: ՄԱԱԶՀ-ն դիտարկում է պատշաճ կառավարումը չորս սկզբունքային որակներով՝ կանխատեսելիություն, թափանցելիություն, հաշվետվելիություն և մասնակցողականություն:

Եթե կառավարությունները ցանկանում են պատշաճ կառավարումը նկատելի դարձնել ներդրողների համար, ապա նրանք կարող են կիրառել արդեն լավագույնս ճանաչված մի շարք փորձեր:

- *Սեփականաշնորհման գործընթացների և մրցույթների թափանցելի և մրցակցային անցկացում:* Եթե օտարերկրյա ներդրողները չեն հավատում սեփականաշնորհման գործընթացներին և մրցույթներին իրենց արդար մասնակցության հնարավորությանը, ապա նրանք չեն էլ հավատա որ կարող են արդար վերաբերմունք ստանալ ֆինանսական մարմինների, պետական տեսուչների կամ դատական համակարգի կողմից: Եթե սեփականաշնորհման գործընթացներն ու մրցույթները բաց և մրցակցային լինեն և ընտրության արդյունքները հասանելի հանրությանը, ներդրողները կհասկանան, որ կառավարությունն փորձում է ստեղծել հնարավորինս մրցակցային միջավայր:

- *Պետական պարտքերի ժամանակին և լրիվ վճարումը:* Հաճախ սուվերեն իշխանությունները վարկատուներին վճարումներն ուշացնելու ճոխություն կարող են թույլ տալ իրենց: Մինչ դա կարող է մեղմացնել կանխիկ դրամի հոսքի պետության դժվարությունները, այն վատ ազդանշան է ներդրողների համար: Եթե կառավարությունը չի վճարում կոմունալ ծախսերի, խորհրդատվական ծառայությունների կամ այլի համար, ապա նվազում է ենթակառուցվածքում կամ մունի-

ցիպալ պարտապտոմսերում ներդրում կատարելու գրավչությունը: Անհայտ մի ներդրող նշել է, որ ներդրում կկատարի միայն Արևելյան Եվրոպայի երկրներում, եթե ունենա ՎԶԵԲ-ի, Համաշխարհային բանկի, ԱՄՆԿ-ի կամ նման այլ կազմակերպության երաշխիքը, քանի որ նա շատ թերահավատորեն է վերաբերում կառավարության պարտքերը վճարելու պատրաստակամությանը:

- *Մասնավոր հատվածի հետ խորհրդատվության համակարգված գործընթացի հաստատում:* Մասնավոր հատվածի հետ պարբերաբար անցկացվող երկխոսությունը միայն տեղեկատվության փոխանակման հնարավորություն չէ, որ ընձեռում է: Հաճախ, մասնավոր հատվածի հետ միասին օրենսդրության նախագծի քննարկումները, հրապարակային լսումները, համաժողովների հրավիրումը և խորհուրդների ստեղծումը կառավարությանը հասարակության շահերը հետապնդող խորհրդատվական ծառայությունների, բարելավված առևտրային օրենսդրության կիրառման և պետական ծրագրերի նկատմամբ առավել մեծ աջակցության ապահովման առավելություն են ընձեռում:

## Ուղեցույցի հարցաշարի պատասխաններ

Ղրղզական կառավարությունն իր երկրի ներդրումային միջավայրի բարելավման նպատակով հաստատել է միջոցառումների գլխավոր պլան, որը կոչվում է Ներդրումների մատրիցա: Այս մատրիցան նպատակ է հետապնդում վերացնելու երկիր եկող ուղղակի ներդրումների հոսքին խանգարող բոլոր խոչընդոտները: Փաստաթուղթը կազմվել է Ղրղզստանի հանրապետության և մի շարք պոտենցիալ ներդրողների, ասոցիացիաների, պարլամենտի անդամների և միջազգային ֆինանսական հաստատությունների համատեղ ջանքերով:

(Սլովենիայի) կառավարությունը նշել է, որ «Կառավարությունը ստեղծել է հատուկ խորհուրդ (Ընկերությունների հետ համագործակցող վարչական խորհուրդ), որի հիմնական առաջադրանքն է վարչական խոչընդոտների նվազեցման նպատակով ռազմավարությունների սահմանումը»:

Ռումինիայի ֆինանսների նախարարությունը պարբերաբար հանդիպումներ է ունենում Օտարերկրյա ներդրողների խորհրդի և ամերիկյան առևտրի պալատի հարկային գծով հանձնաժողովների հետ ֆինանսական օրենսգրքի նախագծման նպատակով:

- *Ներդրումների գծով մարդու իրավունքի պաշտպանի մարմնի ստեղծում:* Ներդրողները, մասնավորապես օտարերկրյա ներդրողները, հաճախ դժվարություններ են ունենում իրենց ոչ ծանոթ մշակույթների և կանոնակարգող դաշտերի հետ աշխատելիս; Նրանց դժվարությունններն ավելանում են, երբ նրանք առերեսում են բյուրոկրատիայի կամ բանակցություններ վարում պետական սեփականությամբ ընկերությունների հետ: Միանգամայն օգտակար կարող է լինել ներդրումների հարցերով մարդու իրավունքների պաշտպանի ստեղծումը:
- *Ներդրումային միջավայրի վիճակի մասին տարեկան հաշվետվության կազմումը:* Ներդրումային միջավայրի վիճակի մասին տարեկան հաշվետվությունը կառավարությանը հնարավորություն է ընձեռում հրապարակայնորեն ուսումնասիրելու ներդրումային միջավայրի բարեփոխմանն ուղղված առաջընթացը և ի հայտ բերելու դեռևս բարեփոխման կարիք ունեցող բնագավառները: Բացի այդ, կառավարությունը կարող է հավելյալ թափանցելիություն և կանխատեսելիություն ապահովել հրապարակելով գործարար և ներդրումային միջավայրի վերաբերյալ հաջորդ տարվա համար նախատեսված ծրագրերը:

Կենտրոնական և արևելյան Եվրոպայում տնտեսական վերափոխման գործընթացներում պատշաճ կառավարման կարևորությունը հաշվի առնելով, ԵԱՀԿ-ն սկսել և շարունակում է ակտիվ դերակատարություն ունենալ պատշաճ կառավարման բնագավառում ամենահաջողված միջազգային փորձերի ներդրմանն ուղղված աշխատանքների խթանմամբ: ԵԱՀԿ-ի կողմից օժանդակվող միջոցառումները ներառում են օրենսդրական դաշտի զարգացմանն ուղված աջակցությունը, փորձագետների փոխանակման միջոցով հմտությունների փոխանցում, աշխատանքային հավաքների, կոնֆերանսների ու դասընթացների անցկացում: Բոլոր միջոցառումները իրականացվում են սերտ համագործակցելով այլ միջազգային կազմակերպությունների հետ՝ ինչպիսիք են ՄԱԹԿՊԳ-ն, ՏՀԶԿ-ն և Եվրոպայի խորհուրդը:

## *Եզրահանգումներ և առաջարկներ*

Քաղաքական կայուն միջավայրն ամուր հիմք է ապահովում տնտեսական զարգացման, և մասնավորապես, ՕՈւՆ-ների համար: Առանց կայուն քաղաքական միջավայրի, ակնհայտ է ռիսկի գործոնը: Ռիսկը խրտնեցնում է ներդրումները: Կառավարությունները պետք է երաշխավորեն քաղաքական բարենպաստ միջավայրի ստեղծումը ձեռնարկելով հետևյալ միջոցառումները`

- Անվտանգության ընկալման ամրապնդում համաշխարհային տնտեսության մեջ շարունակական ինտեգրման, տարբեր միջազգային, տարածաշրջանային և երկկողմ գործողություններին մասնակցության, դեմոկրատական բարեփոխումների խթանման, քաղաքական կայունության երաշխավորման, վստահություն ներշնչող միջոցառումների խթանման և ետադեպային միջոցառումների արդյունավետ պլանավորման միջոցով;

- Օրենսդրության կայունության պահպանում և դրա փոփոխություն միայն թափանցիկ գործընթացների միջոցով և հստակ ժամանակահատվածներում, մասնավոր հատվածի հետ բաց երկխոսության վարում;

- Էլեկտրոնային կառավարման, վարչական որոշումների հրապարակման և դրանց վերանայման միջոցով, ազատ և անկախ զանգվածային լրատվական միջոցների կիրառմամբ թափանցելիության բարձրագույն աստիճանի ապահովում;

- Կաշառակերության դեմ պայքարի ծավալում էթիկայի կանոնագրքերի, կաշառակերության դեպքերի հայտման մասին օրենքի կիրառմամբ, առավել պակաս բյուրոկրատիայի և առավել պարզ վարչարարության հաստատմամբ, քաղաքացիական ծառայողներին «ապրուստի պատշաճ հոգածություն ապահովող աշխատավարձեր» վճարելով և կաշառակերության դեմ պայքարի մարմնի ստեղծմամբ,

- Կառավարել պատշաճ, անցկացնելով արդար և մրցունակ մրցույթներ, սեփականաշնորհման բաց գործընթացներ, վարել մասնավոր հատվածի հետ համակարգված երկխոսություն և ստեղծել դաշտին առընչվող մարդու իրավունքների պաշտպանի պաշտոն:

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ՏՀԶԿ, *ՏՀԶԿ Ներդրումային քաղաքականության շրջանակ*
<www.oecd.org/document/61/0,2340,en_2649_33725_33696253_1_1_1_1,00.html> և
<www.oecd.org/document/43/0,2340,en_2649_201185_36781483_1_1_1_1,00.html>

Կուռցման խումբ, *Հսպակության բացակայության ցուցանիշ,* <www.kurtzmangroup.com>

ԵԱՀԿ, Կաշառակերության դեմ պայքարի լավագույն փորձ,
<www.osce.org/eea/item_11_13568.html>

ՄԱԿ, «Կաշառակերության դեմ պայքարի գործիքների համակարգ»,
<www.unodc.org/unodc/en/corruption.html>

Թրանսփարենսի Ինթերնեյշնլ կազմակերպության ինտերնետային էջ՝ <www.transparency.org>

## ՀՂՈՒՄՆԵՐ

[1] ՍԾՏՀ Գործարար խորհուրդ, «Աջակցություն խոչընդոտների վերացմանը և գործարար միջավայրի բարելավում», <http://www.bsec-business.org/sdirect.asp>

[2] Համաշխարհային Տնտեսական համաժողով «Բիզնես անելու համար լավագույն վայրերը», <http://www.weforum.org/site/knowledgenavigator.nsf/Content/_S12848>

[3] Marakand Minerals Limited, Հաշվապահական հաշվետվություն Խանդիզա հանքավայրի վերաբերյալ (28 Նոյեմբեր 2003).

[4] Գեղամ Մարգարյան, *Հայաստանում օչենքի գերակայության և առևտրային օրենսդրության հիմնախնդիրները, Քաղաքականության ուսումնասիրության հայկական միջազգային խումբ,* Աշխատանքային փաստաթուղթ No. 03/17 (Հունվար 2003), <http://www.armpolicyresearch.org/Publications/WorkingPapers/pdf/Gahmk%20Markarian.pdf>

[5] ՎԶԵԲ, *Ռազմավարություն Էստոնիայի Համար* (2004), <www.ebrd.com/about/strategy/country/estonia/strategy.pdf>

[6] ԵԱՀԿ, Կաշառակերության դեմ պայքարի լավագույն փորձ (2004), <http://www.osce.org/publications/eea/2004/05/12211_87_en.pdf>

[7] ՄԱ, Միավորված ազգերի Կոնվենցիա կաշառակերության դեմ (2003), <http://www.unodc.org/pdf/crime/convention_corruption/signing/Convention-e.pdf>




# Գործարար և ներդրումային միջավայրի համար մակրոտնտեսական կայունություն ու ֆինանսական աճն ապահովող քաղաքականությունների կարևորություն

Մակրոտնտեսական կայունությունն ու ֆինանսական աճը կարևոր են աղքատության կրճատման համար: Վաղուցվանից ներդրողների համար մակրոտնտեսական կայունության ամենակարևոր ցուցանիշները եղել են, որոնք ուղղակի ազդեցություն ունեն իրենց ներդրումների վրա. ինչպիսիք են ՀՆԱ-ի աճը և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճի մակարդակը, ինֆլյացիան, բնակչության աճը և համապատասխան կրթության մակարդակը: Տնտեսության զարգացմանը նպաստում է խրախուսել ապրանքների արտահանումը, օտարերկրյա ներդրումներին և օտարերկրյա աշխատուժի երկրի բաց լինելու հանգամանքը: [illegible] [illegible] պետք է դիվերսիֆիկացնեն իրենց [illegible]: Երկրները պետք է [illegible] միջնաժամկետ ֆինանսական ռազմավարություններ, [illegible] քաղաքականություններ և բաց լինեն օտարերկրյա երկրների հետ առևտուր իրականացնելու և միջազգային կապիտալի շուկաների հոսքերի համար:

## Կայուն մակրոտնտեսական միջավայրի կարևորությունը

***«Մակրոտնտեսական կայուն քաղաքականությունները շատ կարևոր են քաղաքականության բարենպաստ միջավայրի համար, քանի որ ներդրում կատարելու որոշումների կայացման նպատակով կանխատեսելի գործարար միջավայր ապահովելով նվազեցնում են բիզնես վարելու ռիսկը»:***

Առաջարկի տեսանկյունից առկա խոչընդոտների լուծում և կարողությունների կառուցում, Ասիայի և խաղաղօվկիանոսյան երկրների տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողով, Միջազգային առևտրի և ներդրման ենթահանձնաժողով, առաջին նստաշրջան, 2004 թվականի հոկտեմբերի 27-29, Բանգկոկ

Մակրոտնտեսական կայունությունը համարվում է տնտեսական աճի նախապայման: ԱՄՀ-ը սահմանում է մակրոտնտեսական կայունությունն որպես ընթացիկ հաշվի և ֆինանսական հաշվեկշռերի ու ցար և իջնող պարտքի մակարդակների առկայություն, ցածր միանիշ թվերով ինֆլյացիա և մեկ շնչին ընկնող բարձրացող ՀՆԱ: Սա մեկն է բազմաթիվ սահմանումներից: Որոշ տնտեսագետներ այն կարծիքին են, որ ցածր միանիշ թվերով ինֆլյացիան չափազանց խիստ պայման է: Հետևողականությունը մակրոտնտեսական կայունության գլխավոր պայմանն: Հիպերինֆլյացիա կամ ֆինանսական շուկայում փլուզումներ պատճառող տնտեսական անկայունությունը խրտնեցնում է օտարերկրյա ներդրողներին: Անկում ապրող ՀՆԱ-ն լճացած շուկայի ազդանշան է: Բիզնեսները չեն կարող աշխատել և շահույթ ստանալ, եթե բարձր են գները: Գների տատանումները կարող են քայքայել ՓՄՁ-ներին: Հումքի գների քսան տոկոսանոց բարձրացումը կարող է ոչընչացնել փոքր բիզնեսը: Երկարաժամկետ տնտեսական աճի համար անհրաժեշտ է մակրոտնտեսական կայուն միջավայր:

## Կորպորատիվ ներդրողների կողմից կիրառվող մակրոտնտեսական ցուցանիշներ

Մինչ տնտեսական համաժողովների ընթացքում, դոնոր կազմակերպությունների, զարգացման և ներդրումային բանկերի, տնտեսագետների և գիտնականների կողմից ուսումնասիրվում են դրամական առաջարկի կամ ընթացիկ հաշվի դեֆիցիտի վիճակագրական տվյալները, կորպորատիվ ներդրողների մեծամասնությունը բևեռում է իր ուշադրությունը ընդհանուր հաշվեկշռերի վրա ուղղակիորեն ազդեցություն ունեցող ցուցանիշների վրա: Օտարերկրյա ներդրողներն ուշադրություն են դարձնում տնտեսական աճի, և մասնավորապես ՀՆԱ-ի և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճի մակարդակներին որպես պոտենցիալ ունեցող ներդրումային թիրախների ցուցանիշներ: Աճող ՀՆԱ ունեցող երկրները ոչ միայն որպես շուկաներ են ծառայում, այլ նաև ունեն տնտեսություններ, որոնք ի վիճակի են օժանդակել ներդրումներին մարդկային ռեսուրսներով, մատակարարողներով, և ծառայություններով, որոնց պահանջը կարող է ունենալ ներդրողը իր բիզնեսը ընդլայնելու և ժամանակակից դարձնելու համար: Ցածր գներ, բայց լճացած տնտեսություն ունեցող երկիրը մի կողմից կարող է մրցունակ անցման կետ ապահովել, բայց մյուս կողմից չի կարող բիզնեսի կայուն մոդել ապահովել:

Կարևոր է նաև սղաճը: Ներդրողները հաճախ անհանգստանում են արագ աճող ծախսերից: Ավելին, սղաճի բարձր տեմպերը կամ հիպերսղաճը հստակ ազդանշան են այն մասին, որ դեռևս հաստատված չէ մակրոտնտեսական կայունությունը: Սղաճի բարձր չափերը զգալի բացասական ազդեցություն են ունենում ՕՈւՆ-ների վրա, որն էլ հուշում է, որ մակրոտնտեսական կայունությունը կարևոր գործոն է ՕՈւՆ-ների վարքագծի բացատրման համար[1]:

### Ուղեցույցի հարցաշարի պատասխաններ

Բարենպաստ է գործարար և ներդրումային միջավայրը (Բոսնիայում և Հերցեգովինայում) և այն բարելավվել է վերջին մի քանի տարիների ընթացքում: Զարգացած իրավական մեխանիզմներն ու օտարերկրյա ներդրումները խթանող հաստատությունները խոսում են ներդրումների համար բարենպաստ պայմանների առկայության մասին.

- Կայուն տարադրամ - ազատ փոխանակվող մարկ եվրոյի դիմաց ֆիքսված փոխանակման դրույքաչափով;
- Սղաճի նվազագույն դրույքաչափ կենտրոնական և արևելյան Եվրոպայում;
- Զբոսաշրջության ոլորտում աճի հնարավորություններ;

- Օտարերկրյա ներդրումների պաշտպանություն - Բոսնիա և Հերցեգովինան Ներդրումների բազմակողմանի երաշխավորման գործակալության անդամ է:
- Բանկային բարեփոխված համակարգ զգալի քանակի օտարերկրյա բանկերի առկայությամբ;
- Օտարերկրյա ներդրումների մասին օրենք, որով կանոնակարգվում են օտարերկրյա ներդրումների քաղաքականությունն ու սկզբունքները;
- Օտարերկրյա ներդրողներն ունեն նույն իրավունքներն, ինչ տեղացի ներդրողները, և
- Օտարերկրյա ներդրողների իրավունքները հատուկ պաշտպանության տակ են:

Հաճախ ուսումնասիրության են առնվում բնակչության աճն ու համալսարանական կրթությամբ ավարտողների մակարդակները՝ մարդկային ռեսուրսների ներուժը գնահատելու նպատակով: Ճարտարագետներ կամ ծրագրային ապահովման մասնագետներ փնտրող ընկերություններն ուշադրություն կդարձնեն, թե արդյոք նպատակային երկիրը կարող է ապահովել աշխատողների համապատասխան քանակ իրենց պահանջներին բավարարելու համար: Բացի այդ, նրանք կգնահատեն մարդկային ռեսուրսների ըստ տեղական և տարածաշրջանային խմբերի մասնատումը և կանգ կառնեն համալսարաններ ունեցող մեծ քաղաքների վրա: Երկրի գործազրկության մակարդակը երկու եզր ունեցող սուր է: Մեծ աշխատուժի պահանջարկ ունեցող արտադրական ընկերություններին հարմար կլինի գործազրկության բարձր մակարդակ ունեցող երկիրը, քանզի ցածր գներով աշխատուժի ձեռք բերման և կառավարության կողմից զեղչերի տրամադրման հնարավորություններ են առաջ գալիս, մինչ սպառողական ապրանք, ծառայություններ մատուցող և այլ բնագավառներում գործող ընկերությունները գործազրկության բարձր մակարդակը զարգացող և անցումային տնտեսություններում դիտարկում են որպես մակրոտնտեսական կայունության բացակայություն և անկայուն տեղական շուկայի առկայություն:

Տեղացի և որոշ օտարերկրյա ներդրողների համար վարկային ռեսուրսների տոկոսադրույքերը ծառայում են որպես հիմնական մակրոտնտեսական գործոնԿապիտալի չափազանց բարձր գինը կարող է դադարեցնել ՓՄՁ զարգացումը և նվազեցնել օտարերկյա ներդրմումների ծավալները: ՓմՁ-ների ավանդական խնդիրներից մեկը ֆինանսների նկատմամբ հասանելիությունն է: Եթե ֆինանսավորման միակ աղբյուրը 40 կամ 50 տոկոսանոց է և կրում է գրավադրման ծանրացուցիչ պահանջներ, ապա, հետևաբար, չկան ֆինանսական միջոցներ ՓՄՁ-ների համար:

Վերջին տարիներին Կենտրոնական Եվրոպայի և Բալթյան հանրապետությունների տնտեսական դինամիկ առաջընթացը և ներդրողների ներգրավումը խոսում է ոչ միայն մակրոտնտեսական այս ցուցանիշների մեջ իրենց ուժի, այլ նաև տնտեսության մեջ խելամիտ քաղաքականության վարման մասին: Հաճախ է խոսվում այն մասին, որ Էստոնիայում և Սլովակիայում ամենից դյուրինն է ձեռնարկատիրական գործունեության իրականացումը: Ինչպե՞ս են անհրապույր մակրոտնտեսական ցուցանիշներ ունեցող ԵԱՀԿ երկրները մշակում քաղաքականություններ, որոնք աճող ՕՈւՆ-ների և ձեռնարկատիրության առավել ակտիվ ծավալման միջոցով առավել մեծ տնտեսական աճի հիմք են ապահովում: Պատասխանը կարելի է գտնել ոչ Կենտրոնական բանկի կողմից արված հսկայական աշխատանքի, ոչ էլ կառավարական որոշման, այլ արտասահմանյան երկրների հետ աշխույժ առևտրի հաստատման և ներդրումների նկատմամբ բաց դռների իրականացման քաղաքականության մեջ (Ներդիր 3.1):

**ՆԵՐԴԻՐ 3.1**

### ԵԱՀԿ երկրներում բաց զարգացող և անցումային տնտեսությունների ձևավորում. Արևելյան Ասիայի թ՞ե Լատինական Ամերիկայի մոդել

Քոլին Բրադֆորդ կրտսերի «Տնտեսական աճի առաջնահերթության սահմանում. մակրոտնտեսական քաղաքականության ընտրության հնարավորությունների ընձեռում» անվանմամբ ՄԱԿ-ի քննարկման համար փաստաթղթում հեղինակը համեմատում է ասիական վագրերի կողմից արված մակրոտնտեսական քաղաքականության համեմատաբար հաջողակ ընտրությունները Լատինական Ամերիկայի պակաս հաջողակ ընտրությունների հետ: Այսպիսին է նրա տնտեսական քաղաքականությունների միջև առկա տարբերությունների ընդհանուր բնութագրումը. «Լատիական Ամերիկան դիտարկվեց որպես դեպի ներս ուղղվածությամբ, աննորմալ գնբով և ներխուժողական քաղաքականություններ ձեռնարկող տարածաշրջան, որի հետևանքով այդ երկրների տնտեսությունները դարձել են անարդյունավետ և դանդաղ զարգացող: Արևելյան Ասիան դիտարկվել էր որպես դեպի դուրս ուղղվածությամբ, ազատական, շուկայամետ, արտահանման կողմնորոշում ունեցող ռազմավարություններ իրականացնող երկրների խմբավորում»: Բրադֆորդը ապացուցում է, որ արևելյան ասիայի տնտեսությունների համեմատական հաջողությունը, ներառյալ 1990-ականների ֆինանսական ճգնաժամից հետո արագ վերականգնումը, հնարավոր եղավ շնորհիվ այդ երկրներում տնտեսական դինամիկայի, բաց շուկաների և մրցունակության վրա կենտրոնացման: Նա շարունակում է. «Հայացքն ետ գցելով արդար կլինի ասել, որ արևելյան Ասիայի տնտեսությունների մեծամասնությանը առավել մտահոգում էր իրենց տնտեսությունների մրցունակությունն առավել լայն ընկալմամբ, քան իրենց արտարժույթի փախարժեքի համար համապատասխան մակարդակի ապահովումն առավել նեղ խնդրի տեսքով: Կարելի է ասել, որ նրանք առավել մտահոգված էին իրենց տնտեսությունների արտարժույթի իրական գործող փոխարժեքի, քան իրենց արտարժույթի փոխարժեքի (ռեալ կամ պայմանական) արժեքի համար: Սա նշանակում է, որ նրանք առավել մտահոգ էին ինստիտուցիոնալ դաշտի, բանկային համակարգի, աշխատուժի կառավարմանն առընչվող փոխհարաբերությունների, գործարարության շրջանակներում ձևավորված մշակույթի և միջավայրի, օրենքի ուժի և առևտրային օրենքների համար, մակրոտնտեսական քաղաքականության բարենպաստ պայմանների հետ միասին, որպես մրցունակության բաղադրիչներ: Տնտեսական դինամիկ աճի նկատմամբ արևելյան ասիայի երկրների մոտեցումը ամբողջական է և համապարփակ, այլ ոչ նեղ և տեխնիկական: Նրանց տնտեսական քաղաքականությունները ներդրվել էին լայնածավալ ռազմավարական շրջանակներում: Մրցունակության մասին իրենց տեսանկյունը ավելին էր քան ճիշտ գների սահմանումն ու ճիշտ քաղաքականությունների վարումը և ընդգրկում էր ինստիտուցիոնալ, վարքագծային և վարչական նորմերի առավել լայն շրջանակներ: Ռազմավարական հեռանկարներն ու ընտրությունները վճռորոշ էին նրանց հաջողության համար»:

Ռազմավարական միջավայրի միասնական տեսանկյունը կարող է հաջողության կարևոր պայման հանդիսանալ: Ազգային մրցունակության ուղղվածությամբ մակրոտնտեսական քաղաքականություններ ունեցող բաց տնտեսության վրա շեշտը դնող ռազմավարական միջավայրը կարող է առավել հզոր մակրոտնտեսական միջավայր ապահովել տնտեսական աճի հասնելու նպատակով: Տնտեսությունների հսկումը միայն հանուն սոցիալական կամ ֆինանսական կայունության, կարող է, ի վերջո, արգելակել տնտեսական աճն ու ձեռնարկությունների զարգացումը:

**ՆԵՐԴԻՐ 3.2**

### Թուրքիայում վերջերս արձանագրված մակրոտնտեսական հաջողությունները

Բարձր սղաճի, գործազրկության և ի համեմատ Եվրոպայի երկրների մեկ շնչին ընկնող ցածր ՀՆԱ արձանագրած տարիներից հետո Թուրքիային հաջողվել է նշանակալից հաջողությունների հասնել մակրոտնտեսական կայունության և տնտեսության աճի ապահովման հարցում: Թուրքիայի մակրոտնտեսական քաղաքականությունները և տնտեսության ամբողջական ազատականացումը ոչ միայն տնտեսական աճ արձանագրեցին, այլ նաև բարձրացրին ՕՈւՆ-ների ներհոսքի ծավալները: Դոյչե բանկի հետազոտական կենտրոնի հատուկ գնահատականը Թուրքիայի ազատականացման մասին հետևյալն է. «Բացի Արգենտինայից, 1980 թվականին ուսումնասիրված 34 երկրներից ոչ մեկն այնքան ներփակված չէր, որքան Թուրքիան: Եվ ոչ մի երկրի չի հաջողվել այդքան արագ ազատվել սահմանափակումներից, որքան դա հաջողվեց Թուրքիային վերջին 25 տարիների ընթացքում: Այս հաջողության հիմնական պայմաններն են. (1) մասնավորապես մրցակցության խթանման նպատակ հետապնդող 1980 թվականին ձեռնարկված լայնածավալ բարեփոխումը (2) 1996 թվականին ԵՄ-ի հետ Մաքսային միավորման ստեղծումը: 1980 թվականի բարեփոխումների արդյունքում վերացվեցին սուբսիդիաներն ու գների հսկողությունը, սահմանվեցին ավելի ճկուն արտարժույթի փոխարժեքներ և տոկոսադրույքեր, ինչպես նաև ազատականացվեց առևտրի քաղաքականությունը:

Քաղաքականություններն ու դրանց արդյունքները նկարագրելու նպատակով երկու զեկույցներից հատվածներ են ներկայացվում: Դիտարկումների առաջին մասը Թուրքիայի վարչապետ Ռեսեպ Թայիփ Էրդողանին է պատկանում, որը ներկայացվեց այս տարի կայացած Համաշխարհային տնտեսական համաժողովի ընթացքում, և մյուսը ներկայացրել է Համաշխարհային բանկի Թուրքիայի գրասենյակի տնօրեն Անդրյու Վորկինկը:

Թուրքիայի վարչապետ Ռեսեպ Թայիփ Էրդողանը սկսեց իր ելույթը խոսելով վերջին երեք տարիների ընթացքում Թուրքիայի կողմից կատարված աշխատանքների և ապագայի հետ կապված երկրի անելիքների նկարագրությամբ: Արձանագարվել է 20 տոկոս տնտեսական աճ, հաստատվել է ֆինանսական կարգապահություն, ԵՄ-ի հետ սկսվել են անդամակցության շուրջ ընթացող բանակցություններ, իսկ ֆոնդային ցուցանիշը բարձրացել է 900 կետից մինչև 46,000-ի: Նա նաև նկարագրեց գործարարության նպաստող միջավայրը, որտեղ նոր ընկերությունների ստեղծումը ընդամենը մի քանի օրերի գործ է և չկա խտրականություն տեղական և օտարերկրյա ընկերությունների միջև: 2005-ից 2007 թվականներին նա ակնկալում է 5 միլիարդ ԱՄՆ դոլարի օտարերկրյա ներդրում: Իսկ ընդամենը երեք տարի առաջ, վարչապետի խոսքերով, Թուրքիան ի վիճակի չէր վճարել իր պարտքի վրա կուտակվող տոկոսը: Այսօր երկիրն ոչ միայն ի վիճակի է վճարել այս տոկոսը հարկային եկամուտներից, բայց նաև ի վչճակի է ներդրումային գործունեություն ծավալել: Ֆինանսական սեկտորը ներկայումս առողջ է նախկինում տեղ գտած բանկային ճգնաժամից հետո, ինչպես նաև Թուրքիան ամբողջությամբ ավարտել է պետական կարգավորումով տնտեսությունից դեպի շուկայական տնտեսություն անցման գործընթացը:

Աղբյուր. «Համեմատական նոր առավելություններ», Համաշխարհային տնտեսական համաժողով, տարեկան հանդիպում, 2006 թվական, հունվարի 27

Թուրքիան վերջին չորս տարիներին մեծ հաջողությունների է հասել, քանզի կարողացավ ոտքի կանգնել 2001 թվականի ճգնաժամից հետո և աճ արձանագրել հաջորդող երեք տարիների ընթացքում: ԵՄ-ի հետ բանակցությունների գործընթացը, որը պետք է սկսվի 2006 թվականի հոկտեմբերին, ամենայն հավանականությամբ, երկարաժամկետ գործոն կհանդիսանա այս աճի կայունացման համար, որը կարագացնի Թուրքիայի եկամտային համապատասխանությունը ԵՄ միջինի հետ: Թուրքական տնտեսության դինամիկ լինելու բնույթը և նրա աշխույժ մասնավոր հատվածը եկող տարիների ընթացքում շարժիչ ուժ կհանդիսանան «Թուրքիայի փոխակերպման պատմության» համար:

Թուրքիայի 2001 թվականից ի վեր տեղի ունեցած տնտեսական աճին զգալի չափով նպաստել է բարեփոխված մակրոտնտեսական կայունությունն ու տնտեսության տարբեր բնագավառներում իրականացվող ֆունդամենտալ փոփոխությունները: Սղաճի տոկոսների իր նախադեպը չունեցող անկումը մինչև միանիշ թվերի և տոկոսադրույքների կայուն անկումը նպաստեցին վստահության բարձրացմանը և աճին: Ֆինանսական համապատասխանեցումը, որով 2004 թվականին արձանագրվեց 7 տոկոսանոց բյուջետային առաջնային ավելցուկ, պետական պարտքի կրճատման հիմնական գործոնը հանդիսացավ: Չնայած, պետական զուտ պարտքը, որպես տոկոս ՀՆԱ նկատմամբ բավականին բարձր է `63.5 տոկոս, (2004 թվականի վերջ), պետական պարտքի նշանակալից իջեցումը (համարյա 30 տոկոս) և դրա կազմի մեջ կատարված բարելավումը նպաստեցին ներդրողների ռիսկի ընկալման նվազեցմանը, ինչպես ակնհայտ երևում է միջազգային պարտատոմսերի իրացման դինամիկայից և օտարերկրյա ուղղակի ներդրումների աճից:

Տնտեսական գործունեության ակտիվացումը, ինչևիցե, անցյալ տարի բերեց ընթացիկ հաշվի դեֆիցիտի ավելացմանը: Չնայած որ դեֆիցիտի համար հեշտորեն միջոցներ էին հատկացվում տնտեսության աճի բարձր մակարդակ ունեցող կապիտալի ներհոսքերից, շուկայից ակնկալիքները դեռևս փոփոխվելու ռիսկի տակ են, Թուրքիայի կողմից հիմնալիորեն կատարված աշխատանքից անկախ պատճառներով, որպիսիք են տոկոսադրույքերի գլոբալ բարձրացումը կամ նավթի համառորեն աճող գները: Դրական զարգացումը 2005 թվականի և հաջորդող տարիների համար առավել շատ օտարերկրյա ուղղակի ներդրումների ստացման հեռանկարներ է ապահովում, որը մակրոտնտեսական կայունության և աճի համար վճռորոշ գործոն է հանդիսանում:

Իհարկե, մակրոտնտեսական նման տպավորիչ զարգացումն անհնար կլիներ առանց պետական և ֆինանսական հատվածներում, շուկաների ազատականացման շրջանակներում կառուցվածքային հիմնական, և գյուղատնտեսության, էներգետիկ և հեռահաղորդակցման բնագավառներում հետագա բարեփոխումների:

Աղբյուր. Պարոն Անդրյու Վորկինկի մեկնաբանությունները «Մակրոտնտեսական քաղաքականությունները ԵՄ անդամակցության համար» թեմայով կոնֆերանսի ժամանակ

## Փակ և բաց տնտեսությունները

***«Տնտեսությունների բացումը, մարդկային կապիտալի բարելավման հետ միասին, աճի հիմնական շարժիչ ուժն է հանդիսանում: Երկրները, որոնք ապրանքների հաջող առևտուր են վարում, կարողանում են օտարերկրյա ուղղակի ներդրումներ և աշխատուժ ներգրավել, ավելի շատ են զարգանում, քան նրանք, որոնց չի հաջողվում ընդգրկվել գլոբալ տնտեսության մեջ»[2]:***

Աղբյուր. Դոյչե բանկի հետազոտական կենտրոնի կողմից 2005 թվականի նոյեմբերին ներկայացված հաշվետվություն:

Բաց տնտեսությունը գրավիչ է տեխնոլոգիաների և մտքերի փոխանակման համար և խթանում է մրցունակությանը: Արտասահմանյան երկրների հետ առևտուր և օտարերկրյա ներդրումների հանդեպ բաց քաղաքականության վարումը խթաններ են տնտեսությունների համար, որպեսզի վերջիններս, հնարավորությունները ձեռքից բաց չթողնելու համար, բարելավեն տեղի գործարար միջավայրը և ենթակառուցվածքը (Ներդիր 3.1): Ավելին, տեղական ձեռնարկությունները պարտավորվում են առավել արդյունավետ գործել, քանզի նրանք բարելավում են գործընթացներն ու արտադրում նոր ապրանքներ ու ծառայություններ:

Համաձայն Դոյչե բանկի հետազոտական կենտրոնի, բաց քաղաքականության վարումը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

- Միջազգային առևտրի իրականացում;
- Արտաքին քաղաքականության գլոբալիզացման մակարդակը;
- Օտարերկրյա կապիտալի նկատմամբ բաց քաղաքականության վարում;
- Օտարերկրյա աշխատուժի ընդունում:

1980 թվականից ի վեր իրենց տնտեսություններն առավելագույնս «բացած» հինգ երկրներից չորսն են՝ Չինաստան, Հնդկաստան, Մեքսիկա և Թուրքիա (Ներդիր 3.2): Բոլոր այս երկրները վերջին տարիներին ակնհայտ տնտեսական աճ են արձանագրել:

## Արդյունահանող ոլորտների վրաստեղծված տնտեսությունների բազմակողմանի զարգացման կարևորությունը

Մի շարք ԵԱՀԿ անդամ երկրներ, որոնք օժտված են հարուստ բնական պաշարներով, բերենք նավթը, որպես վառ օրինակ, լայնածավալ ՕՈւՆ-ներ են ստանում և հասել են տնտեսական աճի ի շնորհիվ վերջերս նավթի գների բարձրացման: Չնայած դրան, այդ երկրներին նույնպես անհրաժեշտ է ուժեղ ֆունդամենտալ քաղաքականություններ հաստատել:

***Բոլորին հայտնի է, որ օտարերկրյա ուղղակի ներդրումներն (ՕՈւՆ) իրենց վճռորոշ դերն են խաղում զարգացող, այդ թվում անցումային տնտեսությունների զարգացման գործընթացներում: Արդյունքում, վերոհիշյալ տնտեսությունների կառավարությունները ակնկալում են ՕՈւՆ-ներ, քանզի զարգացման համար արտաքին կապիտալի ստացման անհրաժեշտություն ունեն: Այն դեպքում, երբ արևելյան Ասիայի և Կովկասի անցումային տնտեսություններից մի քանիսն ունեն նավթի, գազի և հանքաքարի խոշոր պաշարներ, որոնք ինքնին գրավիչ են օտարերկրյա ներդրողների համար, մյուսներն ավելի քիչ են ապահովված բնական պաշարներով և առավել շատ դժվարություններ ունեն իրենց արդյունաբերական և ծառայությունների բնագավառներ ՕՈւՆ-ների ներգրավման խնդրում: Բայց նույնիսկ բնական պաշարներով օժտված երկրներում, տնտեսությունները բազմակողմանիորեն զարգացնելու խիստ անհրաժեշտություն կա վերոհիշյալ պաշարներից կախվածության մեջ չլինելու և ակտիվ կենսագործունեություն ունեցող արտադրություններ և ծառայություններ ստեղծելու համար: ՕՈւՆ-ները կարող են ակտիվ կապալիզատորի դեր խաղալ այդ գործընթացում:***

Աղբյուր. Արևելյան Ասիայի և կովկասյան երկրների տնտեսություններում օտարերկրյա ուղղակի ներդրումներ. Քաղաքականություններ և հիմնախնդիրներ:

Չնայած որ նավթից, գազից և այլ բնական պաշարներից ստացվող դրամական միջոցներով կարելի է կառավարության կողմից տնօրինվող միջոցների ավելցուկ ապահովել, սահմանափակ կարող են մնալ աշխատատեղերի ստեղծումն ու գնողունակության բարձրացումը: Ավելին, բազմակողմանիորեն չզարգացած տնտեսությունները, որոնք կախված են նավթից և այլ բնական պաշարներից, շատ զգայուն են շուկայական գների տատանումների նկատմամբՆավթի և գազի բավականին մեծ պաշարները ազգային հարստություն և միջազգային տնտեսության մեջ հզորություն են բերել Ռուսաստանին, մինչդեռ վերջինս դեռևս զիճում է արևելյան Եվրոպայի երկրների մեծամասնությանը մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով և վերոհիշյալ բնական պաշարների վրա հիմնված արտադրությունների համար ստացվող ՕՈւՆ-ից զատ համեմատաբար քիչ ՕՈւՆ-ներ է ստանում: Ինչպես նշեց Ռուսաստանի Դաշնության Ֆինանսների նախարարության առաջին փոխնախարար Սերգեյ Շատալովը 2005 թվականին կայացած Համաշխարհային տնտեսական համաժողովում. «Ռուսաստանը չի կարող իր հույսը միայն բնական պաշաների վրա դնել, այլ պետք է առավել թափանցիկ գործի իր այլ մրցակցային առավելությունների վրա նույնպես կապիտալ ստեղծելու նպատակով: Կառավարությունը դեռևս շատ կարևոր որոշումներ պետք է կայացնի, մասնավորապես, բանկային համակարգի և նավթի պաշարների կառավարման համար»[3]:

Ըստ ՕՈւՆ-ների զարգացման վերաբերյալ տնտեսագետների ավանդական նկարագրության, տնտեսությունները սկսում են որպես բնական պաշարների մատակարարներ, իսկ հետո, երբ օտարերկրյա ներդրողների հետ կապ է հաստատվում և կառուցվում ենթակառուցվածք, այդ տնտեսությունները ակտիվ աշխատուժ պահանջող արդյունաբերության և մշակող արդյունաբերության նպատակակետ են հանդիսանում: Քանի որ երկրները ձեռք են բերում տեխնոլոգիաներ և բարձրանում են աշխատողներին տրվող աշխատավարձերը, նրանք աստիճանաբար մուտք են գործում ծառայությունների ոլորտ և մեծ կապիտալներ պահանջող աշխատանքների մեջ: Բնական հարուստ պաշարներ ունեցող երկրներին անհրաժեշտ է մշակել այնպիսի քաղաքականություն, ըստ որի հնարավոր կլինի առաջ շարժվել զարգացման այս շրջանագծով:

Արաբական միացյալ էմիրությունները տնտեսություններն առավել բազմազան դարձնելու առումով հետաքրքիր օրինակ կարող են ծառայել ԱՊՀ և կենտրոնական Ասիայի պետությունների համար: Արաբական միացյալ էմիրությունների Տնտեսության և պլանավորման նախարար իր գերազանցություն Շեյխ Լուբնա Ալ Քազիմին նշում է, որ սեպտեմբերի 11-ից հետո նավթ արդյունահանող պետությունները նոր մոտեցում մշակեցին և պարսկական ծովածոցի պետությունները սկսեցին իրենց նավթից ստացված շահույթները ներդնել իրենց երկրներում ԱՄՆ-ի փոխարեն, գիտակցաբար որոշելով բազմակողմանի դարձնել իրենց տնտեսությունները: Արդյունքում Արաբական միացյալ էմիրությունների ՀՆԱ-ի 60 տոկոսը ապահովում է ոչ նավթային հատվածի կողմից: Արաբական միացյալ էմիրությունները նաև ազատ առևտրի համաձայնագիր են կնքել Միջին Արևելքի երկրների հետ և այդ փոքր բայց նավթով հարուստ պետությունը կարողացել է զգալի ներդրումներ կատարել աշխարհով մեկ, այդ թվում մեծ ներդրում կատարել Բրիտանական ավիաուղիների ընդհանուր կապիտալում: Ինչպես ասաց Ալ Քազիմին. «Նավթը մարդկանց համար աշխատատեղեր չի ապահովում»:

ՆԵՐԴԻՐ 3.3

## Ղազախստանի ջանքերն ուղղված տնտեսության բազմակողմանի զարգացմանը

Ղազախստան ՕՈւՆ-ների զուտ ներհոսքը կրկնապատկվեց 2003 և 2004 թվականներին: Հաշվի առնելով նավթի գների ռեկորդային աճը, 2005 և 2006 թվականների ՕՈւՆ ներհոսքի թվերը պետք է որ ավելին լինեն: Գիտակցելով ոչ նավթային ոլորտի զարգացման կարևորությունը, Ղազախստանն ազգովի առաջ է գնում դեպի վերջինիս բազմակողմանի զարգացում:

Կառավարությունը կրկնապատկել է իր ջանքերը տնտեսության բազնակողմանի զարգացման ուղությամբ ոչ-արդյունահանող հատվածները զարգացնելով: Արդյունաբերական-նորարարական զարգացման ռազմավարությունը որպես նպատակ է տեսնում գլխավորապես ոչ-արդյունահանող ոլորտների զարգացումը մրցակցային տնտեսության պայմաններում: Մանրակրկիտ ուսումնասիրություններն ի հայտ են բերել յոթ առաջնահերթային ուղղություններ՝ տուրիզմ, նավթի և գազի մշակում, սննդի արտադրություն, տեքստիլ արդյունաբերություն, նյութա-տեխնիկական ապահովման ծառայություններ, մետալուրգիա և շինարարական նյութերի արտադրություն: Ակնկալվում է, որ այս կլաստերները կարագացնեն ոչ արդյունահանող արդյունաբերությունը: Ռազմավարությանն օժանդակող պետական միջոցների օգտագործման համար ի հայտ են բերվել 24 ներդրումային ծրագրեր, իսկ հաջորդող 350-ը քննարկման փուլում են: Սննդի արդյունաբերությանն ուղղված կառավարության օժանդակությունը կնպաստի գյուղատնտեսության և ագրո-արդյունաբերության նախապատրաստմանն ԱՀԿ-ին անդամակցելու համար, իսկ պետական ենթակառույցների ներդրումներն ուղղված կլինեն շրջակա միջավայրի բարելավմանը ոչ նավթային արտադրությունների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

Այլ միջոցառումների հետ միասին զարգացմանն ուղղված կառավարության ձեռնարկած հիմնական քայլերից են ՓՄՁ-ների համար բարենպաստ միջավայրի ստեղծումը, ձեռնարկատիրական ընթացակարգերի պարզեցումը, ՓՄՁ-ների ձեռնարկած գործունեության ֆինանսավորման նպատակով հատուկ հիմնադրամի ստեղծումը:

Բազմակողմանիորեն զարգացած տնտեսություն ստեղծելու ճանապարհին, կառավարությունը ձգտում է հավասարակշռված և համապարփակ աճ երաշխավորել աջակցություն ցուցաբերելով նաև գյուղական համայնքներին:

Հաջորդ երեք տարիների տնտեսական հեռանկարը դրական է գնահատվել: Բազմակողմանի զարգացող տնտեսությունը առաջնահերթային խնդիր է մնում տնտեսությանն սպառնացող արտաքին հարվածների նվազեցման համար, և ակնկալվում է, որ Արդյունաբերական–նորարարական զարգացման ռազմավարությունն իր կարևոր դերը կունենա ոչ նավթային հատվածի զարգացման խթանման համար: Ինչևիցե, միջնաժամկետ կտրվածքով, նավթի և գազի ոլորտները տնտեսական զարգացման սկզբունքային շարժիչ ուժը կհանդիսան, իսկ ծառայությունների, շինարարության և արտադրական հատվածները կշարունակեն կատարել իրենց օժանդակող դերը:

Աղբյուր. Զարգացման ասիական հեռանկարներ, 2005 թվական, Զարգացման ասիական բանկ

## *Մակրոտնտեսական կայուն միջավայրի ստեղծում*

Դժվար է մակրոտնտեսական կայուն դաշտի և տնտեսական աճի խթանման նպատակով քաղաքականությունների մի այնպիսի խմբավորում ձևավորել, որի կիրառումը հաջող արդյունք կտա ԵԱՀԿ բոլոր տնտեսություններում: Չնայած ԵԱՀԿ անցումային տնտեսությունների արձանագրած լավագույն փորձերին, ինչպիսին են օրինակ Թուրքիան, Ղազախստանն ու Արևելյան Եվրոպայի երկրները, Ուղեցույցով նպատակահարմար է համարվում որոշ ընդհանուր ուղենիշներ տրամադրել այն պետությունների համար, որոնք դեռևս չեն հասել մակրոտնտեսական կայունության, նոր հավելումով, ըստ որի յուրաքանչյուր երկրի համար այդ քաղաքականությունները պետք է փախակերպվեն և համապատասխանեցվեն: Ուղեցույցը գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծման ճանապարհը մատնանշելու համար առաջարկում է կիրառել այնպիսի քաղաքականություններ, որոնք բաց և բազմակողմանիորեն զարգացած տնտեսություններ են արտացոլում:

- *Կառավարության միջնաժամկետ տնտեսական ռազմավարության մշակում:* Վճռորոշ է տնտեսական միջնաժամկետ ռազմավարության մշակումը: Փաստաթղթի տեսքով հրամցված ռազմավարությունը նպաստում է ներդրողների և ֆինանսական շուկաների կողմից կայունության ընկալմանը: Մանրակրկիտ քննության առնված տնտեսական և ֆինանսական բազմազան արդյունքների վրա հիմնված լավ մշակված ռազմավարությունը տանում է դեպի այնպիսի քաղաքականությունների, որոնք վարվում են ոչ ի պատասխան անհապաղ քաղաքական հանգամանքներին, այլ ազգային նպատակներ հետապնդելով:

- *Կարգապահ ֆինանսական քաղաքականություն*: Ֆինանսական քաղաքականության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, որոնք այլ երևույթներից զատ, տատանվող հարկային դրույքաչափերի պատճառ են հանդիսանում, հիասթափեցնում են թե օտարերկրացիներին, թե տեղացիներին: Մեծ պարտքերի առաջացման հեռանկարն անհանգստացնում է միջազգային ֆինանսական հաստատություններին: Պետական միջոցների վերահսկելի ծախսումը մրցունակ հարկային դրույքաչափերի հետ միասին և պարզ ու կայուն հարկային համակարգը խթան են հանդիսանում ՕՈւՆների և ՓՄՁ-ների զարգացման համար:

- *Միջազգային առևտրի օժանդակում ուժեղ քաղաքականության կիրառմամբ:* Առևտրի ազատավարական քաղաքականությունը կարևոր է, քանզի այն ՓՄՁ-ներին շուկաների հասանելիություն է ապահովում և ներգրավում է այլ տարածաշրջանների շուկաներում արտահանում կատարելու ցանկություն ունեցող օտարերկրյա ներդրողներին: Ավելին, հովանավորչությունը ապախրախուսում է ներդրողներին: Առևտրի քաղաքականության հզոր օժանդակությունն ենթադրում է երկկողմ և տարածաշրջանային ազատ առևտրի մասին համաձայնագրերի կնքում, միջազգային նորմերին համապատասխանող առավել բարենպաստ ռեժիմով ցածր տարիֆներ, ԱՀԿ-յանն անդամակցություն, առևտրի մեջ արտարժույթի անսահմանափակ օգտագործում, և չկոռումպացված և գործող մաքսային համակարգ:

- *Միջազգային կապիտալի շուկաներից հոսքերի արագացում:* Միտում կարող է լինել փորձել «կառավարել» մակրոտնտեսությունը դրամա-վարկային քաղաքականության միջոցով: Չնայած որ Կենտրոնական բանկն իր տնօրինության տակ ունի մի քանի «ազդեցության լծակներ», այն չի կարող ստեղծել, ուղղել կամ կառավարել մակրոտնտեսական բարենպաստ միջավայրը ինքնուրույն: Այդ միջավայրի ստեղծման համար հարկավոր է ազատություն տալ մասնավոր հատվածին: Կառավարությունները նպաստում են բարենպաստ միջավայրի ձևավորմանը, երբ արժույթի փոխանակվելիությանը, արժույթային լողացող փոխարժեքին և ցածր տոկոսային դրույքաչափերին նպաստող քաղաքականությունների միջոցով արագ ընթացք են հաղորդում միջազգային կապիտալի շուկայի հոսքերին:

## *Եզրահանգումներ և առաջարկներ*

Ներդրողներն ու ձեռնարկատերերը հնարավորություններ են փնտրում: Աճ և կայունություն արձանագրած տնտեսությունները հնարավորությունների տրամադրման ամենաբարձր մակարդակ են ապահովում և ամենամեծ չափերի ներդրումներ կներգրավեն: Կառավարությունները ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար կարող են ստեղծել հնարավորություններով հարուստ դաշտ երաշխավորելով հետևյալը`

- *Դեպի տնտեսական աճ կողմնորոշող մակրոտնտեսական քաղաքականություն:* ՀՆԱ աճը վճռորոշ ցուցանիշ է հանդիսանում համագործակից ներդրողների համար և մեծացնում է ներդրման պոտենցիալը:
- *Տնտեսության բացում:* Բաց տնտեսությունները հաջողության հասնելու ամենամեծ հնարավորությունն ունեն: Առևտրի ազատականացումը, կապիտալի ազատ հոսքն ու աշխատուժի ազատ շարժն ընտրած քաղաքականությունները նպաստում են տնտեսության ակտիվացմանը:
- *Տնտեսության դիվերսիֆիկացիա:* Հույսն ամբողջովին արդյունահանող արդյունաբերության վրա դնելու դեպքում, տնտեսությունը զգայուն է դառնում ապրանքային գների տատանումների հանդեպ և բոլորովին անպիտան աշխատատեղերի ստեղծման խնդրում:
- *Ռազմավարության ստեղծում:* Միջնաժամկետ ռազմավարության մշակումը հեշտացնում է ընկերությունների գործունեության պլանավորումը: Թափանցելիության առավել բարձր մակարդակը նույնպես դրական ազդանշան է ծառայում ներդրողների և այլ կարևորություն հանդիսացող գործիչների համար:

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ


Համաշխարհային տնտեսական համաժողով: <www.weforum.org>

Դոյչե բանկի հետազոտական կենտրոն: <www.dbresearch.com>

ՏՀԶԿ Ներդրումային Համաձայնագիր: <www.investmentcompact.org>

"Նպատակադրելով աճ: ԵՄ տնտեսությունը",
<http://europa.eu.int/comm/publications/booklets/move/40/index_en.htm>

Կայունության Համաձայնագիր հարավ-արևմտյան Եվրոպայի համար
<www.stabilitypact.org/wt2/default.asp>


## ՀՂՈՒՄՆԵՐ

---

[1] Քելլի Էդմիսթոն, Շենոն Մուդ, և Նեվն Վալեվ, Հարկերի կառուցվածք և ՕՈւՆ-ներ.*Բարդության և անկայունության տարբեր ազդեցություններ,* Վիլիամ Դեվիդսոնի Ինստիտուտ, Աշխատանքային փաստաթուղթ համար. 558 (Ապրիլ 2003), <http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=405400>

[2] Դոյչե բանկի հետազոտական կենտրոն, *Բացվող տնտեսությունները շահում են,* (Նոյեմբեր 2005), <http://www.dbresearch.com/PROD/DBR_INTERNET_EN-PROD/PROD0000000000189232.pdf>

[3] Համաշխարհային տնտեսական համաժողով, «Պաշարների վրա խարսխված տնտեսությունից դեպի ոլորտային դիվերսիֆիկացիա Ռուսաստանում» (18 Հոկտեմբեր 2005), <http://www.weforum.org/site/knowledgenavigator.nsf/Content/_S15467?openևevent_id=>

## Գլուխ 4



# Կառավարության ձեռնարկած միջոցառումներն ու քաղաքականությունները ուղղված գործարար միջավայրի բարելավմանը

[illegible]

## Գործարար միջավայրի բարելավում

Վերջին հաշվով, մասնավոր հատվածի ձեռնարկությունների հաջողությունը կախված է շուկայի կողմից ընդունելի գներով պահանջվող ձեռնարկությունների ապրանքների ու ծառայությունների մատուցման և դրանից շահույթ ստանալու կարողությունից: Վերջին հիսուն տարիներից քաղված դասերը ցույց են տալիս, որ ձեռնարկությունների կառավարման մեջ ուղղակիորեն միջամտելու կամ ընկերությունների միջև բռնապետական եղանակով մրցակցությունը կարգավորելու ենթարկելու կառավարության փորձերը շատ հազվադեպ, կարելի է ասել թերևս երբեք չեն տվել լավ արդյունք: Ինչևիցե, բարենպաստ գործարար միջավայրի հաստատման նպատակով իրականացվող քաղաքականությունները կարող են նպաստել հիմնական դաշտի կայացմանը, որն ընկերություններին առաջարկում է հաջողության նվաճման առավելագույն հնարավորություններ:

## Հարկային քաղաքականություն

Հարկերն անփոխարինելի են պետական եկամուտների բարձրացման համար, որոնք իրենց հերթին անհրաժեշտ են կառավարություններին իրենց գործառնությունների ֆինանսավորման և քաղաքացիներին անվտանգության և այլ ծառայություններով ապահովելու համար: Ինչևիցե, անարդյունավետ, խտրական և չափազանց ծանր հարկեր ենթադրող քաղաքականություններն ու փորձերը կարող են ապախրախուսել հարկատուներին կամավոր վճարելու իրենց հարկերը: Սա բերում է հարկերի հավաքումից ստացված պետական եկամուտների նվազեցմանը, ավելացնում է պետական կաշառակերության դրդապատճառներն ու գայթակղում որոշ ընկերությունների կսպարել ոչ-թափանցելի, աշխատանքի արդյունավետությունը բացառող փորձեր թաքցնելու «հաշվեմատյաններից դուրս» գործարքները:

Անցումային շատ փնտեսություններում դեռևս թույլ են հարկահավաքման ընթացակարգերը և լայնորեն տարածված է հարկերից խուսափումը: Հարկային մարմիններին դեռևս անհրաժեշտ է սովորել ինչպես ղեկավարել շուկայի վրա հիմնված հարկային համակարգը, հարկային շատ տեսչություններ մինչ օրս չունեն ժամանակակից տեխնոլոգիաներ և ենթակառուցվածք պատշաճ գործունեություն ծավալելու նպատակով: Հարկահավաք տարբեր գործակալությունների, ինչպես օրինակ հարկային և մաքսային մարմինների, միջև հաճախ չկա համագործակցությունը: Դատական համակարգերում ունակ չգործելու հանգամանքը դժվարություններ է առաջացնում հարկերի հավաքման ժամանակ: Նման խնդիրները դժվարություններ են պատճառում օրինապահ մասնավոր ընկերությունների համար:[1] Դրանք նաև զրկում են պետության այդքան անհրաժեշտ եմակուտներից:

**ՆԵՐԴԻՐ 4.1**

### Գործարար միջավայրի ազդեցությունն ընկերությունների վրա

Ներդրումներ կապարելու, աշխատատեղեր ստեղծելու և աճելու ընկերությունների հնարավորություններն ու շարժառիթները կախված են ակնկալվող շահույթներից: Շահույթների վրա իրենց ազդեցությունն ունեն գները, ռիսկերն ու մրցակցությանը սպառնող արգելքները: Կառավարությունները մեծ ազդեցություն կարող են ունենալ այս երեք գործոններից յուրաքանչյուրի վրա:

- Գների առումով. ծարչական բեռի և բյուրոկրատիայի, հարկերի, կաշառակերության մակարդակների նվազեցում, ենթակառուցվածքային ծառայությունների, աշխատուժի, ֆինանսների կանոնակարգում;
- Ռիսկերի առումով. Քաղաքականության կանխատեսելիության ապահովում, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների սահմանում, պայմանագրերի պարտադիր կատարում, և
- Մրցակցությանը սպառնող արգելքների առումով. ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի ու սնանկացման վերահսկում, մրցակցության մասին օրենք, մուտք ֆինանսական և ենթակառուցվածքային շուկաներ:

Աղբյուր. Համաշխարհային բանկ

Հարկերից խուսափման ռիսկերն ու դրա հետևանքով վճարվող հնարավոր ծախքերը, ինչպես նաև համապեղ կառավարման մշակույթի խթանումը կարող են եփ կանգնեցնել ընկերություններին անօրինական գործունեություն ծավալելուց: Ինչևիցե, ծախքերի բարձրացմանը բերող, ռիսկի և անորոշության մթնոլորտ ձևավորող և ՓՄՁ-ների միջև մրցակցությունը նվազեցնող օտարերկրյա ներդրումներին ու ՓՄՁ-ների զարգացմանը խոչընդոտող հարկային վատ քաղաքականությունների ու փորձերի օրինակին չհետևելու նպատակով զարգացմանը խթանող հարկային քաղաքականություններով պետք է փորձ արվի առավելագույնի հասցնել հարկերի հավաքման մակարդակը և ստեղծել տնտեսության զարգացմանը թափ հաղորդող գործաբար միջավայր: Հաջորդող գլուխներում քննարկվում են հարկման ընդհանուր քաղաքականությունները: ՓՄՁ-ների զարգացմանը հապկորոշ հարկային քաղաքականությունները քննարկվում են Գլուխ 8-ում:

Հարկման մակարդակները կարող են ազդել ներդրողների որոշումների վրա, թե արդյոք կոնկրետ տարածաշրջանում որտեղ կատարել ներդրում: Ինչևիցե, եկամտահարկի բարձր դրույքաչափերը կարող են ապակողմնորոշել որոշում կայացնող մարմիններին օտարերկրյա ներդրողներ ներգրավելու և ձեռնարկատերերին շահագրգռելու կարևոր իրենց աշխատանքում: Ավելին, չնայած հարկային դրույքաչափերը կարող են դեպի նպատակը գնացող թվալ, բայց դրանք կարող են խաբուսիկ լինել, որովհետև հարկման առաջընթաց արձանագրած ռեժիմները հաճախ կանոնների չափազանց բարդ համակարգ են ենթադրում, որոնք դժվարեցնում են ընկերությունների աշխատանքը կանխատեսելու իրենց հավանական հարկային պարտավորությունը: Արդյունքում, խելացի և փորձառու ձեռնարկատերերի վրա պայմանական ցածր հարկային դրույքաչափն ավելի քիչ ազդեցություն է ունենում, քան հարկային ակնհայտ ցածր բեռը: Փաստերի հիման վրա ներդրողներին խորհուրդ է տրվում ներդրման մասին իրենց որոշումների կայացման ժամանակ առավել շատ կարևորել հիմնական ենթակառուցվածքը, քաղաքական կայունությունը, աշխատուժի գինն ու դրա հասանելիությունը, քան հարկային դրույքաչափերը: Այսպիսով, չնայած որ հարկերը ներդրողների ծախքերի կարևոր և հաշվարկելի բաղադրիչ են կազմում, տնտեսագետները զգուշացնում են, որ հարկային արտոնությունները «երկրի ներդրումային միջավայրի բացասական գործոնները փոխհատուցող աղքատիկ գործիք են հանդիսանում»[2]: Ավելին, հարկային ճոխ արտոնությունները, որոնցով հատուկ առավելություններ են տրամադրվում օտարերկրյա ներդրողներին, կարող են վնասել ՓՄՁ-ներին և տեղական մրցակցությանը. բարձրացնեն կառավարման ծախսերը, խեղաթյուրեն շուկան և լայնածավալ կաշառակերության պատճառ հանդիսանան: Այս ամենը նպատակին չհետապնդող մոտեցում է, որն իջեցնում է գործող կորպորատիվ հարկային դրույքաչափերը բոլոր ընկերությունների համար, վերածում է առավել հավասարակշռված երկարաժամկետ քաղաքականության[3]:

*Եկամտահարկի պարզեցում:* Պարզեցված հարկումը կարող է նպաստել ընկերությունների շրջանում գործունեության դաշտի հավասարեցմանը, նպաստել հարկի կամավոր վճարմանը, օգնել ընկերություններին ավելի լավ կանխատեսել իրենց ծախսերն ու առավել ճշգրիտ ֆինանսական ծրագրեր մշակել, ինչպես նաև ավելի դյուրին դարձնել հարկերի հավաքման գործընթացը: Ընդհանուր առմամբ, ցածր դրույքաչափեր ենթադրող ավելի պարզ և արդար համակարգը, որը խտրականություն չի դնում ընկերությունների միջև, ՕՈւՆ-ների ներգրավման և ձեռնարկատիրության զարգացման համար ամենալավ հիմքն է ապահովում:

*Ֆիքսված դրույքաչափով հարկեր:* Հարկման պարզեցում ասելով կարելի է հասկանալ աճող հարկման վերացում և «միասնական դրույքաչափով հարկի» ընդունում, այսինքն, մեկ դրույքաչափ շահութահարկի և եկամտահարկի համար[4]: Այս քայլը կարելի է կիրառել որոշակի հանգամանքներում և ժամանակահատվածում, որպես դեպի աճող հարկում հնարավոր վերադարձի սկիզբ: Արևելյան Եվրոպայի շատ երկրներ, ներառյալ Ռուսաստանն ու Սլովակիան, հաջողությամբ ընդունել են այս հարկատեսակը: Փաստորեն եկամուտները շատացել են ստվերային տնտեսությունից հավելյալ հարկատուների գրավման հետանքով և տնտեսության աճի շնորհիվ:

Էստոնիան արևելյան Եվրոպայի երկրներից դեպի միասնական դրույքաչափով հարկի կիրառումը շարժումն առաջինը ձեռնարկողն էր՝ 1994 թվականին: Այս հարկը միասնական և անհատական եկամուտների վրա դրված հիմնականում միակ հարկային դրույքաչափն

է և գաղափարը կայանում է նրանում, որ նոր պարզությունը հեշտացնում է բացերը ծածկելու և հարկերից խուսափողներին հետապնդելու կառավարության գործը, ինչպես նաև օգնում է հարկատուներին գնահատել իրենց պարտավորությունները, շտպացնում է ավելի շատ արտադրելու կամ վաստակելու նրանց շարժառիթները, քանի որ նրանց հարկի առավելագույն դրույքաչափը մնում է անփոփոխ: Նվազեցված դրույքաչափը նույնպես նպաստում է հարկերից ավելի քիչ չափով խուսափմանը: Հարկի ընդունումից ի վեր, Էստոնիայում բարձրացել է հարկերից ստացված պետական եկամուտների մակարդակը, արձանագրվել է ՀՆԱ և ՕՈւՆ աճ:

Ֆիքսված դրույքաչափով հարկերի կիրառումը հաջողությամբ է պսակվել նաև ավելի մեծ երկրներում, ներառյալ Ռուսաստանում, որտեղ կառավարությունը եկամտի վրա կորպորատիվ հարկի դրույքաչափը 35 տոկոսից իջեցրել է 24 տոկոսի: Ռուսաստանն ընդունել է այս մոտեցումը 2001 թվականին և եկամուտների մեջ 26 տոկոսի աճ է արձանագրել առաջին իսկ տարում գլխավորապես ի շնորհիվ նախկինում վճարումներ չկատարած հարկատուների: 2001-2004 թվականների ընթացքում Ռուսաստանը միջին հաշվով տարեկան 35 տոկոս մուտքերի աճ է արձանագրել: Նման հաջողությունների են հասել նաև Լիտվայում, Լատվիայում, Ռումինիայում և Սլովակիայում: Շատ երկրներ դեռևս 20-ականների կեսերին են միասնական դրույքաչափով հարկումը, բայց նշանակալից հաջողություն հավելյալ եկամտի և ՕՈւՆ-ի գրավման մեջ չեն ունեցել, որը ցույց է տալիս, որ ընկերություններն առավել գրավիչ են համարում իրենց ընդհանուր հարկային պարտավորությունը ճշգրտորեն կանխատեսել թույլատրող հարկային համակարգը, քան պայմանական ցածր դրույքաչափեր, բայց անկանխատեսելի արդյունքներ ենթադրող բարդ համակարգը:

*Վերաներդրման դեպքում նվազեցումները:* Էստոնիայի կառավարության ՕՈւՆ-ների ներգրավման մեջ ունեցած հաջողությունը մասնակիորեն պայմանավորված է նորարարական քաղաքականության կիրառմամբ, ըստ որի սկզբնական ներդրումներից ստացված և կրկին անգամ ընկերության մեջ ներդրված շահույթները ենթակա չեն հարկման: Հարկային բեռի նվազեցումից զատ, այս քաղաքականությունը քաջալերում է ընկերություններին ընդլայնել իրենց բիզնեսներն ու ստեղծել նոր աշխատատեղեր:

*Ավելացված արժեքի հարկի գերավճարի վերադարձ:* Բազմաթիվ հարկային համակարգերում առաջինը հարկվում են ծախսերը, իսկ հետո ապրանքի արտադրման համար օգտագործված ծախսերի կատարումից հետո նորից հարկվում է վերջնական արտադրանքը: Արդյունքում ստացվում է բազմակի հարկում: Ավելացված արժեքի հարկով (ԱԱՀ) փորձ է արվում խուսափել բազմակի հարկումից: ԱԱՀ-ն կիրառվում է ապրանքների կամ ծառայությունների վերջնական սպառման ժամանակ վերջնական սպառողի նկատմամբ: Այն գանձվում է գնման կամ վաճառքի յուրաքանչյուր փուլում, բայց նվազեցումներ են իրականացվում նախորդ գնումների վրա վճարված հարկերի չափով:

ԱԱՀ-ի համար գրանցված տեղական ընկերություններին թույլ է տրվում իրենց վճարած ԱԱՀ-ի համար կրեդիտագրման հայտ ներկայացնել իրենց մատակարարողներին: Այն ինչ ընկերությունները պարբերաբար պետք է վճարեն հարկային մարմիններին հաճախորդների հաշվին գրված գումարների («դուրս եկող հարկ») և մատակարարներին վճարվող ԱԱՀ գումարների («ներս եկող հարկ») տարբերությունը: Ընդհանրապես օտարերկրյա ընկերությունները կարող են ունենալ վաճառքների վրա եղած ԱԱՀ-ի դիմաց փոխհատուցումներ, որի համար ԱԱՀ-գրանցված բիզնեսները կարող են պահանջել ներս եկող հարկի հանում որպես տեղական ԱԱՀ-ների դիմաց վճարման փոխհատուցում: Եթե օտարերկրյա ընկերությունների համար նման առավելություններ չկան, ապա ԱԱՀ համակարգը կարելի է խտրական համարել և արձանագրել միջազգային առևտրի պայմանագրերի խախտում: Բացի այդ, ԱԱՀ-ն սովորաբար փոխհատուցվում է հարկվող երկրից արտահանվող ապրանքների նկատմամբ[5]:

ԵԱՀԿ որոշ երկրներում գործունեություն ծավալող օտարերկրյա ներդրողներն ու արտահանողները նշել են ԱԱՀ գերավճարների վերադարձման խնդրում առկա դժվարությունների մասին: Հաճախ, ԱԱՀ–ի գերավճարների վերադարձման փոխարեն հնարավոր է հաշվանցում կատարել հարկային այլ պարտավորությունների դիմաց: Ինչևիցե, հաճախ, հարկատուն «չի կարող հաշվանցում կատարել հարկային այլ պարտավորությունների դիմաց քանզի վերադարձման ենթակա ԱԱՀ գերավճարի ծավալը ավելի մեծ է, քան մնացած հարկերը»[6]: Որոշ դեպքերում այս դժվարությունները բխում են այն փաստից, որ

չնայած օրենսդրության մեջ ԱԱՀ գերավճարների վերադարձման մասին հիշատակման, չկա դրա ընթացակարգի գործնական կիրառումը սահմանող որևէ օրենք կամ կանոնակարգ: Այլ խոսքերով ասած, ԱԱՀ գերավճարի վերադարձման հիմնական խոչընդոտը իշխանությունների դժկամությունն է վերադարձնելու այն «եկամուտները», որոնք նրանք, փաստորեն, իրավունք չունեն պահել[7]: Այն երկրները, որոնք ցանկանում են ներգրավել կամ երկար պահել օտարերկրյա ներդրումները և խթանել տեղական ապրանքների արտահանումը պետք է քայլեր ձեռնարկեն երաշխավորելու ԱԱՀ գերավճարների ժամանակին և հստակ վերադարձը:

*Հարկային հաշվետվությունների էլեկտրոնային համակարգեր:* Հարկային վճարումների հետ կապված ձգձգումներն ու ոչ արդյունավետ կատարումը կարելի է նվազեցնել, եթե ստեղծվի փվյալների ինտերնետային էլեկտրոնային պահպանման բազա: Խորվաթիայի հանրապետությունն այս առումով նշանակալից հաջողության է հասել փվյալների էլեկտրոնային պահպանման e-Regos[8] անվամբ հայտնի ծառայություն ստեղծելով, որը ԱԱՀ էլեկտրոնային գրանցման և եկամտահարկերի տարեկան վճարման փվյալների էլեկտրոնային պահպանման հնարավորություն է ընձեռում[9]:

**ՆԵՐԴԻՐ 4.2**

## Մաքսային վարչարարության կանոնակարգումը պետական միջոցների խելամիտ ներդրում է

***Այն երկրները, որոնք ձախողել են համաքայլ լինել մաքսային ոլորտի համար ընդունված համաշխարհային չափանիշներին, կտեսնեն որ ներդրողները ուղղակի չեն կարող իրենց կազմակերպչական բարձր ծախսեր թույլ տալ. մաքսատների անարդյունավետ աշխատանքի պատճառով: Այս երկրների ֆինանսների նախարարները իրենց երկրներ օտարերկրյա ուղղակի ներդրումներ բերելու նպատակով պետք է առավել կուռ մաքսային համակարգ ապահովեն:***

Աղբյուր. Առևտրի միջազգային պալատ:

Հումքի բարձր սակագները բարձրացնում են արտադրության գինը: Բարձր սակագները կարող են հակասել այն ընկերությունների ծրագրերին, որոնք փնտրում են արտահանում կատարելու համար հարմար ցածր ծախսեր պահանջող երկիր: Մաքսային ընթացակարգերի իրականացման ձգձգումների պատճառ հանդիսացող անարդյունավետ կառավարումը ընդհատում է արտադրական փուլերը և ապրանքների շուկա արտահանելու հնարավորությունները: Կաշառակերության դեպքերի առավելագույնս կարելի է հանդիպել մաքսային ոլորտում և մաքսային կոռումպացված գործակալությունները առևտրի և ներդրման ամենաակնհայտ խոչընդոտներն են: ԵԱՀԿ մի շարք երկրներ առընչվել են մաքսային ընթացակարգերի հետ կապված խնդիրների հետ: Այս խնդիրների լուծման նպատակով, օրինակ Լիտվայում, լուրջ քայլեր են ձեռնարկվել մաքսային ընթացակարգերի բարելավման և արդիականացման ուղղությամբ: Մաքսային բարեփոխումները ներառում են՝

- Մաքսային ոլորտի համար բիզնես ռազմավարության մշակում;
- Սակագների կառավարման ընդգրկուն համակարգի ներդրում, որով գնահատվում և դասակարգվում են ապրանքներն ու, համապատասխանաբար, կիրառվում դրույքաչափերն ու տուրքերը;
- Տարածաշրջանային համագործակցություն այլ, մասնավորապես, Հյուսիսային Եվրոպայի պետությունների մաքսային մարմինների հետ, որոնք Բալթյան հանրապետությունների սահմանների վրա նպատակ ունեն կրճատել մաքսային ձևակերպումների իրականացման ժամանակը մինչև երկու ժամ կամ ավելի քիչ;
- Ապրանքների բազմազան դասակարգումներ կատարող մասնագետների վարձում այնպիսի աշխատանքների համար, ինչպիսին արդյունաբերական և մտավոր սեփականության պաշտպանությունն է;
- Ֆինլանդիայի մաքսատան հետ իրականացվել է համատեղ ծրագիր, և

- Մաքսային մարմինների համար մշակվել և ընդունվել է վարքագծի կանոնագիրք:

Կաշառակերությունը մաքսային մարմինների շրջանում, եթե չանվանենք մաքսային ոլորտում վարչական ամենամեծ խնդիր, ապա կասենք ամենաընդունված: Հունգարիան մշակել և իրականացրել է հակա-կոռուպցիոն ծրագիր, որով հաջողվել է նվազեցնել կաշառակարության մակարդակը: Հունգարական ծրագրի հիմնական բաղադրիչները հետևյալն են`

- Մաքսային կառավարման ինտեգրացված համակարգ, որի շրջանակներում կիրառվում են նրբագծային կոդով մաքսային հայտաձևեր;
- Մաքսային ոլորտի աշխատակազմի ռոտացիա;
- Աշխատակազմի վերապատրաստում` կրթության ստուգումը, փորձնական շրջանն ու համապատասխանելիության ստուգումը ներառյալ;
- Արդար աշխատավարձեր;
- Էթիկայի ուսուցանում;
- Գործողությունների փակ դիտարկում;
- Մաքսային գործակալների կողմից կանխիկ դրամի փոխիհնման և անձնական բջջային հեռախոսի օգտագործման վերաբերյալ կանոններ, և;
- Վարքագծի կանոնագիրք:

Աղբյուր. ՄԱԶԾ զրասենյակ, Լիտվա և Ցանոս Նագիի «Մաքսային ոլորտում կաշառակերության դեմ պայքարը» թեմայով ներկայացումը, Customs and Finance Guard, Հունգարիա

## *Զբաղվածության քաղաքականություն և աշխատանքի շուկայի ճկունություն*

Աշխատուժի շուկայի ճկունությունը մարդկային կապիտալի առավելագույն օգտագործման կարևոր երաշխիք է հանդիսանում: Համաշխարհային բանկի համար վերջերս արված ուսումնասիրության եզրահանգումը հետևյալն էր, «Ինչքան ճկուն է հյուրընկալող երկրի աշխատուժի շուկան ի համեմատ ներդրողի երկրում աշխատուժի շուկայի, այնքան մեծ է հյուրընկալող երկրում ներդրում կատարելու հավանականությունը»[10]:

Աշխատուժի ճկուն շուկայի առկայությունը, առանձնակիորեն կարևոր է այն երկրների համար, որոնք իրականացնում են սեփականաշնորհման քաղաքականություն: Այն ընկերությունները, որոնք գնում են պետական ձեռնարկություններ ստիպված են հաճախ կրճատելու աշխատողների քանակը ձեռնարկության գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու և առավել շահույթ ստանալու նպատակով: Այս նորեկներին ընդունելու համար անհրաժեշտ է աշխատուժի ճկուն շուկա: Ընկերությունները պետք է հնարավորություն ունենան կես դրույքով կամ մասնակի ներգրավմամբ աշխատողներ վարձել, աշխատողներ, որոնք մեկից ավել աշխատանք պետք է ունենան, և նրանց հետ կնքեն պայմանագրեր: Եթե չկա դրա հնարավորությունը, ապա կարող է գործազրկության մակարդակի բարձրացում արձանագրվել, իսկ աշխատողներն կմղվեն դեպի ստվերային տնտեսություն:

***Որո՞նք են աշխատուժի ճկուն շուկայի հիմնական բաղադրիչները***

*(1)* Բիզնեսի կարիքներին բավարարող *աշխատուժի մասին որոշումներ կայացնելու մեջ առավել ազատությունը* երկրի գործարար միջավայրի բարելավման կարևոր պայման է հանդիսանում:

Բիզնեսները տուժում են աշխատուժի շուկայի ճկունությանը ճնշող սահմանափակումներից: Ընկերությունը, որն ի վիճակի չէ համապատասխանեցնել աշխատանքային ուժի ծավալները իր բիզնեսի կարիքներին, կարող է կորցնել իր մրցունակությունը: Աշխատուժի վրա կապարված ծախսերը կարող են հավասարվել եկամուտներին և ընկերությունը կսնանկանա, եթե նրան չհաջողվի կրճատել իր այդ ծախսերը:

Երկրները պետք է պաշտպանեն իրենց աշխատողներին ամեն տեսակի անարդար շահագործումից և խտրականություններից և պետք է կիրառեն պաշտպանական միջոցառումներ աշխատանքի ընթացքում ստացված վնասվածքներն ու մահվան դեպքերը կրճատելու համար: Այս ուղղությամբ լավ մեկնար-

կային կետ կարող է հանդիսանալ Աշխատուժի միջազգային կազմակերպության (ԱՄԿ)[11] 1998 թվականին հռչակած Աշխատանքի վայրում հիմնական սկզբունքների և իրավունքների մասին Հռչակագիրը, որը խթանում է ԱՄԿ մի շարք պայմանագրերում պարունակվող աշխատանքային հիմնական սկզբունքներին հետևումը:

ԵԱՀԿ անցումային տնտեսություններին ներդրումների ներգրավման նպատակով մրցակցային հիմնական առավելություններից մեկից ամբողջապես օգտվելու հնարավորության ընձեռման համար, որն է հարմար գներ պահանջող լավ պատրաստված և կրթված աշխատուժի հասանելիության ապահովումը, կառավարությունները պետք է ուշադիր լինեն չխրտնեցնելու ներդրողներին աշխատողների աշխատանքից ազատման, աշխատանքային ճկուն պայմանագրերի վրա սահմանափակումներ դնելով, աշխատանքի դադարեցման մասին ծանուցման երկար ժամկետներ և արձակման նշանակալից և պարտադիր նպաստներ պահանջելով: Երկրների միջև գոյություն ունեցող տնտեսական, սոցիալական, մշակութային և պատմական տարբերությունները որոշ բարեփոխումներ որոշ երկրների համար առավել կիրառելի են դարձնում, քան այլոց համար:

*(2) Աշխատողներին արտաժամյա աշխատանքի տրամադրման հնարավորության ընձեռում:* Շատ կառավարություններ սահմանափակում են դնում աշխատողի շաբաթական կտրվածքով աշխատաժամերի վրա: Այս սահմանափակումը հաճախ չի համաձայնեցվում ձեռնարկությունների միջև և կարող է նվազեցնել ընկերության արտադրողականությունը: Բացի այդ, շատ աշխատողներ ցանկանում են արտաժամյա աշխատանքով լրացուցիչ գումար վաստակել: Թե աշխատողներին, և թե աշխատանք տրամադրողներին բավարարելու համար օրենսդրությունը կարող է արգելել արտաժամյա աշխատանք կատարելու պարտադրանքը, բայց փոխարենը հնարավորություն ընձեռնել հավելյալ աշխատանք կատարելու սեփական նախաձեռնությամբ և պարտադիր հավելյալ փոխհատուցման պայմանով, օրինակ «ժամանակ գումարած կեսը» (հիսուն տոկոսով բարձր մեկ նորմալ աշխատանքային ժամի համար վճարված գումարից) չափով արված արտաժամյա աշխատանքի դիմաց: Նման բնույթի օրենքները թույլ են տալիս ընկերություններին կիրառել իրենց աշխատուժը առավել ճկունորեն, միևնույն ժամանակ արդար վերաբերմունք ապահովելով իրենց աշխատողների համար: Նման ճկունությունն առանձնապես վճռորոշ է ՓՄՁ-ների համար, որոնք պետք է շատ արդյունավետ գործունեություն իրականացնեն գոյությունը պահպանելու համար:

*(3) Ընդունելի սոցիալական ապահովման/զբաղվածության հարկեր:* ԵԱՀԿ շատ անցումային տնտեսություններում գործատուի հարկային բեռն այնքան բարձր է, որ կարող է հասնել աշխատողի աշխատավարձի 50 տոկոսի չափին կամ ավելիին: Բուլղարիայում գործող Աշխատուժի շուկայի ԱՄՆՄԶԳ ծրագրի 2004 թվականի հաշվետվությունում նշվում է, որ բուլղարական ընկերություններն ավելի են տուժել սոցիալական բարձր հարկերից, քան օտարերկրյա ընկերությունները:[12] Տեղական ընկերությունները մատնանշեցին, որ նրանք ճզմվում են միջազգային մրցակիցների և ստվերային տնտեսության մեջտեղում: Հաշվետվությունում որպես եզրակացություն նշվում է, որ սոցիալական բարձր հարկերն իջեցնում են աշխատավարձերը և դրդում ընկերություններին գործելու աշխատանքի և հարկերի մասին կանոնակարգերին մասամբ համապատասխան, ամբողջությամբ դրանց համապատասխան գործելու փոխարեն: Գործատուի կողմից հատկացումների փաստացի ծավալի աշխատավարձի 35-40 տոկոսի շրջակայք հասցնելը ԵԱՀԿ անդամ պետություններին հնարավորություն կտար հավասարվել առավել զարգացած Եվրոպական երկրներին: Հարկային դրույքաչափերի արդյունքում ստացված եկամտի կրճատումը սովորաբար փոխհատուցվում է ստվերային տնտեսության մեջ գործողների կողմից, որոնք ցանկանում են վճարել ընդունելի հարկեր և ստանալ առավել շատ շահույթ:

*(4) Ժամկետային, մասնակի զբաղվածությամբ և ժամանակավոր աշխատավորներին աշխատանքի վերցնելու ազատություն* Բիզնեսներին հաճախ անհրաժեշտ են լինում աշխատողներ սեզոնային կամ ծրագրի վրա հիմնված աշխատանքների համար: Ընկերությունները պետք է հնարավորություն ունենան վարձել աշխատողներին այդ կոնկրետ կարիքների բավարարման համար: Ընկերությունների առջև ամբողջական զբաղվածությամբ աշխատակիցների վարձման պահանջը բերում է վարձվող անձանց քանակի կրճատման և/կամ ընկերությունների առավել պակաս շահույթի ստացման, որոնք կամ

պետք է առավել ցածր հարկեր վճարեն, կամ բոլորովին չկարողանան պահպանել իրենց գոյությունը:

*(5) Ընդունելի պարտավորություններ մասնագիտական դասընթացների վերաբերյալ:* Գործատուներից կարող է պահանջվել մասնագիտական դասընթացի կազմակերպմանն ուղղված միջոցառում ձեռնարկել հնարավորություն ընձեռելով աշխատողներին լավ կապարել իրենց աշխատանքն ու ազգային աշխատուժի կտրվածքով առավել գրավիչ դառնալ: Նման կարգի պահանջները չպետք է ընդհանուր արտադրողականության ու ընկերության շահութաբերությանը վնասող ասփիճանի պարտադրող լինեն:

## ԵԱՀԿ երկրներում աշխատուժի շուկայում տեղի ունեցած բարեփոխումները

2003 թվականին Պորտուգալիան փոփոխություն մտցրեց իր աշխատանքային օրենսգրքի մեջ և Քեյ Փի Էմ Ջի-ի կողմից ուսումնասիրված ընկերությունների 55 տոկոսի կարծիքով արված փոփոխությունների արդյունքում Պորտուգալիան ներդրումների համար առավել գրավիչ տարածք պետք է դառնար: Նոր աշխատանքային օրենսգրքից ընկերությունների հիմնական երեք ակնկալիքներին էին՝

- Աշխատանքային ժամերի ճկունության բարելավում;
- Աշխատողների հիվանդության պատճառով ազատ օրերի նկատմամբ առավել խիստ հսկողություն;
- Պարտադիր մասնագիտական ուսուցում:

Իր տնտեսության վերակառուցումից հետո, Սլովակիան գործազրկության բարձր մակարդակ էր արձանագրել և Եվրոպական երկրների շարքերում իր գործազրկության ծավալներով ամենաբարձր տեղերում էր գտնվում: Ինչևիցե, վերջերս ՕՌւՆ սպանալով և աշխատանքային նոր օրենսգրքի ներդրմամբ գործազրությունը բավականանաչափ նվազել է նախորդ երկու տարիների ընթացքում: 2001 և 2003 թվականներին Սլովակիան մեծ փոփոխություններ մտցրեց իր աշխատանքային օրենսգրքի մեջ և դրանով սպեղծեց աշխարհիս ամենաճկուն գործող շուկաներից մեկը: Համաշխարհային բանկի 2004 թվականի Բիզնեսի իրականացում զեկույցում Սլովակիան նշվել է որպես բարեփոխումների ամենալավ իրականացնող:

Սլովակիայի իրականացրած բարեփոխումները հետևյալն են՝

- Մասնակի զբաղվածությամբ աշխատանքային պայմանագրերի բացակայությունից անցում դեպի կանանց, ուսանողների և թոշակառուների համար մասնակի զբաղվածությամբ աշխատանքային պայմանագրերի կնքում;
- Ժամկետային պայմանագրերի երկարացման թույլատրում;
- Աշխատողի համաձայնության պարագայում տարվա համար սահմանված արտաժամյա աշխատանքի 150 ժամից 400 ժամին անցում;
- Աշխատողին աշխատանքից ազատման համար արհմիության համաձայնության պահանջի հանում;
- Աշխատանքից ազատումից առաջ աշխատողի վերապատրաստման պահանջի վերացում;
- Արհմիություններին խմբակային աշխատանքից ազատման մասին ծանուցում նրանց կողմից հաստատում ստանալու փոխարեն:

## Ենթակառուցվածքում ներդրումներ

***«Ռումինայում ներդրումներին արգելակող ամենամեծ խոչընդոտը այլևս գործարար միջավայրն չէ, այլ ենթակառուցվածքը»:***

Օտարերկրյա ներդրումների ռումինական գործակալության նախկին ղեկավար:

Երկրի ենթակառուցվածքի որակը, որոնք են ճանապարհները, տրանսպորտային ցանցերը, կոմունալ ծառայությունների բաշխման ցանցերը, ջրամատակարարումը, հեռահաղորդակցման ցանցերը, հանրային աշխատանքներն ու ծառայությունները, մաքսային

համակարգը և կրթական համակարգը, վճռորոշ է օտարերկրյա ներդրումների ներգրավման և ՓՄՁ-ների մեկնարկի համար: Ինչպես նշվել է ՏՂԶԿ աշխատությունում. «Պատշաճ ենթակառուցվածքը գրավիչ է ներդրումների համար, քանի որ կապում է ընկերություններին իրենց հաճախորդների ու մատակարարների հետ»:[13] Նշված այս կարծիքը համահունչ է Ուղեցույցի նախագծման համար արված ուսումնասիրության արդյունքում ստացված պատասխաններին, որոնցից մի քանիսին համապատասխան ենթակառուցվածքներում, մասնավորապես գիտության և արդյունաբերական պարկերի մեջ, արված ներդրումները որոշակի բնագավառներում տնտեսական զարգացման հաջող ընթացքի խթան են դիտարկում: Տրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքները, թերևս, ամենակարևոր բաղադրիչներն են հանդիսանում, քանզի ներդրողները պետք է հնարավորություն ունենան ժամանակին և ոչ թանկ գնով հումք ապահովեն իրենց արտադրության համար և շուկա հանեն արդեն պատրաստի արտադրանքը:

Նույն ձևով, կարևորվում են կոմունալ ծառայությունների նկատմամբ հասանելիությունը և կայուն սակագներով էլեկտրաէներգիայի կայուն մատակարարումը: Եթե ներդրողները պետք է ստիպված լինեն ամիսներ սպասել մինչև որ նրանց արտադրական հնարավորությունները կապակցվեն տեղի կոմունալ ծառայություններին, ապա ակնհայտորեն կպուժի նրանց ներդրումից ստացվող շահույթը: Պետք է կայուն լինի նաև էներգետիկ համակարգը: Գրաֆիկով չնախատեսված էլեկտրաէներգիայի նույնիսկ մեկ խափանումը հզոր մեքենասարքավորում օգտագործող արտադրողների վրա կարող է շատ թանկ նստել: Համաձայն ենթակառուցվածքի բարելավման հնարավոր ազդեցության վերաբերյալ վերջերս իրականացված տնտեսական ուսումնասիրության՝

*Արդյունավետ ֆիզիկական ենթակառուցվածքային հզորություններին ուղղված կառավարությունների ներդրումները ՕՈւՆ-ների ներգրավման համար առավել բարենպաստ ներդրումային միջավայր են ստեղծում՝ սուբսիդավորելով օտարերկրյա ներդրողների կողմից կատարված ներդրման ընդհանուր արժեքը և նպաստելով վերադարձելիության դրույքաչափի ավելացմանը: Անդրազգային կորպորացիաները կարող են հատկապես զգայուն լինել ենթակառուցվածքների հասանելիության նկատմամբ գնորդ, տարածաշրջանային կամ իրենց երկրի շուկաներին ապահովելու նպատակով ներդրումներ կատարելու համար, քանի որ այդ ներդրումները իրենց բնույթով արդյունավետություն փնտրող են:* [14]

Բարձր որակի ենթակառուցվածքը իջեցնում է ներդրողների և ձեռնարկատերերի կողմից շուկա մուտք գործելու ծախսը, նպաստում է արտահանման զարգացմանը և մրցակցային առավելություն ապահովում աշխատուժի և հողի դիմաց նույն չափով գումար պահանջող, բայց առավել քիչ զարգացած ենթակառուցվածք ունեցող երկրների նկատմամբ: ԵՄ-ին սահմանակցող երկրներում, ինչպիսին են Ուկրաինան և Ռումինիան, ցածր գնով արտադրություն ապահովելու և դեպի ԵՄ արտահանում իրականացնելու ցանկությունը նախադրյալ է հանդիսացել Ուկրաինայի դեպքում լեհական, իսկ Ռումինիայի դեպքում հունգարական սահմանի վրա ենթակառուցվածքի զարգացմանը:

Ենթակառուցվածքների մասին վերը նշված ուսումնասիրությունում լրջորեն առաջարկվում է ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված պետական քաղաքականություն վարել, նախընտրություն տալով վերջինիս, որպես տնտեսական զարգացման կենսական միջոց հատուկ, ներդրումային խթանների փոխարեն.

*Մի շարք զարգացած և զարգացող երկրների կառավարություններ քաղաքականության մրցակցության մեջ են մտել ներդրումային խթանների միջոցով անդրազգային կորպորացիաների ներգրավման նպատակով: Ներդրումային այս խթանները հակված են խաթարելու էական ֆինանսական խթանների ապահովման հնարավորություն ունեցող զարգացած երկրների օգտին ուղղված ՕՈւՆ-ների վարքագիծը: Ներդրումային խթանների առաջարկման միջոցով զարգացած երկրների հետ մրցակցության շրջապտույտի մեջ ընկղմվելու փոխարեն զարգացող երկրները պետք է ուշադրությունը բևեռեն իրենց երկրների ֆիզիկական ենթակառուցվածքի զարգացման վրա: Սա կօգնի տեղական, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների շարժին և կօգնի արագացնելու իրենց զարգացման գործընթացը:*

Ենթակառուցվածքային ծրագրերից մի քանիսի նախաձեռնումը կախված է կառավարության միջոցներից, ենթակառուցվածքի վիճակից և ներդրումից սպասվող հավանական շահույթից: Ինչպես նշում է ՏՀԶԿ-ն «Ենթակառուցվածքային ծրագրերի իրականացումը պահանջում է ծախսերի և արդյունքների վերլուծության հնարավորություն, ֆինանսական հաշվետվություն, որոշումների կայացման հստակ գործընթացներ, որոնք կշիռ են հաղորդում ծախսերի և արդյունքների վերլուծությունների արդյունքներին, այդպիսով թույլ տալով մրցակցային շահերի սոցիալապես ընդունելի հավասարակշռում և արդյունավետ գործակալությունների ստեղծում ենթակառուցվածքային ներդրումների պահպանման և նոր ներդրումների իրականացման համար»:

Այն երկրները, որոնք հավելյալ ենթակառուցվածքի զարգացման հնարավորություն չունեն, կարող են դիմարկել պետական և մասնավոր հատվածների համագործակցության հնարավորությունը: Կառավարությունների համար Պետական և մասնավոր հատվածների համագործակցությունը (ՊՄՀՀ) հզոր գործիք է ենթակառուցվածքային ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար: Մասնավոր իրավաբանական անձը կանխիկ ֆինանսավորում է տրամադրում և կառավարությունը կարող է փոխհատուցել մասնավոր հատվածի իր գործընկերոջը այնպիսի մեխանիզմների միջոցով, որպիսիք են պարտքերի ամրումը, պարտապտոմսերը կամ կոնցեսիաները: Բացի այդ, հաջողված ՊՄՀՀ-ը, երբ կա բավարարված ներդրող, առկա է բարելավված ենթակառուցվածքը, իսկ գործարքն իրականացված է թափանցիկ, արդար և պատշաճ ֆինանսական կառավարման հիման վրա, նպաստում է այլ ներդրողների ներգրավմանը:

Այն կառավարություններին, որոնք չունեն ՊՄՀՀ-յան փորձ, անհրաժեշտ է սովորել կառավարման կոնկրետ հնարքներ, որովհետև ՊՄՀՀ-ը տարբերվում է ֆինանսական պարտավորության մարումից կամ գնումներից:

Ենթակառուցվածքներում հաջող ներդրումներ երաշխավորելու համար կառավարությունները պետք է հստակ պաշտպանության տակ վերցնեն ենթակառուցվածքային բարեփոխումների իրականացման մեջ ներգրավված ներդրողներին: Ներդրողները պետք է հստակ պայմանագրեր ունենան, որտեղ հստակ սահմանված են վեճերի լուծման առումով իրավունքները, պատասխանատվություններն ու մեխանիզմները: Կառավարությունը կարող է սուվերեն երաշխիք տրամադրել, որով հավաստվում է ծրագրի վճարումը: Սուվերեն երաշխիքի սպասարկման խնդրում դժվարութիյուններ ծագելու դեպքում, ՎԶԵԲ-ը, Համաշխարհային բանկը և այլ կազմակերպություններ առաջարկում են երաշխիքային ծրագրեր, որոնցով երաշխավորվում կամ «օժանդակվում է» հաճախորդ կառավարության երաշխիքը: Ինչպես նշվում է. «Ենթակառուցվածքն ապահովողների ռիսկերի կրճատման համար, նվազեցվում են այն փոխհատուցումները, որոնք պահանջում են ներդրողները ենթակառուցվածքին հետագա ներդրում ապահովելու համար»:

ՆԵՐԴԻՐ 4.3

## Տրանսպորտի, որպես 2006 թվականի առանցքային խնդրի ԵԱՏԿ կողմից արված շեշտադրումը

ԵԱՏԿ 14-րդ տնտեսական համաժողովի թեման հետևյալն էր. «Տրանսպորտը ԵԱՏԿ տարածքում. անվտանգ տրանսպորտային ցանցեր և տարածաշրջանային տնտեսական համագործակցության և կայունության ամրապնդման նպատակով տրանսպորտի զարգացում»: Տրանսպորտն ունի տնտեսական, սոցիալական և աշխարհաքաղաքական մեծ դեր, որն իր հերթին բացատրում է, թե ինչու է այն այդչափ կարևորվում տարածաշրջանային համագործակցության և կայունության տեսանկյունից: Այն պետության տնտեսական և սոցիալական զարգացման հիմնական նախապայմանն է հանդիսանում:[1] Տրանսպորտի ենթակառուցվածքում կատարված ներդրումը երկրի տնտեսական ակտիվության զգալի տոկոսն է կազմում: Տրանսպորտի նախարարների եվրոպական խորհրդի (ՏՆԵԽ) հաշվարկներով երկրի ՀՆԱ-ի 6-8, գործազրկության 6, հանրային ներդրումների 40 և տնային տնտեսությունների ծախսերի 15 տոկոսները կարելի է կապել տրանսպորտի հետ:

Տրանսպորտն անփոխարինելի հիմք է հանդիսանում միջազգային առևտրի զարգացման համար: Միջազգային տրանսպորտը կարևոր գործոն է նաև միջազգային ինտեգրման և սահմանների միջև տնտեսական և սոցիալական անհավասարության կրճատման համար: Միջազգային անվտանգ տրանսպորտային ցանցերի ստեղծումն ու զարգացումը, հետևաբար, ռազմավարական նշանակություն ունի բոլոր երկրների համար:[2]

Տրանսպորտը կենսական նշանակություն ունի տնտեսության պատշաճ գործունեության, ապրանքների արտադրության, առաքման և առևտրի համար: Ցանկացած ձեռնարկատերի, ՓՄՁ-ի, ընկերության կամ երկրի հաջող մրցելու ունակությունը, գործունեության հետագա վարումը, ազգային կամ համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրումը կախված է ոչ միայն իր արտադրական կարողություններից, այլ նաև հնարավոր ամենացածր գնով և կանխատեսելի պայմաններով իր ապրանքը շուկա հանելու ունակությունից: Տրանսպորտային ծախսերը կարող են էական խոչընդոտ հանդիսանալ շուկայի հասանելիության առումով: **ՕՈւՆ** ամսագրերից մեկում ներդրումային նպատակակետերի ռեյտինգավորման համար սահմանված չափանիշներից 28-ը վերաբերում են տրանսպորտին, ըստ որոնց էլ գնահատվում են աշխարհի յուրաքանչյուր տարածաշրջանի «ամենալավ տրանսպորտային ենթակառուցվածք» ունեցող երկրները:

ՕՈւՆ-ների ներգրավման համար տրանսպորտային ենթակառուցվածքն որոշիչ գործոն է հանդիսանում: Բացի այն, որ Սինգապուրը խոշոր ՕՈւՆ ստացող և բարենպաստ գործարար միջավայր ապահոված քաղաք պետություն է, այն նաև համաշխարհային մասշտաբով թվով ամենաշատ նավահանգիստներ և աշխարհի համարյա թե բոլոր երկրների հետ օդային կապ ունի: Իռլանդական տնտեսական հրաշքին նպաստող գործոններից մեկը Շանոն օդանավակայանի ստեղծումն էր: Օտարերկրյա ներդրողներին անհրաժեշտ են կապեր իրենց գլխամասային գրասենյակների, արտահանման և մատակարար երկրների հետ:

ՓՄՁ-ների համար շահավետ են իրենց ապրանքի շուկա դուրս բերման համար պահանջվող առավել ցածր ծախսերը: Դեպի շուկա տանող առավել կրճատ ժամանակն ոչ միայն առավել ցածր գործառնական ծախսեր է ապահովում, այլ նաև հնարավորություն է ստեղծում առավել շատ ապրանք արտահանել առավել կարճ ժամանակահատվածում, որը շահավետ ազդեցություն է թողնում կանխիկ դրամի հոսքի վրա:

Տրանսպորտային գերազանց ենթակառուցվածքը, հատկապես կարևոր է դեպի ծով ելք չունեցող երկրների համար: Ծովին հասանելի չլինելը դեպի շուկա մուտք ունենալու և տարածաշրջանային ինտեգրացման նպատակով կենսական է դարձնում ճանապարհների գերազանց ցանցի, երկաթգծի և գետային տրանսպորտի առկայությունը:

Իրենց տրանսպորտային ենթակառուցվածքը բարելավելու ցանկություն ունեցող երկրները պետք է իրականացնեն հետևյալ միջոցառումները՝

- *Մաքսային վարչարարության և վիզաների տրամադրման գործընթացների բարելավում:* Մաքսային ընթացակար-

գերի դանդաղ իրականացումը ու վիզաների ստացումը ձգձգում են սահմանների անցման համար պահանջվող ժամանակը և ապախրախուսում միջսահմանային տրանսպորտի շարժն ու առևտուրը:

- *Ենթակառուցվածքի պլանավորում:* Կառավարությունները պետք է ունենան տրանսպորտի զարգացման միջնաժամկետ ռազմավարություն: Լավ մշակված ռազմավարությունը քաջալերում է մասնավոր հատվածին ներդրումներ կատարել:

- *Դոնորային ֆինանսավորման առավելագույն օգտագործում:* Շատ երկրներ տրանսպորտային ենթակառուցվածքի համար ֆինանսավորում են ստացել ՎԶԵԲ-ից, ԵՄ-ից, Համաշխարհային բանկից, Ասիական զարգացման բանկից և այլ դոնորներից, բայց դեռ ամբողջովին չեն օգտագործում հասանելի միջոցները:

- *Պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցության ընկալումը:* Լավ կազմակերպված ՊՄՀՀ-ը հնարավորություն է ընձեռում երկրներին տրանսպորտային կապ հաստատել առանց ուղղակի մասնակարարման բեռի: Պետք է ճիշտ ընկալելի լինեն ՊՄՀՀ-յան համակարգի բարդությունները: ՎԶԵԲ-ն իր փորձագիտական ծառայությունն է առաջարկում տրանսպորտի ենթակառուցվածքում ՊՄՀՀ-ների ստեղծման և զարգացման համար:

Կարճ ասած, տրանսպորտի ենթակառուցվածքի մեջ պետության կողմից լավ կազմակերպված և ֆինանսավորված ներդրումը նպաստում է ՕՈւՆ-ների ստացման երկրի հնարավորության մեծացմանը և ՓՄՁ-ների զարգացմանը:

1. «Տրանսպորտի դերը տարածաշրջանային տնտեսական համագործակցության և կայունության ամրապնդման մեջ» թեմայով ԵԱՀԿ 14-րդ տնտեսական համաժողովին նախորդող 2005 թվականի նոյեմբերի 7-8 Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեյում կայացած առաջին նախապատրաստական կոնֆերանսի նյութեր:

2. Տես նույն աղբյուրը.

**ՆԵՐԴԻՐ 4.4**

## Ճանապարհային ենթակառուցվածքը Հունգարիայում

Եվրոպայի կենտրոնում գտնվելու իր աշխարհագրական դիրքը Հունգարիայի մրցակցային ամենակարևոր առավելություններից մեկն է: Հունգարիան դիտարկվում է որպես պատուհան դեպի Եվրոպա. երկրով անցնում են եվրոպական չորս հիմնական կարևոր միջանցքներ, այդպիսով դարձնելով Բուդապեշտը Եվրոպայի խաչմերուկ: Այս առավելություններից օգտվելու նպատակով Հունգարիան վճռորոշ է ոչ միայն պահպանել, այլ նաև կապարելագործել իր ենթակառուցվածքը և էլ ավել քայլեր ձեռնարկել Եվրոպական ցանցի մեջ իր ինտեգրման նպատակով:

**Տրանսպորտային հիմնական մայրուղիները**



**Ճանապարհային ցանց**

Վերջին մի քանի տարիների ընթացքում Հունգարիան մեծ ներդրումներ է կատարել իր ավտոճանապարհների ցանցի և ճանապարհների ենթակառուցվածքի որակի բարձրացման և ընդլայնման նպատակով: Ներկայումս Հունգարիայի ճանապարհային ենթակառուցվածքը վերակառուցվում է պետական մեծածավալ միջոցների հաշվին, որի արդյունքում կլայնացվեն ներկայումս երկրի միայն մի մասն ընդգրկող չորս-գծանոց ավտոճանապարհները (1,053 կմ մինչև 2006 թվականը և 2,530 կմ մինչև 2015 թվականը):

Այսօր Հունգարիայի պետական ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 160,000 կմ: Յուրաքանչյուր 1,000 կմ$^2$–ին 1,720 կմ համապատասխան մոտ 52 տոկոսի չափով պետական ճանապարհային խտություն ունեցող Հունգարիան առաջ է ԵՄ-15 երկրների միջինից:

Հունգարիայի ութ խոշոր ավտոճանապարհներից յոթը սկսվում են Բուդապեշտից և դրանք բոլորը կապված են Եվրոպական ճանապարհային ցանցի հետ: Հունգարիայի բոլոր քաղաքներն իրար կապող մեծ ճանապարհների ցանցի և չորս-գծանոց ավտոմայրուղիների բարելավման արդյունքում մոտ 40 տոկոսով կկրճատվի միջ-քաղաքային հիմնական ուղիների վրա ծախսվող ժամանակը:

Վերջերս էլ ավելի է ընդլայնվել հարևանող երկրների հետ միջազգային համագործակցությունը օժանդակելու նպատակով ճանապարհային ցանցերի շինարարություններն իրար հետ համապատասխանեցնելով: Հունգարիայի կառավարության համար համար մեկ գերակայությունն է երկրի ճանապարհային ցանցի հետագա վերակառուցումը:

Աղբյուր. ITD Հունգարիա:

## *Ներդրումներ մարդկային կապիտալի մեջ*

*Համրային կրթություն և աշխատանքային ունակությունների ուսուցանում:* Մարդկային կապիտալը մրցակցային այն առավելություններից է, որը զարգացող տնտեսությունը կարող է առաջարկել, եթե այդ կապիտալը լինի քիչ ծախսատար, տարբեր լեզուների տիրապետող, պատշաճ տեխնիկական և մասնագիտական կրթություն ստացած:[15] Հարուստ բնական պաշարներ չունեցող երկիրը կարող է ներդրողներին մարդկային կապիտալ առաջարկել: Անկախ այն բանից, արդյոք արտադրության կամ ծառայությունների համար է պահանջվում աշխատուժը, երկրները, որոնք կարող են ընդունելի գներով լավ մասնագետներ առաջարկել, միշտ էլ գրավիչ կլինեն ներդրողների համար: Ծինարարական նախագծման և շինարարական Վաշինգտոնյան միջազգային խումբը զարգացող երկրներում ստեղծել է օֆշորային շինարարական կենտրոններ: Չնայած որ ընկերությունն իր գլխամասային գրասենյակներն ունի ԱՄՆ-ում, իր կողմից իրականացվող բարձր մակարդակի վերլուծությունների և շինարարական առաջադրանքերի մեծամասնությունն այն անցկացնում է նորաստեղծ շուկաներում: Նրանք նախընտրում են օգտվել ավելի մեծ առավելությունից, թե որակի, թե գնի առումով, որն է այդ շուկաներում գործող ճարտարագետների հասանելիությունը:

Մարդկային կապիտալի զարգացման մեկ վճռորոշ բաղադրիչ է հանդիսանում տարրական կրթությունը: Ազգային դպրոցական հզոր համակարգերն ապահովում են բիզնեսի հայեցակարգերի, մաթեմատիկայի և տեխնիկական առարկաների ուսուցանում, օտար լեզուների տիրապետում: Կարևոր է, որպեսզի կառավարությունները խրախուսեն կրթական գործընթացում ամբողջ բնակչության մասնակցությունը: Եթե տնտեսապես անբարենպաստ վիճակում գտնվող փոքրամասնությունների երեխաները, չհաճախեն դպրոց, ապա նրանց աղքատությունը կշարունակի աճել: Օտարերկրյա ներդրումների և տնտեսական աճի վերջին հաջողված դեպքերն որպես գրավիչ են մեկնաբանվում, որովհետև այնտեղ առկա է եղել մարդկային կապիտալի որակը: Իրապես, կենտրոնական Եվրոպան որպես «զերտաղանդների» հավաքատեղ և «մոլորակի ստեղծագործ ամենահարուստ կենտրոններ» 2005 թվականի վերջին հրատարակած Business Week հոդվածում արժանացել է «էներգիայի հզոր աղբյուր» գովասանքին:[16]

Տարրական կրթության կարևոր բաղադրիչ է համարվում ֆրանսերեն, գերմաներեն և, մասնավորապես անգլերեն լեզուների դասավանդումը: Հնդկաստանին հաջողվել է այդչափ մեծաքանակ օտարերկրյա ներդրումներ գրավել ոչ միայն ի շնորհիվ ցածր վարձատրության և ծրագրավորողների մեծ բանակի, այլ նաև անգլերենի, որպես տարածված լեզվի առկայության: Մեկնաբանելով իռլանդական տնտեսական հրաշքը, Իռլանդիայի վարչապետ Գառետ Ֆիջեռալդը ասել է, որ համեմատած մայրացամաքային Եվրոպայի երկրների, ի լրումն ցածր հարկերի և աշխատավարձերի Իռլանդիան հաջողակ է, քանզի ամերիկացիներն ու անգլիացիները «չեն խոսում այլ լեզուներով»: Եթե ծառայությունների հատվածում արևելյան Եվրոպայի երկրները «ձեռք են գցում» բոլոր հնարավորությունների հեռախոսազանգերի սպասարկման կենտրոններ բացելով, ապա այստեղ լեզվի իմացության հանգամանքը ոչ վերջին պատճառն է: Եվրոպական միության մասին տեղեկատվություն ապահովող Ուղիղ Կապն առաջին ի սկզբանե տեղակայված է եղել Բելգիայում: Աշխատանքների մեծամասնությունը տեղափոխվեց Ռումինիա, որտեղ անգլերենը, ֆրանսերենը, իտալերենը, իսպաներենը, գերմաներենը, հունգարերենը և ռումիներենը տարածված լեզուներ են: Օտար լեզուների իմացությունն, ինչպես նաև շատ բնագավառներում զիտելիքների հիանալի առկայությունը հնարավորություն է ընձեռում տեղի աշխատուժին ստանալ օտարերկրյա ներդրումների հետ կապված աշխատանքների մեծամասնությունը: Նախկին խորհրդային միության երկրներում ներդրումների ներգրավման համար մեծ խոչընդոտ է հանդիսանում օտար լեզվի իմացության պակասը: Քանի որ Ռուսաստանը բաց է արել իր դռները օտարերկրյա ներդրողների առջև և աճում է նրա դերը միջազգային տնտեսության մեջ, սա կարող է դրդել ԱՊՀ մնացած երկրներին ապահովել իրենց աշխատողների համար օտար լեզվի իմացությունը, բացի մայրենի և ռուսերեն լեզուներից:

Անցումային տնտեսությամբ երկրները կարող են արագ ընթացք հաղորդել իրենց տնտեսական զարգացմանը քաղաքացիական ծառայողների և լայն հասարակության շրջանններում բարձրացնելով ձեռնարկությունների և ձեռնարկատերերի ընկալումն: Անցումային տնտեսությունների մեծամասնությունում և որոշ զարգացող երկրներում դեռևս համառորեն մնում է պլանավորված տնտեսության ժամանակաշրջանի շղարշը և բացասական են ձեռնարկատերերի մասին ընկալումները: Ձեռնարկատերերի նկատմամբ բնակչության վերաբերմունքի փոփոխությունը ժամանակատար գործընթաց է և հաջողելու ամենալավ եղանակը ԵԱՀԿ տնտեսությունների ամբողջական կրթական և դասընթացային համակարգերի մեջ բիզնես ուսուցման ընդգրկումն ու բիզնեսի խթանման քարոզարշավների ստեղծումը:

## *Միջազգային և տարածաշրջանային ինտեգրում*

Գործարար և ներդրումային միջավայրերի բարելավման ուղղությամբ կառավարությունների կողմից ձեռնարկվող ամենակոնկրետ քայլերից մեկը միջազգային և տարածաշրջանային ինտեգրման գործընթացների իրականացումն է: Ի լրումն «տնտեսությունը ազատականացնող» տնտեսական քաղաքականությունների հաստատման, կառավարություններին առաջարկվում է բազմակողմ գործունեություն վարող կազմակերպությունների, համաձայնագրերի, առևտրային և ներդրումային պայմանագրերի մասնակից դառնալ:

*Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) անդամակցում:* Չնայած որ ԵԱՀԿ երկրների մեծամասնությունը ԱՀԿ անդամներ են, մի քանսը դեռևս անդամ չեն: ԱՀԿ-ին անդամակցությունը 148 շուկաների հասանելիության հնարավորություն է տալիս: Սա կարևոր է ՓՄՁ-ների համար, որոնք փորձում են ընդլայնել իրենց շուկաները տեղական շուկայից զատ: Թերևս ավելի կարևոր է այն, որ ԱՀԿ անդամակցությունը նպաստում է օտարերկրյա ուղղակի ներդրումների համար առավել բարենպաստ գործարար միջավայրի ապահովմանը: Ներդրողներին անհրաժեշտ առավել լավ կառավարման երաշխավորումը, անվտանգության չափանիշների ապահովումը, ինտելեկտուալ սեփականության պաշտպանությունն և այլ պայմաններն ԱՀԿ պահանջներ հանդիսանում են: 4.1 և 4.2 գծապատկերներում ցույց է տրվում ԱՀԿ անդամակցությունից հետո Բուլղարիայում և Էստոնիայում արձանագրված ՕՈւՆ-ների աճը:

**ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 4.1 և 4.2**






*Եվրոպական միության հետ փոխհարաբերությունների հաստատումը:* Կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների վերջին տարիների ընթացքում նվաճած տնտեսական հաջողությունը մեծամասամբ ԵՄ անդամակցման շնորհիվ է: Անդամակցության գործընթացը նպաստել է դեպի թեկնածու երկրներ ներդրումների հոսքին և ԵՄ երկրների կողմից նրանց նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը և, որպես անդամակցության արդյունքում տնտեսական հաջողության ձեռք բերման հետևանք, վերջերս անդամակցած մի շարք ԵՄ երկրներ, որոնցից են Չեխիայի հանրապետությունը, Հունգարիան և Լեհաստանը, որոշ մեկնաբանների կողմից ներկայումս որակվում են որպես «զարգացած» տնտեսություն ունեցող երկրներ: Այլ երկրներն, ինչպիսիք են Բուլղարիան, Խորվաթիան և Ռումինիան իրենց արագընթաց աճող ՕՈւՆ-ների և աշխապավարձերի շնորհիվ դասակարգվում են «ներդրումային դասի»:

Այն տնտեսություններում, որտեղ ԵՄ-ի հետ պաշտոնական հարաբերությունն լրկ այլընտրանք չէ, ներսում իրականացվող քաղաքականությունների և փորձերի ներդաշնակեցումը ԵՄ քաղաքականություններին և փորձերին կարող է նպաստել ներդրողի վստահության բարձրացմանը: Acquis Communitaire–ի հետ համահունչ օրենքների, կանոնակարգերի, քաղաքականությունների ընդունումն երաշխավորում է՝

- Ներդրողների համար պարզ և ըմբռնելի դաշտ և միջավայր;
- Թափանցելիություն և կանխատեսելիություն;
- Ազդանշան միջազգային հանրությանն այն մասին, որ կառավարությունը ցանկանում է ինտեգրվել միջազգային չափանիշներին համապատասխան առավել լայն տարածաշրջանային համայնքում:

*Ազատ առևտրի տարածաշրջանային համաձայնագրեր:* Հարավ արևելյան Եվրոպայի և կենտրոնական Ասիայի շատ երկրներ ունեն առևտրի երկկողմ և բազմակողմ բազմաթիվ համաձայնագրեր, բայց չունեն ազատ առևտրի համապարփակ տարածաշրջանային պայմանագրեր: Ուժի մեջ է դրվել Կայունության Համաձայնագիրը, որով փորձ է արվում հարավ արևելյան Եվրոպայի երկրների համար մեկ առևտրային համաձայնագրում միավորել քանինն առևտրի երկկողմ պայմանագրեր:[17] Նման քայլեր են ձեռնարկվել նաև այլ երկրների կողմից: Նման փորձերով նպատակ է հետապնդվում առավելագույնի հասցնել օտարերկրյա ներդրողների ուշադրությունը այս կամ այն շուկայի նկատմամբ, այդպիսով առավել դյուրին դարձնելով տարածաշրջանում նրանց գործունեությունը և արտահանման հավելյալ շուկաներ ստեղծելով ՓՄՁ-ների համար:

**ՆԵՐԴԻՐ 4.5**

### Ներդրումային համաձայնագրեր

ՏՀԶԿ Հարավ արևելյան Եվրոպայի Ներդրման Համաձայնագիրը արտառոց հաջող է եղել հարավ արևելյան Եվրոպայի ազգերին իրենց ՕՈւՆ-ների մակարդակի բարձրացմանը և գործարար և ներդրումային միջավայրերի բարելավմանը նպաստելու առումով: Ընդունվելով 2000 թվականին, այդ համաձայնագրով փորձ է արվել մեծացնել ՕՈւՆ-ի չափը հետևյալ միջացառումների իրականացմամբ՝

- Ներդրումային միջավայրի բարեփոխման մեջ **առաջընթացի գնահատում և դիտանց,** այդ բարելավմանն ուղղված կոնկրետ դեպքերի ուսումնասիրություններն ներառյալ;
- **Ներդրումային քաղաքականության բարելավմանն աջակցման իրականացում** ուսուցանման և վերլուծության միջոցով;
- Օտարերկրյա ներդրողների խորհուրդների (www.regionalfic.org) և Տարածաշրջանային քաղաքականության վերլուծական փաստաթղթերի միջոցով պետական և մասնավոր հատվածների միջև **երկխո-**

**սության կառուցմանն ուղղված աջակցություն,** և

- ***Քաղաքական աջակցություն*** ներդրումային քաղաքականության բարեփոխումներին նվիրված նախարարական փարեկան կոնֆերանսի անցկացմամբ:

Սկզբից գնահատվում է մասնակից երկրների իրականացրած գործունեությունն, այնուհետև, հիմք ընդունելով ՏՀԶԿ լավագույն փորձերը, տրվում են կոնկրետ խորհուրդներ: Բացի այդ, բազմակողմ ձևաչափը, հիմք ընդունելով նույն պայմաններ ունեցող երկրների գնահատականները, նպաստում է բարելավման ցանկության առաջացմանն ու տարածաշրջանային համագործակցության անհրաժեշտության ընկալմանը: Ներդրումային համաձայնագրի արդյունքներից մեկը Ներդրումային բարեփոխման ցուցանիշի սահմանումն է, որը համապարփակ գործիքի դեր է կատարում ներդրումային միջավայրի բարելավման նպատակով փաս ուղղություններում իրականացվող բարեփոխումների առումով երկրի կատարողականությունը գնահատելու համար: Այդ փաս ուղղություններն են՝ ներդրումային քաղաքականությունը, ներդրումների խթանումը, հարկային քաղաքականությունը, հակա-կոռուպցիոն քաղաքականությունը, մրցակցային դաշտի ապահովման քաղաքականությունը, առևտրի խթանման քաղաքականությունը, ՓՄՁ-ներին աջակցումը, պետական կառավարումը, ֆինանսական ինսփիփուփներն ու ենթակառուցվածքը և մարդկային կապիտալը:

Մնացած երկրները նույնպես կարող են ոգեշնչվել ստեղծելու իրենց սեփական ներդրումային համաձայնագիրը կամ կիրառելու տարածաշրջանային այլ մոտեցում: Անկախ այն բանից, թե նրանք ունեն ՏՀԶԿ-ի կողմից աջակցություն թե ոչ, երկրների բոլոր խմբերը կարող են որպես օրինակ վերցնել ներդրումային համաձայնագրի մոդելը: Հարավ արևելյան Եվրոպայի երկրներում ստեղծված Օտարերկրյա ներդրողների խորհուրդները հիմնվել են մասնավոր միջոցների հաշվին և չեն պահանջում կառավարական աջակցություն. միակ բանը, որ նրանք ակնկալում են դա երկխոսող գործընկերոջ առկայությունն է: Ինչպես հիշատակվել է ներդրումային միջավայրի բարելավման վերաբերյալ Համաշխարհային բանկի հայտնի քննարկումներից մեկում. «Չկան քաղաքական կամքին և բարեփոխման առաջնորդներին փոխարինողներ; և Առևտրի համաշխարհային կազմակերպությանը և Եվրոմիությանը անդամակցությունը գործին իր նպաստն է բերում»: Այսպիսով, եթե երկրները քաղաքական կամք են դրսևորում ներդրումային միջավայրի բարեփոխման ուղղությամբ, ապա նրանք կարող են հասնել արդյունքների:

## *Պետական սեփականությամբ ընկերությունների մասնավորեցում*

ԵԱՀԿ զարգացող և անցումային տնտեսությունների մեծամասնությունում ՀՆԱ-ի զգալի մասնաբաժինը դեռևս ընկնում է պետական մասնակցությամբ ընկերությունների վրա: Մինչ երկրները փորձ են անում բարելավել իրենց գործարար միջավայրը և մրցունակ լինել գլոբալ տնտեսության շրջանակներում, կառավարությունները պետք է տնտեսությունը ղեկավարողի դերից անցնեն անկախ կանոնակարգողի դերին: Կառավարության պարտականությունը պետք է լինի ընկերությունների միջև ծագած վեճերի դեպքում ընկերությունների համար դրանք հաջողությամբ վարելու և դատական լուծում տալու պայմանների ապահովումը, այլ ոչ ընկերությունների փոխարեն գործելը: Այս ուղղությամբ քայլեր կատարելու նպատակով կառավարություններին օժանդակող եղանակներից մեկը սեփականաշնորհման գործընթացն է:

Քսաներորդ դարում կառավարության սեփականություն հանդիսացող բիզնես կազմակերպությունները տնտեսական կյանքի հայտնի առանձնահատկություն են հանդիսանում: Արտադրական միջոցների պետական սեփականություն հանդիսանալը սկզբունքային էր սոցիալիստական գաղափարախոսության մեջ: Քեյնսյան տնտեսության ազդեցության ներքո, նույնիսկ արևմտյան կառավարությունները, ինչպես օրինակ ետ-պատերազմյան Բրիտանիան, սեփականաշնորհել և գործարկել է հիմնական արդյունաբերական ձեռնարկությունները: Ինչևիցե, 1980-ականների սկզբներին, շուկայական տնտեսություն վարող երկրների համար ակնհայտ էր, որ անարդյունավետության ու մրցակցության խաթար-

ման[18] պատճառը պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկություններն (ՊՁ) էին: Այս երկրների կառավարությունները սկսեցին փարանջատել իրենցից այն բիզնեսներն, որոնք առավել լավ կարող էին զարգանալ մասնավոր սեփականատերերի տնօրինության ներքո: Խորհրդային միության կազմալուծումից հետո, նոր հանրապետությունները կենտրոնական պլանավորումից սկսեցին անցում կատարել դեպի շուկայական տնտեսություն: Վերոհիշյալ գործընթացի ընթացքում այս պետությունները սկսեցին փորձարկել, իսկ որոշ դեպքերում ամբողջապես նախաձեռնեցին ՊՁ-ների սեփականաշնորհումը:

Սեփականածնորհման իմաստը կայանում է նրանում, որ մղելով բիզնեսը ազատ շուկայում փիրող մրցակցային միջավայր նպաստել արդյունավետության բարձրացմանը: Բացի այդ, որոշ կառավարություններ սեփականաշնորհումն որպես գործիք օգտագործելով փորձում են սոցիալական նպատակների հասնել ընկերությունների սեփականություննն իրենց աշխատողներին կամ հանրության լայն զանգվածներին հանձնելով: Այնուհանդերձ, շատ դեպքերում սեփականաշնորհման արդյունքները հիասթափեցնող են եղել: Բազմաթիվ ոչ թափանցիկ պետական սեփականություն հանդիսացող մենաշնորհային ընկերությունները փոխարինվել են բազմաթիվ ոչ թափանցիկ մասնավոր սեփականություն հանդիսացող մենաշնորհային ընկերություններով: Սեփականաշնորհման գործընթացում կաշառակերության, անթափանցելիության, անտեղյակության և քաղաքական ազդեցության արդյունքում պետական որոշ ակտիվներ ձեռք են բերվել կամ վերահսկվել անհատների և մասնավոր ընկերությունների կողմից իրենց փաստացի արժեքի չնչին մասնեբաժնով: Բաժնետոմսերը վաճառելու հնարավորությունների պակասը հաճախ խանգարում է ընդլանման համար անհրաժեշտ հավելյալ կապիտալի ձեռք բերմանը: Ավելին, մի շարք երկրներում սեփականաշնորհումն եղել է ընտրովի և ոչ ամբողջական. շատ խոշոր ընկերություններ դեռևս հանդիսանում են պետական սեփականություն:

Գոյություն չունի սեփականաշնորհումն երաշխավորող գոնե մեկ և հուսալի եղանակ: Սեփականաշնորհումը քաղաքականապես վիճելի և բարդ երևույթ է, որի վրա ազդում են տեղական պայմաններն ու սեփականաշնորհման ենթակա իրավաբանական մարմնի կոնկրետ առանձնահատկությունները: Այնուամենայնիվ, անցումային երկրներում ավելի քան տաս տարիներ տևած սեփականաշնորհման գործընթացներից Համաշխարհային բանկի, ՏՀԶԿ-ի և տնտեսական զարգացման մեջ հետաքրքրված այլ կազմերպությունների կողմից շատ դասեր են քաղվել: Ստորև ի մի են բերվում բոլոր քաղված դասերը.

*Սեփականաշնորհման առավելությունները:* Սեփականաշնորհումը կարող է էապես բարձրացնել ընկերությունների արդյունավետությունը և տալ այլ օգուտներ, օրինակ՝ օժանդակել ֆոնդային շուկաների աճին: Այնուհանդերձ, սեփականաշնորհման կարճաժամկետ արդյունքներից կարող է լինել գործազրկության բարձրացումը: Սեփականաշնորհման գործընթաց ձեռնարկած երկրները պետք է պատրաստ լինեն հակազդելու գործազրկության արագ աճին՝ վերապատրաստման և աշխատանքային պայմանների փոխման այլ գործառույթների իրականացման միջոցով: Եթե սեփականաշնորհումը գրագետ ձևով իրականացվի, երկարաժամկետ կտրվածքով դրա տված օգուտները, նույնիսկ զբաղվածության և աշխատավարձերի առումով, ակնհայտորեն կգերիշխեն կարճ ժամանակահատվածով պատճառած վնասներին:[19] Ինչիցե, սա պահանջում է, որ սեփականաշնորհման գործընթացը լինի թափանցիկ, և որ դրան օժանդակող կառույցներն արդեն ձևավորված լինեն կամ ձևավորվեն կարճ ժամանակահատվածում, ներառյալ մասնավոր գույքի օրենսդրական պաշտպանությունը, մրցակցային դաշտը, կորպորատիվ կառավարման պատշաճ համակարգը, բաժնետոմսերի երկրորդական շուկան, բյուջետային սահմանափակումների ու համապատասխան կանոնակարգերը:

*Սեփականաշնորհման եղանակները:* Կառավարությունները սեփականաշնորհում են ընկերություններն երեք հիմնական եղանակներով. (1) բաժնետոմսերի թողարկում (ԲԹ), (2) ակտիվների վաճառք մեկ գնորդին, և (3) զանգվածային[20] (վաուչերային) սեփականաշնորհում, որի ժամանակ սեփականաշնորհման վաուչերները տրվում են ՊՁ աշխատողներին կամ առաջարկվում լայն հասարակությանը, թույլ տալով նրանց սեփականաշնորհված ընկերության բաժնեմաս ձեռք բերել կամ անվճար, կամ շատ ցածր արժեքով: Շատ տնտեսագետների կարծիքով վաուչերային սեփականաշնորհումը պակաս արդյունավետ է տնտեսական զարգացման խթանման

համար, քան այլ մոտեցումները:[21] Նրանք նշում են, որ երբ ընկերությունների սեփականությունը բաժանված է լինում շատ մասերի, ընկերության կառավարումն ավելի քիչ արդյունավետ է դառնում, որովհետև ոչ մի բաժնետեր կամ նրանց միասնական խումբ չեն ունենում բավարար հզորություն հաշվետու կառավարում իրականացնելու համար: «Սեփականաշնորհման զանգվածային քաղաքականությունները ... մեծ (բաժնետերերի ստվար զանգված) խոստում են տալիս, բայց, հիմնականում կախված են կապիտալ շուկաներից բոլոր բաժնետոմսերը ռազմավարական ներդրողներին տրամադրելու ակնկալիքով, որոնք էլ կարող են իրագործել վերահսկողությունը»[22]: Ինչևիցե, «Չեն կարող ձևավորվել տարբեր միլիոնավոր սեփականատերերի կողմից առուծախի իրականցման մասին իրենց առջև պահանջ ունեցող շուկաները, քանի դեռ շահագրգիռ մասնակիցները չեն օժանդակում շուկաների ինստիտուտին: Ուղղակի … այս մասնակիցներից շատերի շահերին չի համապատասխանում թափանցիկ շուկաների ստեղծումը»[23]:

*Իրական սեփականաշնորհում:* Սեփականաշնորհում ասելով պետք է հասկանալ ՊՁ-ների մասնավոր սեփականության, անկախ կառավարման ամբողջովին անցման և շուկայում մրցելու թույլտվություն: Սեփականաշնորհման տված օգուտներն անհնար է իրականացնել, եթե կառավարությունը պլանավորում է (1) իր ձեռքում պահել սեփականաշնորհված ընկերության հսկիչ փաթեթը, (2) խառնվել ընկերության գործերին, կարծես թե այն դեռևս ՊՁ է, (3) ստիպել ընկերությանը իրականացնել միայն հանրային աշխատանքներ: Հետևաբար, եթե կառավարությունը սեփականաշնորհված տնտեսական օբյեկտի մեջ պահում է իր բաժնետիրական մասնակցությունը, ապա այն պետք է պակաս լինի հսկիչ փաթեթից: Կառավարությունը նաև իր ձեռքում չպետք է պահի «ոսկյա բաժնետոմսի» իրավունքները[24], ինչը նրան այլ բաժնետերերի համեմատ ընկերության գործունեության վրա առավել մեծ ազդեցության հնարավորություն կընձեռեր:

*Վերակազմակերպում մինչև սեփականաշնորհումը:* Occasionally, Երբեմն, պետական պաշտոնյաները մտածում են, որ եթե մինչև սեփականաշնորհումը նրանք ընկերությունն առավել արդյունավետ կամ շահութաբեր դարձնեն, ապա նրանք կկարողանան առավել բարձր գին կստանան ընկերության բաժնետոմսերը վաճառելու արդյունքում: Սա սովորաբար արվում է «լարերի սեղմամբ» մինչև ձեռնարկության սեփականաշնորհումը, որպեսզի վերջինիս շուկայական առավելություններ տրամադրվի սեփականաշնորհումից անմիջապես հետո: Ավելին, քանի որ սեփականաշնորհման տրամաբանական հիմնավորումն այն է, որ կառավարություններն ամենալավ բիզնես ղեկավարները չեն, ՊՁ սեփականաշնորհելու մասին որոշում կայացնելուց հետո սովորաբար անիմաստ է հանկարծակի փորձել վերականգնել ընկերությունը դրա սեփականաշնորհումից առաջ:

*Դեպք առ դեպք սեփականաշնորհումն ընդդեմ համապարած սեփականաշնորհման:* Սեփականանորհումը կարող է իրականացվել անհատական մոտեցմամբ, կամ այն կարելի է կիրառել ՊՁ-ների մեծ խմբի նկատմամբ: Սովորաբար, անհատական մոտեցումն ավելի լավ արդյունքներ է տալիս:

*Օտարերկրյա սեփականության հանդեպ բաց լինելը* Այսպես կոչված «ռազմավարական սեկտորների» մեջ օտարերկրյա մասնակցության օրենքով թույլատրված արգելքներից զատ, հանրության վերաբերմունքը և տեղացի ընկերությունների ցանկությունը խուսափել միջազգային մրցակցությունից հաճախ բացասական է ազդում ընկերությունների սեփականաշնորհման մրցույթներին օտարերկրյա ընկերությունների մասնակցության թույլարտման վրա: Ինչևիցե, ինչպես նշել են Մեգինսոնը և Նեթերը. «Ի համեմատ տեղացի ընկերության, օտարերկրյա ընկերության կողմից արված սեփականաշնորհումից հետո ակնհայտ է լինում ետ-սեփականաշնորհման աշխատանքների առավել լավ կատարումը:»[25] Ավելին, սեփականաշնորհված տնտեսական օբյեկտի մեջ օտարերկրյա ներդրողներին բաժնեմասի ձեռք բերման հնարավորության ընձեռումը օտարերկրյա հետագա ներդրման խթան կարող է հանդիսանալ: Համաշխարհային բանկի վերջերս իրականացրած ուսումնասիրության մեջ հետևյալ եզրահանգումն է արվել.

*Մրցույթներից օտարերկրացիների բացառումը զգալի խնդիրներ է առաջ բերում, հատկապես զանգվածային սեփականաշնորհման դեպքում: Երբ ետ-խորհրդային որևէ կառավարություն պատրաստվում է սեփականաշնորհել տնտեսության մեծ մասը, երկրում անբավարար քանակի հարստություն է առկա լինում ակտիվների*

*բարձր գների երաշխավորման համար: Հետևաբար, անհրաժեշտ է դիմել օգնության կամ բաժանել սեփականությունը տարբեր սեփականատերերի միջև, նույնիսկ փոքր ընկերությունների դեպքում, կամ իրականացնել ոչ-դրամային սեփականաշնորհում Վերջինս ներսի սեփականատերերի համար սեփականության իրավունքի անարդյունավետ պայմանների և/կամ սեփականաշնորհումից ցածր եկամուտների ստացման արդյունք կարող է հանդիսանալ բերելով բարեփոխումների չկատարման.*[26]

*Թափանցելիությունը սեփականաշնորհման գործընթացում:* Սեփականաշնորհման գործընթացը չպետք է շահերի բախման ազդեցություն կրի և այդ գործընթացի բոլոր հիմնական քայլերը պետք է իրականացվեն բաց, հասարակության համար տեսանելի պայմաններում: Գոծընթացի բոլոր շահագրգիռ կողմերի համար թափանցելիության ապահովումը կարող է առավել ժամանակատար լինել, քան փակ դռների ետևում գործունեության վարումը, բայց կաշառակերության ռիսկերը, ծանոթությամբ աշխատանքի տեղավորումը, օփարերկրյա ներդրողներին խանգարելը և պետական բացասական ազդեցությունը բարձրացնում են սեփականաշնորհման ոչ թափանցիկ վարման հնարավորությունը:

*Ետ-սեփականաշնորհման կարգավիճակ:* Սեփականաշնորհված ընկերությունները պետք է ենթարկվեն նույն օրենքներին, կանոններին և կանոնակարգերին, ինչ մնացած ընկերությունները: Սեփականաշնորհվելուց հետո ՊՁ-ն այլևս չի կարող օգտվել այն հատուկ արտոնություններից, որոնք նա ուներ մինչև սեփականաշնորհումը: Եթե սեփականաշնորհված ընկերությունն ունի առավելություն շուկայում, ապա այն պետք է ենթակա լինի օրենքի շրջանակներում գործող բոլոր մրցակցային արգելքներին այդ առավելությունից չօգտվելու կամ դրանք չչարաշահելու համար: Այսպիսով, սեփականաշնորհված տնտեսական օբյեկտը, որը սուբսիդավորվում է, զբաղվում է գնագցմամբ, կամ ընդգրկված է ապրանքների և ծառայությունների վաճառքում անթույլատրելի հնարքներ է կիրառում պետք է կրի նույն տույժերը, ինչ ցանկացած այլ մասնավոր ընկերություն: Կառավարությունները պետք է սեփականաշնորհված տնտեսական օբյեկտներին թույլ տան թե հաջողել, և թե ձախողել, ինչպես դա անում են բոլոր բիզնեսները, և սեփականաշնորհված ընկերությունները պետք է ենթարկվեն սնանկության մասին օրենքին, ներառյալ ոչ կամավոր հիմքերի վրա վերակազմակերպման կամ լուծարման հնարավոր դեպքերին: Սեփականաշնորհված տնտեսական մարմինը պետք է նույն ազատությունն ունենա, ինչ որ բոլոր ընկերություններն աշխատողներին վարձելու և աշխատանքից ազատելու առումով, այն պետք է ընդգրկվի աշխատանքի հետ կապված վեճերի մեջ և կրճատի կամ վերացնի արդյունաբերության բնագավառները: Պետք չէ պարտադրել գործել վնասով գների ցածրությունն ապահովելու համար, իրականացնել տեխնոլոգիայի հատուկ անցումներ, կամ կատարել հետագա ներդրումներ, որոնք չեն պահանջվում այլ ընկերությունների համար:

## *Առաջարկներ*

*Հարկային քաղաքականություն*

- Հարկային համակարգի բարեփոխման ընթացքում, կառավարությունները պետք է՝

  - Ամեն ջանք գործադրեն պարզեցնելու հարկային դաշտը;

  - Երաշխավորեն արտահանվող ապրանքների համար ԱԱՀ գերավճարների արագ իրականացումը;

  - հնարավորություն ընձեռնել ինտերնետով ներկայացնել հաշվետվություններրը:

*Զբաղվածության քաղաքականություն*

- Աշխատողների հիմնական իրավունքների պաշտպանության ժամանակ, կառավարությունները պետք է կրճատեն աշխատողների վարձման և նրանց աշխատանքից ազատման համար գոյություն ունեցող ոչ անհրաժեշտ խոչընդոտները, երբ և ինչպես թելադրվում է ելնելով բիզնեսի անհրաժեշտությունից:

- Գործատուները պետք է իրավունք ունենան վարձել մասնակի ներգրավվածության հիմքերով աշխատողների, կամ ժամանակավոր աշխատողների, իրավունք ունենան աշխատողներին թույլ տալ աշխատել արտաժամյա՝ ընդունելի սահմաններում նրանց փոխհատուցում հատկացնելու դիմաց:

- Կառավարությունները պետք է երաշխավորեն, որ սոցիալական հարկերի վճարման և աշխատողների համար դասընթացների ապահովման գործատուների վրա դրված պահանջները ընդունելի են և ոչ դժվար կատարվող:

*Ենթակառուցվածքային քաղաքականություն*

- Կառավարությունները պետք է ստեղծեն ժամանակակից ենթակառուցվածքներ տրանսպորտային միջոցների, հեռահաղորդակցման և նման միջոցների համար: Այդպիսով նրանք պետք է հաշվի առնեն, թե արդյոք պետական և մասնավոր հատվածների համագործակցության արդյունքում հնարավոր է իրականացնել ենթակառուցվածքային քաղաքականության նպատակները, թե ոչ: Ենթակառուցվածքները ստեղծելուն պես նրանք պետք է պատշաճ պահպանվեն և սա պահանջում է երկարաժամկետ պլանավորում:

*Մարդկային ռեսուրսների մեջ ներդրում կատարելու քաղաքականություն*

- Կառավարությունները պետք է զգալի ներդրում կատարեն կրթության, և մասնագիտական ու տեխնիկական դասընթացների մեջ այն բնագավառներում, որոնց շնորհիվ իրենց քաղաքացիներն ու երկրները հետագայի համար մրցունակ կլինեն:

- Պետությունները պետք է աշխատեն ապահովել միջազգային բիզնեսի լեզվով, մասնավորապես անգլերեն խոսող աշխատողների առկայություն:

- Պետությունները պետք է աշխատեն կրթել հանրությանը շուկայական տնտեսության և, առանձնապես, ձեռնարկատիրության թեմաներով:

*Տարածաշրջանային առևտրի քաղաքականություն*

- Այն երկրները, որոնք դեռևս ԱՀԿ անդամ չեն, պետք է մտածեն այս մարմնին անդամակցելու մասին, որպեսզի օգտվեն օտար շուկաներ ելք ապահովող ԱՀԿ տված առավելություններից:

- Ընդհանրապես, երկրները պետք է ներդաշնակեն իրենց առևտրային օրենքները առևտրային հսկաների, ինչպիսին է ԵՄ-ն, օրենսդրության հետ, որպեսզի ներդրողները կարողանան վստահորեն գործեն իրենց ծանոթ պայմաններում:

- ԵՄ չանդամակցող երկրները պետք է ուշադիր լինեն ձեռքից բաց չթողնելու ազատ առևտրի տարածաշրջանային պայմանագրերի և ներդրումային համաձայնագրերի մեջ ընդգրկվելու

հնարավորությունը, ինչպես նաև այլ մեխանիզմների մեջ, որոնք նրանց համար մեծ շուկաներ մտնելու առավելություն կընձեռեն:

*Սեփականաշնորհման քաղաքականություն*

- ՊՁ-ների սեփականաշնորհման ժամանակ, կառավարությունները պետք է՝

  - Փոխանցեն սեփականաշնորհված ընկերության ամբողջական վերահսկողությունը մասնավոր ընկերությանը;

  - Չպահեն իրենց ձեռքում «ոսկյա բաժնետոմսերի» իրավունքները, որոնցով կառավարությունը կարող է արգելակել սեփականաշնորհված ընկերության որոշումները կամ ուղղություն տալ դրանց;

  - Չձեռնարկեն ընկերության վերակազմակերպում մինչև դրա սեփականաշնորհումը;

  - Թույլ տան օտարերկրացիներին մասնակցել ընկերության սեփականաշնորհման համար հայտարարված մրցույթին (բացի «ռազմավարական ոլորտներից», ինչպես օրինակ պաշտպանությանը վերաբերող արդյունաբերություն), և;

  - Չտան նախապատվություն, և ոչ էլ դժվար կատարման պայմաններ պարտադրեն վերջերս սեփականաշնորհած ընկերությունների սեփականատերերի վրա, այլ թույլ տան, որպեսզի շուկան և կառավարման ունակությունները որոշեն ընկերության հաջող աշխատանքը կամ դրա ձախողումը:

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ՏՀԶԿ, «Ներդրումների համար քաղաքականության շրջանակ. ներածության նախագիծ, հսկիչ հարցաշար և նախնական դիտարկումներ» (ՏՀԶԿ, 25-27 Հոկտեմբեր 2005), <http://www.oecd.org/dataoecd/10/55/35488787.pdf>

Ջեք Յուինգ, Հեյլ Էդմոնդսոն և Պատրիցիա Կրանց, «Կարողությունների աճ. ինչպես կենտրոնական Եվրապայի երիտասարդ և բանիմաց երիտասարդ աշխատողները խթանում են տարածաշրջանային զարգացումը», *Business Week* 3963 (12 Դեկտեմբեր 2005), 50, <http://www.businessweek.com/magazine/content/05_50/b3963021.htm>

Մարիանա Սպարտարեանու և Բեատա Սմարզինսկա: *Արդյո՞ք օտարերկրյա ներդրողները մտահոգվում են աշխատանքի շուկայի կանոնակարգերով:* Համաշխարհային բանկի Քաղաքականության հետազոտման աշխատանքային փաստաթուղթ 3275 (Ապրիլ 2004), <http://wdsbeta.worldbank.org/external/default/WDSContentServer/IW3P/IB/2004/05/20/000009486_20040520093807/Rendered/PDF/wps3275regulations.pdf>

Սերգեյ Գուրիևվ և Ուիլիամ Մեգգինսոն, «Սեփականաշնորհում. Ի՞նչ ենք մենք սովորել» (2005), <http://siteresources.worldbank.org/INTDECABC2006

«Հարկային համակարգերի պարզեցում. փաստեր միասնական դրույքաչափով հարկերի օգտին», *The Economist* (14 Ապրիլ 2005), <http://www.economist.com/displaystory.cfm?story_id=3860731>

2005–2010 թ.թ. Լիտվական մաքսատան զարգացման ռազմավարություն, <http://www.cust.lt/en/article?articleID=480>

## ՀՂՈՒՄՆԵՐ

---

[1] «Գրագետ հարկային քաղաքականություններ», հարցազրույց հարկերի վերաբերյալ պարբերականում ԱՄՀ ներկայացուցիչ պրն Դիմիտրի Դեմեկասի հետ*:* <http://www.balticsww.com/news/features/tax.htm>

[2] Ժակ Մորիս, «Օգտագործելով հարկային արտոնությունները ՕՈւՆ ներգրավման համար» (Համաշխարհային բանկ, Հունվար 2003).

[3] Պետությունները պետք է հարկային դրույքաչափերը ցածր մակարդակի վրա սահմանելիս ուշադիր լինեն, քանի որ կարող են մեղադրվել «հարկային գնագցման» մեջ. Անցյալում Իռլանդիան մայրցամաքային Եվրոպայի որոշ գործընկերների կողմից ենթարկվել է քննադատության հարկերի ցածր դրույքաչափերի համար: Երկրի նպատակը պետք է ոչ թե լինի հարևաններից նվազ դրույքաչափեր սահմանելը, այլ խթանել մրցակցությունը և ուժեղացնել բնական առավելություններն գրավիչ հարկային համակարգի առաջարկությամբ:

[4] «Հարկային համակարգերի պարզեցում. ֆիքսված դրույքաչափով հարկի օրինակ»: *The Economist*, 14 Ապրիլ 2005, <http://www.economist.com/displaystory.cfm?story_id=3860731>

[5] Տես, օրինակի համար, Հոդված 143, Ռումինիայի հարկային օրենսգիրք (Օրենք համար 571/2003), տպագրվել է *Ռումինիայի պաշտոնական թերթում* (Մաս առաջին), համար 927 of 23 Դեկտեմբեր 2003 (արտահանման կամ նմանատիպ այլ գործարքների, ինչպես նաև միջազգային տրանսպորտի համար բացառություններ), <http://www.m. nante.ro/engl/cod_. scal/TITLE%20VI.en.htm>

[6] Համաշխարհային բանկ, *Վրաստան: Առևտրի զարգացման փոխկապակցված ռազմավարություն* (Համաշխարհային բանկի աղքատության նվազեցման և տնտեսական կառավարման բաժին, Եվրոպայի և Կենտրոնական ասիայի տարածաշրջան 5 Նոյեմբեր 2003), <http://www-wds.worldbank.org/servlet/WDSContentServer/WDSP/IB/2003/12/16/000090341_20031216104201/Rendered/INDEX/272640GE.txt>

[7] Թորի Քլարկ, «ԱԱՀ խառնաշփոթը և օտարերկրյա ներդրողները», *The Moscow Times*, 8 Օգոստոս 2002.

[8] <http://www.hitro.hr/eng/e-regos/kako.htm>

[9] «Վարչապետ Իվո Սանադերը մեկնարկ է տալիս ձևերի էլեկտրոնային լրացման ծառայությանը» Խորվաթիայի Հանրապետության մամլո հաղորդագրություն (3 Նոյեմբեր 2005), <http://www.vlada.hr/default.asp?mode=1և gl=20051103000001 1և jezik=2և sid=>

[10] Մարիանա Սպարտարեանու և Բեատա Սմարզինսկա: *Արդյո՞ք օտարերկրյա ներդրողները մտահոգվում են աշխատանքի շուկայի կանոնակարգերով:* Համաշխարհային բանկի Քաղաքականության հետազոտման աշխատանքային փաստաթուղթ 3275 (Ապրիլ 2004), <http://wdsbeta.worldbank.org/external/default/WDSContentServer/IW3P/IB/2004/05/20/000009486_2004052009380 7/Rendered/PDF/wps3275regulations.pdf>

[11] Հռչակագիրը հիմնականում կենտրոնացած է չորս թեմաների վրա. (1) միավորումներ կազմելու ազատություն և խմբային բանակցություններ իրականացնելու իրավունք (2) հարկադիր և պարտադիր աշխատանքի կասեցում, (3) երեխաների աշխատանքի արգելում, և (4) աշխատավայրում իրավունքների խախտման դադարեցում: Հռչակագրի ամբողջական տեքստի և դրանով ամրագրված հիմնական սկզբունքների հետ կարելի է ծանոթանալ ինտերնետում հետևյալ հասեով. <http://www.ilo.org/dyn/declaris/DECLARATIONWEB.INDEXPAGE>

[12] «Բուլղարիայի մրցակցային հնարավորությունների և սահմանափակումների վերաբերյալ ներդրողի ընկալումը. իրավիճակը աշխատուժի շուկայում» (ԱՄՆՄԶԳ աշխատուժի շուկայի վերաբերյալ ծրագիր, Հոկտեմբեր 2004), <http://www.bglabour.org/Doc_LM/Investors_EN.pdf>

[13] ՏՀԶԿ, «Ներդրումների համար քաղաքականության շրջանակ. ներածության նախագիծ, հսկիչ հարցաշար և նախնական դիտարկումներ» (ՏՀԶԿ, 25-27 Հոկտեմբեր 2005), <http://www.oecd.org/dataoecd/10/55/35488787.pdf>

[14] Նագեսի Կումար, *Ենթակառուցվածքի հասանելիությունը,օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը և դրանց կողմնորոշումը արտահանմանը. համեմատական վերլուծություն երկրների միջև* (Զարգացող երկրների համար հետազոտական և տեղեկատվական ծառայություն, 2001), <http://www.gdnet.org/pdf/nkumar.pdf>

[15] Մեջբերում տնտեսական և բնապահպանական ուղղության վերաբերյալ ԵԱՀԿ Ռազմավարական փաստաթղթից. «Մարդկային ռեսուրսները հանդիսանում են տնտեսական աճի և զարգացման

կարևորագույն նախադրյալներից, որի համար անհրաժեշտ են գիտելիք և հմտություններ, մասնավորապես, տնտեսական, ձեռնարկատիրական, կառավարչական, օրենսդրական և գիտական հարցերում: Մենք կձեռնարկենք անհրաժեշտ միջոցառումներ կրթության և վերապատրաստման գործընթացների խթանման համար և կավելացնենք համագործակցությունը, ներառյալ մասնագիտացված միջազգային հաստատությունների և կազմակերպությունների հետ, այնպիսի բնագավառներում ինչպիսիք են կրթական, հետազոտական և վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների հասանելիության մեծացումը՝ կրթաթոշակների և փոխանակումների ավելացման միջոցով»: ԵԱՀԿ, *Տնտեսական և բնապահպանական ուղղության վերաբերյալ Ռազմավարական փաստաթուղթ:* (Դեկտեմբեր 2003), <http://www.osce.org/item/16350.html.>

[16] Ջեք Յուինգ, Հեյլ Էդմոնդսոն և Պատրիցիա Կրանզ, «Կարողությունների աճ. ինչպես կենտրոնական Եվրապայի երիտասարդ և բանիմաց երիտասարդ աշխատողները խթանում են տարածաշրջանային զարգացումը», *Business Week* 3963 (12 Դեկտեմբեր 2005), 50, <http://www.businessweek.com/magazine/content/05_50/b3963021.htm>

[17] Տես «Կայունության համաձայնագրի մասնակից և աջակից պետությունների և կառավարությունների ղեկավարների, մասնակից և աջակից միջազգային կազմակերպությունների, գործակալությունների և տարածաշրջանային նախաձեռնությունների ղեկավարների Սարայեվոյում կայացած վեհաժողովի հռչակագիր» (Սարայեվո, 30 Հուլիս 1999), <http://www.stabilitypact.org/constituent/990730-sarajevo.asp>

[18] Պետական մասնակցությամբ ընկերությունները հաճախ զգալիորեն սուբսիդավորվում են իրենց կողմից արտադրված ապրանքների գնային մակարդակը ի շահ սպառողներին արհեստականորեն ցածրացնելու նպատակով: Սա նշանակալից կերպով բացասական ազդեցություն է ունեցել մասնավոր ներդրումների վրա, քանի որ մասնավոր ընկերություններն, ւ հակառակ պետականների, ծախսերի փոխհատուցումը իրականացնում են եկամուտների հաշվին: Ի լրումն, կանոնակարգերով պետական մասնակցությամբ ընկերությունների համար հաճախ բացառություններ են նախատեսվում: Եթե մասնավոր ներդրողը արդյունաբերության փվյալ ոլորտում չի կարող շահույթ սպանալ, քանի որ սուբսիդավորվող պետական մասնակցությամբ ձեռնարկությունները արհեստականորեն իջեցնում են գները, կամ մասնավոր ընկերություններն գործում են վարչական առավել մեծ բեռի ներքո, ապա նրանք ներդրումներ իրականացնելու համար կարող են այլ վայրեր փնտրել:

[19] Ջոն Էռլ, «Մասնավորեցման ազդեցությունը զբաղվածության և վարձատրության վրա. անցումային տնտեսությամբ երկրների փորձը», *Employment Research* (Հունվար 2006), <http://www.upjohninst.org/publications/newsletter/JSE_106.pdf>

[20] «Զանգվածային սեփականաշնորհում» տերմինը տարբեր հեղինակների կողմից օգտագործվում է երկու տարբեր հասկացությունների նկարագրության համար: Բազմաթիվ տնտեսագետներ կիրառում են տերմինը բազմաթիվ բաժնետերերի միջև բաժնետոմսերի փաթեթի տարածման երևույթի նկարագրության համար: Այս իմաստով է նաև օգտագործվում տերմինը սույն Ուղեցույցում: Այլ հեղինակներ «զանգվածային սեփականաշնորհում» տերմինը օգտագործում են պետական մասնակցությամբ բազմաթիվ ընկերությունների զուգահեռաբար իրականացվող մասնավորեցման բնութագրման համար: Հասկացությունների միջև շփոթության առաջացման բացառման նպատակով վերջինի նկարագրման համար օգտագործվում է «միասնական փաթեթով» մասնավորեցում տերմինը.

[21] Բրյուս Կոգուտ և Էնդրյու Սպայսեր, «Կապիտալի շուկայի զարգացման և զանգվածային սեփականաշնորհումման միջև փրամաբանական հակասությունները. Լուսաստանի և Խեչիայի Հանրապետությունի օրինակներից քաղված դասերը»11 *Industrial and Corporate Change* 1 (2002).

[22] Տես նույն աղբյուրը

[23] Տես նույն աղբյուրը

[24] «Ոսկե բաժնետոմսը» կառավարությանը վետոի իրավունք է տալիս ընկերության վերաբերյալ որոշակի առանցքային որոշումների կայացման ժամանակ: Ալեքսանդր Դիկ, «Սեփականաշնորհում և կորպորատիվ կառավարում. Սկզբունքներ, փաստեր և ապագայի խնդիրներ», 16 *World Bank Research Observer* 59 (2001).

[25] Ուիլիամ Մեգգինսոն և Ջեֆրի Նետտեր, «Պետությունից դեպի շուկա. Խեփականաշնորհման հարցերով էմպիրիկ հետազոտությունների ուսումնասիրություն» 39 *Journal of Economic Literature* 321 (2001), <http://faculty-sta. .ou.edu/M/William.L.Megginson-1/prvsvpapJLE.pdf>

[26] Սերգեյ Գուրիևվ և Ուիլիամ Մեգգինսոն, «Սեփականաշնորհում. Ի՞նչ ենք մենք սովորել» (2005), <http://siteresources.worldbank.org/INTDECABC2006



# Գլուխ 5

## Տնտեսական զարգացման համար օրենսդրության և նորմատիվ-իրավական կարգավորման կարևորությունը

[illegible]

Երբ անցումային երկրները դեպի շուկայական տնտեսություն իրենց առաջին քայլերն արեցին 1990-ական թվականներին, նրանց պատկերացումներն այն մասին, որ բարգավաճումը ձեռք կբերվի հեշտությամբ և ավտոմատաբար շատ շուտով հօդս ցնդեց: Նրանք հասկացան, որ մասնավոր գույքի ինստիտուտի վերականգնումն ինքնին չի բերի արդյունավետ շուկաների ձևավորմանը: Պետք է կառուցվի կամ վերակառուցվի կառավարական, քաղաքական, սոցիալական և մշակութային ինստիտուտների նոր համակարգ: Ինստիտուտներից վերակականգման առումով ամենակարևորներից մեկը ազգային իրավա-օրենսդրական համակարգերի ինստիտուտը պետք է լինի:

Ինչպես արդեն նշվել է, առողջ տնտեսության զարգացման, դրա պահպանման և ընդլայնման համար հիմնաքարային բաղադրիչ է հանդիսանում օրենքը[1]: Այս համատեքստում օրենքի օպտիմալ դերը մի գործիք է, որի միջոցով մասնավոր հատվածին հնարավորություն է ընձեռնվում օգտագործելու իրենց տնտեսական ազատությունն ի շահ ընդհանուր բարօրության:

## Մասնավոր սեփականության իրավունքերն ու ազատությունները

Շուկայական ժամանակակից տնտեսություններն որպես նախնական պայման պահանջում են մասնավոր սեփականության առկայություն: Գույքի օգտագործման, փոխանցման, առուծախի և մեկին գույքի օգտագործման իրավունքից ազատման իրավունքները կենսական են առողջ տնտեսության և հասարակության համար: Գույք ասելով հասկանում ենք անշարժ գույք (հող) և անձնական գույք (ցանկացած տեսակի գույք բացի հողից): Անձնական գույքը կարող է նյութական լինել (օրինակ, մեքենասարքավորում, ավտոմեքենաներ, ապրանք, և այլն) կամ ոչ նյութական (պայմանագրային իրավունքներ, ընկերության բաժնետոմսեր, արտոնագրեր, հեղինակային իրավունքներ, և այլն): Տնտեսական զարգացմանն ու օտարերկրյա ներդրումներին օժանդակելու համար երկրները պետք է խրախուսեն և պաշտպանեն գույքի իրավունքների բոլոր այս տեսակները:

Շուկայի պատշաճ գործունեության համար պետք է պաշտպանվեն գույքի նկատմամբ իրավունքները, այսինքն, պաշտպանություն ապահովվի բոլոր տեսակի մեքենայություններից, գողությունից և հանցագործությունից: Գույքն անհրաժեշտ է պաշտպանել նաև փոխհատուցում չնախատեսող պետական հափշտակումից[2]: Բացի այդ, գույքը պետք է հսկման ենթակա լինի: Սա նշանակում է, որ գրանցամատյաններում և օբյեկտիվ իրավական կանոններով պետք է նախապես սահմանված լինեն սեփականատիրոջ ինքնությունն ու սեփականության իրավունքի կարգավիճակը: Գույքը նաև փոխանցելի պետք է լինի և երաշխավորված վարկավորման համար գույքի սեփականատերերը պետք է իրավունք ունենան գրավադրելու գույքը վարկի ստացման նպատակով, իսկ ձախողման դեպքում օգտագործեն այն բռնագրավման համար:

## Պաշտպանություն առանց փոխհատուցման բռնագանձման դեպքերից

Պետության ինքնիշխանության հիմնական իրավունքն է, որ կառավարություններն որոշ հանգամանքներում պետական նպատակների անհրաժեշտությունից ելնելով իրավունք ունենեն վերցնել մասնավոր գույքը: Մեծ ճանապարհների, ջրատար խողովակների, օդանավակայանի կառուցման դեպքերում, օրինակ, պետությունը կարող է երբեմն օտարել մասնավոր հողը սեփականատիրոջից, եթե վերջինս չի ցանկանում վաճառել իր հողը ընդունելի գնով: Առողջությանը սպառնացող վտանգի դեպքերում, կառավարությունները պետք է իրավասություն ունենան կարանտինի ենթարկել կամ, նույնիսկ ոչնչացնել մասնավոր հողատիրոջ անասունների հոտը, եթե հիվանդության տարածման վտանգ կարող է լինել: Նշված անվիճելի օրինակներից զատ, այնուամենայնիվ, որոշ կառավարություններ բռնագրավել են գույքը հանրային շահերին չհետապնդող նպատակների համար. քաղաքական պատճառներից ելնելով, կամավոր հիմունքներով, սեփականատիրոջը փոխհատուցում տրամադրելով կամ ոչ: Օտարերկրյա ներդրողները բազմիցս ապացուցել են ազ-

գայնականացման սխեմաների քաղաքական հայտնի միջոցի կիրառումը, երբ քաղաքական գործիչները ցանկացել է արտասահմանցիների և արտասահմանյան ամեն ինչի նկատմամբ ատելություն սփռել կամ պոպուլիստական ընդհանուր տրամադրություն ստեղծել: Եղել են նաև դեպքեր, երբ կառավարությունները տեղական բիզնեսների, նույնիսկ փոքր տնտեսությունների դաժան բռնագրավում են իրականացրել: Նույնիսկ մասնակիորեն կամ ապիճանաբար, բայց մասնավոր գույքի իրավունքների նման ոտնահարումը մեծապես վնասում է շուկայական տնտեսության արագ զարգացման համար այդքան անհրաժեշտ կայունությանը[3]:

*Մասնավոր սեփականության բռնագանձման իրավունքի սահմանափակում:* Որպես գույքի նկատմամբ իրավունքների պաշտպանության և կայունության երաշխավորմանն ուղղված առաջին քայլ, կառավարություններն օրենքով պետք է հստակորեն սահմանափակեն այն նպատակները, որոնց համար նրանք կարող են իրականացնել մասնավոր գույքի օտարումը: Օրենքը պետք է երաշխավորի օտարված գույքի նախկին սեփականատիրոջը պետության կողմից փոխհատուցման տրամադրումը: Քանի որ անհնար կլինի սահմանել այն բոլոր հանգամանքները, որոնց ներքո պետությունը կարող է օտարել մասնավոր սեփականատիրոջը պատկանող գույքը, օրենքը պետք է հստակորեն սահմանի, որ միայն պետական նպատակների համար օգտագործման դեպքում կարող է հիմնավոր համարվել բռնագանձումը, ինչպես նաև պետք է որոշակի փորձ արվի սահմանափակումներ դնել պետական նպատակների սահմանման վրա:

*Սահմանել բռնագանձման այն դեպքերը, որոնք սեփականատիրոջը փոխհատուցման ստացման իրավասություն են տալիս:* Կառավարությունները պետք է նաև իրավական չափանիշներ հաստատեն սահմանելու օտարման դեպքերը, այդպիսով հիմք դնելով սեփականատիրոջ փոխհատուցման ստացման իրավունքին: Օտարումն ոչ միշտ է կատարվում ուղղակի կերպով, որի հետևանքում սեփականատերը պաշտոնապես զրկվում է գույքի նկատմամբ իր իրավունքներից: Այն կարող է նաև իրականացվել հարկման չափազանց բարձր դրույքաչափերի սահմանման, սեփականատիրոջ կառավարման, վաճառքի իրավունքների նկատմամբ պետության չհիմնավորված միջամտության արդյունքում, և այլն, ինչպես նաև «դանդաղ օտարման» միջոցով, երբ այն իրականացվում է աստիճանաբար: Չնայած որ պետության այս գործողությունները չեն վնասում սեփականատիրոջ գույքի նկատմամբ պաշտոնապես սահմանված իրավունքները, նրանք կարող են գույքի տնտեսական արժեքի և, լրիվ հանկարծակիորեն, դրա կորստի պատճառ հանդիսանալ: Միևնույն ժամանակ, կառավարության գործողությունների նման քանակությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ մասնավոր գույքի արժեքի վրա և, ահավասիք, անհիմն կլինի բոլոր նման դեպքերում ակնկալել կառավարության կողմից փոխհատուցման վճարումների կատարումը: Այսպիսով նուրբ հարց է. «Որ կետու՞մ է, որ անընդհատ միջամտելով հյուրընկալող կառավարությունը օտարում է իրականացնում, այլ ոչ թե կիրառում իր ոստիկանական ուժերը կանոնակարգող միջոցառումների իրականացման միջոցով»:[4] Անուղղակի օտարման և նորմալ կանոնակարգված գործողությունների միջև տարբերակում դնելու նպատակով երկրները կարող են որպես ուղեցույց օգտագործել մի շարք միջնորդ և վեճերի լուծման դատարանների որոշումները[5]:

*Փոխհատուցման չափի սահմանում:* Օրենքն օտարված գույքի սեփականատիրոջը պետք է նաև փոխհատուցման արդար չափ ապահովի: «Շուկայական արդար արժեքը» չի կարող բառացիորեն կիրառելի լինել բոլոր իրավիճակներում. որևէ փվյալ գույքի տեսակը չի կարող բավարար առուծախի առարկա հանդիսանալ, որի հետևանքում դժվարանում է դրա իրական գնի որոշման գործընթացը: Այնուամենայնիվ, որոշ ջանք պետք է գործադրել սեփականատիրոջը բռնագրավված գույքի դիմաց օբյեկտիվ արժեք վճարելու համար կառավարության կողմից կամայականորեն որոշված պայմանական գումար վճարելու փոխարեն:

*Օտարման մասին որոշումների վերանայման անկախ մեխանիզմի ստեղծում:* Մասնավոր գույքն օտարող կառավարական մարմնի խոսքը բոլորովին վերջինը չէ օտարման օրինականության կամ համապատասխան փոխհատուցման չափի համար: Օրենքի գերակայությամբ առաջնորդվող պետությունում կառավարությունը նույնպես ենթակա է օրենքին, և սահմանափակ են նրա իրավասության շրջանակները: Դատարանը կամ մեկ այլ արդարադատության մարմին պետք է, թե տեխնիկական իրավասության և թե իրական

ուժ և անկախություն ունենան վերանայելու, իսկ անհրաժեշտության դեպքում փոխելու գույքի բռնագրավման վերաբերյալ որոշում կայացրած մարմնի որոշումները: Դատարանների ու վեճերի լուծման այլ մարմինների մասին մանրամասն քննարկում է անցկացվում սույն գլխում:

## Գույքի բիզնես հնարավորությունների նկատմամբ իրավունքների կանոնակարգում և քայքայում

Ինչպես որ տնտեսական զարգացման համար կարևոր են գույքի կամայական բռնագրավումը բացառող երաշխիքները, այնպես էլ օտարումը մասնավոր գույքի նկատմամբ իրավունքները վնասող միակ կառավարական գործողությունը չէ: Չափից ավելի կանոնակարգումը, արտոնագրման խճճված ռեժիմները, որևէ թույլատրման ստացման համար հարյուր դուռ թակելու անհրաժեշտությունը կարող են իրենց ծախսատարության և ժամանակատարության պատճառով ներդրողների և ձեռնարկատերերի իրավունքների խախտման պատճառ հանդիսանալ Չնայած տնտեսական գործունեության պետության կողմից կանոնակարգման որոշակի աստիճանն անխուսափելի է ժամանակակից տնտեսության մեջ, Մասնավոր ձեռնարկությունների միջազգային կենտրոնն իր հիմնավորումն ուներ 2004 թվականին ներկայացված տնտեսական հատուկ հաշվետվության մեջ հետևյալ դիտարկումն անելու համար. «Կանոնակարգերը, որոնք չափազանց մեծ արգելքներ են դնում գույքի սեփականության իրավունքի և օրինական սեփականատիրոջ կողմից դրա օգտագործման վրա արգելակում են երկրի հարստությունը … գույքի նկատմամբ իրավունքների հասպատմանը խոչընդոտող պետության կողմից դրված արգելքները այդ ակտիվների օգտագործումից առավել քիչ արդյունավետության ստացման պատճառ են հանդիսանում»[6]:

Գեր-կանոնակարգումը նպաստում է այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ կարող է փթթել պաշտոնական մակարդակի վրա դրված կաշառակերությունը: Կաշառք ակնկալող պետական պաշտոնյան կարող է առաջարկել «կաշառել» կանոնակարգող գործընթացը կրճատելով բյուրոկրատական ձգձգումները փոխարենն անօրինական վճարումներ ստանալով կանոնակարգվող բիզնեսներից: Ինչպես որ նշված էր հիաշատկված հաշվետվությունը նաև դիտարկում է..

*Կաշառքի ակնկալումը… պետական պաշտոնյաները պարզ ցույց են տալիս, որ նրանց համար առավել նախընտրելի է գումար վերցնել սեղանի տակից քան հավաստիանալ պաշտոնական հարկերի կամ տուգանքների ամբողջական վճարման մասին: Չնայած որ ստվերում մնալն էժան չէ, պաշտոնական տնտեսության մեջ հայտվելն էլ ավելի թանկ է: Պաշտոնական արտոնագրերի ստացման համար փաստաթղթային բարդ ընթացակարգերը ստիպում են գործարարներին ընկնելու բյուրոկրատական խառնաշփոթի մեջ: Իրավական պահանջների կատարման համար արված անհելի ծախսերն ուղղակի խլում են այն ժամանակը, որը կարելի կլինեն օգտագործել շահութաբեր և արդյունավետ գործունեության իրականացման համար*[7]:

Այսպիսով, ի լրումն երկրի կառավարության և տնտեսական համակարգի նկատմամբ վստահության խեղաթյուրմանը, գեր-կանոնակարգման այս հետևանքը խոչընդոտում է նաև «ստվերային տնտեսությանը»: Ստորև բերված են ԵԱՀԿ երկրների այն բնագավառները, որտեղ հանդիպել են գեր-կանոնակարգման դեպքեր.

*Իրար կրկնող, սխալ հասկացվող, ոչ հստակ և ոչ ամբողջական կանոնակարգերի ընդհանուր կուտակում:* Կանոնակարգման ասպարեզում առկա խառնաշփոթը մեկ օրվա պատմության արդյունք չէ: Այդ խառնաշփոթը կուտակման արդյունք է: Կանոնակարգերը հաճախ ընդունվում են հատուկ նպատակների հետապնդման արդյունքում, առանց համապատասխան ստուգման և առանց հաշվի առնելու այն դժվարությունները, որ դրանք կարող են պարտադրել բիզնեսին, թե ինչպես այս կամ այն կանոնակարգը կարող է խճճվել գործող օրենքների և կանոնակարգերի հետ և թե արդյոք ճիշտ կլինի այլ բայց նման իրավիճակներում հայտնելը հետագայում: Նման խնդիրներից խուսափելու համար Միացյալ թագավորությունն ընդունել է Կարգավորիչ ազդեցության գնահատման (ԿԱԳ) համակարգը, որը նոր կանոնակարգեր է առաջարկում արդյունավետության, հստակության և

նպատակահարմարության մի շարք ստուգումների համար, ներառյալ Փոքր բիզնեսի լակմուսի թեստը, որով փոքր ձեռնարկությունները պաշտպանություն են ստանում նման բացասական ազդեցություններից: Հոլանդիայի կառավարությունում ներկայումս դիտարկվում է կանոնակարգերի կուտակման խնդիրը լուծել «մայրամուտի սկզբունքի» ներմուծմամբ, որի շրջանակներում օրենքը կամ կանոնակարգը կգործեն լոկ ֆիքսված ժամանակահատվածում: Այդ ժամանակահատվածի վերջում պետք է կոնկրետ ապացույցներ բերել այդ սկզբունքը վերաներմուծելու համար օրենքի կամ կանոնակարգի լռության տալով շարունակությունը թույլ տալու փոխարեն: Սա ստիպում է քաղաքական գործիչներին վիճարկել օրենսդրության արժեքը և հնարավորություն է ընձեռում կանոնակարգվող ընկերություններին իրենց փոխելու իրենց պայմանները:

- *Սահմանափակումներ կանխիկ դրամի հասանելիության նկատմամբ:* Որոշ երկրներ պահանջում են, որ ընկերությունների միջև կատարվող գործարքներն իրականացվեն բանկային փոխանցումների միջոցով: Ընկերությունների և այլ իրավաբանական մարմինների կանխիկ դրամի հանումը երբեմն թույլ է տրվում միայն աշխատավարձերի վճարման և գործուղումների ծախսերը հոգալու համար: Որոշ օրենքներով նաև պահանջվում է, որ կանխիկի ստացականները դեպոզիտավորվեն նրանց ստացման նույն օրն իսկ: Նման սահմանափակումները կարող են խիստ արգելքներ պարտադրել ձեռնարկությունների, հատկապես փոքր բիզնեսների հնարավորությունների վրա իրենց օրեկան աշխատանքների կատարման համար: Հնարավորության սահմաններում շատ սահմանափակումներ պետք է վերացվեն կանխիկի նկատմամբ անսահմանափակ հասանելիություն ապահովելու համար:

- *Մաքսային փաստաթղթերի ձևակերպման պահանջներ:* Արգելված և սահմանափակ ապրանքների անօրինական տեղափոխումը թույլ չտալու նպատակով մեծապես կարևորվում է արդյունավետ մաքսային համակարգի ստեղծումը: Այն նաև տնտեսական պլանավորման համար մեծ կարևորություն ունեցող միջազգային առևտրի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվություն է ապահովում և խրախուսում է միջազգային առևտուրը: Ինչևիցե, թղթային երկարաձիգ լրացման պահանջները կարող են էապես մեծացնել ծախսերն ու միջազգային բեռնափոխադրումների ձգձգումների պատճառ հանդիսանալ: Մի շարք ԵԱՀԿ երկրներ, ներառյալ Ալբանիան, Հայաստանը, Բոսնիան և Հերցեգովինան, Վրաստանը, նախկին Հարավսլավիայի Մակեդոնիա հանրապետությունը, Մոլդովան և Ռումինիան, նվազեցրել են իրենց մաքսային բեռը ASYCUDA-ի (Մաքսային տվյալների ավտոմատ համակարգ)[8] ներդրմամբ, որը մաքսային կառավարման համակարգ է, որով իրականացվում են օտարերկրյա առևտրային ընթացակարգերի մեծամասնությունը:

- *Գրանցման և վկայագրման ժամանակատար ընթացակարգեր:* Այս ընթացակարգերը նոր բիզնեսի սկսման, հանրային կոմունալ ծառայություններից օգտվելու, անշարժ գույքի գործարքի կնքման և այլ աշխատանքների ձգձգման պատճառ կարող են հանդիսանալ: Ներդրողներին անհանգստացնում է այս փաստը, որովհետև ձգձգումները գումար արժեն և կարող են շուկայում իրենց դիրքերի կորստի պատճառ հանդիսանալ: Ավելին, նրանք ընդունում և իրենց քայլերն են ուղղում դեպի այն երկրները, որտեղ անհրաժեշտություն չներկայացնող կանոնադրության վերացման առաջընթաց է նկատվել:

ա/ Վերջերս Սերբիայի հանրապետությունը արժանացավ այդ ճանաչմանը, երբ ՄՖԿ-ն դասակարգեց այդ երկիրը որպես 2004 թվականի ընթացքում վարչական բարեփոխումների ամենալավ կատարող: Իր նման դասակարգման համար ՄՖՆ-ն հիմք ընդունեց սերբական նոր կանոնակարգերը, ըստ որոնց նոր բիզնեսի սկսման համար պահանջվող 51 օրը կրճատվել էր 15 օրվա:

բ/ 2005 թվականին Ուկրաինայի պառլամենտը, Վերխովնայա Ռադան, նոր օրենք ընդունեց բիզնեսի վարման համար թույլտվությունների համակարգի վերաբերյալ: Նոր օրենսդրությունն ուժի մեջ դրվեց վերացնելու Ուկրաինայում կանոնակարգման պահանջների մեջ առկա խառնաշփոթը, որում կային մոտ 167 օրենքներով կանոնակարգվող բիզնեսի վարման վերաբերյալ 1200

թույլտվություններ, կառավարության 150 կանոնակարգեր և քաղաքապետարանների և պետական կարգավորող գերատեսչությունների հրապարակած ավելի քան 1,500 հրամաններ: Համաձայն Ուկրաինայի նախագահի ճառի, այդ օրենքի ներմուծումից հետո, մեկօրվա ընթացքում նոր օրենսդրությամբ գործածությունից կհանվեն մոտ 1000 անհրաժեշտություն չներկայացնող կանոնակարգող պահանջներ:

*Վարչական բարեփոխման մեթոդներ - Գիլիոտինի մոտեցումը:* Տնտեսական զարգացմանը խթանելու նպատակով շատ երկրներ պետք է նվազեցնեն երկիմաստ, կրկնվող և անարդյունավետ բիզնես կանոնակարգերի տարիների ընթացքում կուտակված խառնաշփոթը: Տարիներ շարունակ, վարչական բարեփոխումն իրականացվել է «վերընթաց նախագծման մեթոդի» կիարռմամբ. բարեփոխման հեղինակները փորձ են արել ի հայտ բերել և վերացնել «խնդիր հարուցող» կանոնակարգերը նշում կատարելով մնացյալ մասում կանոնակարգի կորստի վերաբերյալ: Այս մոտեցման դեպքում գործող կանոնակարգերն ընկալվում են որպես անհրաժեշտ և բարեփոխման գործընթացը դառնում է դանդաղ, մաս-առ-մաս և հաճախ ոչ համապատասխան եղանակով կատարվող:

«Գիլիոտին» անվամբ հայտնի վարչական բարեփոխման համեմատաբար նոր մեթոդը կիրառում է «վայրընթաց» մոտեցում: Գիլիոտինի վրա հիմնված վարչական բարեփոխմամբ բացահայտվում է կանոնակարգի այն մասը, որը պետք է վերլուծության և բարեփոխման ենթարկվի մինչև կոնկրետ վերջնաժամկետը, որը կոչվում է «գիլիոտինի ժամկետ»: Կտրուկ փոխվել է գործող կանոնակարգերի օրինականության մասին ավանդական ընկալումը. բոլոր կանոնակարգերը անվավեր են ճանաչվում գիլիոտինի ժամկետի սահմաններում, եթե դրանք բարեփոխման ժամկետի շրջանակներում չեն ճանաչվել անհրաժեշտ, օրինական և շուկայամետ:

Կանոնակարգերի գիլիոտինը սովորաբար իրականացվում է մի քանի փուլերով: Առաջին հերթին, օրենսդիր իշխանությունը պետք է օրենք ընդունի գիլիոտինի ընթացակարգի հաստատման վերաբերյալ: Այնուհետև կառավարությունը կարգադրում է պետական բոլոր մարմիններին պատրաստել գործող կանոնակարգերի ցանկը: Յուրաքանչյուր կանոնակարգ պետք է հիմնավորված լինի գրավոր ձևով և կոնկրետ ամսաթվով, այլապես այն ավտոմատաբար անվավեր կճանաչվի: Որից հետո յուրաքանչյուր կանոնակարգ քննվում է կանոնակարգող մարմինների, անկախ դիտորդ մարմնի և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ձևավորված խմբերի կողմից: Այս քննարկումների ընթացքում յուրաքանչյուր կանոնակարգ պետք է անցնի երեք թեստերով, որոնցում տրվում են մի շարք հարցեր: Ստորև բերված են այդ հարցերից մի քանիսը.

- *Օրինականություն* – Ունի՞ արդյոք պետական գերատեսչությունը իրավական իրավասություն կանոնակարգ հրապարակել գործող օրենսդրության սահմաններում: Համահու՞նչ է արդյոք կանոնակարգը վերադաս օրենքների և կանոնակարգերի հետ, որոնք պետք է փոխարինեն դրան որևէ վեճի ծագման պարագայում:

- *Անհրաժեշտություն* – Նախատեսվա՞ծ է արդյոք կանոնակարգն ի շահ համայն հասարակության, թե՞ այն ի սկզբանե ընդունվել է ի շահ որևէ կոնկրետ պետական գերատեսչության կամ մասնավոր գործարարների խմբի: Դեռևս առկա՞ է այն խնդիրը, որի լուծման համար ստեղծվել էր կանոնակարգը: Եթե այո, ճիշ՞տ է արդյոք կազմված կանոնակարգը լուծում տալու գոյություն ունեցող խնդրին: Հիմնավորվե՞լ են արդյոք կանոնակարգի արդյունքում պարտադրված ծախսերը ստացված արդյունքներով:

- *Շուկայամետություն* – Արդյո՞ք կանոնակարգը հստակ է և ոչ երկիմաստ: Ավելացնու՞մ է արդյոք անիմաստ ձևով կանոնակարգը բիզնեսի վարման համար պահանջվող ծախսերը:

Կանոնակարգերը, որոնք ձախողել են այս թեսթերը կամ անվավեր են ճանաչվում, կամ էլ դասակարգվում գիլիոտինի չափանիշի տակ: Իսկ կանոնակարգերը, որոնք բավարարում են այս չափանիշներն ավելացվում են կենտրոնացված ցուցակում: Երբ մոտենում է գիլիոտինի ժամկետը ցուցակի մեջ չընդգրկված կանոնակարգերն ավտոմատաբար անվավեր են ճանաչվում:

Մի շարք երկրներ, որոնք են Մոլդովան, Մեքսիկան, Քենիան և Կորեան, վարչական բարեփոխման նպատակով կիրառել են գիլիո-

փինի մոտեցումը: Չնայած ստացված տարբեր արդյունքներին, որոնք կախված էին բարեփոխման իրականացման եղանակից, մինչ օրս ստացված փորձը վկայում է, որ գիլիոտինավորումը կարող է ոչ անհրաժեշտ բյուրոկրատիայի կրճատման արդյունավետ և առավել մանրակրկիտ կազմված կանոնակարգող համակարգի ստեղծման միջոց հանդիսանալ:

## *Անշարժ գույք*

Հողի հասանելիությունն անփոխարինելի է որոշ բիզնեսների համար և տնտեսության հավասարակշռված զարգացման նպատակով հողի շուկաները գերագույն նշանակություն ունեն: ԵԱՀԿ երկրների մեծամասնությունում մասնավոր հողի սեփականությունը փասնհինգ տարի առաջ դեռ գոյություն էլ չուներ: Ետ-խորհրդային ժամանակաշրջանի գույքային բարեփոխումներից մեկը կապված էր անշարժ գույքի սեփականաշնորհման հետ: Ինչևիցե, սկզբնական ընդհանուր օրենսդրությանը պակասում էր իր արդյունավետ իրականացմանն անհրաժեշտ առանձնահատկություն: Ինչպես նշվել է ՕՆԽԾ-ի վերջին հաշվետվությունում հողի շուկաների ձևավորումը ժամանակատար է և զգալի ջանքեր է պահանջում:

*Գույքի նկատմամբ պաշտպանված իրավունքների, թափանցիկ գների և թույլատրման արդյունավետ գործընթացների, ինչպես նաև հողի հարկի կայացած համակարգերի միջոցով հողի և շինությունների նկատմամբ հասանելիության ապահովումը բարենպաստ գործարար միջավայրի ստեղծման կարևոր գործոն է հանդիսանում:, Նման շուկաների ստեղծումն, ինչևիցե, կարող է երկար, բարդ, քաղաքական տեսանկյունից դժվար իրագործելի գործընթաց լինել, հատկապես այնտեղ, որտեղ հողը դեռևս պատկանում է պետությանը, նրա նկատմամբ գրանցված չեն գույքային իրավունքներ և որտեղ դեռևս կան հողամասի նկատմամբ իրար հակասող պահանջներ*[9]*:*

Տնտեսագետները հողի պատշաճ շուկաների զարգացման համար երեք հիմնական ինստիտուտներ են մատնանշում. (1) գրանցման համակարգը, որն ապահովում է «ճշգրիտ, ոչ թանկ իրավական տեղեկատվություն այն մասին, թե ով է հողի սեփականատերը և թե ում են պատկանում դրա նկատմամբ մնացած իրավունքները», (2) անշարժ գույքին վերաբերող իրավական դաշտի ձևավորում, և (3) հողի հետ առընչվող մասնագիտության զարգացում[10]: Ստորև բերված է այս ինստիտուտների ձևավորման մեջ Վրաստանի հանրապետության փորձը: Չնայած առաջընթացը կատարյալ չէր, Վրաստանի օրինակը ցուցադրական է իրենց տնտեսություններում անշարժ գույքի հատվածին նոր կյանքի զարկ տալու ցանկություն ունեցող անցումային երկրների համար:

*Իրավա-օրենսդրական դաշտ:* 1991 թվականին անկախության նվաճումից հետո Վրաստանի հանրապետությունն ուժի մեջ դրեց մի շարք օրենքներ մասնավոր հողի սեփականությունն հռչակելու և հողի շուկաների համակարգի զարգացման համար: Այս օրենքներում ներառված էին կանոնակարգեր և որոշումներ, որոնց միջոցով հողի սեփականությունը տրվում էր մասնավոր անձանց: Ինչևիցե, դեռևս բավարար հստակությամբ չէին սահմանված անշարժ գույքին առընչվող իրավունքներն ու պարտավորությունները: Այս պակասը զգալի չափով լրացվեց Քաղաքացիական օրենսգրքում արված ուղղումների միջոցով: 1997 թվականին, Քաղաքացիական օրենսգրքի մեջ ուղղում կատարվեց ներմուծելու անշարժ գույքի համապարփակ սահմանումը, որն է. «Հողամասն իր ընդերքի հատվածով, հողի վրա աճող բուսականությամբ, և հողին կցված շենքերով և շինություններով»: Ներկայիս քաղաքացիական օրենսգրքով նշվում են անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման ընդհանուր միջոցները (հոդվածներ 183-85), բազմաբնակարանային շենքերում բնակարանների սեփականության առընչությամբ գոյություն ունեցող իրավունքներն ու պարտավորությունները (208-38) և ներկայացվում կանոններ, որոնք կիրառելի են սերվիտուտների, ներառյալ վարձակալությունների, ուզուֆռուկտի (ուրիշի գույքից և դրանից ստացվող եկամուտներից օգտվելու ցմահ իրավունք), շինարարության կատարման և անվճար ժամանակավոր օգտագործման իրավունքների նկատմամբ: Անշարժ գույքին ամրակցումների մասին օրենքի հստակեցման նպատակով, որը կարևոր է շինարարության ֆինանսավորման չափի որոշման համար, Քաղաքացիական օրենսգրքի ծանոթագրությունում մեկնաբանվում է, որ դրանք «հողին պինդ ամրակցված շինություններն են», որոնց հողից տարանջա-

տելը մեծ ջանքեր և ծախսեր կպահանջի, կամ անհիմն վնասներ կբերի:

*Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցում*: Մինչև 1996 թվականը հողի նկատմամբ իրավունքների գրանցման պատասխանատվությունն բաժանված էր երկու գերատեսչությունների միջև. Տեխնիկական հաշվառման բյուրո, որը գործ ուներ սեփականաշնորհված շենքերի, կառույցների և բնակարանների հետ, և հողային կադաստրի վարչություն, որը գրանցում էր գյուղատնտեսական հողի նկատմամբ իրավունքները: Որպես երկու համակարգերում էլ առկա անհամապատասխանությունների և սխալների հետևանք, 1996 թվականին Հողի գրանցման մասին օրենքով Հողի կառավարման պետական վարչության և դրա ստորաբաժիների ներքո ստեղծվեց Պետական Ռեգիստր անվամբ նոր մարմին, ստանձնելով գրանցման վերոհիշյալ երկու գործակալությունների գործունեությունը: Այսուհետև հողի և այլ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների հաստատմանը, փոխանցմանը, սահմանափակմանը կամ դադարեցմանն առընչվող բոլոր գործարքները պետք է գրանցվեն Պետական Ռեգիստրում: Անշարժ գույքի նկատմամբ իրականացվող գործարքները կարող են արձանագրվել Պետական Ռեգիստրում, եթե միայն դրանք ներկայացված են գրավոր տեսքով և ստացել են նոտարական վավերացում: Հանրային ռեգիստրի դռները բաց են հանրության առջև և դրանից կարող են օգտվել երրորդ կողմերը: Քաղաքացիական օրենսգրքի 312 հոդվածի համաձայն, գրանցման մուտքագրումներն ամբողջական և ճշգրիտ են համարվում, եթե միայն ապացուցվում է դրանց իսկությունը: Հնարավոր է ստուգել մուտքագրման վավերությունը ուղղակիորեն պետական ռեգիստրում վարչա կան դիմում լրացնելու կամ պետական ռեգիստրի նկատմամբ դատական գործ հարուցելու միջոցով:

*Անշարժ գույքին առընչվող մասնագիտություն:* Վրաստանի անշարժ գույքի ասոցիացիան հիմնվել է Թբիլիսիում 1999 թվականին: Ավելի քան 100 անդամներ ունեցող այդ ասոցիացիան դասընթացներ է կազմակերպում և արտոնագրման գործառույթներ իրականացնում անշարժ գույքի գնահատողների և գործակալների համար:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների վրացական համակարգի զարգացումն ընթացքի մեջ է: Ինչևիցե, վերջինիս տրամաբանությունը և հարաբերական պարզությունը ծանրակշիռ հիմքեր են հանդիսանում հողի գործուն շուկաների զարգացման համար:

**ՆԵՐԴԻՐ 5.1**

### Առևտրային և արդյունաբերական օգտագործման համար հողի սակավության հաղթահարում

Արևելյան Եվրոպայի և կենտրոնական Ասիայի շատ երկրներ ունեն են այնպիսի օրենքներ և կանոնակարգեր, որոնք դժվարեցնում են առևտրային և արդյունաբերական նպատակներով հողի ձեռք բերման գործընթացը: Այն ընկերություններն, որոնք ունեն երկարաժամկետ պարտավորություններ և միլիոնավոր եվրոներ են ծախսում հողօգտագործման, շինությունների կառուցման, աշխատողների վարձման և հարկերի մուծման համար ակնկալում են շահել հողի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերումից: Ընկերություններին հնարոճ մեթոդներ պարտադրելը ներդրողներին ներգրավելու կամ ձեռնարկությունները մրցակցային դարձնելու բոլորովին արդյունավետ միջոց չէ: Շատ ընկերություններ ունեն հողի նկատմամբ սեփականության «բիզնես մոդել» և չեն քննարկի այնպիսի տարածքներ, որտեղ նրանք չեն կարող հողի սեփականատեր հանդիսանալ: Օտարերկրյա ներդրողները վախենում են, որ նրանք անկարող կլինեն արդար արդյունքի հասնել տեղացի հողատիրոջ հետ վեճի ծագման դեպքում:

Չնայած ԵԱՀԿ երկրների մեծամասնությունը թույլ է տալիս օտարերկրացիներին ստեղծել տեղական ընկերություններ, որոնք կարող են գնել կամ երկարաժամկետ վարձակալության վերցնել հողը, կան նաև որոշ երկրներ, որտեղ օտարերկրացիներին ուղղակիորեն արգելվում է հողի սեփականատեր դառնալ: Խնդիրն առաջացել է, համարյա թե ամբողջ կամ մեծամասնությամբ, կանաչ հողերի որպես գյուղատնտեսական հող դասակարգվելու արդյունքում: Գյուղատնտեսական հողի վերածումը առևտրային կամ արդյունա-

բերական նպատակներին ծառայող հողի հաճախ երկար ժամանակ պահանջող գործընթաց է, երբ պարտադիր են հարկային մուծումները, երբեմն էլ նաև պահանջվում է պառլամենտի որոշում: Եթե տնտեսությունները նպատակադրված են օտարերկրյա ներդրումներ ներգրավել և խթանել ՓՄՁ-ների զարգացումը, նրանք պետք է հողը հասանելի դարձնեն բիզնեսների համար և դրա համար սահմանեն տրամաբանական գներ:

Ավանդաբար, բնակարանաշինության համար պիտանի հողը ամենաթանկն է համարվում, որին հաջորդում է առևտրայինը, այնուհետև արդյունաբերականն ու հետո գյուղատնտեսականը: Արևելյան Եվրոպայի երկրներում իրավիճակը կարող է քիչ այլ լինել: Առևտրային կամ արդյունաբերական նպատակներով օգտագործման համար դասակարգված հողի պակասի հետևանքով արդյունաբերական հողի քառակուսի մետրի գինը հավասար է բնակարանային հողի քառակուսի մետրի դիմաց վճարվող գնին: Ուկրաինայի կառուցապատողները նշել են, որ արդյունաբերական նշանակության հողը կարող է երեք անգամ ավելի թանկ լինել հարևան Հունգարիայի և Լեհաստանի համեմատ, քանի որ դժվարություններ կան հողի հասանելիության հարցում:

Ստորև բերված են բիզնեսի նպատակով հասանելի հողերի պակաս ունեցող տնտեսությունների համար ուսանելի լավագույն փորձերը.

- Որպես նվազագույն միջոց, օտարերկրյա ներդրողներին իրավասություն է տրվում երկարաժամկետ կտրվածքով հող վարձակալել, և օպտիմալ կերպով, գնել կամ սեփականացնել այն:
- Պետական հողերի սեփականաշնորհում իրականացնող կառավարությունը կառուցապատողներին հող է վաճառում մրցույթների, աճուրդի, կնքված հայտի, կամ առևտրային միջնորդի միջոցով:
- Հողային կադաստրի մասին Ժամանակակից օրենքի մշակում; ԱՄՆՄԶԳ-ն և Համաշխարհային բանկը տրամադրել են համապատասխան տեխնիկական աջակցություն ստեղծելով իրավական դաշտ հողի նկատմամբ իրավունքների գրանցման, կանոնակարգման և մոնիտորինգի և հողի զարգացման համար:
- Իր թվով միակ, հողի էլեկտրոնային ռեգիստրի ստեղծում, որտեղ հաշվառված են հողի նկատմամբ բոլոր իրավունքները:
- Բացառությամբ ազգային անվտանգության, շրջակա միջավայրի պաշտպանության, պատմական վայրերի պահպանման կամ այլ նման հանգամանքների, տեղական իշխանություններին բնակարանային, առևտրային, արդյունաբերական կամ գյուղատնտեսական նպատակներով հողի ձեռք բերման իրավունքի տրամադրման ժամանակ գյուղատնտեսական հողն արդյունաբերական հողի վերածելու գործընթացի համար հարկերից ազատում:
- Կառավարությունները խրախուսում են համայնքապետարաններին ստեղծել հողօգտագործման պլաններ և պոտենցիալ ծրագրերի ակնկալիքով հողեր հատկացնել արդյունաբերական օգտագործման նպատակով, այդպիսով ազատելով ներդրողներին հողն արդյունաբերական նպատակին ծառայելու վերածման աշխատանքներից:

Արդյունաբերական նպատակներով հողային բարեփոխումների լավագույն փորձերի և կոնկրետ օրինակների մասին առավել մանրամասն տեղեկատվություն կարելի է ձեռք բերել *Հողային բարեփոխումներն արևելյան Եվրոպայի, ԱՊՀ արևմտյան մասի, անդրկովկասյան, բալկանյան և ԵՄ անդամակցած երկրներում* վերնագրով Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության www.fao.org հասցեով ինտերնետային կայքից:

## *Պայմանագրային իրավունքներ և ազատություններ*

Սույն Ուղեցույցում պարբերաբար կրկնվում է տնտեսական զարգացման և օտարերկրյա ներդրումների խթանման նպատակով տնտեսական փոխհարաբերություններում պահանջվող ազատության ու կայունության անհրաժեշտության մասին: Դրանց անհրաժեշտությունը հատկապես կարևոր է պայմանագրային հարաբերությունների ժամանակ: Ներդրողներն ու գործարարներն ընդհանրապես ցանկանում են ազատություն ունենալ գործարքը բանակցելու և դրա վերաբերյալ պայմանագիր կնքելու համար պետության կողմից անցանկալի պայմաններով պարտադրվելու փոխարեն: Նրանք նաև ցանկանում են հավաստիանալ, որ պայմանագիրը կնքելուն պես այն ուժի մեջ կդրվի իր գրավոր տեսքով, անվավեր համարվելու կամ վեճի ծագման դեպքում դատարանի կողմից վավերացման կամ վերաշարադրման ռիսկի առկայության փոխարեն:

«Պայմանագրի ազատություն» հասկացությունը - երբ պայմանագրի կողմերը կարող են «հեշտորեն համաձայնվել իրավական հնարավորությունների այն սահմանափակումներին, առանց որոնց նրանք կարող էին ունենալ այդ իրավական հնարավորությունները համագործակցությունից և փոխանակումից օգուտ քաղելու նպատակով»[11] - կարևորագույն նշանակություն ունի տնտեսական զարգացման համար[12]: Իհարկե, բոլոր երկրներն էլ պարտադրում են որոշակի սահմանափակումներ պայմանագրի ազատության վրա[13]: Պետություններն օրենքի սահմաններում շահագրգռված են արգելելու այն պայմանագրերը, որոնցով խախտվում են կարևորություն ներկայացնող պետական քաղաքականությունները: Իրապես, որոշ օրենքներ, որոնք կոնկրետ միջոցներով սահմանափակում են պայմանագրի ազատությունն, օրինակ, գործատու և աշխատող փոխհարաբերություններում առավելագույն աշխատաժամերի և խտրականության բացառման պահանջների պարտադրումը, սպառողական գործարքներում կեղծիքի ու խաբեբայության անօրինականության մասին հայտարարումը, կամ էլ մրցակիցների միջև գների որոշման արգելումը՝ համահունչ են տնտեսական նպատակաուղղված զարգացմանն ու կարող են նույնիսկ նպաստել դրա բարելավմանը: Ինչիցե, որոշ քաղաքականություններ կարող են վնասակար լինել տնտեսական զարգացման համար. օրինակ, որոնք պարտադրում են օտարերկրյա ներդրողներին համագործակցել տեղական ընկերությունների հետ, կամ մյուսները, որոնք թույլ են տալիս պետություններին ուղղակիորեն կամ անուղղակի ձևով հսկել գները, որոնց հիման վրա ընկերությունները կարող է մասնավոր պայմանագրեր կնքեն: Իսկ որոշ սահմանափակումներ կարող են վնասել պատշաճ տնտեսական զարգացման ամենախոր հիմքերը. օրինակ, մի քանիսը, որոնք ավելորդորեն սահմանափակում են մասնավոր կողմերի ընտրությունը, կամ փորձում են պաշտպանել տեղական ընկերությունների շահերն ի վնաս դրսից եկած գործարարների, կամ որոնք թույլ են տալիս դատարաններին արմատապես փոխել կողմերի առևտրային համաձայնությունը հիմնվելով արդարության և հավասարության անհստակ հասկացությունների վրա: Ստորև բերված են պայմանագրի ազատության սահմանափակումների օրինակներ.

- *Պայմանագրերի որոշ տեսակների համար ներկայացված պարտադիր ձևի պահանջները:* Որոշ երկրների օրենքներով պահանջվում են հստակ սահմանված առևտրային գործարքներ, երբ պետք է հետևել հստակ ձևին և սահմանել փոփոխման ոչ ենթակա կողմերի իրավունքներն ու պարտավորությունները: Չնայած կարող են լինել դեպքեր, երբ դա կարող է տեղին լինել, բայց կառավարությունը պետք է զգույշ լինի թույլ չտալու մասնավոր փոխհարաբերությունների վրա պարտադրվող պայմանների սահմանումը: Ընդհանրապես, առևտրային ընկերությունները ցանկանում են ազատություն ունենալ որոշելու այն ռիսկերը, որոնք նրանք պատրաստ են վերցնել իրենց վրա: Առևտրային գործարքների պայմանները սահմանելով կառավարությունները սանձահարում են գործարքների նկատմամբ ստեղծագործ մոտեցումը և կարող են ապախրախուսել շատ բիզնեսների:

- *Առևտրային գործարքների վրա սահմանված սահմանափակումները*[14] ՎԶԵԲ-ի բնութագրած «զգալի չափով սահմանափակելով իրավաբանական մարմինների և անհատ ձեռներեցների թույլատրելի գործարքների շրջանակները» քայլով արևելյան Եվրոպայի մի երկիր վերջերս հայտարարեց, որ առևտրի

մեջ ընդգրկված ընկերություններն ու անհատները չեն կարողանում (որոշակի բացառություններով) կնքել փոխանակման պայմանագրեր և պայմանագրի դադարեցման նպատակով ազատվել փոխադարձ պարտավորություններից պարտքի փոխանցման կամ փոխհատուցման միջոցով, բայց կարողանում են անել դա միայն գումար վճարելով[15]:

- *Վեճերի միջնորդական դատարանով լուծման նպատակով պայմանագրերի վրա դրված սահմանափակումներ:* Ինչպես նշվում է սույն գլխում հաջորդիվ, միջնորդ դատարանի միջոցով առևտրային վեճերի լուծման ընկերությունների ունակությունը առևտրային իրավական ժամանակակից համակարգերի կարևոր բաղադրիչ է հանդիսանումԱյնուամենայնիվ, շատ երկրների օրենքներով կողմերին թույլ չի տրվում անպայմանորեն պարտավորվել լուծել իրենց վեճերը միջնորդական դատարանի միջոցով: Այս երկրներում կողմերն ազատ են նախընտրել միջնորդ դատարանը, գործը դատարան փոխանցելու փոխարեն, նույնիսկ եթե այդ կողմը միանշանակորեն համաձայնվել է անցնել դատական համակարգի հնարավորությունների սպառումի դիմել միջնորդ դատարան: Նման օրենքները «լայնորեն քննադատվում են պայմանագրի շրջանակներում կողմերի ազատության սահմանափակման առումով, քանզի կողմերը ձախողում են որևէ օգտակար գործողություն իրականացնել»[16]:

## *Ձեռնարկատիրական գործունեության իրականացման ձևերը*

Նախարդյունաբերական շրջանում ձեռնարկատիրական գործունեությունը սովորաբար իրականացվում էր անհատների կողմից, որոնք գործում էին առանձին կամ համատեղ գործունեության շրջանակներում: Ժամանակակից առևտրում դեռևս մեծապես կարևորվում են նման տեսակի համագործակցությունները: Ինչևիցե, անհատի կամ համագործակիցների բիզնեսի վարումն իր հետ բերում է առնվազն մեկ բավականին մեծ խնդիր, երբ անհատը կամ համագործակիցների խումբը ենթակա են սահմանափակում չունեցող պարտավորության, որը հետևյալն է. եթե բիզնեսը հաջողություն չի արձանագրում, ապա բիզնեսի սեփականատերը պետք է պատասխանատու լինի բոլոր ծագած պարտքերի համար, նույնիսկ նրանց, որոնց գումարը գերազանցում է բիզնեսի մեջ իր ներդրած գումարներին: Առավել մեծ ներդրումների և ռիսկային գործողություններ ձեռնարկելու խրախուսման նպատակով կառավարությունները շատ վաղուց ներմուծել են կորպորացիան. (որը հայտնի է նաև որպես *socintn anonyme* or *Aktiengesellschaft*), այն իրավաբանական մարմին է, որը նախատեսված է օրենքով, և որն առանձին է իր սեփականատերերից: Արտառոց հանգամանքների բացակայության դեպքում, կորպորացիայի մեջ ներդրում կատարածների մեծամասնությունն, ամենաշատը, որ կարող է կորցնել բաժնետոմսերի դիմաց վճարված գումարն է:

Սահմանափակ պատասխանատվություն ունենալու պատճառով կորպորացիաներն եղել և մնում են բիզնեսի վարման ամենահայտնի ձևը: Ինչևիցե, ժամանակակից ձեռնարկատիրության բարդությունը պահանջում է, որ ժամանակակից ներդրողները բիզնեսի վարման ձևի ընտրման համար մեծաքանակ այլընտրանքներ ունենան: Արդյունքում, շատ երկրներ բիզնես վարելու նպատակով կազմակերպությունների նոր տեսակներ են ներմուծել միավորելով կորպորացիաների և համատեղ ընկերությունների բազմազան բնութագրիչներ: Դրանցից են ֆրանսիական “socintn Ո responsabilitn limitne” (SARL), գերմանական “Gesellschaft mit beschrՊnkter Haftung” (GmbH) և ամերիկյան “limited liability company” (LLC) – Սահմանափակ պատասխանատվության ընկերություն (ՍՊԸ): Այս կազմակերպաիրավական ձևերից մի քանիսը դարձել են միջազգային համատեղ ձեռնարկությունների ամենանախընտրելի ձևերը:

Ընդհանրապես, կառավարությունները պետք է ապահովեն կազմակերպաիրավական ձևերի բազմազանություն, որոնցից ներդրողը կարող է ընտրել իր պայմաններին ամենից շատ համապատասխան մեկը: Ի հավելումն իրավաբանորեն առանձին մարմինների, պետք է ընդգրկել նաև բիզնեսի վարման պայմանագրային ձևերի բազմազանություն, որոնցից մեկը ֆրենչայզինգն է - պայմանագրային հիմքի վրա դրված հարաբերություններ (սովորաբար հարմար է փոքր բիզնեսի համար), որում նախորդները համաձայնվում են արտադրել կամ բաժանել ապրանքներ և ծա-

ռայություններ ֆրենչայզապուի սահմանած «բիզնես համակարգի» համաձայն: Ֆրենչայզապուն ֆրենչայզառուին է տրամադրում շարունակական օժանդակություն և խորհրդատվություն, ապահովում է արտոնագրեր առևտրային ապրանքանիշների համար, իրականացնում է հետազոտություններ և նախագծումներ, աջակցում շուկայավարման և գովազդային աշխատանքներում: Սովորաբար ֆրենչայզառուն փռանչայզապուին գումար է վճարում վերը նշված ծառայությունների համար և կարող է փռանչայզապուից գնել ձեռք բերված ապրանքները: Ընդունելով ժամանակակից բիզնեսի ֆրենչայզային օրենսդրությունը, ԵԱՀԿ երկրները կարող են մեծապես խթանել ներդրումներին, տեխնոլոգիաների փոխանցմանը, որակի հսկման սեփական չափանիշների մշակմանն ու այլ գործոններին, որոնք կարող են արդյունավետ ազդեցություն ունենալ առողջ գործարար միջավայրի համար:

## *Կորպորատիվ կառավարում*

Արդյունավետ կորպորատիվ կառավարման համակարգը, որը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տնտեսական մարմինների որևէ ուղղության վրա դրման, կառավարման և վերահսկման եղանակների վրա ազդեցություն ներգործող գործընթացների, սովորույթների, քաղաքականությունների, օրենքների և ինստիտուտների միացություն է, կարևոր դեր է խաղում խրախուսելու ներդրողներին ընկերությունների մեջ կապիտալ ներդրումներ կատարել: Համապատասխան իրավաբանական պաշտպանության պակասը նշանակում է, որ ընկերության մեջ բաժնետերերի շահերը խոցելի են ընկերության ղեկավարների, կամ այլ բաժնետերերի կողմից անօրինական տնօրինման կամ յուրացման դեպքերում: Ակտիվները կարող են ուժով վերցվել ընկերությունից ի վնաս և բաժնետերերի և վարկատուների: Ընկերության մասնակիցները կարող են նույնիսկ *անկախ - մասնակիցների - միջև առևտրային գործարքի* մեջ մտնել ընկերության հետ կամ վաճառել բաժնետոմսերը առանց հանրությանը տեղեկացնելու: Ոչ ճշգրիտ կամ ոչ ամբողջական ֆինանսական տեղեկատվությունը կարող է վարկատուներին ետ պահել ընկերություններին վարկերի տրամադրումից:

Միայն բաժնետերերն ու վարկատուները չէ, որ կրում են վերը նշված երևույթների բացասական ազդեցությունները: Հակառակը, դրանք խաթարում են կորպորատիվ կառավարման համակարգի նկատմամբ վստահությանը, և, որպես արդյունք, նվազեցնում են բիզնեսների կապիտալ ձեռք բերելու և ներդրումների գրավելու հնարավորությունները: Բացի այդ, պատշաճ կորպորատիվ կառավարման պակասն արգելակում է արժեթղթերի երկրորդական վաճառքը, որի դեպքում արդեն թողարկված բաժնետոմսերը կարող են վերավաճառվել, գնվել և վերավաճառվել կրկին: Սա կարող է անհամեմատ բացասական ազդեցություն ունենալ անցումային երկրների վրա, որոնք սեփականաշնորհել են պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունները մասսայական սեփականաշնորհման ժամանակ և հանձնել բաժնետոմսերը միլիոնավոր քաղաքացիների ձեռքը: Առանց ակտիվ երկրորդային շուկաների «շատ դժվար է սեփականության իրավունքների առևտրման միջոցով վերացնել այն վնասը, որն առաջ է եկել նախկինում արդյունավետություն չխոստացող սեփականատերերին սեփականաշնորհման իրավունքներ տրամադրելու արդյունքում»[17]:

Մյուս կողմից, կառավարման ընթացակարգերն ու աշխատանքները, որոնք խթանում են անհրաժեշտ հրապարակայնությանն ու թափանցելիությանը, բաժնետերերի և վարկատուների իրավունքների արդյունավետ պաշտպանությանը, տարբեր գերատեսչությունների միջև պատասխանատվությունների հստակ տարանջատմանը, կարող են նպաստել արդյունավետ, ակտիվ շուկաների ստեղծմանն ու տարածմանը:

Այս խնդիրներին լուծում տալու նպատակով ՏՀԶԿ-ն մշակել է լայն տարածում ստացած սկզբունքների մի ամբողջություն *Կորպորատիվ կառավարման սկզբունքներ* անվամբ, որը հայտնի է նաև որպես ՏՀԶԿ Սկզբունքներ[18]: ՏՀԶԿ Սկզբունքները հիմք են ծառայում իրավական, ինստիտուցիոնալ և կանոնակարգիչ դաշտերի համար, որոնք առավելագույնի են հասցնում ներդրողի վստահությունն ու տնտեսական զարգացման ներուժը: ՏՀԶԿ Սկզբունքները վեցն են և նրանցից յուրաքանչյուրը մշակված է մանրամասն առաջարկներով: ՏՀԶԿ 6 սկզբունքների թեմաներն են՝

- Արդար վերաբերմունք բոլոր բաժնետերերի նկատմամբ (ներառյալ օտարերկրացի և փոքրամասնություն կազմող բաժնետերերը);

- Իրավասությունների հստակ բաժանում վերահսկող և կարգավորող գերատեսչությունների միջև;

- Համագործակցության հաստատում ընկերության և դրա բոլոր շահագրգիռ կողմերի միջև ի շահ ընդհանուր բարօրության;

- Ընկերության ֆինանսական միջոցների և գործառնությունների թափանցելիության և հրապարակայնության երաշխավորում հետաքրքրվող անձանց համար;

- Ընկերության ներսում գործարքների կապարման կանխում; և

- Ընկերության ղեկավարների և տնօրենների խորհուրդների կառավարման և վերահսկիչ աշխատանքների արդյունավետ կատարում, ներառյալ բաժնետերերին հաշվետվելիության ապահովումը:

ԵԱՀԿ տարածաշրջանում պատշաճ կառավարման հաստատմանը խթանող իր աշխատանքներում ԵԱՀԿ-ն օժանդակում է ՏՀԶԿ Սկզբունքներին: Միջազգային կազմակերպությունների, ներառյալ ԵԱՀԿ-ի, աջակցությամբ մի շարք ԵԱՀԿ մասնակից երկրներ կորպորատիվ կառավարման նպատակով իրենց իրավական դաշտերի հզորացման ուղղությամբ զգալի առաջընթաց են արձանագրել:

*Բաժնետերերի իրավունքների պաշտպանություն:* Ներկա բաժնետերերին ընկերության մեջ իրենց շահերի թուլացումից պաշտպանելու համար, Մոլդովայի Բաժնետիրական ընկերության մասին օրենքով [19] պահանջվում է, որ բոլոր բաժնետոմսերի դիմաց ամբողջական մուծում կատարվի մինչև նրանց փոխանցումը: Բաժնետիրական ընկերության Մոլդովայի օրենքի համաձայն բաժնետերերին պաշտպանելու համար սահմանված մյուս պահանջները հետևյալն են.

- Անկախ կազմակերպության կողմից բաժնետոմսերի գրանցում և այնպիսի գրանցամատյանի ընտրություն, որով ցույց է տրվում սեփականության բաժնեմասի ապացույցը;

- Բաժնետերերի ժողովի ժամանակ դիվիդենդների հաստատում;

- Բաժնետերերի ժողովի ժամանակ ընկերության աուդիտորական տարեկան հաշվետվության հաստատման ապահովում;

- Բաժնետերերի միջև դիվիդենդների բաշխում ընկերության մեջ իրենց տնօրինած մասնաբաժնի չափով;

- Ներկա բաժնետերերին վաճառքի նկատմամբ առաջնային իրավունքի տրամադրում իրենց բաժնետիրությանը համաչափորեն նոր թողարկված բաժնետոմսերին բաժանորդագրվելու համար; և

- Թույլ տալ ստորև նշված կետերից որևէ մեկի դեմ քվեարկող բաժնետերերին վաճառել իր բաժնետոմսերն ընկերությանն այն գնով, որը կսահմանվի անկախ գնահատման արդյունքում:
  - Ընկերության կանոնադրության մեջ փոփոխության կատարում;
  - Հավելյալ բաժնետոմսերի թողարկում;
  - Միացում կամ վերակազմակերպում;
  - Պարտադրված կամ կամավոր լուծարում, և/կամ;
  - Բաժնետերերի դասին կցված կոնկրետ իրավունքների փոփոխում:

2005 թվականին Ադրբեջանն ուղղում մտցրեց բաժնետիրական ընկերությունների մասին իր օրենքում, համաձայն որի, ընկերության մաքուր ակտիվների արժեքը 25 տոկոսով գերազանցող գործարքներն հավանության պետք է արժանանան բաժնետերերի ընդհանուր ժողովում:[20]

2003 թվականի ապրիլին Ղրղզստանի հանրապետությունում ուժի մեջ դրվեց բաժնետիրական ընկերության մասին նոր օրենքը, որով էական բարեփոխումներ կատարվեցին ընկերության կորպորատիվ կառավարման իրավական դաշտում: Այլ դրական կողմերի հետ միասին, նոր օրենքն ուժեղացրեց նաև բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունները, մեծացրեց փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների շրջանակը, հստակեցրեց տնօրենների խորհրդի գործառույթներն ու իրավասությունները և ներմուծեց հետգնման պարտադիր պահանջները:

*Հավասար վերաբերմունք բաժնետերերի նկատմամբ:* ԵԱՀԿ երկրներում ընկերությունների մասին օրենքների մեծամասնությամբ պահանջվում է, որ բաժնետոմսերի միևնույն դասին պնօրինող բոլոր բաժնետերերն ունենան քվերակման նույն իրավունքները: Ընդհանրապես, այս օրենքներով նաև պահանջվում է, որպեսզի բաժնետոմսերի բոլոր հեռանկարային գնորդներին մինչև գնում կատարելը հասանելի լինի բաժնետոմսերի բոլոր դասերին կցված տեղեկատվությունը քվեարկության իրավունքների մասին:

*Ընկերության և շահագրգիռ կողմերի միջև համագործակցության խրախուսում:* ԵԱՀԿ երկրների մեծամասնությունում անվճարունակության մասին օրենքներով վարկատուներին թույլ է տրվում մասնակցել անվճարունակության ընթացակարգերում որոշումների կայացման գործընթացին: Բացի այդ, մի շարք երկրներ խրախուսում են ընկերության ղեկավարության և աշխատողների ներկայացուցիչների միջև խորհրդատվության իրականացումը:

*Թափանցելիություն և հրապարակայնություն:* Համաձայն Բաժնետիրական ընկերության մասին Հայաստանի օրենքի, ընկերությունները պետք է տարեկան առուղիղ անցնեն և պահպանեն ու բաժնետերերին հասանելի դարձնեն հետևյալ փաստաթղթերը.

- Ընկերության պետական գրանցման վկայական, ընկերության կանոնադրությունն ու դրադրանում կատարված փոփոխությունները, հիմնադրման մասին որոշումն ու հիմնադրման վերաբերյալ պայմանագիրը;
- Ընկերության հաշվապահական հաշվեկշռում գույքի նկատմամբ գույքային իրավունքները հավաստող փաստաթղթեր;
- Ժողովի և ղեկավարող այլ մարմինների կողմից ընդունված ընկերության ներքին փաստաթղթեր;
- Ընկերության առանձին ենթաբաժինների և մարմինների կանոնադրական նորմեր;
- Ընկերության տարեկան հաշվետվություններ;
- Ընկերության բաժնետոմսերի թողարկման հեռանկարները;
- Հաշվապահական փաստաթղթեր (հաշվեկշիռ, շահույթի և վնասի մասին հաշվետվություն, առուղիղ իրականացնողի զեկույց, և այլն);
- Պետական կառավարման մարմիններին ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունների տրամադրում;
- Ժողովների նսփաշրջանների, Տնօրենների խորհրդի, Վերահսկիչ հանձնաժողովի և ղեկավար մարմնի կոլեգիումի արձանագրությունները;
- Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները ու քվեարկման արդյունքների հրապարակումը;
- Ընկերության վերահսկիչ հանձնաժողովի (Վերահսկող), առուղիղ իրականացնող մարմնի, ֆինանսական հսկումն իրականացնող կենտրոնական և տեղական կառավարման մարմինների հաշվետվությունները;
- Ընկերության հետ փախկապակցված անձանց (նրանց կողմից պնօրինվող բաժնետոմսերի կոնկրետ քանակի նշմամբ) և ազդեցիկ ու խոշոր բաժնետերերի ցուցակը; և
- Ընկերության կնքած պայմանագրերը:

Բաժնետիրական ընկերության մասին հայաստանյան օրենքով նաև պահանջվում են «բաց ընկերություններ», դա այն ընկերություններն են, որոնց բաժնետոմսերը կարող են փոխանցվել առանց սահմանափակման, հրապարակայնորեն ներկայացնելու տրոև բերվածը.

- Ընկերության տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը ու շահույթի և վնասի մասին հաշվետվությունը;
- Բաժնետոմսերի բաց բաժանորդագրման դեպքում հայտարարագիրը;
- Տարեկան ժողովի անցկացման մասին հայտարարությունը:

*Ընկերության մասնակիցների միջև առևտրման և ինքնագլուխ գործունեության չարաշահման արգելում:* Բաժնետոմսերի ներքին առուծախը կանխելու համար, Արժեթղթերի շուկայի և այլ ֆինանսական մեխանիզմների մասին Սերբիայի հանրապետության օրենքի[21] 55-րդ հոդվածով փակ ընկերություններից պահանջվում է հրապարակային դարձնել ընկերության այն տեղեկատ-

վությունը, որը կարող է բացասաբար ազդել ֆոնդային բորսայի գների վրա: Բացի այդ, նույն օրենքի 62-65 հոդվածներն արգելում են արժեթղթերի անօրինական հրապարակումը կամ առուծախը, եթե դրանք «գաղտնի տեղեկատվության» արդյունք են: Այս արգելքները կիրառվում են աշխատողների, պաշտոնյաների, տնօրենների, իրավախորհրդատուների, հաշվապահների և շատ այլ մարդկանց նկատմամբ, ինչպես նաև ընկերության ավելի քան տաս տոկոս քվեարկող բաժնետոմսեր տնօրինողների, ենթակա ընկերությունների, ինչպես նաև «գաղտնի տեղեկատվության մասին իմացող բոլոր անձանց նկատմամբ, որոնք տեղյակ, կամ կարող է տեղյակ լինեն այն մասին, որ նրանք այդ տեղեկատվությունը ձեռք են բերել այն անձանցից», որոնք ենթակա են օրենքի սահմանափակումներին:

*Պաշտոնյաների և տնօրենների հաշվետվողականություն:* Հայաստանի Բաժնետիրական ընկերության մասին օրենքի 9-րդ գլխով նախատեսվում է, որ տնօրենների խորհրդում վերադաս անդամների գերիշխանությունը կանխելու նպատակով ընկերության ղեկավարները ընկերության տնօրենների խորհրդում պետք է ունենան տեղերի կեսից պակասը:[22] Նույն օրենքի 90(5) հոդվածով թույլ է տրվում, որ ընկերության չվճարված սովորական բաժնետոմսերի 1 կամ ավել տոկոս ունեցող բաժնետերերի ցանկացած խումբ կարող է դատական գործ հարուցել ընդդեմ պաշտոնյաների, տնօրենների, և/կամ ընկերության ղեկավարների իրենց հանդեպ սխալ արարքի կամ անտեսման արդյունքում պատճառած վնասի համար:

## Անձնական գույք և պաշտպանված գործարքներ

Ինչպես որ տնտեսական զարգացման համար կարևորվում է բաժնետոմսերի թողարկման միջոցով ծրագրերի ֆինանսավորումը, այնպես էլ շուկայական տնտեսությունների մեջ կարևորվում է վարկերի նկատմամբ հասանելիության ապահովումըԻնչևիցե, շատ տնտեսություններ տուժում են վարկերի մշտական պակասից: Սա հիմնականում պայմանավորված է վարկառուների եփ չվճարման նկատմամբ օրենքի սահմաններում տրամաբանական վախի առկայությամբ: Նման վախը կարելի կլինի նվազագույնի հասցնել հարկադիր կատարման և արդյունավետ գործող երաշխավորված գործարքների հասպատման միջոցով:

Երաշխավորված պարտքի գործարքում պարտապանը իր պարտատիրոջն է փոխանցում իր գույքային իրավունքները, որոնք պարտատերը կարող է օգտագործել պարտապանի պարտքի դիմաց: Անշարժ գույքի տեսքով հիփոթեքային պարտքը երաշխիքի ընդունված տարբերակ Ինչևիցե, անձնական գույքը նույնպես արժեք ունի և հնարավորություն է ընձեռում պարտատերերին օգտագործել անձնական գույքը, այսինքն շարժական իրերն ու դրանց նկատմամբ իրավունքները, երաշխավորելու իրենց պարտքերը, և այդպիսով նոր ճանապարհներ հարթելու դեպի վարկավորման շուկաներն ու լիարժեք օգտագործելու գույքն իրենց տնտեսական նպատակների համար: Որպես գրավ անձնական գույքի օգտագործումը կարող է առավել ցածր գնով առավել շատ վարկերի ստացման հնարավորություն ընձեռել նվազեցնելով եփ չվճարման վարկատուի ռիսկը: Ինչևիցե, քանզի անձնական գույքի շարժական բնութագրիչներն իրենց մեջ ներառում են անշարժ գույքի հետ կապված տարբեր նկատառումներ, սովորաբար անձնական գույքի մեջ գրավադրման իրավունքի համար պահանջվում է առանձին համակարգ:

ՎՁԵԲ-ը մեծ ներդրումներ է իրականացրել օգնելու անցումային երկրներին ուժի մեջ դնել ժամանակակից գործարքների երաշխավորման օրենքներ: Երաշխավորված գործարքային օրենքի[23] տաս Հիմնական Սկզբունքները տեսական հիմնավորում են ապահովում, իսկ դրա Երաշխավորված գործարքների 1994 թվականին հրապարակած մոդելային օրենքը դաշտ է ստեղծում այդ սկզբունքների իրականացման համար: Երաշխավորված գործարքների մոդելային օրենքն իր մեջ ներառում է մի շարք ուշագրավ առանձնահատկություններ, որոնցից են.

- Մեկ երաշխիքային իրավունքը կարող է կիրառվել որպես գրավ օգտագործվող անձնական և շարժական գույքի տարբեր տեսակների համար
- Պաշտպանությունն ավելին է քան միայն պայմանագրային իրավունք լինելը, այն գրավադրված գույքի իրավունքն է, որն իր սեփականատիրոջը անվճարունակության ընթացակարգերում առավելություն է տա-

լիս չերաշխավորված վարկապուների նկատմամբ:

- Մոդելային օրենքը կիրառվում է միայն անվճարունակության ժամանակ:
- Մոդելային օրենքով փորձ է արվում առավելագույն ճկունություն ապահովել կողմերի համար պաշտպանության նկատմամբ, պահելով սահմանափակումներ, որոնց այդ կողմերը կարող են նվազագույն չափով համաձայնվել:
- Կողմերն ազատ են որոշելու, թե ինչպես սահմանել վարկի երաշխավորված և գույքի պաշտպանված լինելը: Թե ներկա, թե ապագա գույքը կարող է օգտագործվել որպես գրավադրման իրավունք:
- Գրավները արձանագրվում են պետական ռեգիստրում, որով և հրապարակային է դառնում վարկապուի գրավադրման իրավունքը:
- Պատասխանատվությունները կարող են ուժի մեջ դրվել առանց դատական մարմինների դիմե, այսինքն երաշխավորված վարկապուն պարտավորությունների չկատարման դեպքում իրավունք ունի վաճառել գրավը և պահել ստացված գումարը պարտքի վճարման համար: Ինչևիցե, ցանկացած շահագրգիռ կողմ կարող է դիմել դատարան պաշտպանության համար և պահանջել վնասների փոխհատուցում վարկապուից սխալ կամ հարկադիր կատարման արդյունքում հասցրած վնասի դիմաց:
- Երբ գրավը գերազանցում է բիզնեսի բոլոր ակտիվները, վարկապուի համար այլընտրանքային միջոց է ամբողջ բիզնեսի վաճառումն որպես գործող ձեռնարկություն:

## *Սնանկության մասին օրենսդրություն*

Տնտեսական զարգացման համար վարկերի հասանելիությունն ապահովելու նպատակով իրավական համակարգը պետք է խելամտորեն ձևավորել այնպես, որ համապատասխանի մի իրավիճակի, երբ պարտապանը ոչ միայն ձախողում է վճարել մեկ պարտքը, այլ ընդհանրապես անընդունակ է լինում վճարել իր վարկապուներին ակտիվների նկատմամբ պարտքերի գերազանցման, և/կամ կանխիկ դրամի հոսքի և լիկվիդայնության հետ կապված խնդիրների պատճառներով: Սա սնանկության օրենքների գործառույթն է, որը ստեղծում է ընթացակարգեր, որոնց միջոցով պարտապաններին վճարումը կատարվում է սահմանված կարգով՝ վճարման համար սնանկացած անձի կամ փնտեսական մարմնի փնօրինվող միջոցների չափով: Սնանկության գործառույթը միավորված պարտապտերին «նոր մեկնարկի» հնարավորություն է փալիս ազատելով պարտապտերին իր ֆինանսական պարտավորությունների մեծամասնությունից: Սնանկության ընթացակարգերը կարող են լինել կամ լիկվիդացման ձևով (հայտնի է նաև որպես «սալղոյի վերացում»), որի դեպքում պարտապանի ակտիվները վաճառվում են և ստացված գումարները բաժանվում են պարտապտերերին, կամ վերակազմակերպման միջոցով, որի դեպքում դատարանը վերահսկում է վտանգի մեջ գնվող անձի կամ փնտեսական օբյեկտի պայմանագրային և պարտքերի «վերակազմակերպումը»: «Վերակազմակերպված» ընկերությունը կարող է շրջանցել սնանկությունն ազատվելով իր նախկին պարտքերի մեծամասնությունից: Այդ գործընթացում վտանգի մեջ գտնվող նախկին սեփականատերերը կարող են կորցնել իրենց ընկերության նկատմամբ վերահսկողությունը, և որոշ դեպքերում դրա սեփականությունը կարող է անցնել պարտապտերերին: Վերակազմակերպման նախընտրության տրամաբանական բացատրությունը կայանում է նրանում, որ որպես գործող ձեռնարկություն բիզնեսի արժեքն ավելի մեծ է, քան դրա ակտիվների լիկվիդացիոն արժեքը, որն և նշանակում է, որ պարտապտերերը կարող են առավել շատ գումար ստանալ վերակազմակերպումից, քան լիկվիդացման ընթացակարգից:

Շուկայական տնտեսության մեջ անխուսափելի են բիզնեսների ձախողումները: Այդ դեպքերում վարկ տրամադրող կողմը իր վարկերի դիմաց չվճարվելու ռիսկի է դիմում և բաժնետերերը կարող են կորցնել այն կապիտալը, որը նրանք ներդրել են ընկերության մեջ: Այս պատճառներից ելնելով, ներդրողները պլանավորում են իրենց ներդրումները ֆինանսական ձախողման հետ կապված ռիսկերի նվազեցման նպատակով: Սնանկության գործուն համակարգերը ներդրողներին այդ ռիսկերի գնահատման միջոցներ են տրամադրում և, հետևաբար, ներդրումների կատարման վերաբերյալ որոշումների ընդունման համար առավել հետևողական և վստահելի հիմք

են նախատեսում: Սա խթանում է բոլոր բիզնեսների նկատմամբ ֆինանսական միջոցների հասանելիությունը, թե վարկի տրամադրման, և թե սեփական կապիտալի ձևով: Բացի այդ, անվճարունակության մասին պատշաճ օրենքները խթանում են «կենսական բիզնեսների վերակազմավորմանը, ձախողված բիզնեսների արդյունավետ փակմանն ու դրանց ակտիվների փոխանցմանն առավել արդյունավետ գործունեություն վարող շուկայի մասնակիցներին»[24]: Անվճարունակության մասին օրենքները նաև փոխադարձ ազդեցության մեջ են գտնվում առևտրային մի շարք օրենքների հետ, ամրապնդում են դրանք, կամ ամրապնդվում նրանց կողմից, և որոնք կորպորատիվ կառավարմանը, արժեթղթերի առուծախին, հարկմանը և բանկային համակարգին վերաբերող օրենքներ են:

ԵԱՀԿ երկրների մեծամասնությունն ընդունել է սնանկության մասին օրենքներ: Ինչևիցե, այս օրենքներից շատերը շատ պարզեցված են և հաշվի չեն առնված առևտրային գործարքների ժամանակակից բարդությունները: Միավորված ազգերի Միջազգային առևտրի օրենքի հանձնաժողովը (ՄԱՄԱՕՀ) զգալի աշխատանք է կատարել անվճարունակության օրենքի բնագավառում: Անվճարունակության մասին օրենքի 2004 թվականին հրապարակված Օրենսդրական Ուղեցույցը անվճարունակության օրենքի համապարփակ ուսումնասիրություն է կատարում և անվճարունակության ազգային համակարգերի համար այնտեղ ներառված են 198 առաջարկություններ: Բացի այդ, 1997 թվականի ՄԱՄԱՕՀ-ի միջսահմանային անվճարունակության մասին մոդելային օրենքով[25] սահմանվում են դժվար դեպքերի համար կիրառելի ընթացակարգերը, որոնց դեպքում անվճարունակ պարտապանը ոչ մեկ պետությունում է, որ ակտիվներ ունի կամ, երբ պարտատերի վարկատուներից մի քանիսն այն պետությունից չեն, որտեղ տեղի է ունենում ավճարունակության ընթացակարգը: Նոր Զելանդիայի կառավարության համար անցկացված ՄԱՄԱՕՀ-ի լայնածավալ ուսումնասիրության արդյունքում առաջարկվեց դրա ընդունումը, գալով այն եզրահանգման, որ «օտարերկրյա ներդրողների նկատմամբ արդար վերաբերմունքը կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ օտարերկրյա ներդրումների վրա»: ԵԱՀԿ տարածաշրջանի երկրներից Լեհաստանը, Ռումինիան և Սերբիայի և Մոնտենեգրոյի նախկին պետությունն ընդունել են ՄԱՄԱՕՀ-ի մոդելային օրենքը:

Չնայած սնանկության օրենսդրության գոյությանը, որոշ երկրներ հազվադեպ, նույնիսկ երբեք չեն իրականացրել կամ կիրառել իրենց սնանկության մասին օրենքներըՏարածաշրջանի երկրներից ստացված զեկույցները վկայակոչում են, որ որոշ երկրներ քաղաքական միջամտություն են կատարել սնանկության գործերի քննությանը, խանգարելով դատարանների կողմից սնանկության անկախ և անկողմնակալ ճանաչմանը: Ինչևիցե, Համաշխարհային բանկի, ՎԶԵԲ-ի, ԱՄՆՄԶԳ-յան և այլ զարգացմանն օժանդակող կազմակերպությունների աջակցմամբ ԵԱՀԿ տարածաշրջանի որոշ երկրներ ձեռնամուխ են եղել սնանկության կարևոր բարեփոխումներին, նպատակ հետապնդելով ոչ միայն ընդունել ժամանակակին համահունչ օրենսդրություն, այլ նաև բարելավել ավճարունակության իրենց համակարգերի փաստացի կատարողականությունը: Ուսանելի է Սերբիայի հանրապետության օրինակը:

2004 թվականի հուլիսին, Սերբիայի պառլամենտն ընդունեց սնանկության մասին նոր օրենք ընդգրկելով ՄԱՄԱՕՀ-ի մոդելային օրենքի մի շարք դրույթներ: Սերբիայի օրենքով սահմանվում են և լիկվիդացման և վերակազմակերպման ընթացակարգերը: Սնանկության օրենքի հոդված 12-ով նախատեսվում են սնանկության մեջ մասնագիտացած հատուկ դատավորներ, որոնք այլ աշխատանքների հետ միասին, հաստատում են սնանկության ընթացակարգերի ծախսերը մինչև դրանց դիմաց վճարումների կատարումը, վերահսկում են սնանկության հարցերով զբաղվող կառավարիչների աշխատանքը և հաստատում սնանկության մատնված պարտատերերի վերակազմակերպման պլանների նախագծերը: Օրենքի մեջ ներառված են նաև հատուկ դրույթներ, որոնք վերաբերում են կառավարիչներին (անգլերեն թարգմանվում է նաև «ստացողներ»), ովքեր սնանկության ընթացակարգերի իրականացման ընթացքում պատասխանատու են պարտատերի ակտիվների պահպանման և կառավարման համար: Այս դրույթները նպատակ են հետապնդում երաշխավորելու մասնագիտական որակի բարձր չափանիշներ, օրինապահություն և հաշվետվելիություն պահանջելով այս կարևոր պաշտոնները զբաղեցնելու հավակնորդներից համալսարանական կրթություն, գրավոր քննություն հանձնում և Սնանկության կառավարիչների արտոնագրման գործակալության («Գործակալություն») կողմից արտոնագրում և վերջինիս կողմից վերահսկե-

լիություն: Արտոնագրում սպանալուց հետո, սնանկության կառավարիչները պարտավորվում են հետևել Էթիկայի հատուկ կանոնագրքի կանոններին, որով շեշտվում է կառավարչի պարտավորությունը խուսափելու շահերի բախումից[26]: Սնանկության մասին նոր օրենքի ուժի մեջ մտնելուց մեկ տարի էլ չանցած Գործակալությունը քննություններ կազմակերպեց և ավելի քան 100 դիմորդների արտոնագրեր բաժանեց[27]:

## *Կապիտալ շուկաներ*

Ի հավելումն վերը նշված իրավական մեխանիզմների, որոնք նպատակ են հետապնդում կայունություն և կանխատեսելիություն ապահովել բաժնետիրական ներդրման և վարկերի տրամադրման ռիսկի համար, օրենսդրությունն ու կանոնակարգերը կարող են նպաստել տնտեսական աճին օժանդակելով կապիտալ շուկաների կայացումն ու արդյունավետ գործունեությանը: Կապիտալ շուկաներն այն մեխանիզմներն են, որոնք թույլ են տալիս այն ֆինանսական ակտիվների միջնաժամկետ և երկարաժամկետ առևտրին, ինչպիսիք են կորպորատիվ բաժնետոմսերն ու մեկ տարուց ավել մարման ժամկետով պետական և մասնավոր մուրհակները: Նման շուկաները լիկվիդայնություն են ապահովում կորպորատիվ բաժնետոմսերի համար, որը կարևոր է ներկա և ապագա տնտեսական զարգացման համար, որովհետև «տնտեսության արդյունավետ տեխնոլոգիաների սեփականությունն առևտրելու հնուտ ունակությունն արագ ընթացք է հաղորդում միջոցների արագ բաշխումը, ֆիզիկական շուկայի ձևավորումն ու տնտեսական աճը»”[28]:

Ներդրողի պաշտպանությունը վճռորոշ դեր է խաղում կապիտալ շուկայի արդյունավետ գործունեության համար: Իրավական և վարչական համակարգը պետք է պարտադրի մի շարք պահանջներ, ներառյալ ստորև բերվածները[29]:

- Համակարգը պետք է երաշխավորի ներդրողին ամբողջ փվյալների մասին տեղեկատվության ժամանակին տրամադրումը:
- Արժեթղթերին առընչվող ցանկացած գործունեության մեջ ընդգրկված անհատներից և ընկերություններից (թողարկողներ, ապահովագրողներ, տեղաբաշխողներ, և դրամական կառավարման և ներդրման խորհրդատվական ընկերություններ) մինչև աշխատանքների կատարումը պահանջվում է համապատասխան կանոնակարգող մարմնի կողմից թույլտվություն ձեռք բերել:
- Արժեթղթերի թողարկման մեջ ընդգրկված կողմերից պետք է պահանջել ունենալ համապատասխան կապիտալ բիզնեսի այն տեսակի համար, որում նրանք ընդգրկված են:
- Արժեթղթային ընկերություններից պետք է պահանջել առանձնացնելու իրենց սեփական և իրենց աշխատողների հաշիվները իրենց հաճախորդների հաշիվներից:
- Պետք է ստեղծվեն երաշխիքային հիմնադրամներ կամ այլ երաշխիքներ պաշտպանելու ներդրողներին միջնորդների սխալներից, պաշտոնական չարաշահումներից կամ վճարման կատարման ձախողումներից:
- Միջնորդների փոխհատուցումը պետք է հիմնված լինի մրցակցային վարձատրության համակարգի վրա:
- Պետք է պահանջվի, որ յուրաքանչյուր մասնակից հաստատություն ունենա ներքին և արտաքին առուղիղ և վերահսկիչ մեխանիզմներ կանոնակարգերի հետ համապատասխանությունը մոնիտորինգի ենթարկելու նպատակով:
- Ներդրողների համար պետք է հաստատվի միջնորդական դատարանից օգտվելու էժան համակարգ միջնորդների, ներդրումային խորհրդատվական ընկերությունների հետ վեճերի ծագման դեպքում այդ մարմին դիմելու համար:
- Համապատասխան կանոնակարգող մարմինը պետք է ընդունի ոլորտում վարվելակերպի կանոնագիրքը, որով միջնորդներին հանձնարարվում է.
  - Ըմբռնել իրենց հաճախորդների ֆինանսական կարիքները և կարող լինել համապատասխան խորհրդատվություն ապահովել ներդրումների համապատասխանելիության առընչությամբ;
  - Ծանոթացնել իրենց հաճախորդներին շահերի պոտենցիալ բախման դեպքերին;

- Հավուր պատշաճի պահել գաղտնի տեղեկատվությունը;
- Առևտուր իրականացնող մարմնի հաջեցողության փակ թողնել իրենց հաճախորդների միջոցների ներդրումը հիմնվելով հաճախորդների կարիքների վրա և ամենաարմար գնով, և
- Առաջնահերթությունն իրենց հաշիվներից փալ հաճախորդի հաշիվներին իրենց սեփական հաշիվների առևտրման ժամանակ:

Կապիտալ շուկաների կանոնակարգման ժամանակակից լավագույն փորձերը նույնպես շուկայի մասնակիցների «ինքնա-կարգավորող կազմակերպությունների» (ԻԿԿ) առկայությունը դիտարկում են որպես ֆինանսական շուկաների կանոնակարգման խնդրում կառավարության կարևորագույն գործընկերներ: Կառավարությունները սովորաբար ԻԿԿ-ներին իրավասություն են տալիս.

- Տեղեկատվություն և հետևողական կապարման պահանջներ սահմանել արժեթղթերի առաջարկման կամ թվարկման համար;
- Թույլատրել, արգելել կամ դադարեցնել հանրորեն առաջարկված արժեթղթերի առևտրումը;
- Մոնիտորինգի ենթարկելու արժեթղթեր թողարկողների աշխատանքը ստուգելու տեղեկատվության պահանջների հետ դրա համապատասխանությունը;
- Հրապարակել կանոններ, որոնք երաշխավորում են արժեթղթերի առևտրում թափանցելիությունն ու օրենքների հետ համապատասխանությունը;
- Ոլորտի համար սահմանել իրավունքի փնօրինման և անդամակցության պահանջները;
- Ոլորտի համար սահմանել ֆինանսական արձանագրությունների մուտքագրման չափանիշներ;
- Կարգուկանոն հաստատել անդամների շրջանում; և
- Ֆինանսական գործիքների մշակման ոլորտային փորձի հաստատում, գործարքների բանկերի միջև անկանխիկ հաշվման և լիկվիդացման և երաշխիքային ու փոխհատուցման ֆոնդերի կառավարման համար:

## *Բանկային օրենսդրություն և քաղաքականություն*

Բանկերի պատշաճ վերահսկումն ու կանոնակարգումը կարևոր պայման են բանկերի կողմից դիրքի չարաշահման և ֆինանսական սխալ կառավարման կանխման համար: Վերը նշված պայմանները նաև հասարակության անհրաժեշտ վստահություն են ներշնչում: Սույն Ուղեցույցի նախապատրաստման ընթացքում բաժանված հարցաթերթիկների պատասխաններից մեկում նշվել է, որ «ֆինանսական հատվածի բարելավման հրատապ անհրաժեշտություն կար» որպես կենտրոնական Ասիայի երկրներում տնտեսական հետագա զարգացման խթան: Այդ պատասխանում այնուհետև բացատրվում էր, որ իր երկրի «չզարգացած բանկային համակարգը» գրավադրման համար անհամապատասխան մեխանիզմների, «գույքային իրավունքների նկատմամբ (ինչպիսիք են անշարժ գույքի/հող) թույլ սահմանված պարտադիր կատարման», և տեղական շուկա «օտարերկրյա բանկերի դժվարությամբ մուտք գործելու» արդյունք էր:

1975 թվականին Տաս երկրների խմբի կենտրոնական բանկերի կառավարիչների կողմից հիմնադրված Բանկային վերահսկման Բազելյան կոմիտեն, որն է բանկային վերահսկիչ մարմինների կոմիտեն, 1997 թվականի սեպտեմբերին հրապարակեց Բանկային արդյունավետ վերահսկման Հիմնական սկզբունքները:[30]: Այլ թեմաների և միջոցառումների հետ մեկտեղ, Հիմնական սկզբունքներում քննարկվում է բանկային բնագավառի վերահսկիչ մարմինն ու օրենսդրական դաշտը, ներկայացվում են բանկերի թույլատրելի միջոցառումները, կոնկրետ սահմանվում են արտոնագրման ընթացակարգերն ու տրամադրվում հետևողական կապարման ենթակա պահանջներ, ինչպիսիք են կապիտալի նվազագույն համապատասխանության պահանջները, ռիսկի կառավարումն ու ներքին վերահսկումը (ներսի մարդկանց միջև վարկերի փոխադարձ և միայն մեկ պարտատերին վարկի տրամադրման դեպքեր), ինչպես նաև կեղծարարության և փողերի լվացման կանխումը[31]: Հիմնական սկզբունքները ներկայացնում են բանկային վերահսկման լավագույն փորձերի վերաբերյալ ձեռք բերված միջազգային համաձայնությունները:

Վերջերս իրականացված միջազգային իրավական վերլուծությունների[32] շրջանակներում Կիպրոսի հանրապետության[33] բանկա-

յին համակարգի հետևյալ դրույթները ներկայացվում են որպես Հիմնական սկզբունքների պատշաճ իրականացման վառ օրինակներ.

- *Բանկային վերահսկման ամբողջական պատասխանատվության սահմանման հստակեցումը:* Կիպրոսական օրենքի հոդված 26(1)–ով նախատեսվում է, որ «Կենտրոնական բանկը պատասխանատու է բանկերի վերահսկման համար բանկային համակարգի պատշաճ գործունեությունն երաշխավորելու նպատակով»:
- *Կենտրոնական բանկի կողմից կապարման ապահովմանն ուղղված միջոցառումները:* Հոդված 30–ում նշվում է, որ եթե կիպրոսական բանկին չի հաջողվել համապատասխանել բանկային օրենքի կիրառելի դրույթին կամ դրա շրջանակներում ընդունված կանոնակարգին, կամ, եթե Կենտրոնական բանկի կարծիքով նվազեցվել են բանկի ակտիվների լիկվիդայնությունն ու բնույթը, կամ ռիսկ կա, որ բանկի պարտավորությունների կապարման հնարավորությունները կարող են միանգամից նվազել, ապա կենտրոնական բանկը կարող է ձեռնամուխ լինել մի շարք կոնկրետ միջոցառումների իրականացմանը, ինչպիսիք են՝
  - Արգելել բանկին ընդունել դեպոզիտներ կամ վարկավորում իրականացնել;
  - Ձեռնամուխ լինել բանկի հսկողությանը; և
  - Չեղյալ հայտարարել բանկի արտոնագիրը:
- *Կապիտալի համապատասխանության գործակիցները*: Հոդված 21(1)-ով սահմանվում է, որ «Կենտրոնական բանկը կարող է…պահանջել բանկերից … կապիտալ համապատասխանության գործակիցը պահել Կենտրոնական բանկի սահմանած նվազագույն մակարդակի վրա, …և յուրաքանչյուր բանկ հաշվի կառնի իր պայմանները, նախապետելով, որ նման հարաբերակցությունը պետք է նույնը լինի նույն դասին պատկանող բոլոր բանկերի համար»: Հոդված 41(2)-ով նախատեսվում է, որ այս և այլ իրավասությունների կապարման համար Կենտրոնական բանկը պետք է ուղղորդվի համապատասխան «միջազգային փորձով»:
- *Գաղտնի տեղեկատվության օգտագործմամբ վարկավորման իրականացում.*: Հոդված 11-ի (գ) և (ե) կետերով նախատեսվում է, որ վարկերի տրամադրման ժամանակ կիպրոսական բանկերը չպետք է՝
  - Վարկավորեն «ցանկացած տնօրենի…քանի դեռ գործարքը չի հաստատվել Տնօրենների խորհրդի ընդհանուր թվի մեկ երրորդի մեծամասնական որոշմամբ… և եթե տվյալ տնօրենը ներկա չէ Խորհրդի քննարկմանը և չի քվեարկել որոշման կայացման վերաբերյալ»;
  - «Թույլ տան, որպեսզի բոլոր տնօրեններին միասին տրամադրված որևէ չերաշխավորված վարկավորման աղբյուրի ընդհանուր արժեքը… գերազանցի իր կապիտալի հինգ տոկոսից, կամ կենտրոնական բանկի կողմից սահմանված ավելի ցածր տոկոսից»:
- *Կենտրոնական բանկին տեղեկատվության տրամադրում:* Կիպրոսական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածներով մանրամասնորեն սահմանվում են կենտրոնական բանկին պարբերաբար ֆինանսական հաշվետվությունների և այլ հարակից տեղեկատվության, ինչպես նաև հաստատված աուդիտ իրականացնողի կողմից հավաստագրված տարեկան հաշվետվությունների տրամադրման պահանջները: Հիմնական սկզբունքների ընդունումը, բանկային համակարգում մասնագիտական զարգացման նպատակով ուժեղ կամքի և միջոցների տրամադրումը կօգնեն անցումային տնտեսություններ ունեցող երկրներին ստեղծել տնտեսական զարգացման համար արդյունավետ միջավայր:

## Շահույթների և կապիտալի փոխանցում

Որոշ ընկերություններ սահմանափակում են ընկերությունների հնարավորությունները վերադարձնել կապիտալները կամ փոխանցել շահույթներն ու բաժնետերերի միջև պարտական կտրվածքով բաշխվող շահույթի մասերը: Այս քաղաքականությունները խոչընդոտում են օտարերկրյա ներդրումներին և խրախու-

սում անարդյունավետ և ոչ-թափանցելի երևույթներին, ինչպիսին է օրինակ տրանսֆերային գնագոյացությունը: ՕՈւՆ-ներին խրախուսելու նպատակով երկրները պետք է երաշխավորեն կապիտալի ետ փոխանցումը ու շահույթների վերադարձը: Մի շարք ԵԱՀԿ երկրներ այժմ ավելացրել են եկամտի վերադարձման վրա դրված սահմանափակումները:

**ՆԵՐԴԻՐ 5.2**

### ԵԱՀԿ ընտրված երկրներում եկամտի և կապիտալի վերադարձման լիբերալ քաղաքականություններ

***Ադրբեջան*** – *Օտարերկրյա ներդրումների մասին օրենքների շրջանակներում, օտարերկյա ներդրողներին իրավունք է տրվում հայրենիք վերադարձնել շահույթներն փոխանակելի արժույթով հարկային և այլ տուգանքների պարտադիր վճարման կատարումից հետո:*

Ադրբեջանի բիզնես ուղեցույց (Էռնսթ և Յանգ, 2005 թվական)

**Ղազախստան** – *1996 թվականին Ղազախստանն ընդունեց ԱՄՀ-ի Պայմանագրերի հոդվածների 8-րդ հոդվածը, որով նախատեսվում է, որ չեն սահմանափակվի ընթացիկ հաշվի հետ կապված գործարքներն, ինչպիսիք են արժույթային փոխանցումները կամ ներդրումներից ստացված շահույթների վերադարձումը:*

Ձեռնարկատիրական գործունեության իրականացումը Ղազախստանում.

Երկրի առևտրային ուղեցույց ԱՄՆ ընկերությունների համար (ԱՄՆ և Արտասահմանյան առևտրային ծառայություն և ԱՄՆ պետական դեպարտամենտ, 2004 թվական):

**Ռուսաստան** – *Օտարերկրյա ներդրումների մասին օրենքը շահույթների և կապիտալի հայրենիք վերադարձման իրավունք է տալիս:*

Ռոբերտ Սատրոռն և Դմիտրի Ժդանով, Օտարերկրյա ներդրումները Ռուսաստանում. Բարեփոխումներ և վերակարգավորում, Ռուսաստանում ամերիկյան առևտրի պալատ (2006 թվականի հունվարի 10):

***Ուկրաինա*** - *Օտարերկրյա ներդրողներն ազատ են առանց որևէ խոչընդոտ զգալու և անմիջապես վերադարձնել իրենց շահույթներն արտասահման հարկային համապատասխան մուծումների կատարումից հետո:*

Աղբյուր. Ներդրումներն Ուկրաինայում (Քեյ Փի Էմ Ջի 2005)

## Արտարժութային կարգավորում

Արտարժույթի օգտագործման վրա դրված սահմանափակումները բացասաբար են անդրադառնում թե արտահանողների, թե ներմուծողների վրա: Վերահսկման կարիք սովորաբար ունեն նրանք, որոնք արտարժույթ են վաստակում իրենց գործարքները կենտրոնական բանկի հետ գրանցելու և տեղական արժույթի ստացման դիմաց կենտրոնական բանկ իրենց վաստակած մասնակի կամ ամբողջական արտասահմանյան արժույթի փոխանցման համար: Միայն լիազորված գործակալներն ու լիազորված պահառուները կարող են պահել արտասահմանյան արժույթը իրենց տնօրինության տակ առանց կենտրոնական բանկի համաձայնության:

Արտարժույթի վերահսկման շրջանակներում սովորաբար արտարժույթով գումարները հատկացվում են հավանության արժանացած ներմուծումների և այլ առաջնահերթություն ներկայացող գործարքների համար: Արտարժույթի պահանջարկն արժույթային պաշտոնական կուրսի մեջ սովորաբար գերազանցում է կենտրոնական բանկի կողմից սահմանած փոխարժեքին: Հետևաբար, պաշտոնական փոխարժեքում արտարժույթի տրամադրումը պետք է հավասարաչափ բաշխվի որպեսզի առաջնահերթության խնդիր դառնա առանձնահատկություն ներկայացնող ապրանքների ներմուծումը (ինչպիսիք են կոնկրետ արտադրությունների համար հիմնական անհրաժեշտության պարագաներն ու ծախսերը):

Տնտեսական համապատասխան ուսումնասիրության շրջանակներում բացատրվում է, թե ինչպես կարող է արտարժույթի նկատմամբ վերահսկումը խանգարել տնտեսական զարգացմանը, մասնավորապես փոքր տնտեսությունների դեպքում.

*Արտարժույթի վերահսկումներն արդյունավետորեն վերջնակետային նորմաներ են սահմանում ներմուծվող ապրանքների վրա, այդպիսով բարձրացնելով տեղական հարաբերական գինն այն նույն եղանակով, ինչ որ տարիֆայինըՄինչ արտարժույթի հսկման ընդունմամբ կարելի է բարելավել առևտրային և վճարումների հաշվեկշռերը (կամ արժույթային կուրսը), այս վերահսկումներն հսկում ունեն նաև նվազեցնելու բարգավաճումն ի շահ աղավաղումներից ազատ փոքր բաց տնտեսությունների: Արտարժույթի վերահսկման պարտադրումը ներմուծված ապրանքների շուկան դարձնում է չառևտրվող ապրանքների շուկա, և…առևտրային շոկի առումով, արդյունքում այն բացասաբար է անդրադառնում տեղական տնտեսության վրա*[34]*:*

Օտարերկրյա ներդրողների տեսանկյունից, արտարժույթի խիստ վերահսկումը նվազեցնում է երկրի ներդրումային գրավչությունը: Բացի այդ, արտարժույթի վերահսկմանն ի պատասխան, տեղական ընկերությունները կարող են նվազեցնել արտասահմանյան կապիտալի օգտագործման ծավալներն և ավելի շատ հիմնվել ֆինանսավորման տեղական միջոցների վրա: All of these factors suggest the advisability of lifting strict currency controls as soon as reasonably possible. Այս բոլոր գործոններն ապացուցում են, որ հնարավորինս շուտ անհրաժեշտ է վերացնել արժույթի խիստ վերահսկումը:

## Մրցակցային օրենսդրություն և քաղաքականություն

Կենտրոնական պլանավորմամբ տնտեսությունից մրցակցության վրա հիմնված տնտեսությունների անցման ժամանակ անցումային տնտեսությունները դեմ առ դեմ կանգնեցին դժվար իրագործելի խնդիրների առջև: Նրանք ստիպված եղան փոխել իրենց տնտեսական կառուցվածքի ուղղությունն ու մտածելակերպը: Միևնույն ժամանակ, նրանցից շատերը դարձան նաև անկախ հանրապետություններ, որը շուկաների ընկալման մեջ կտրուկ փոփոխությունների սկիզբ էր ավետում: Չնայած որպես տնտեսական նոր օրինակ հանդիսացող մրցակցությանն օժանդակող նոր ինստիտուտների ներմուծմանն ուղղված գովելի ջանքերին, այս երկրներից շատերը կառավարության և հասարակության բոլոր օղակներում դեռևս ստիպված են գործ ունենալ խորն արմատներ գցած մտեցման հետ, ըստ որի ակնկալվում է կառավարության միջամտությունը տնտեսական բոլոր խնդիրներում:

ԵԱՀԿ այն երկրները, որոնք ԵՄ անդամ երկրներ են, կամ պատրաստվում են անդա-

մակցել վերջինին կամ արդեն վերջացրել, կամ էլ իրականացնում են Բրյուսելում հասպատված մրցակցային քաղաքականությունների հետ ազգային քաղաքականությունների ներդաշնակեցման գործընթացը: ԵՄ համակարգը, որը գլխավորապես հիմնված է գերմանական մրցակցային օրենքի վրա, ենթակա է բոլոր ԵՄ անդամ պետությունների կողմից պարտադիր ընդունման: Այն նպատակ է հետապնդում սփեղծել բաց շուկաներ և պատժում է տնտեսական իրավունքների չարաշահումները պետական խիստ գործողությունների իրականացմամբ: Ենթադրվում է, որ պետությունը չպետք է միջամտի և քայլեր ձեռնարկի միայն ըստ իր հայեցողության: Հյուսիս-ամերիկյան մրցակցային օրենքի համակարգերը համահունչ են, բայց ոչ միանման ԵՄ մրցակցային օրենքների հետ:

Զգտում է երկիրը ԵՄ անդամակցության, թե ոչ, ուղեցույցում ընդգրկված առաջարկությունները ակնհայտորեն համահունչ են ԵՄ և Հյուսիս ամերիկյան մրցակցային քաղաքականություններին: Շուկայական տնտեսությունները գլխավորապես պայմանավորված են մրցակցության արդյունքում միջոցների արդյունավետ բաշխմամբ և սպառողին ցածր գներով որակի, ապրանքների և ծառայությունների տրամադրմամբ[35]: Մրցակցային քաղաքականության հստակ նպատակները, որոնք են սպառողի բարեկեցության կամ սոցիալական ապահովագրման երաշխավորումը, տնտեսական զարգացման խթանումը, և այլն, տարբերվում են ըստ երկրների քաղաքական արժեքների կամ տարածաշրջանային տնտեսական խմբավորման[36]: Ինչևիցե, կա մի միաձայն համաձայնություն, դա այն է, որ մրցակցային օրենքը կարող է ծառայել որպես իրավական դաշտ տնտեսության մեջ արդյունավետ շուկայական լծակների գործունեությունը երաշխավորելու համար:

Անցումային տնտեսությամբ երկրները պետք է հստակ քաղաքականություններ սահմանեն մրցակցության վերաբերյալ: Քանի որ մրցակցության կուլտուրան չի կարող միայն օրենքներից, կանոնակարգերից և քաղաքականություններից կազմված լինել, երկրները պետք է կրթական քարոզարշավներ վարեն հանրությանը տնտեսական նոր քաղաքականություններն բացատրելու այնպես, որ մարդիկ կարողանան բարգավաճել նոր միջավայրում:

Մրցակցության օրենքով մրցակիցների միջև պետք է արգելվեն այսպես կոչված «արդյունաբերական, առևտրային և քաղաքական կազմակերպությունների միավորման ձևերից մեկի կողմից իրականացվող ակտիվ աշխպապտանքները», ինչպիսիք են գների սահմանումը, շուկաների մասնաբաժանումը, հաճախորդների ըստ խմբերի բաժանումն ու մրցույթների ժամանակ արվող անարդարությունները, քանի որ հավասար այլ պայմաններում չկա նույնիսկ աննշան տնտեսական հիմնավորում:

«Մրցակցության ժամանակ «ուղղահայաց սահմանափակումների» ազդեցությունը», այսինքն արտադրական շղթայի առավել բարձր մակարդակի բիզնեսի և առավել ցածր մակարդակի բիզնեսի միջև պայմանագրային և գործնական միջոցառումները հազիվ թե ճիշտ կլինի դասակարգել որպես բացասական կամ դրական: Այս միջոցառումները ներառում են այնպիսի փորձեր, ինչպիսիք են մանրածախ գների պահպանումը[37]: Մինչ ուղղահայաց սահմանափակումները կարող են մրցակցության վերացման և արգելքների հասպապման արդյունքի բերել, նրանք կարող են նաև բարձրացնել բաշխման արդյունավետությունը նվազեցնելով բաշխման հետ կապված այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են առքի ժամանակ առանց գումարի փասփացի տրամադրման միջնորդի հաճախորդի կողմից արժեթղթերի արագ առք ու վաճառքն ու անսկզբունքային գործողությունները, և նրանք կարող են նույնիսկ մրցակցության համար բարենպաստ ազդեցություն ունենալ: Այս պատճառներից ելնելով, երկրներից շատերը չեն դատապարտում ուղղահայաց սահմանափակումները, օրինակ մանրածախ գների պահմանումը, այլ հաշվի են առնում այլ գործոններ, որոնց միջոցով երբեմն մրցակցությանը նպաստող ուղղահայաց սահմանափակումների ազդեցությունը գերակշռում է դրա բացասական ազդեցությանը:

Չնայած որ ձեռնարկությունների միավորումներն ու ձեռք բերումները կարող են հասպապել արդյունավետություն և նպաստել դրա ամրապնդմանը, նրանք կարող են նաև մենաշնորհային իշխանության երաշխավորման միջոց հանդիսանալ: Մրցակցային օրենքների մեծամասնությունը, հետևաբար, կանոնակարգում է այդ գործարքները և կարող է կիրառվել դրանց վերացման կամ առաջացմանը խոչընդոտելու նպատակով: Այս դաշտը կարգավորող կանոնակարգերը ուղղված են փոխ-

կապակցված շուկաների և մենաշնորհի գնահատման մեթոդներին, ինչպես նաև միացումներին ու ձեռք բերումներին առընչվող որոշակի միագումար արժեքներին կամ շուկայական մասնեբաժնի մուտքերին գերազանցող պայմանների մասին պահանջում են փեղեկացնել մրցակցությունը կարգավորող մարմնին մինչև այդ գործարքների կայացումը[38]:

Մրցակցային օրենքների ընդունումն ու դրա բարեփոխումը պետք է իրականացնել գործարար համայնքի և սպառողների պաշտպանների հետ խորհրդակցությամբ, որոնք պետք կիրառեն հաստատված կանոնները:

Պետական քաղաքականություն իրականացնողները պետք է երաշխավորեն, որպեսզի իրենց քաղաքականությունները չդառնան անփոփոխ կամ մեխանիկաբար իրականացվող, և, որ, թե քաղաքականությունը, թե օրենքը փնտեսական իրականության վրա հիմնված լինեն:

Միայն մրցակցային քաղաքականությունը բավարար չէ. այն պետք է իրականացվի համապատասխան օրենքների և կանոնակարգերի միջոցով: Մրցակցային տնտեսության պահպանման նպատակով շատ կառավարություններ ընդունել են մենաշնորհային չարաշահումներն արգելող, մրցակից ընկերությունների միջև դավադրությունները սանձահարող և որպես միավորումների և ձեռքբերումների արդյունք շուկայական իշխանության անօրինական կենտրոնացումները կանխող օրենքներ: Դրանք արտացոլում են իրականությունը, որն է, մինչ մրցակիցների միայն իրենց շահերը պաշտպանող վարքագիծն ի վերջո կարող է հանրային շահերին բավարարող արդյունքներ տալ, այն ինչին ձգտում է շուկայի ցանկացած մասնակից կարող է և բոլորովին չհապատասխանել սպառողների շահերին:

Մրցակցության մասին ժամանակակից օրենքները բաղկացած են հետևյալ բաղադրիչներից. (1) կարգավորման ընդհանուր նորմեր, (2) նախկին մրցակիցների միջև պայմանավորվածության ձեռք բերման և դրա հիման վրա վարքագծի արգելում, ինչպես օրինակ գների ինքնակամ սահմանում, մրցույթների ընթացքում կապարվող անարդարություններ, և այլն, (3) շուկայում մենաշնորհային իշխանության կամ գերիշխող դիրքի չարաշումների արգելում, (4) հատուկ կամ բացառիկ իրավունքներ ունեցող ձեռնարկություններին կամ բնական մենաշնորհին[39] առընչվող դրույթներ, (5) պետական աջակցություն, (6) ձեռնարկությունների միավորման վերահսկում, (7) անարդար մրցակցություն, (8) մրցակցությունը կարգավորող կառավարական մարմինները կանոնակարգեր, (9) մրցակցային օրենքի խախտման դեպքում առաջացած հետևանքներ (տուգանքներ, պատժամիջոցներ, բանտարկություն, և/կամ քաղաքացիական պարտավորության սպանձնում), և (10) հարկերից ազատման, ընթացակարգերի և այլ բարդ դեպքերի համար առավել մանրամասն մշակված կանոնակարգերի խումբ:

Մրցակցային օրենքների ուղղման կամ ընդունման ուղղությամբ միտածող երկրներն ընտրության շատ տարբերակներ ունեն: Որոշ միջազգային կազմակերպություններ մշակել են մրցակցության մասին մոդելային իրենքներ, որոնք զարգացող և անցումային տնտեսությունների համար կարող են օրինակելի հանդիսանալ: Օրինակ, Համաշխարհային բանկն ու ՏՀԶԿ-ն մրցակցային օրենքի մոդելը հրապարակել են 1999 թվականին: Համագործակցության քարտուղարությունը մրցակցային օրենքի մոդելը հրապարակել է 2002 թվականին: ՄԱԱՁՀ-ը հրապարակել է այն բոլորվին վերջերս 2003 թվականին: Որպես գործնական քայլ, Եվրոպական միության մրցակցային օրենքը, որն արտացոլված է EEC Համաձայնագրի 81-րդ և 82-րդ հոդվածներում, ինչպես նաև մի շարք այլ կանոնակարգերում, դիրեկտիվներում և դատական որոշումներում, մեծ ազդեցություն ունի ամբողջ տարածաշրջանում, քանի որ ԵՄ-ին անդամակցող թեկնածու բոլոր երկրները պետք է համապատասխանեցնեն իրենց օրենքները ԵՄ մոդելի հետ: Այն երկրներն, որոնք ոչ մտ ապագայում են պատրաստվում ԵՄ անդամակցությանը, այնուամենայնիվ պետք փորձեն համապատասխանեցնել մրցակցության մասին օրենքները միջազգայնորեն ընդունված օրենքներին:

Ավելին, մրցակցային օրենքի հեղինակները պետք է պատշաճ ուշադրության արժանացնեն մեթոդաբանությանը, քաղաքական սահմանափակումներին, տվյալներին և այլ բնութագրերին, որոնցով սահմանվում է շուկան, երբ որոշվում է, թե արդյոք այս կամ այն կողմն ունի գերիշխող դեր, թե ոչ, կամ, թե արդյոք որոշակի գործողությունների ձեռնարկումը կարող է տալ էական տնտեսական ազդեցություն, թե ոչ: Սա կարող է հատկապես դժվար իրագործելի լինել այն երկրների հա-

մար, որոնք նախկինում եղել են մեծ միության մի մաս և վերջերս են անկախացել: Փոխվել են փարածաշրջանային սահմանները և կարող են շուկայի սահմանման վրա ազդող զգալի իրավական, քաղաքական, մշակույթային և լեզվական պայմաններ առաջ գալ:

## *Մտավոր սեփականության և էլեկտրոնային առևտրի վերաբերյալ օրենսդրություն*

Մտավոր սեփականության նկատմամբ իրավունքները, որոնք այդ օգտակար և կարևոր աշխատանքի հեղինակներին, ներդրողներին և դրանց ստեղծմանը մասնակցող այլ անձանց իրավունք են տալիս խանգարելու մյուսներին օգտվելու իրենց ստեղծածից, ժամանակակից տնտեսական կյանքի կարևոր գործոնն են հանդիսանում: Ինչևիցե, նման օրենքները շատ երկրներում դեռևս վիճաբանության առարկա են հանդիսանում: Մտավոր սեփականության մասին օրենքների ներմուծումն ու ընդունումը թանկ հաճույք է: Արտոնագրային թույլ օրենքներ ու վաղուց ի վեր դեղագործությամբ զբաղվող ընկերություններ ունեցող երկրների համար բացասական ազդեցություն են ունեցել այն երկրներում իրականացված նորարարությունները, որտեղ արտոնագրային խիստ պաշտպանությունը թույլ է տվել դեղագործական ընկերություններին կապարել իրենց ներդրումները հետազոտական աշխատանքների մեջ: Նման իրավիճակի փոփոխությունը կարող է քաղաքականապես ոչ ընդունելի և դժվար լինել:

Մտավոր սեփականության օրենքները չկապարելը նույնպես իր գինն ունի: Մտավոր սեփականության անարդյունավետ պաշտպանությունն ասփիճանաբար էլ ավելի շատ է դառնում առևտրային վիճաբանությունների պատճառ գերզարգացած, կամ զարգացող ու անցումային երկրներում: Մտավոր սեփականության վերաբերյալ թույլ օրենքներ ունեցող երկրները կորցնում են այդ բնագավառից եկամտի ստացման հնարավորությունը, մտավոր սեփականության գրանցված սեփականատերերի կողմից մաքսային և հարկային վճարումների չկապարման արդյունքում: Ավելին, առավել և առավել շատ իրականացվող ուսումնասիրություններն ապացուցում են, որ մտավոր սեփականության պատշաճ պաշտպանությունը շուկայի ազատականացման և մրցակցությանը նպաստող քաղաքականություններ հետ միասին օտարերկրյա ներդրումներին ու տնտեսական զարգացմանը խթանող ազգային ռազմավարությունների վճռորոշ բաղադրիչ է հանդիսանում[40]: Եվ հակառակը, որոշ տնտեսագետներ հայտնաբերել են, որ երկրում մտավոր սեփականության նկատմամբ թույլ օրենքների առկայությունը դրդում է ընկերություններին ներդրում կապարել այլ երկրներում, որտեղ մտավոր սեփականության պաշտպանությունն առավել ուժեղ է և սահմանափակել կամ վերացնել նոր տեխնոլոգիաների ներմուծումն այն երկրներ, որտեղ ակնհայտ է այդ պաշտպանության պակասը[41]:

Մտավոր սեփականության պաշտպանությունը նաև ԱՀԿ անդամակցման նախապայման է հանդիսանում, որը պահանջում է իր անդամներից ընդունել Մտավոր սեփականության իրավունքների առևտրային ուղղությունների վերաբերյալ համաձայնագրին (TRIPS համաձայնագիր):[42] TRIPS համաձայնագիրը հաստատում է իրական, նվազագույն մակարդակների պաշտպանություն արտոնագրերի, ապրանքանիշերի, հեղինակային իրավունքների, աշխարհագրական տեղանունների, ինտեգրալ սխեմաների մշակումների, առևտրային գաղտնիքների, արտոնագրման մեջ հակա-մրցակցային միջոցառումների և պարտադիր կապարումների նկատմամբ[43]:

*Հավասարակշռված մոտեցման անհրաժեշտությունը*: Իրենց մտավոր սեփականության քաղաքականության հաստատման գործում երկրները պետք է հավասարակշռեն նորարարներին պարգևատրելու անհրաժեշտությունն օգտակար տեղեկատվության հասանելիության հասարակության անհրաժեշտության հետ: Արտոնագրերը, հեղինակային իրավունքները, բույս աճեցնողների իրավունքները, և մտավոր սեփականության նկատմամբ համապատասխան իրավունքները (ՄՍԻ) ստեղծվել են այն հավատով, որ իրենց ստեղծագործությունները մարդկանց տնտեսական շահագործման նպատակով բացառիկ իրավունքով և սահմանափակ ժամանակով տրամադրումը կնպաստի նորարարության և ստեղծագործ մոտեցման բարձր մակարդակի ձևավորմանը: Այս հավատին սատարող էական տնտեսական ապացույց կա: Ինչևիցե, համաժողովրդական հզոր սեփականությունը, որը գիտելիքների և արտահայտությունների ամբողջություն է և պատկանում է ոչ մեկի և առանց վճարման չի կա-

րող օգտագործվել ոչ մեկի կողմից, հավասարապես կարևոր է ազգի սոցիալական, մշակութային և տնտեսական բարօրության համար: Իրապես, գիտելիքների անսպառ աղբյուրից օգտվելն ինքնին նորարարության նախապայման է հանդիսանում: Չափազանց սահմանափակումներ դնելով, անհավասարակշռված ՄՍԻ-ներն այդպիսով կարող են նորարարության արգելակ հանդիսանալ[44]:

Այս հավասարակշռումը սովորաբար դառնում է ՄՍԻ-ի վերաբերյալ օրենսդրության անբաժանելի մի մասնիկ: Օրինակ, արտոնագրով իրեն տրամադրվող բացառիկ իրավունքների դիմաց ստեղծողը պետք է հանրության համար բացահայտի հայտնագործության ստեղծման եղանակն ու դրա կիրառման ձևը: Արտոնագրի ժամկետի լրանալուն պես (սովորաբար արտոնագրի դիմման լրացնելուց հետո քսան տարի անց), հայտնագործությունն առանց վճարման կարող է կիրառել ցանկացածը և բացահայտված ամբողջ տեղեկատվությունը դառնում է համաժողովրդական սեփականություն: Իրենց ՄՍԻ-ները կարգավորող օրենսդրությունը թարմացնելու պարագայում երկրները պետք է մտապահեն, որ անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ պաշտպանություն առանց համաժողովրդական սեփականության ընկալումը զոհաբերելու:

*Խտրականության բացառում:*: TRIPS համաձայնագրով, Արդյունաբերական գույքի պաշտպանության փարիզյան, Գեղարվեստական և գրականության գործերի պաշտպանության Բեռնի կոնվենցիաներով և մտավոր սեփականության այլ հիմնական պայմանագրերով անդամ երկրներից սովորաբար պահանջվում է վերաբերվել այլ անդամ երկրների մտավոր սեփականության սեփականատերերին այնքան բարեհամբույր, որքան նրանք վերաբերում են իրենց սեփական քաղաքացիներին: Սա գործող սկզբունք է, որով պետք է արտացոլվի մտավոր սեփականության պարտադիր կատարման իրական լինելը: Որպես գործնական միջոցառում, ինչիցե, ՄՍԻ-ի պարտադիր կատարման նպատակով բոլոր երկրները պետք է պաշտպանական քայլեր ձեռնարկեն ընդդեմ օտարերկրացիների նկատմամբ նախապաշարմունքների: Նման քայլեր չձեռնարկելը վատ ազդանշան է օտարերկրյա ներդրողների համար և կարող է վատ հեղինակություն վաստակել, որը դժվար կլինի հաղթահարել:

*Որպես գրավ օգտագործումը:* Ինչպես ցանկացած այլ ակտիվ, ՄՍԻ-ներն ունեն տնտեսական արժեք, որը կարելի է օբյեկտիվորեն հաշվել:Իրոք, այսօրվա ընկերություններից շատերի ակտիվների մեծամասնությունը նրանց մտավոր ստեղծագործություններն են: Այնուամենայնիվ, երաշխավորված վարկավորման համակարգերը հաճախ ակնհայտորեն չեն ընդունում ՄՍԻ-ները որպես վարկերի ստացման դիմաց գրավ: Այս հանգամանքը վարկավորման գործարքներին անորոշություն է հաղորդում և պոտենցիալ կերպով զրկում «գիտելիքների վրա հիմնված» ընկերություններին վարկերի ստացման հնարավորությունից կամ անտեղի բարձրացնում է նրանց ծախսերը: Հետևաբար, օրենսդրությունը պետք է ՄՍԻ-ների սեփականատերերին հնարավորություն ընձեռի օգտագործել իրենց մտավոր սեփականությունն որպես գրավ:

*Մրցակցային օրենքի հետ փոխադարձ կապը:* Մտավոր սեփականության և մրցակցային օրենքների միջև փոխադարձ կապը երբեմն անհստակ է: Դատարաններին ուղենիշ է անհրաժեշտ ՄՍԻ-ների օրինական օգտագործումն այդ արտառոց իրավունքների չարաշահումից տարանջատելու համար: Մտավոր սեփականության մասին օրենքների նորացման գործընթացում գտնվող երկրները կարող են օգտվել Տեխնոլոգիաների փոխանցման արգելակման վերացման մասին ԵՄ կանոնակարգից[45] և դրան կցված Տեխնոլոգիաների փոխանցման ուղեցույցից[46], ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի և Մենաշնորհների դեմ պայքարող առևտրային ֆեդերալ հանձնաժողովի ուղեցույցներից[47]:

*Պարտադիր կատարման խնդիրներ:* TRIPS Համաձայնագրի շրջանակներում իրենց պարտավորությունների կատարման համար ԱՀԿ շատ անդամ երկրներ ընդունել են օրենսդրություն, որը տեխնիկապես համապատասխանում է TRIPS-ի չափանիշներին: Ինչիցե, խղճուկ են ստացվել այս երկրներից մի քանիսի արձանագրությունները պարտադիր փաստացի կատարման և ՄՍԻ-ների պաշտպանության վերաբերյալ: Սա կարող է մի շարք գործոնների արդյունք հանդիսանալ. (1) ընկալման պակաս, որ ՄՍԻ-ները սեփականություն են հանդիսանում և նրանց չլիազորված օգտագործումը գողության մի ձև է, (2) դատավորների, դատախազների և այլ առընչվող պաշտոնյաների համար մտավոր սեփականության խնդիրների թեմաներով դասընթացների անցկացման պակաս, (3) օրենք-

ների խախտման դեպքում պետական օրենքում իրավական անհրաժեշտ միջոցառումների պակաս, և (4) պետական դատական համակարգում ընդհանուր արդյունավետության ցածր մակարդակ: Պարտադիր կատարումը բարելավելու նպատակով երկրները կարող են ձեռնարկել հետևյալ միջոցառումները. (1) կրթական քարոզարշավների կազմակերպում ՄՍԻ-ների փնտեսական արժեքի և նրանց սխալ կառավարման դեպքում առաջացած լուրջ հետևանքների վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով, (2) դատական և օրենսդիր մարմինների համար հատուկ դասընթացների անցկացում, (3) հատուկ դատարանների ստեղծում և/կամ վարչական ընթացակարգերի մշակում ՄՍԻ-ների խնդիրների լուծման նպատակով, (4) Համաձայն TRIPS Համաձայնագրի 50-րդ - հոդվածի, օժանդակող միջոցառումների հասանելիության ապահովում, ներառյալ ժամանակավոր արգելակման և դատական արգելքների միջացառումները, օրենքների խախտումներին վերջ տալու նպատակով:

*Արտոնագրային օրենքի շրջանակները:* Արտոնագիրը կառավարության կողմից հայտնագործության սեփականատիրոջը տրամադրվող իրավունքն է որոշակի քանակով սահմանված տարիների ընթացքում թույլ չտալ ուրիշներին ստեղծել, օգտագործել, ներմուծել կամ վաճառել հայտնագործությունը: TRIPS Համաձայնագրով պահանջվում է, որ արտոնագրի պաշտպանության տակ առնվի ցանկացած հայտնագործություն, անկախ նրանից, թե այն արտադրանք է, թե գործընթաց, տեխնոլոգիաների ցանկացած բնագառավում, և այնքան ժամանակ, ինչքան որ այդ հայտնագործությունը նոր է, երբ գյուտարարական քայլ է արվել և հայտնագործությունը համապատասխանում է արդյունաբերական կիրառման համար[48]: Այս լայն սահմանումը, թե ինչը կարող է արտոնագրվել համեմատաբար նոր երևույթ է, որը քաղաքական տեսանկյունից վիճելի հարց է: Ինչևիցե, TRIPS Համաձայնագրով բացահայտվում են հայտնագործության որոշակի դասակարգումներ, որոնք կարող են դուրս հանվել արտոնագրման շրջանակներից: Այս որոշակի դասակարգումների մեջ կա հայտագործությունների ընդհանուր դասակարգում, որը հակասում է հասարակական կարգուկանոնին կամ բարոյականության սկզբունքներին:

Արտոնագրային օրենքներից շատերում չեն սահմանվում հայտնագործությունների կոնկրետ տեսակներ, որոնք խախտում են հասարակական կարգուկանոնն ու բարոյականության սկզբունքները: Այս երկիմաստությունը զգալի անորոշություն է մտցնում կենսատեխնոլոգիական հայտնագործությունների առումով: To the extent possible, legislation should avoid such ambiguities in order to make the conduct of business more predictable. Օրենսդրությունը հնարավորին չափով պետք է զերծ լինի երկիմաստ արտահայտություններից ձեռնարկատիրական գործունեության վարքագիծն առավել կանխատեսելի դարձնելու համար: Հասարակական կարգուկանոնի կամ պատենտունակության բարոյականապես բացառման շրջանակները սահմանող օրենսդրության լավագույն օրինակ կարող է ծառայել Արդյունաբերական սեփականության մասին լեհական օրենքի հոդված 93(3)-ը: Այդ օրենքով սահմանվում է, որ ստորև բերված «կենսատեխնոլոգիական հայտնագործությունները պետք է դիտարկել որպես այնպիսի հայտնագործություններ, որոնց շահագործումը կարող է հակասել հասարակական կարգուկանոնին կամ բորայականությանը»

*(1) Մարդկանց կլոնավորումը, (2) Մարդկանց գենետիկ բացահայտման բջիջների ձևափոխումը, (3) Մարդկային էմբրիոնների օգտագործումն արդյունաբերական կամ առևտրային նպատակներով, (4) Կենդանիների գենետիկ բացահայտման գործընթացները, որոնք, կարող են ցավ պատճառել կենդանիներին արդյունքում մարդկանց կամ կենդանիներին էական բժշկական օգտակարություն չտալով, ինչպես նաև գենետիկ բացահայտման գործընթացի արդյունք հանդիսացող կենդանիներ:*[49]

*Արտոնագրի որակը:* Քանի որ մեծանում է տեխնոլոգիաների տնտեսական գլոբալ կարևորությունը, արտոնագրման ազգային գրասենյակները տարեցտարի առավել շատ արտոնագրման դիմումներ են ստանում: Աշխատանքային աճող ծանրաբեռնվածությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ արտոնագրի որակի վրա: Արտոնագրերի ստացման համար դիմումները պետք է ուսումնասիրության տակ առնվեն արտոնագրերի ստուգողների կողմից, որպեսզի հաստատվի պաշտպանության ապագա առարկա հայտնագործությյան նոր լինելը և որ այն ներկայանում է որպես գյուտարարություն «նոր իրավիճակի» պայմաններում, այսինքն որ մասնագետին դիմումի լրացման ժամանակ ակնհայտ

չլինի, որ հայտնագործությունն արդեն ծանոթ է եղել նրան նախկինում: Արտոնագրման քննողական գործընթացը պահանջում է, որպեսզի քննողները պատրաստված լինեն որոշակի տեխնիկական բնագավառներում, որ նրանք համեմատեն արտոնագրման համար ներկայացված հայտնագործությունը գիտական, տեխնիկական և այլ գրականության հետ: Արտոնագրման դիմումների համար անբավարար միջոցների և պատվերների չկատարման աճող դեպքերի արդյունքում քննողները միշտ չէ, որ հնարավորություն ունեն մանրազնին և պատշաճ քննություն իրականացնել: Արդյունքում «գյուտարարները» երբեմն արտոնագրեր են ստանում այն «հայտնագործությունների» համար, որոնք կամ նոր չեն, կամ էլ ներկայացնում են արդեն հայտնի գիտությունների աննշան փոփոխված տեսակը: Սա կարող է լուրջ խնդրի պատճառ դառնալ, քանի որ այն կարող է ինչ-որ մեկին թույլ տալ «սեփականաշնորհել» պետական սեփականության մի մասը, կամ որ ավելի հաճախ է պատահում, քողարկել գիտության և նորարարությունների որոշակի բնագավառների իրավիճակը: Նման տեսակի անորոշությունը կարող է խոչընդոտել նորարարությանը, որն արտոնագրային օրենքի նպատակներին ամբողջապես հակասող արդյունք է: Այդ պատճառով կառավարությունները պետք է որպես առաջնահերթ խնդիր դիտարկեն որակյալ արտոնագրի տրամադրման համար իրականացվող քննությունները և պետք է համապատասխան միջոցներ տրամադրեն այդ գործընթացին, ինչպես նաև ստուգողների վարձմանը, նրանց համար դասընթացների վարմանը, պահմանն ու պարգևատրմանը, նրանց, ովքեր հավատարմագրեր ունեն:

*Օգտակար մոդելներ:* Օգտակար մոդելի գրանցումը բացառիկ իրավունք է, որը որոշ երկրներում տրվում է գոյություն ունեցող տեխնոլոգիաներում փոքր հայտնագործությունների կատարման կամ նրանց բարելավումների համար[50]: Օգտակար մոդելի պաշտպանությունը սովորաբար առավել պակաս գյուտարարական բովանդակություն է պահանջում, քան արտոնագրային պաշտպանություն և օգտակար մոդելի պաշտպանության տևողությունը հաճախ ավելի կարճ է, քան արտոնագրի: Այն հաճախ կիրառվում է այն գործիքների և միջոցների պաշտպանության համար, որոնք օգտակար և գործնական են, բայց չեն հանդիսանում քայլ դեպի առաջ:

TRIPS Համաձայնագրով ԱՀԿ անդամ երկրներից չի պահանջվում ընդունել օգտակար մոդելի վերաբերյալ օրենքներ: Ինչևիցե, վերջին տարիներին շատ զարգացող և անցումային երկրներ ընդունել են օգտակար մոդելի համակարգեր: Օգտակար մոդելի պաշտպանության ուղղությամբ արված ուսումնասիրությունների արդյունքում փորձագետներն եկան այն կարծիքի, որ ՄՍԻ-ների պաշտպանության այս թեթև ձևը խրախուսում է տեղացիների կողմից տեխնիկական գիտելիքների ու նրանց կողմից «օտարերկրյա նորարարությունների ձեռք բերմունը»[51]: 1980 թվականին Բրազիլիայի գյուղատնտեսական միջոցների արտադրության բնագավառում արված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ արդյունաբերական փոքր ընկերությունները կենտրոնացել են ֆերմերային գործիքների պատրաստման աննշան բարեփոխումների վրա և օգտագործել են օգտակար մոդելի համակարգը դատարկ շուկաներ ներթափանցելու և առավել խոշոր ընկերությունների հետ մրցակցելու համար[52]: Այն երկրները, որոնք դեռևս - չունեն օգտակար մոդելի համակարգեր, պետք է ուսումնասիրություն անեն պարզելու, թե արդյոք դրանք համապատասխան կլինեն իրենց երկրի պայմաններին, թե ոչ:

*Առևտրային գաղտնիքներ:* TRIPS Համաձայնագրի հոդված 39.2-ով պահանջվում է, որ ԱՀԿ անդամ երկրները պաշտպանություն երաշխավորեն առևտրային գաղտնիքների համար, որը բնագավառին գիտակ մարդկանց համար փակ և ոչ համընդհանուր իմացության տեղեկատվությունն է, որն ունի շուկայական արժեք, քանի որ այն գաղտնիք է և, որի պահպանման համար պատասխանատու անձը համապատասխան քայլեր է ձեռնարկում: Առևտրային գաղտնիքների պաշտպանությունը կարևոր է ոչ միայն բարձր տեխնոլոգիաների բիզնեսների գոյության և բարգավաճման համար, այլ նաև ցանկացած ձեռնարկության, որն ունի մրցակիցներ:

*Հեղինակային իրավունքներ:* Հեղինակային իրավունքները հեղինակներին աշխատանքների նկատմամբ (ներառյալ գրականության, նկարչական կամ գիտական աշխատանքներ, ինչպիսիք են գրքերը, երաժշտությունը, հոդվածները, կինոնկարները, ճարտարապետական գծագրերը և համակարգչային ծրագրերը) իրավունք են տալիս երրորդ անձանց արգելելու դրանց կրկնօրինակումը, հանրորեն ցուցադրումը, գովազդումը, ցուցադրումը կամ առևտրային նպատակներով

օգտագործումը[53]: Հեղինակային իրավունքն անհամեմատ մեծ նշանակություն ունի էլեկտրոնային հիմնված առևտրի համար, քանզի այն կիրառվում է ծրագրային ապահովման և այլ թվային տեղեկատվական միջոցներով:

Էլեկտրոնային առևտուրը հաճախ ընդգրկում է մտավոր սեփականության վաճառքն ու արտոնագրումը: Առևտրի այս տեսակի խթանման համար վաճառողները պետք է իմանան, որ այս ձևով առուվաճառք իրականացնելու դեպքում նրանք չեն կորցնի իրենց մտավոր սեփականությունը, իսկ գնորդներն իմանան, որ ձեռք են բերում իրական ապրանքներ: Տեղեկատվական բոլոր տեսակի ապրանքների տարածման նպատակով էլեկտրոնային առևտրման պոտենցիալը՝ զվարճանալուց մինչև կրթումը, բիզնեսի ծրագրային ապահովումից մինչև գիտական հետազոտությունների համար փվյալների բազաների ստեղծումը, իրագործելու համար ապահովողները պետք է վստահ լինեն, որ իրենց ապրանքները պաշտպանված են գողությունից: Չնայած որ այս արտադրանքներից շատերն ենթակա են հեղինակային իրավունքի մասին օրենքին, տեխնոլոգիաներում արձանագրված առաջընթացները, որոնք էլեկտրոնային գլոբալ կառավարումն իրականություն են դարձնում, միևնույն ժամանակ օրենքը խախտողներին հնարավորություն են ընձեռում հեշտ և ոչ թանկ եղանակով ստեղծել և տարածել մտավոր սեփականության իրավունքներով պաշտպանված ցանկացած աշխատանքի արդյունքի հիանալի պատճեններ: Սա ինքնին մարտահրավեր է ծրագրային ապահովման ձեռնարկությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների ընկերությունների գոյությանը:

Հեղինակային իրավունքի մասին ՄՍՀԳ - Համաձայնագիրը և ՄՍՀԳ կատարողների և ձայնագրությունների Համայաձայնագիրը, որոնք երկուսն էլ ընդունվել են 1996 թվականին, պարունակում են դրույթներ, որոնք ուղղված են «թվային դժվար իրավիճակի» լուծմանը, ներառելով տեխնոլոգիական պաշտպանությանը, հեղինակային իրավունքի կառավարման մասին տեղեկատվությանն ու հանրությանը հաղորդակցվելու իրավունքին վերաբերող հոդվածներ: Մասնավորապես, 11-րդ հոդվածով պահանջվում է, որ պայմանագրի կողմեր հանդիսացող երկրները «պետք է սույն Համաձայնագրի կամ Բեռնի կոնվենցիայի շրջանակներում օրենքով չթույլատրված կամ համապատասխան հեղինակներով չլիազորված իրենց աշխատանքների համար իրավունքների օգտագործման առընչությամբ հեղինակների կողմից կիրառվող տեխնոլոգիական միջոցառումների խաբեության և սահմանափակում դնող գործողությունների դեմ համապատասխան իրավական պաշտպանություն և արդյունավետ իրավական միջոցառումներ ապահովեն»[54]: Չնայած վիճելի են խաբեությունների դեմ որոշ երկրներում իրականացված դրույթները, բայց հոդվածն իր իսկ նպատակի իրագործումից ելնելով անդամ երկրներին ստեղծագործական հնարավորություն է ընձեռում: Միանում են, թե ոչ այդ երկրներն ինտերնետին առնչվող հեղինակային իրավունքի վերաբերյալ ընդունված համաձայնագրերին, անցումային երկրները պետք է ներմուծեն որոշակի հատուկ պաշտպանություններ թվային դաշտում հեղինակային իրավունքի համար:

*Այն երկրները, որտեղ գերիշխող են հեղինակային իրավունքի հափշտակման դեպքերը, պետք է դիտարկեն Ուկրաինայի վերջերս ձեռնարկած միջոցառումներն ուղղված իր միջազգային հեղինակության բարձրացմանն ու տեղեկատվական ժամանակակից տնտեսությանը լիովին միանալու համար ճանապարհի հարթմանը: ՄՍԻ-ների անբավարար պաշտպանվածության խնդիրը լուծելու նպատակով, Ուկրաինայի պառլամենտը 2005 թվականի հուլիսին ընդունեց օրենք, որով ուժեղացվեց երկրի օրենսդիր գերապետչությունը հափշտակման արդյունք հանդիսացող կոմպակտ սկավառակների (CD) և թվային տեսասկավառակների (DVD) անօրինական արտադրությանն ու տարածումը դադարեցնելու համար: Այդ օրվանից ի վեր ուկրաինական օրենսդիրներն իրականացրել են տեսողական սկավառակներ արտադրելու արտոնագիր ունեցող ձեռնարկությունների բազմաթիվ ստուգումներ և հարձակում են գործել հեղինակային իրավունքի խախտմանն օժանդակող արտադրանքի առևտրով զբաղվող բիզնեսների վրա: Ուկրաինայում մի շարք հեղինակային իրավունքը օրինախախտողներից պահանջվել է զգալի չափի տուգանքներ վճարել: Այս աշխատանքների արդյունքում, 2006 թվականի հունվարին Միացյալ Նահանգները Ուկրաինայի նկատմամբ վերականգնեց իր արտոնությունների ընդհանուր համակարգը և Ուկրաինայի «Հատուկ 301» կարգավիճակը «Առաջնահերթ օտարերկրյա երկրից» ի-*

*ջնջրեց ԱՄՆ առաջնահերթությունների դիտարկման ցուցակում ավելի քիչ խիստ աստիճանի վրա:*[55]

*Ապրանքային նշաններ:* Ապրանքանիշը բառ է, առևտրային նշան, սիմվոլ կամ լոզունգ, որով ճանաչելի են դառնում որևէ ձեռնարկության ապրանքներն ու ծառայությունները[56] և փարանջատվում այլ ձեռնարկությունների ապրանքներից և ծառայություններից: Ի տարբերություն արտոնագրերի, հեղինակային իրավունքների և օգտակար մոդելների, ապրանքանշային իրավունքների գերնպատակը հայտնագործության կամ ստեղծագործության խթանումը չէ: Ավելի շուտ, ապրանքային նշանների մասին օրենքը նպատակ է հետապնդում պաշտպանել հանրությանն ապրանքների կամ ծառայությունների առևտրային աղբյուրների պարագայում շփոթությունից և բիզնեսի սխալ ներկայացման կամ մի բիզնեսի կողմից մյուսի հեղինակության զավթման միջոցով առևտրից շեղելուց: Այն զրկում է կառավարություններին գործարքներից ստացված հարկերից և կարող է վտանգի աղբյուր հանդիսանալ սպառողների առողջության և անվտանգության համար մարդկանց սպառման և անվտանգություն պահանջող ապրանքների դեպքերում, ինչպիսիք են սնունդը, դեղորայքը, և այլն:

Օրինական բիզնեսների համար ապրանքանշի խախտումն նույնպես ակնհայտ բացասական հետևանքներ ունի: Ընկերությունները զգալի ժամանակ, ջանք և գումար են ներդնում իրենց սպառողների հավատարմությունը շահելու համար: Ապրանքանիշերն այս ռազմավարության հիմնական էլեմենտն են հանդիսանում, որովհետև նրանք սպառողներին թույլ են տալիս ճանաչել այն ընկերություններ, որոնք արժանի են շարունակել իրենց գործունեությունը: Շուկայում ընկերության գործարար համբավը կապված է այն նշանների հետ, որոնք նա օգտագործում է իր ապրանքների վաճառքի համար: Հետևաբար, երբ ձեռնարկությունը սխալմամբ օգտագործում է մրցակցի ապրանքանիշը կամ ընդունում մի նշան, որը նույնն է, ինչ մյուս ձեռնարկությանը և, մեխանիկաբար, շփոթություն է մտցնում, ապրանքանիշն իրավիճակն ուղղելու միջոց է ապահովում:

- *Կոլեկտիվ ապրանքային նշան:* Կոլեկտիվ ապրանքային նշանը հատուկ ապրանքանիշ է, որը գրանցվում է համատեղ ձեռնարկության, ընկերության, միության կամ այլ հավաքական խմբավորման կամ կազմակերպության անդամների բացառիկ օգտագործման համար[57]: Երբ ապրանքին կամ ծառայությանը կցվում է կոլեկտիվ ապրանքային նշանը, նշանի օգտագործումը պահվում է միայն անդամների կողմից օգտագործման համար, ովքեր օգտագործում են այդ նշանն իրենց ապրանքների կամ ծառայությունների ճանաչման և ոչ անդամ հանդիսացողներից ռանձնանալու համար[58]: Կոլեկտիվ ապրանքային նշանները կարող են մեծացնել շուկայի տեսանելիությունը և բարձրացնել փոքր բիզնեսի խմբերի և նույնիսկ անհատներին պատկանող սեփականությունների հեղինակությունը: Երկրները կոլեկտիվ ապրանքային նշանները պետք է դիտարկեն որպես ՓՄՁ-ների զարգացման մի միջոց:

- *Հավաստագրման նշաններ:* Հավաստագրման նշանները ապրանքի արտադրության հավաստագրման սխեմաների անբաժանելի մասն են կազմում, որոնք ստեղծված են ստուգելու ապրանքների համապատասխանությունն որոշակի պահանջներին, ինչպիսիք են. (1) կոնկրետ աշխարհագրական տեղայնքից դուրս եկած; (2) բնապահպանական տեսանկյունից կայուն միջավայրում արտադրված; (3) արտադրված և շուկա հանված բարեխղճության չափանիշներին համապատասխան[59]; կամ (4) արտադրված համաձայնեցված կարգով: Սովորաբար, ընկերությունը կամ առևտրային կազմակերպությունը սեփականացնում է հավաստագրման նշանն ու նշանի օգտագործման իրավունք է արտոնագրում այն արտադրողներին, որոնք կարող են հավաստել որակի հստակ չափանիշներին ապրանքների համապատասխանությունը և/կամ դրանց որևէ կոնկրետ շրջանում արտադրված լինելը: Հավաստագրման նշանները հնարավորություն են ընձեռում սպառողներին հավատալ բազմաթիվ արտադրողների կողմից արտադրվող ապրանքների որակի, ստեղծման աշխարհագրական տեղայնքի կամ այլ բնութագրերին[60]: Հավաստագրման նշանների համակարգի ներմուծմամբ, որը կարող է օգտագործվել մասնավոր ասոցիացիաների կողմից, երկրները կարող են խթանել շուկայավարման մեջ նորարարությանը և որակի չափանիշների մշակմանը, որոնցից

երկուսն էլ կարող են տեղական բիզնեսներին մեծ եկամուտներ բերել:

*Ինտերնետում պայմանանշանային (դոմենային) անունների պաշտպանություն:* Պայմանանշանային անունը «մարդկանց կողմից դյուրին կիրառելի ինտերնետային հասցեի մի ձև է, որը հեշտ է ճանաչել և հիշել»[61], օրինակ, “delta.com” կամ “pioneer.com”: Էլեկտրոնային առևտրի համաշխարհային մասշտաբով պայթուցիկ աճի արդյունքում, պայմանանշանային անունները օրինական ձեռնարկությունների գործնական միջավայրում ճանաչելիության համար վճռորոշ կարևորություն են ձեռք բերել: Ինչևիցե, որոշ ինտերնետ ապահովողներ միացրել են մրցակիցների կամ հայտնի ընկերությունների ապրանքանիշերը իրենց սեփական պայմանանշանային անուններին, այդպիսով փորձ անելով սեփականացնել այլ ընկերության հեղինակությունը: Պետական իրավական համակարգերը պետք է սպառողներին և ապրանքանիշերի օրինական սեփականատերերին պաշտպանեն իրենց ապրանքանիշերի սխալ պնօրինումից կամ «անօրինական պեղակալվողների» գողություններից, որոնք գրանցում են հայտնի նշանի անուն ընդգրկող պայմանանշանային անուններ հույս ունենալով վերավաճառել պայմանանշանային անունը դրա օրինական սեփականատիրոջը:

*Արդյունաբերական նախագծեր*: TRIPS համաձայնագրի 25-րդ և 26-րդ հոդվածներով ԱՀԿ պետություններից պահանջվում է այնպիսի օրենսդրության ընդունում, որն առնվազն փաս տարով պաշտպանում է նոր և նախօրինակային արդյունաբերական նախագծերը: Նման պաշտպանությունը կիրառելի է միայն արդյունաբերական օբյեկտների նախագծերի ոչ ֆունկցիոնալ բաղադրիչների նկատմամբ: Զարգացող և անցումային երկրները չպետք է շրջանցեն արդյունաբերական նախագծերի պաշտպանությունը, քանի որ դա միջոց է երաշխավորելու իրենց բանվորների ու նախագծողների ամբողջ ներուժի ներդնումը դեպի ՀՆԱ-ն:

*Էլեկտրոնային առևտրին օժանդակող ընդհանուր օրենսդրություն:* Հատուկ ուժի մեջ դրված «էլ.կառավարման օրենդրությունը» կարող է խրախուսել թվային գործարքների կիրառման էլ ավելի տարածմանը հասցպատելով այնպիսի իրավական դաշտ, որը հնարավորություն կընձեռի կառավարությանը, ընկերություններին և անհատներին ինտերնետի կամ էլեկտրոնային կապի միջոցով վստահաբար առաջարկել և վաճառել ապրանքներ և ծառայություններ: 2005 թվականի նոյեմբերի 23-ին, Միավորված ազգերի Գլխավոր ասամբլեյան ընդունեց Միջազգային պայմանագրերում էլեկտրոնային հաղորդակցության միջոցների օգտագործման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան[62]: Այս կոնվենցիան նպատակ է հետապնդում բարձրացնել միջազգային կապերին առընչվող հաղորդակցման էլեկտրոնային տարբերակների կիրառման ճշտությունն ու կանխատեսելիությունը: Փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակի միջոցով որոշվում է էլեկտրոնային գործարքում կողմերից յուրաքանչյուրի գտնման վայրը; առաքման և ստացման ժամանակն ու վայրը; պայմանագրերի կազմման համար ավտոմատ ուղերձային համակարգերի կիրառումը; և էլեկտրոնային տարբերակների և «տպված» փաստաթղթերի միջև ֆունկցիոնալ համապատասխանության հաստատումը: Կոնվենցիան սահմանում է նաև փաստաթղթերի իսկության հավաստման էլեկտրոնային միջոցները:

Եվրոպական միությունը մի շարք հրահանգներ է ընդունել, որոնք ստեղծված են էլեկտրոնային առևտուրն արագ կիրառման մեջ դնելու համար: Այդ հրահանգներն են Էլեկտրոնային ընդհանուր առևտրի մասին հրահանգը[63] և Էլեկտրոնային ստորագրություններին[64] իրավասությունների տրման վերաբերյալ հատուկ օրենսդրությունը որոնցով վարվում են որոշակի թվայնացված ծառայությունների նկատմամբ ԱԱՀ-ի կիրառումը[65] և էլեկտրոնային հաղորդակցումների մեջ տվյալների պաշտպանությունըԵՄ անդամ պետություններն ու անդամակցել ցանկացող երկրները պետք է համապատասխանեցնեն իրենց օրենսդրությունն այս հրահանգների հետ, ինչպես նաև մնացած ԵԱՀԿ երկրները կարող են վերցնել ԵՄ օրինակն իրենց օրենքների նախագծման նպատակով:

## Պետական գնումներ

Կառավարությունների կողմից ձեռք բերված ապրանքներն ու ծառայությունները համաշխարհային ՀՆԱ-ի մեջ մեծ տոկոս են կազմում: Շատ երկրներում կառավարությունն հանդիսանում է ապրանքների ու ծառայությունների ամենախոշոր գնորդը: Ինչևիցե, շատ երկրներում գնումների գործընթացին պակա-

սում է թափանցելիությունն ու այն փակ է օ-տարերկրյա մրցակցության համար: Գնումնե-րի փակ կամ ոչ թափանցելի համակարգերը կարող են նաև խրախուսել կեղծարարությա-նը, անտեղի ծախսմանն ու կաշառակերությա-նը: Չնայած այն դեպքերին, երբ որևէ երկիր, օրենքի սահմաններում կարող է որոշել պայ-մանագրեր կնքել միայն տեղացի մատակա-րարների հետ, օտարերկրյա ընկերություննե-րի դեմ խտրականության վարման ընդհանուր քաղաքականությունը կարող է շատ բասացա-բար ազդել արդյունավետության վրա և սև բիծ դնել օտարերկրյա ներդրումների տե-սանկյունից երկրի հեղինակության վրա:

Միջազգային պայմանագրի միջոցով գնումների մասին օրենքի ներդաշնակեցմանն ուղղված ջանքերը մասնակիորեն են հաջո-ղության հասել: Պետական գնումների[66] մա-սին ԱՀԿ-յան համաձայնագրով պահաջնվում է կենտրոնական և տեղական կառավարման մակարդակներում գնումների կատարման պարագայում օտարեկրյա ընկերությունների դեմ խտրականության բացառում և իրենց կա-նոններում և ընթացակարգերում թափանցե-լիություն: Այդ պայմանագրով կառավարութ-յուններից պահանջվում է սահմանել տեղա-կան ընթացակարգեր, որոնք որոշ երկրներում հայտնի են «արդյունքների բողոքարկում» անվամբ, որոնց իրականացմամբ հիասթափ-ված մատակարարները կարող են վիճարկել ձեռք բերման մասին որոշումներ և բավարա-րել իրենց պահանջը, եթե նման որոշումներով խախտվել են պայմանագրի պայմանները: Ինչևիցե, Պետական գնումների մասին համա-ձայնագիրը (ՊԳՀ) կազմված է որպես բազմա-կողմանի պայմանագիր. ԱՀԿ անդամներից չի պահանջվում պարտադիր կերպով միանալ դրան: Մինչ օրս միայն 28 երկիր, որոնցից 25-ը Եվրոպական միության անդամ երկրներ են, ստորագրել են Գնումների մասին համաձայ-նագիրը: Անդամակցման նպատակով բանակ-ցող ԵԱՀԿ երկրները հետևյալներն են՝ Ալբա-նիան, Բուլղարիան, Վրաստանը, Կիրգիզիայի հանրապետությունը և Մոլդովան: Բացի այդ մի շարք երկրներ հանդիսանում են ՊԳՀի դի-տորդներ, որոնք են Ալբանիան, Հայաստանը, Բուլղարիան, Խորվաթիան, Վրաստանը, Ղրղստանը, Մոլդովան և Ռումինիան:

UNCITRAL-ը նույնպես Ապրանքների, շի-նարարության և ծառայությունների գնումների մասին մոդելային օրենք է մշակել (1994 թվա-կանին)[67], որը բնագավառի միջազգային ամե-նալավ փորձերի կմախքային հավաքածուն է հանդիսանում: Մոդելային օրենքն ընդունում է ընդհանուր կանոն, ըստ որի «մատակարարնե-րին ու կապալառուներին պետք է թույլ տրվի մասնակցել գնումների գործընթացներին ան-կախ նրանց ազգությունից և որ օտարերկրյա մատակարարներն ու կապալառուները չեն դառնա խտրականության առարկա»[68]: Նույն արդյունքին հասնելու համար մոդելային օրեն-քը սահմանում է ընթացակարգեր, որոնք ձևա-վորված են երաշխավորելու, որ առաջարկների հայտեր, վաճառողների նախնական որակա-վորման հրավերքներ և այլն ստանան ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղացի մատակա-րարները: Այնուամենայնիվ, մոդելային օրենքն ընդունում է, որ այնպիսի հանգամանքներում, ինչպիսիք են երկկողմ օժանդակության ծրագ-րերն ու տարածաշրջանային տնտեսական ին-տեգրման բնագավառները, գնումների առըն-չությամբ կարող են պահանջվել ազգության վրա հիմնված սահմանափակումներ: Մոդելա-յին օրենքի Գլուխ VI-ում սահմանվում են գնման գործընթացների վարչարարական և դատական վերանայման ընթացակարգեր, ո-րոնց կիրառումը կարող են պահանջել հիաս-թափված մատակարարներն ու կապալառունե-րը: UNCITRAL-ի մոդելային օրենքն իր ազդե-ցությունն է թողել մի շարք ԵԱՀԿ երկրների օ-րենսդրության վրա, որոնք են Ալբանիան, Ադր-բեջանը, Խորվաթիան, Էստոնիան, Ղազախս-տանը, Ղրղզստանը, Լեհաստանը, Մոլդովան, Ռումինիան, Սլովակիան և Ուզբեկիստանը:

**ՆԵՐԴԻՐ 5.3**

**Էլեկտրոնային գնումների համակարգը Ռումինիայում**

2002 թվականի մարտին Ռումինիայի կա-ռավարությունը հիմնական, ստանդարտաց-ված ապրանքների համար մեկնարկեց ին-տերնետի միջոցով գնումների պետական ծրագիրը: Բոլոր մրցույթների հայտարարութ-յունները, մրցույթների անցկացումն ու առա-ջարկների գնահատումն իրականացվում են ինտերնետի միջոցով: Ընթացիկ և ավարտ-ված մրցույթների ցուցակները, պայմանագիր կնքող պաշտոնյաների անունները և գործար-քի փաստացի գները հասանելի են հանրութ-յանը: Բոլորը գիտակցել են, որ այս համա-կարգի շնորհիվ նվազել են ծախսերը, բարձ-րացել է արդյունավետությունն ու պակասել համակարգում կաշառակերության հնարավո-րությունները:

## *Օրենքի կիրառում և մասնավոր իրավունքների պաշտպանություն*

Սույն գլխի հիմնական մասն առընչվում է օրենսդրության և կանոնակարգերի հետ: Ինչևիցե, արդյունավետ իրավական համակարգը բաղկացած չէ միայն պատշաճ օրենսդրությունից: Իրոք, օրենքների ընդունումը թերևս իրավական ինստիտուտների ձևավորման ոչ այնքան դժվար քայլն է: Առանց արագ գործող և արդյունավետ դատարանի, օրենքների ընդունումը, սեփականության իրավունքներն ու օրենսդրությունը կարող են անարդյունավետ դառնալ և արդյունքում կարող է տուժել տնտեսական զարգացումը:

Իրավունքների և պարտավորությունների կատարման համար արդյունավետ իրավական համակարգերի բացակայության պարագայում էլ է նկատվում տնտեսական ակտիվություն[69]: Երկար ժամանակ միմյանց հետ հաջող առևտուր վարող ընկերությունների միջև ստեղծվում է վստահության վրա հիմնված փոխհարաբերություններ, հետևաբար, ավելորդ է դառնում դատական միջնորդությունը: Շատ պայմանագրեր նաև բանավոր են կնքվում, երբ յուրաքանչյուր կողմ շահում է շարունակական փոխհամագործակցությունից և առևտրի դադարման վախը ստիպում է յուրաքանչյուր կողմին կատարել տրված խոստումները: Հեղինակությունը նույնպես լուրջ դրդապատճառ է կողմերի համար պայմանագրային իրենց պարտավորությունների պատշաճ կատարման առումով, քանզի ոչ ոք չի ցանկանա գործ ունենալ իր խոստումները դրժող ձեռնարկության հետ[70]: Շատ հանգամանքներում այս ոչ ֆորմալ եղանակներն արդյունավետ են: By themselves, however, they do little to facilitate transactions among strangers. Ինչևիցե, դրանք շատ քիչ են նպաստում օտարերկրացիների միջև գործարքների ակտիվացմանը: Իրոք, ինչպես գրել է տնտեսագիտության բնագավառում Նոբելյան մրցանակի դափնեկիր Դուգլաս Ս. Նորթը, պայմանագրերի կատարման ժամանակ անհատի վրա չհիմնվելը կարևոր է քաղաքակիրթ հասարակության համար, որտեղ կան ապրանքների և ծառայությունների մեջ հատուկ մասնագիտացած արտադրողներ, «որովհետև անձնական կապերը (բանավոր պայմանագրեր), և վստահումն այլևս արդյունավետ չեն, քանի որ առաջ են գալիս փոխհարաբերությունների առավել բարդ և անհատականությունից զուրկ ձևեր»[71]:

Լատինական *pacta sunt servanda* («պայմանագրերը պետք է կատարվեն») դարձվածքըհանդիսանում է պայմանագրային իրավունքի հիմնաքարային սկզբունք: Չնայած որ կան բացառություններ անօրինական, կեղծարությամբ կամ փոխադարձ սխալմամբ ստեղված պայմանագրերի համար, կա մի ընդհանուր սկզբունք, որը պարտադիր է պայմանագրի կողմերի համար, և դա առևտրային փոխհարաբերությունների մեջ հստակության և կանխատեսելիության երաշխավորումն է:

Իրավունքների պարտադիր կատարման ֆորմալ մեխանիզմները կարևոր են առողջ տնտեսության համար: Վնասակար է այն մտածելակերպը, ըստ որի համակարգն անարդար է կամ ուղղակի դանդաղ իրականացվող, անարդյունավետ և ծախսատար, և որ անընդհատորեն իրականացվող դատական պաշտպանությունը անհանգստության առարկա չէ: Աղյուսակ 5.1-ում համեմատություն է արվում մի շարք ԵԱՀԿ երկրներում պայմանագրերի կատարման համար պահանջվող ծախսերի և ձգձգումների գործոնների միջև.

**ԱՂՅՈՒՍԱԿ 5.1**

### Պայմանագրերի կատարման ապահովումը Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի ու կենտրոնական Ասիայի երկրներում

Համաշխարհային բանկի Օտարերկրյա ներդրումների խորհրդատվական ծառայությունը (ՕՆԽԾ) յուրաքանչյուր երկրի համար պայմանագրերի կատարման վերաբերյալ մանրամասն տվյալների բազա է վարում: Այլ տվյալների հետ միասին, ՕՆԽԾ-ն հաշվում է պայմանագրային վեճերի լուծման համար օրացույցային կտրվածքով պահանջվող միջին ժամանակահատվածը, դատական կամ վարչական արդարադատության մարմնի համար պահանջվող ծախսերն ու փաստաբանի վճարումն արտահայտված որպես փոխս պարտքի արժեքի նկատմամբ: Ստորև բերված գրաֆիկում ներկայացվում է Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում պայմանագրերի կատարման վիճակագրությունը, որի համար ՕՆԽԾ-ն ունի հասանելի տեղեկատվություն:

| Երկիր | Ժամանակահատված (օրեր) | Ծախս (պարտքի % ) | Երկիր | Ժամանակահատված (օրեր) | Ծախս (պարտքի % ) |
|---|---|---|---|---|---|
| Ալբանիա | 390 | 28,6 | Նախկին Հարավսլավիայի հանրապետություն Մակեդոնիա | 590 | 32,8 |
| Հայաստան | 185 | 17,8 | Մոլդովա | 340 | 16,2 |
| Ադրբեջան | 267 | 19,8 | Լեհաստան | 980 | 8,7 |
| Բելառուս | 225 | 26,7 | Ռումինիա | 335 | 12,4 |
| Բոսնիա և Հերցեգովինա | 330 | 19,6 | Ռուսաստանի դաշնություն | 330 | 20,3 |
| Բուլղարիա | 440 | 14 | Նախկին միություն Սերբիա և Մոնտենեգրո | 635 | 18,1 |
| Խորվաթիա | 415 | 10 | Սլովակիայի հանրապետություն | 565 | 15,0 |
| Չեխիայի Հանրապետություն | 290 | 9,1 | Սլովենիա | 913 | 15,2 |
| Էստոնիա | 150 | 10,6 | Թուրքիա | 330 | 12,5 |
| Վրաստան | 375 | 31,7 | Ուկրաինա | 269 | 11,0 |
| Հունգարիա | 365 | 8,1 | Ուզբեկիստան | 368 | 18,1 |
| Ղազախստան | 380 | 8,5 | | | |
| Կիրգիզիայի Հանրապետություն | 490 | 47,9 | | | |
| Լիտվա | 154 | 9,1 | | | |

**Աղբյուր.** www.doingbusiness.org/ExploreTopics/EnforcingContracts

*Արդյունավետ գործող, անկողմնակալ և անկախ դատարաններ:* Ամենօրյա գործնական կյանքում հաճախ վեճեր են առաջանում: Կողմերն երբեմն չեն համաձայնվում օրենքի, պայմանագրի, փաստաթղթի կամ այլ մեխանիզմի սահմաններում գոյություն ունեցող իրավունքներին և պարտավորություններին, նույնիսկ եթե վերջինները շատ մանրազնին ուսումնասիրվել են: Չնայած որ դատարանները վճռորոշ դեր են խաղում այս վեճերի լուծման խնդրում, նրանց կարևորությունը գերազանցում է առանձին դեպքերի մասին ուղղակիորեն տրված սահմանումներին:

*Վեճերի լուծմանն դատարանների օժանդակությունը չի կարող հավասար լինել լիովին դատարանի լուծում ստացած վեճերին: Դատարանների հիմնական օժանդակությունը…նորմերի և ընթացակարգերի հիմք է ապահովում, որոնց դեմ*

*թե մասնավոր և թե պետական կառույցներում իրականացվում են բանակցություններ և կանոնակարգումներ: Սույն օժանդակությունը ներառում է, բայց դրանով չի սպառվում, տեղեկատվություն դատական գործընթացի հնարավոր կողմերին այն մասին, թե ինչ կարող է առաջանալ, եթե նրանցից մեկը դատարանի կողմից լուծում է պահանջել*[721]

Դատարանների հզորացումը կարող է կառուցվածքային և ընթացակարգային բարեփոխումներ պահաջնել, ինչպես նաև դատարանի կառավարման նոր տեխնիկաներ: Դատական համակարգերի բարեփոխման մասին հիմնական գրականության մեջ մի շարք ընդհանուր կետեր են առաջարկվում.

- Տնտեսական զարգացմանն ուղղված միջավայրի հաստատման մեջ դատավորների դերի առումով ցանկացած ազգի երկարաժամկետ բարգավաճման համար կարևոր է լավ վճարվող և կրթված դատավորներով համալրված անկախ դատական համակարգը:
- Անկողմնակալ դատական համակարգի երաշխավորման համար վճռորոշ է դատավորների ազատումը ընտրված պաշտոնյաների և օրենսդիրների քաղաքական ճնշումներից: Այս խնդրի լուծման մի մասով դատավորներին աշխատանքային կայուն տեղի կարգավիճակ պետք է երաշխավորել, անկախ նրանից, թե վերջիններն ընտրված են, թե նշանակված, վստահեցնելով, որ աշխատանքից կարող են զրկվել միայն լուրջ, հստակ սահմանված պատճառներով:
- Օրենսդրությունն ուսումնասիրության փակ առնելու իրավասություն ունեցող և սահմանադրության խախտման մեջ մեղադրող դատական համակարգը կարևոր ստուգում է քաղաքական այլ ճյուղերի համար:
- Դատական համակարգի էթիկայի օրենսգիրքը պետք է երաշխավորի դատավորների անկողմնակալությունը պահանջելով նրանցից կողք կանգնել (կամ «անմասնակից լինել») այն գործերի դատական լսումներից, որոնցում նրանք շահերի բախում ունեն:
- Դատական վճիռները պետք է տրվեն գրավոր տեսքով, կողմերի փոխըմբռնման մասին բավարար հիմնավորում տալով, ինչպես նաև բողոքարկման հստակ մեկնաբանությամբ: Բացի արտառոց դեպքերից, այս որոշումները պետք է հասանելի լինեն հանրության կողմից ստուգման նպատակով:
- Հատուկ դեպքերի քննման փորձ ունեցող դատարանները, օրինակ, առևտրային կամ մտավոր սեփականությանն վերաբերյալ հարուցված գործերը, կարող են երաշխավորել օրենքի առավել արդյունավետ և հետևողական մեկնաբանումն ու դրա կիրառումը դժվար բնագավառներում:
- Դատարանի կառավարման նոր մոտեցումների շրջանակներում կարող է պահանջվել ազատել դատավորներին ամենօրյա վարչական առաջադրանքների կատարումից, կենտրոնացնել գրասենյակային օժանդակությունը, դատավորների հաճախումը դատարանների կառավարման մասնագիտացված դասընթացին և դատական գործընթացի ավտոմատացումը:

*Վեճերի այլընտրանքային լուծման հնարավորություն* Միջնորդ դատարանը («արբիտրաժ») վեճի լուծման ոչ դատական միջոց է, երբ վերջնական և պարտադիր որոշման համար կողմերը դիմում են կամ մի քանի անկողմնակալ անձանց: Միջազգային վեճերի լուծման առումով միջնորդ դատարանը նախընտրելի տարբերակ է մի շարք պատճառներից ելնելով.

1) Այն մասնավոր և գաղտնի գործընթաց է;

2) IԱյն թույլ է տալիս կողմերին իրենց վեճերի լուծման համար ընտրել հատուկ անհրաժեշտ կրթություն ստացած անձանց;

3) Արբիտրաժային ընթացակարգն ընդհանրապես առավել ճկուն է, քան դատականը և կարող է կառուցվել այն կերպ, որպեսզի բավարարի կողմերի հատուկ պահանջները;

4) Փաստորեն, արբիտրաժային որոշումներն ենթակա չեն բողոքարկման և վերջնական ու պարտադիր են, բացառությամբ արտառոց իրավիճակների;

5) Արբիտրաժը կարող է առավել արագ և ավելի էժան գնով կապարվել, քան դատական ընթացակարգերը;

6) Արբիտրաժն իրականացվում է օտարերկրյա կողմին հանդիպող անհավասարությունը նվազեցնելու նպատակով;

7) Այն դեպքերում, երբ վեճերից մի կողմը հանդիսանում է պետությունը, ի շնորհիվ արբիտրաժի նվազում է կողմ հանդիսացող պետության հնարավորությունը ճնշում գործադրելու վեճի լուծման նկատմամբ;

8) Մի շարք արբիտրաժային համաձայնագրերի արդյունքում վերջինս ստորագրած երկրներում ներկայումս լրիվ դատական կարգով պարտադիր կատարման առարկա են հանդիսանում արբիտարաժային որոշումները:

Անկախ այն պատճառներից, թե ինչու են միջազգային գործարքների մեջ ընդգրկված կողմերը հաճախ նախընտրում արբիտրաժը, որպես վեճերի լուծման եղանակ, որոշ կառավարություններ չեն խրախուսում վեճերի լուծման մասնավոր մեխանիզմները: Արբիտրաժի նկատմամբ նման թշնամությունն արտահայտվում է մի շարք ձևերով, ներառյալ, արբիտրաժային գործելակերպերի պարտադիր ընթացակարգերը թելադրող կանոնակարգերը կամ արբիտր դառնալ ցանկացողների ցանկի սահմանափակումը, և օրենքները, որոնք թույլ են տալիս դատարանին «մերժել կանգնեցնել արբիտրաժային պայմանագրի խախտմամբ սկսված դատական ընթացքը, եթե դատարանը հավատում է, որ «կա բավարար պատճառ» ինչի համար դատական ընթացքը չպետք է անցնի արբիտրաժայինի իրավասության տակ»[73]: Արբիտրաժի հասանելիության և արդյունավետության նկատմամբ սահմանափակումները խոչընդոտում են օտարերկրյա ներդրումներին և տեղական ընկերությունների միջազգային պայմանագրերի կնքմանը, երբ վերջիններս ցանկանում են արտահանել իրենց արտադրանքն ու ծառայությունները կամ համագործակցել անդրազգային կորպորացիաների կորպորացիաների եետ:

Ընդհանրապես պետությունները պետք է թույլ տան մասնավոր կողմերին լուծել իրենց առևտրային վեճերը արբիտրաժի միջոցով հնարավորինս քիչ սահմանափակումների առկայությամբ: Պետությունները, եթե դեռ ոչ, ապա պետք է նաև դիտարկեն Այլ պետությունների և այլ պետությունների քաղաքացիների հետ ներդրումային վեճերի կարգավորման մասին կոնվենցիայինի[74] իրենց միացումը, որը սահմանում է օտարերկրյա ներդրողների և իրենց կողմից ներդրում կատարած երկրների կառավարությունների միջև ծագած վեճերի արբիտրաժային ընթացակարգըՀաճախ, այն երկկողմ ներդրումային համաձայնագրերի մեջ վեճերի լուծման նախընտրելի տարբերակն է: Բացի այդ երկրները պետք է դիտարկեն Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և պարտադիր կատարման 1958 թվականին Նյու Յորքում ընդունված կոնվենցիային (հայտնի է որպես Նյու Յորքյան կոնվենցիա) ստորագրումը: Որոշակի բացառություններից զատ, Նյու Յորքյան կոնվենցիայով անդամ երկրներից պահանջվում է հարգել այլ երկրներում կայացված արբիտրաժային որոշումները:

Ի հավելումն արբիտրաժի, վեճերի լուծման մյուս այլընտրանքային ձևերն են միջնորդությունն ու հաշտեցումը: Այս տերմինները հաճախ իրար փոխարեն են օգտագործվում և դրանք երկուսն էլ վերաբերում են այն դեպքերին, երբ բախման կողմերը փորձում են ծագած անհամաձայնությանը լուծում տալ արտադատարանական եղանակով: Հաշտեցումը սովորաբար ձեռնարկում է (ինչպես և միջնորդությունը) միջնորդը, ով օժանդակում է վեճի լուծմանը: Ի տարբերություն արբիտրաժի, այս ընթացակարգերով փորձ է արվում լուծում տալ վեճին առանց որևէ կողմի պահանջների, վիճարկումների կամ պաշտպանությունների: Այն երկրները, որտեղ խրախուսվում են վեճերի այլընտրանքային լուծման այս բոլոր տեսակները կարող են ազատել իրենց դատարաններին ավելի ու ավելի ծանրացող բեռից և այդպիսով թույլ տալ առավել շատ տնտեսական միջոցների տրամադրումը իրապես արդյունավետ աշխատանքներին ծախսատար և ժամանակատար դատական գործընթացների փոխարեն:

## *Երկկողմ ներդրումային համաձայնագրեր*

Միջսահմանային ներդրումները խթանելու ճանապարհին երկրները պետք է իրենց առևտրային գործընկերների հետ էլ առավել շատ երկկողմ (կամ բազմակողմ, տարածաշրջանային) համաձայնագրեր կնքեն: Պարտադիր կատարման ենթակա այս միջազգային պայմանագրերը կազմված են մեկ կողմ հանդիսացող պետության տարածքում մյուս կողմ հանդիսացող պետության ներդրողի պաշտպանության համար: Դրանք սովորաբար նե-

բառում են դրույթներ, որոնք արտացոլում են սույն գլխում[75] բացահայտված սկզբունքներից մի քանիսը. (1) խտրականության բացառում օտարերկրյա ներդրողի նկատմամբ վերաբերմունքի մեջ; (2) օտարերկրյա ներդրողի նկատմամբ «արդար և հավասար վերաբերմունք»; (3) կատարման պահանջների վերացում; (4) կապիտալի և շահույթի անսահմանափակ փխանցում հայրենիք; (5) միջազգային իրավական չափանիշների վրա հիմնված սեփականությունից զրկման դեմ պաշտպանություն, ներառյալ գույքի արդար շուկայական գնի փոխհատուցումը; և (6) վեճերի լուծում երրորդ կողմ արբիտրաժի ընդգրկմամբ: Նման համաձայնագրերը կարող են բարձրացնել ներդրումների ներհոսքը և դրանց միանալու վերաբերյալ պետք է լրջորեն մտածեն այն երկրները, որոնք ցանկանում են խթանել տնտեսական զարգացմանը:

## Եզրահանգումներ և առաջարկություններ

Տնտեսական հաջող զարգացման ռազմավարության շատ փարրեր իրարից փոխադարձ կախվածության մեջ են գտնվում և ռազմավարության զանազան բաղադրիչների անհամաչափ շեշտադրումները կարող են վնասել դրա ամբողջական արդյունավետությանը: Սա իհարկե ճիշտ է իրավական համակարգերի համար, որոնցում ոչ-իրավական գործոնները, ինչպիսիք են պատմությունը, մշակույթը, կրթությունը և ֆինանսական աղբյուրները կարող են բացասաբար ազդել օրենքի գերակայության, դրա ընդունման և դրան կամավոր միացման վրա: Ավելին, հուսալի իրավական հիմքերը, ինչպիսիք են գույքին առընչվող հիմնական կանոնները; պայմանագրերը; քաղաքացիական, տնտեսական և քաղաքական ազատությունները, և արդարադատության նկատմամբ հասանելիությունը, անհրաժեշտ են առավել նեղայնացված իրավական համակարգերի պատշաճ աշխատանքի համար, օրինակ, այնպիսի համակարգերի, որոնք կառավարում և ոռոնցով գործում են ֆոնդային բորսաները: Օրենքների և կանոնակարգերի մեկ խմբի ուժեղ և թույլ կողմերը նույնպես կարող են ուղղակի ազդեցություն ունենալ օրենսդրության գործունեության վրա այլ քննարկման թեմաների բնագավառներում: Այս բոլոր պատճառներից ելնելով, հազվադեպ է խելամիտ կամ արդյունավետ համարվում վերցնել մեկ երկրի օրենքներն ու պարտադրել դրանք այլ երկրի վրա առանց տեղական պայմանները հաշվի առնելու; Այնուամենայնիվ, փաստերը մատնանշում են իրավական համակարգերին փիպիկ մի քանի բնութագրերի վրա, որոնք կարող են նպաստել ԵԱՀԿ տարածաշրջանի տնտեսական աճին:

*Գույքային և պայմանագրային իրավունքներ*

- Սահմանափակել պետության կողմից գույքի սեփականության իրավունքից զրկման իրավասությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գույքն ենթակա է պետական նպատակների համար օգտագործման:
- Հստակորեն սահմանել սեփականությունից զրկման այն տեսակները, որոնց դիմաց պետք է վճարել փոխհատուցում:
- Բռնազանձված գույքի սեփականատիրոջը տրամադրել պարտադիր փոխհատուցում այն չափով, որն արդար է համարում սեփականատերը:
- Նախատեսել անկախ մարմին, որն իրավունք ունի վերանայել, և, անհրաժեշտության դեպքում, փոխել պետական գերատեսչության սեփականությունից զրկման և սեփականությունից զրկված սեփականատիրոջը փոխհատուցում տալու վերաբերյալ որոշումները:
- Առևտրային գործարքներում թույլ տալ պայմանագրերի լիովին ազատ կնքում:

*Վարչական բարեփոխում*

- Դիտարկել «վարչական գիլիոտին» անվամբ գործընթացը կուտակված կանանակարգերի վերացման նպատակով:
- Կիրառման մեջ դնել կանոնակարգիչ ազդեցության գնահատման ընթացակարգը նոր կանոնակարգերի մշակման ժամանակ:

*Առևտրային, կորպորատիվ և արժե*

- Ապահովել կազմակերպա-իրավա
ընտրել իրենց իրավիճակին հարմ
կան մարմինները, ինչպիսիք են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություննե-րը, և նաև բիզնեսի վարման պայմանագրային ձևերը, ինչպիսիք են ֆրենչայզինգային փոխհարաբերությունները:
- Համապատասխանեցնել օրենսդրությունը ՏՀԶԿ Կորպորատիվ կառավարման սկզբունքներին:

- Կապիտալի շուկայի ձևավորման ժամանակ գործի դնել ինքնա-կանոնակարգող կազմակերպություններ, որոնք կկատարեն միջնորդների և արժեթղթերի հետ աշխատող այլ մասնագետների աշխատանքների վերահսկում:
- Ստեղծել մեխանիզմներ ներդրողներին և արժեթղթերին առընչվող հայցերի արդյունավետ դատավարության համար:

*Վարկատուների իրավունքները*

- Սահմանել հստակ կանոններ և կատարել ճշգրիտ գրանցումներ թե հողի և թե շարժական գույքի մեջ վարկատուների գրավադրման իրավունքների արձանագրման համար:
- Երաշխավորել, որպեսզի օրենսդրության շրջանակներում հնարավոր դառնա մտավոր սեփականության, հաշիվների և այլ ոչ նյութական ակտիվների գրավադրումը վարկեր ստանալու համար:
- Ինչպես հարկն է իրականացնել UNCITRAL –ի Անվճարունակության մասին օրենքի օրենսդրական Ուղեցույցի առաջարկությունները:

*Բանկային օրենք և քաղաքականություն*

- Համապատասխանեցնել օրենսդրությունը Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի Բանկային արդյունավետ վերահսկման հիմնական սկզբունքների հետ:

*Դրամական խնդիրներ*

- Հնարավորինս վերացնել արտաարժույթային կարգավորումը:
- Օտարերկրյա ներդրողներին ազատ թույլատրել հայրենիք փոխանցել իրենց կապիտալն ու շահույթները հարկերի վճարումից հետո:

*Մրցակցային օրենք և քաղաքականություն*

- Հստակորեն սահմանել մրցակցային օրենքների հիմնավորումները: Սովորաբար, տնտեսական արդյունավետությունն ու սպառողների բարեկեցության առավելագույն աստիճանի բերումը մրցակցային քաղաքականության ամենաբարձրագույն նպատակներից են:
- Հանրությանը կրթել և խթանիչ քարոզարշավներ վարել մրցակցային մշակույթ սերմանելու նպատակով:
- Հնարավորություն ստեղծել, որպեսզի մրցակցային օրենքն ու քաղաքականությունը ներկայացվեն մանրազնին տնտեսական վերլուծությունների միջոցով, այլ ոչ տնտեսական գործունեության վրա բացասական ազդեցության չափազանց շաբլոնային կամ օրենսդրական պեսությունններով:
- Մրցակցային օրենքը կարգավորող գերատեսչությունների կողմից ուսումնասիրման նպատակով միավորումների և ձեռք հայտերի ներկայացման համար նվազագույն պայմանները պետք է բավական բարձր լինեն գրավելու շուկայական իշխանության միայն իրապես նշանակություն ունեցող պոտենցիալ համակենտրոնացումները և խուսափելու ուսումնասիրող գերատեսչության չափազանց ծանրաբեռնումը:

*Մտավոր սեփականություն և էլեկտրոնային առևտուր*

- Համապատասխանեցնել պետական օրենսդրությունն TRIPS-ի չափանիշներին: Պետք է ուշադրություն դարձնել հստակորեն սահմանելու արտոնագրերի, հեղինակային իրավունքների և այլ օրենքների սահմաններում պաշտպանության տակ չընկնող բոլոր բացառությունները:
- Ջանալ հասնելու արտոնագրերի ստուգման գործընթացի մեջ բարձր որակի դրա համար տրամադրելով անհրաժեշտ միջոցներ և աշխատակազմ:

- Անցկացնել հանրային իրազեկության բարձրացման և կրթական ծրագրեր ՄՍԻ-ի նկատմամբ հարգանք ստեղծելու և օրենքի խախտման ծանրությունը որպես հանցագործություն և/կամ քաղաքացիական իրավազանցում դիտարկելու նպատակով:
- Անցկացնել դասընթացներ և կրթական ծրագրեր դատավորների և օրենսդիրների համար, որպեսզի նրանք կարողանան հավուր պատշաճի աշխատել ՄՍԻ-ին առնչվող թե իրավական և թե տեխնիկական ուղղություններում:
- Ստեղծել մտավոր սեփականության մասին օրենսդրության կատարումն ապահովող միավորներ ստուգումներ, բռնագրավումներ և առևտրային հապշտակումների դեպքերում բռնագանձումներ իրականացնելու համար:
- Դիտարկել մտավոր սեփականության համար հատուկ դատարանների կամ արբիտրաժային հաստատությունների ստեղծումը:

*Կառավարության գնումները*

- Դրամական որոշակի ծավալից ավել արժեք ունեցող գնումներն ենթակա են պարտադիր մրցակցային գնագոյացման և միջնորդությունները, նախընտրելի է ինտերնետի միջոցով, պետք է հրապարակվեն լայն հասարակության համար:
- Գմնան գործընթացը պետք է թափանցիկ լինի, առաջարկների համաձայն բողոքարկման և գնման մասին որոշումների անկախ դիտարկման հնարավորությամբ:
- Մրցակցային գնագոյացումը պետք է բաց լինի օտարերկրյա ընկերությունների համար: Այս չափանիշի նկատմամբ բացառությունները պետք է խիստ սահմանափակ լինեն, հստակորեն սահմանված և հիմնավորված հատուկ, կարևոր պետական քաղաքականություններով:

*Պայմանագրերի կատարում և այլ մասնավոր իրավունքներ*

- Նախաձեռնել կառուցվածքային, ընթացակարգային և կառավարման բարեփոխումներ, որոնք անհրաժեշտ են անկախ, արդյունավետ և արհեստավարժ դատական համակարգերի ստեղծման համար:
- Վերացնել արբիտրաժի հասանելիությանն ու առևտրային դեպքերում դատական կարգով պարտադիր կատարման արբիտրաժային որոշումներին խոչընդոտող բոլոր ոչ անհրաժեշտ սահմանափակումները:
- Օժանդակել և խթանել վեճերի լուծման բոլոր ձևերի կիրառումը (ներառյալ միջնորդություն և հաշտեցում) որպես դատական գործընթացի այլընտրանքներ:

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ՏՀԶԿ, *Ռուսաստանի մրցակցային օրենսդրության և քաղաքականության փորձագիտական անկախ գնահատական* (2004), <http://www.oecd.org/dataoecd/10/60/32005515.pdf>

ՏՀԶԿ, *Եվրոպական Միության մրցակցային օրենսդրության և քաղաքականության փորձագիտական անկախ գնահատակս*

Մեդս Աղենաս և Ջերարդ Սանդերս, *Ա*
*պարման ապահովում. Պայմանագ*
*րոնական Եվրոպայում և Անկախ պետությունների Համագործակցությունում* (Լոնդոն: ՎԶԵԲ և Միջազգային և համեմատական օրենսդրության Բրիտանական ինստիտուտ, 2005).

Արժույթի միջազգային հիմնադրամ և Համաշխարհային բանկ, *Արդյունավետ բանկային վերահսկողության նպատակով բազելյան հիմնական սկզբունքների իրականացում. Փոր-*

*ձեր, ազդեցություններ և հեռանկարներ* (2002), <http://www.imf.org/external/np/mae/bcore/2002/092302.pdf>

Մտավոր սեփականության իրավունքների ՄԲ հանձնաժողով, *Մտավոր սեփականության իրավունքների և զարգացման քաղաքականության ինտեգրացում* (2002), <http://www.iprcommission.org/graphic/documents/fi nal_report.htm>

Իեյմս Բարթ, Ջերարդ Կապրիո կրտսեր և Ռոս Լեվին, *Բանկային գործունեության կանոնակարգում և վերահսկողություն. Ի՞նչ գործում լավագույնս.*, Համաշխարհային բանկի քաղաքականության հետազոտման աշխատանքային փաստաթուղթ 2725 (2001), <http://www-wds.worldbank.org/servlet/WDSContentServer/WDSP/IB/2002/01/17/000094946_01120104231862/Rendered/PDF/multi0page.pdf>

Օլենա Անտոյուկ և Ուիլիամ Կեր, «ԱՀՄՍԻ (TRIPS) պարտավորությունների կատարումը Ուկրաինայում. ԱՀԿ անդամակցության կարևորագույն նախապայմանները», 8 Journal of World Intellectual Property 271 (2005):

Ռաֆաել լա Պորտա, Ֆլորենցո Լոպես-դե-Սիլան, Անդրեյ Շլեյֆեր և Ռոբերտ Վիշնի, *Արտաքին ֆինանսավորման իրավական որոշիչները,* ՏՀԱԲ (NBER) Աշխատանքային փաստաթուղթ 5879 (Հունվար 1997):

**ՀՂՈՒՄՆԵՐ**

---

[1] Տես՝ Ռաֆաել լա Պորտա, Ֆլորենցո Լոպես-դե-Սիլան, Անդրեյ Շլեյֆեր և Ռոբերտ Վիշնի, *Արտաքին ֆինանսավորման իրավական որոշիչները,* ՏՀԱԲ (NBER) Աշխատանքային փաստաթուղթ 5879 (Հունվար 1997)

[2] Տես՝ Դուգլաս Նորթ, "Ինստիտուտներ", 5 *The Journal of Economic Perspectives* 97 (1991): «Կապիտալի շուկան ենթադրում է գույքային իրավունքների պաշտպանությունը երկարաժամկետ կտրվածքով և պարզապես չի կարող զարգանալ, եթե քաղաքական իշխանությունը հնարավորություն ունենա բռնագանձել գույքը կամ նշանակալից կերպով ազդել դրա արժեքի փոփոխման վրա: Երկարաժամկետ հեռանկարում գույքային իրավունքների պաշտպանության ապահովման մեխանիզմի ստեղծումը պահանջում է, որպիսզի հարկադիր միջոցառումներ իրականացնելիս իշխանությունը դրսևորի զսպվածություն կամ որպիսզի իշխանության լիազորությունները սահմանափակվեն գույքի կամայական բռնագանձման բացառման նպատակով:»

[3] Համաշխարհային բանկի զարգացման զեկույց *2005: Բնակչության բոլոր շերտերի շահերին համահունչ ներդրումային միջավայրի բարելավում,* գլուխ. 4, "Կայունություն և անվտանգություն", <http://siteresources.worldbank.org/INTWDR2005/Resources/06_WDR_PO2_Ch04.pdf>

[4] Միքայել Փարիսի, «Դեպի թափանցելիությու՞ն: Միջազգային իրավունքում վարչական բռնագանձումների հետազոտություն», 19 *Emory International Law Review* 383 (2005).

[5] Որպես օրինակ կարելի է բերել Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի կոլեգիայի կողմից արված ձևակերպումը, որը մասամբ հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի փորձի վրա. «Պետության կողմից ընդունված կարգավորող կամ այլ բնույթի միջոցառումները փաստացի հանդիսանում անուղղակի բռնագանձում եթե դրանք ունեն անշրջելի և մշտական բնույթ և եթե դադարել է այդ միջոցառումների թիրախ հանդիսացող գույքի կամ գույքային իրավունքների ցանկացած ձևով օգտագործման հնարավորությունը, այսինք սառեցվել կամ ոչնչացվել է դրա օգտագործման, տնօրինման և/կամ տիրապետման փաստացի հնարավորությունը: Համաձայն միջազգային իրավունքի սեփականատերը համարվում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքից զրկված եթե այն զրկված է այդ գույքից օգուտների ստացման հնարավորությունից կամ այդ հնարավորությունները սահմանափակվել են, անգամ եթե այդ գույքի նկատմամբ փաստացի գույքային իրավունքները խաթարված չեն:Կառավարության մտադրությունը սակավ նշանակություն ունի, քան գույքի սեփականատիրոջ կամ դրանցից օգուտ ստացողների համար միջոցառումների հետևանքները, և զրկման ձևը այդքան կարևոր չէ որքան դրա փաստացի արդյունքը:» «Tecnicas Medioambientales Tecmed S.A. ընդդեմ Մեքսիկայի միացյալ նահանգների» գործով դատավ-

ճիռ համար ARB (AF)/00/2 (ՆՎԿՄԿ 2003), <http://www.worldbank.org/icsid/cases/laudo-051903%20-English.pdf>

Տես նաև: «Բիլունը ընդդեմ Գանայի ներդրումային կենտրոնի», 95 *International Law Reports* 1830 (1989); «International Technical Products Corp ընդդեմ Իրանի իսլամական հանրապետության», 9 *Iran-U.S. Claims Tribunal Reports* 206 (1985); «Տիպետսը, Աբբերտը, ՄքԿարտին, Ստրատոնը ընդդեմ TAMS-AFFA Consulting Engineers of Iran», 6 *Iran-U.S. Claims Tribunal Reports* 219 (1984); և «ITT Indus. ընդդեմ Իրանի», 2 *Iran-U.S. Claims Tribunal Reports* 348 (1983).

[6] Ելենա Սուիր, «Լավ մտադրություններ և վատ հետևանքներ. Ինչպես չափազանց կարգավորումը խաթարեց Ուզբեկստանի տնտեսական աճը», Մասնավոր ձեռնարկատիրության միջազգային կենտրոնի Տնտեսական բարեփոխումների հատուկ ծառայություն (29 Հունվար 2004), <http://www.cipe.org>

[7] Տես նույն աղբյուրը.

[8] <http://www.asycuda.org>

[9] Ռասսել Մյուր և Քսիոֆանգ Շեն, *Հողի շուկան. ներդրողների կողմից հողի և անշարժ գույքի նկատմամբ հասանելիության բարելավում*, (ՕՆԽԾ, Համաշխարհային բանկ, Հոկտեմբեր 2005) <http://www.bdsknowledge.org/dyn/be/docs/77/Session3.1Shen-MuirDoc.pdf>

[10] Դեյվիդ Սթենֆիլդ, *Անցումային տնտեսություններում հողի շուկայի ձևավորումը. հողերի կառավարում իրականացնող կազմակերպությունների համար հնարավոր հետևանքներ*, Աշխատանքային փաստաթուղթ համար 29 (Հողօգտագործման կենտրոն, Վիսկոնսին-Մեդիսոնի Համալսարան 1999).

[11] Թերենս Դեյնտիթ, «Պայմանագրային դիսկրեցիոն և վարչական դիսկրեցոն իրավունք: Վերլուծություն» 68 *Modern Law Review* 554 (2005).

[12] «Մասնավոր իրավունքի միասնականացման միջազգային ինստիտուտի (UNIDROIT) Միջազգային առևտրային համաձայնագրերի սկզբունքները» (1994): «Պայմանագրային ազատության իրավունքը առաջնային կարևորություն ունի միջազգային առևտրի ենթատեքստում» <http://www.unidroit.org/english/principles/blackltr.pdf >

[13] Օրինակի համար, Եվրոպական պայմանագրային իրավունքի սկզբունքների Հոդված 1:102(1)-ը, որը կոչվում է «Պայմանագրային ազատություն», հռչակում է, որ «կողմերը ազատ են պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու և դրանց բովանդակությունը որոշելու», այդ ազատությունը ուղղակիորեն «պայմանավորված է պատշաճ և ազնիվ գործարար թէիկայի պայմաններով, ինչպես նաև սույն Նորմերի իմպերատիվ սկզբունքներով»:
<http://www.jus.uio.no/lm/eu.contract.principles.parts.1.to.3.2002/1.102>

[14] Բելառուսի Նախագահի հրամանագիր համար 373 (15 Օգոստոս, 2005,) «Բելառուսում պայմանագրեր կնքելու և պարտավորությունները կատարելու որոշ հարցերի վերաբերյալ»:

[15] Բորիս Կազոլովսկի և Դիթեր Թալիամեր, Ավստրիա: «Մեքենաների վաճառքի գործակալ ընդդեմ պատասխանող ներկայացուցչի – մրցակցային օրենսդրություն և արբիտրաժային վերապահում», 8 *International Arbitration Law Review* N1-3 (2005).

[16] Ուիլիեմ Բիտեր, Ինչ դասեր են քաղվել կենտրոնական և արևելյան Եվրոպայի անցումային ժամանակաշրջանի 15 տարվանից (Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրո, 2004), <http://www.nber.org/~wbuiter/vietnam.pdf>

[17] *ՏՀԶԿ Կորպորատիվ կառավարման սկզբունքները* (2004), <http://www.oecd.org/dataoecd/32/18/31557724.pdf>

[18] Բաժնետիրական ընկերությունների մասին օրենք (համար.1134-XIII), ընդունված 2 Ապրիլ, 1997 թ.-ին, <http://www.law-moldova.com/laws/emg/lawon-joint-stock-companies-english.htm>

[19] Ալան Բաթի, «Աֆրբեջանում կորպորատիվ կառավարման բարեփոխումներ», Եվրասիայում կորպորատիվ կառավարման ՏՀԶԿ հանձնաժողովի 5րդ հանդիպում, <http://www.oecd.org/dataoecd/5/27/3>

[20] <http://www.nbs.yu/english/regulations/2_1_7e.pdf>

[21] Հայաստանի Հանրապետության օրենքը «Բաժնետիրական ընկերությունների մասին», հոդված 85(5), <http://www.armex.am/en/regulation/l_en_JSCL.pdf>

[22] <http://www.ebrd.com/country/sector/law/st/about/prin/index.htm>

[23] ՎԶԵԲ, «Դեպի սնանկության միջազգային ստանդարտներ. Համաշխարհային բանկի աջակից դերը, անցումային շրջանի օրենսդրություն», *Insolvency law and practice* (գարուն 2000), <http://www.ebrd.com/pubs/legal/4330c.pdf>

[24] <http://www.uncitral.org/pdf/english/texts/insolven/05-80722_Ebook.pdf>

[25] Օրենսդրական հանձնաժողովի հաշվետվությունհամար 52, *Միջսահմանային անվճարունակություն: Արդյո՞ք Նոր Զելանդիան պետք է ընդունի UNCITRAL-ի մոդելային օրենքը միջսահմանային անվճարունակության մասին* (1999), <http://www.iiiglobal.org/country/newzealand/New_Zealand_Report_Should.pdf>

[26] «Մրցութային կառավարիչների լիցենզիաների փրման երկրորդ ռաունդ» (Սերբիայի Հանրապետության կառավարության մամլո հաղորդագրություն, 25 Հոկտեմբեր 2005), <http://www.srbija.sr.gov.yu/vesti/vest.php?id=17200և q=bankruptcy>

[27] Լոս Լեվին և Սառա Զերվոս, «Արժեթղթերի շուկա, բանկեր և տնտեսական աճ», 88 *American Economic Review* 537 (1998).

[28] Արժեթղթերի շուկայի կանոնակարգման մասին սույն գլխում նշված լավագույն փորձը վերցված է Հյուգո Նեմիրովսկու և Ջես Ռայթի աշխատությունից, Լատինական Ամերիկայում և Կարիբներում արժեթղթերի շուկայի կանոնակարգմանն առնչվող խնդիրներ (Միջ-Ամերիկյան զարգացման բանկ, 1996), <http://www.iadb.org/sds/publication/publication_23_e.htm#2>

[29] <http://www.bis.org/publ/bcbs30a.pdf>

[30] Տես` Ջեյմս Բարթ, Ջերարդ Կապրիո կրտսեր և Ռոս Լեվին, Բանկային գործունեության կանոնակարգումն և վերահսկողությունը. ի՞նչն է առավել արդյունավետ: Համաշխարհային բանկի քաղաքականության հետազոտման աշխատանքային փաստաթուղթ 2725 (2001), <http://www-wds.worldbank.org/servlet/WDSContentServer/WDSP/IB/2002/01/17 /000094946_01120104231862/Rendered/PDF/multi0page.pdf>

[31] Կիպրոսի Հանրապետության բանկային օրենք (համար 66(I), 1997թ.), <http://www.centralbank.gov.cy/media/pdf/BCLWE_BANKINGLAW.pdf>

[32] Իերեմի Գրինվուդ և Քենտ Կիմբրու, «Արտարժույթի վերահսկման պեսության ուսումնասիրություն», 20 *The Canadian Journal of Economics* 271 (1987).

[33] Ջոն Հեդ, «Սկսելով հիմքերից. անցումային տնտեսություններում ֆինանսական համակարգերի ամրապնդում», 18 *Transactional Lawyer* 257 (2005).

[34] «Մրցակցային օրենսդրությունը և մտավոր սեփականության իրավունքներն», ՏՀԶԿ փաստաթուղթ համար DAFFE/CLP (98) 18 (21 Սեպտեմբեր 1998).

[35] Կասեյ Լի, «Մրցակցային մոդելային օրենքներ. Համաշխարհային բանկի, ՏՀԶԿ և ՄԱԱԶՀ մոտեցումների համեմատություն» (10 Օգոստոս 2004), <http://www.competition-regulation.org.uk/conferences/southafrica04/lee.pdf>

[36] Տես`«Մրցակցության մասին օրենքի մշակման և իրականացման համար նախապայմաններ» (Համաշխարհային բանկ և ՏՀԶԿ, 1999), <http://rru.worldbank.org/Documents/PapersLinks/2427.pdf>

[37] Օրինակի համար տես` «Մրցակցության պաշտպանության մասին» բուլղարիայի օրեն, Հոդված 24, հրապարակվել է SG համար 52/1998, փոփոխություններով, SG 112/1998, 81/1999, 28/2002, 9/2003 և 107/2003,

<http://www.cpc.bg/system/storage/zak_en_1_119.doc>;

Հոդվածներ 10-11, «Մրցակցության պաշտպանության մասին»թուրքական օրենք, համար. 4054, ընդունված է 7 Դեկտեմբեր 1994, <http://www.rekabet.gov.tr/word/ekanun.doc>

38 Օրինակի համար տես՝ Ռուսաստանի Դաշնության համար 147-Фզ օրենք «Բնական մենաշնորհների մասին», 17 Օգոստոս 1995 (8 Օգոստոսի և 30 Դեկտեմբերի 2001թ.-ի փոփոխություններով), <http://www.fas.gov.ru/english/legislation/5414.shtml>

39 Մեյթ Մասկուս, «Մտավոր սեփականության իրավունքներն ու Օտարերկրյա ուղղակի ներդրումները», Միջազգային տնտեսական ուսումնասիրությունների կենտրոն, Քաղաքականության բանավեճի փաստաթուղթ համար 0022,
<http://www.adelaide.edu.au/cies/papers/0022.pdf>

40 Տես՝ Էդվին Մանսֆիլդ, «Մտավոր սեփականության պաշտպանություն, Օտարերկրյա ուղղակի ներդրումներ և տեխնոլոգիաների փոխանցում», ՄՖԿ քննարկման փաստաթուղթհամար 19 (1994),
<http://www.bvindecopi.gob.pe/colec/emansfield.pdf>

41 <http://www.wto.org/english/tratop_e/trips_e/t_agm0_e.htm>

42 TRIPS համաձայնագրի պայմաններին համապատասխանելու նպատակով ԵԱՀԿ երկրների կողմից վերջերս գործադրված ջանքերը, տես Օլենա Անտոնյուկ և Ուիլիամ Կեր, «Ուկրաինայում TRIPS համաձայնագրի մասով սպանձնած պարտավորությունների կատարում, կարևոր քայլ ԱՀԿ անդամակցության ճանապարհին», 8 *Journal of World Intellectual Property* 271 (2005).

43 Տես՝ *Մտավոր սեփականության իրավունքների և զարգացման քաղաքականության ինտեգրում* (Մտավոր սեփականության հարցերով ՄԲ հանձնաժողով 2002),
<http://www.iprcommission.org/graphic/documents/fi nal_report.htm>

44 ԵՀ կանոնակարգ համար 772/2004 (27 Ապրիլ 2004) Համաձայնագրի Հոդված 81(3)-ի կիրառումը տեխնոլոգիաների փոխանցման մասին պայմանագրերում, ԵՀ Կանոնակարգ 772/2004, OJ 2004 L123/11.

45 Հանձնաժողովի նշումներ. Տեխնոլոգիաների փոխանցման մասին պայմանագրերում Համաձայնագրի Հոդված 81(3)-ի կիրառման Ուղեցույց, OJ 2004 C101/2.

46 <http:// www.usdoj.gov/atr/public/guidelines/ipguide.htm>

47 TRIPS Հոդված 27.1.

48 <http://www.uprp.pl/Formularze/ustawa2000_gb.doc>

49 Որոշ երկրներում օգտակար մոդելները պաշտպանված են փոքր կամ նորարարական պատենտներով:

50 Մտավոր սեփականության հարցերով Հանձնաժողով, Կլոր սեղան 1, «Տեխնոլոգիա, զարգացում և Մտավոր սեփականության իրավունք»,
<http://www.iprcommission.org/papers/text/workshops/workshop1.txt> Դր. Նագեշ Կումարի եզրակացությունների կապակցությամբ ասվում է. «Երկրորդ մակարդակի համակարգերը խթանել են տեղական ընկերությունների կողմից փոքր գյուտերի և կատարելագործումների իրականացումը: Հետագայում մտավոր սեփականության պաշտպանության համակարգերը սկսեցին կատարելագործվել, մասամբ ի հաշիվ տեղական տեխնոլոգիական ներուժը բավականաչափ զարգացավ նշանակալից քանակության նորարարությունների ստեղծման համար, մասամբ ի հաշիվ միջազգային ճնշումների»:

51 Սոնյա Դահաբ, «Բրազիլիայում գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների արտադրություն. ոլորտի պատմական զարգացում և նորարարություն», (չհրապարակված թեքնածուական թեզ, Յելի Համալսարան, 1985, հեղինակային պահոց), 235–36.

52 Գրականության և գեղարվեստական ստեղծագործությունների պաշտպանության մասին Բեռնի կոնվենցիա, հոդված 2(1), <www.wipo.org/clea/docs/en/wo/wo001en.htm> Տես նաև TRIPS Համաձայնագիրը, Հոդված. 10(1): «Համակարգչային ծրագրերը Բեռնի կոնվենցիայի պահանջներին համապատասխան ենթակա են պաշտպանության ինչպես գրականության ստեղծագործություններ»:

[53] ԴՖՊ Հոդված 18-ը պարունակում է գրեթե նույն մեկնաբանությունը:

[54]. «ՄՆԱՆ-ը Ուկրաինայի համար վերականգնում է Արտոնությունների ընդհանուր համակարգը»“, ԱՄՆ Առևտրային ներկայացուցչի մամլո հաղորդագրություն, 23 Հունվար 2006, <http://www.ustr.gov/Document_Library/Press_Releases/2006/January/USTR_Reinstates_Generalized_System_of_Preferences_Benefi ts_for_Ukraine.html?ht=>

[55] Որոշ երկրներ «առևտրային նշան» թերմինը օգտագործում են ապրանքներին կիրառելի նշանի համար, իսկ «ծառայության նշան» թերմինը օգտագործում են ծառայություններին կիրառելի նշանի համար: Դեպքերի մեծամասնության համար այդ տարբերությունը աննշան է, քանի որ բոլոր նշանների համար անկախ առևտրայինների թե ծառայությունների, կիրառվում են նույն կանոնները:

[56] Տես TRIPS Համաձայնագրի Հոդված 15-ը. «Ցանկացած նշան կամ դրանց համադրություն, որոնց միջոցով կարելի է տարբերակել մեկ ընկերության ապրանքներն կամ ծառայությունները մեկ այլ ընկերության ապրանքներից ու ծառայություններից, համարվում են առևտրային նշան»:

[57] ԱՄՆ ուղեցույց առևտրային նշանների փորձաքննության մասին, 1302.

[58] Արդար առևտրի մասին վկայող սերտիֆիկացիոն նշանի օգտագործման մասին քննարկումը տես` «Ինչպես կարելի է օգնել ֆերմերներին ստանալ արդար վարձատրություն», Bath Chronicle (27 Փետրվար 2004): 14.

[59] Օրինակի համար տես` Առևտրային նշանների մասին Մալթայի օրենք (համար XVI, 2000), հոդված 46(1): «Սերտիֆիկացիոն նշանը` դա նշան է, որը վկայում է որ ապրանքներն ու ծառայություններն որոնց նկատմամբ այն կիրառվում է, որակավորված են նշանի սեփականատիրոջ կողմից դրանց ծագման, արտադրության եղանակի, որակի, ճշտության և այլ չափորոշիչներին համապատասխան»

[60] ՄՍՀԿ միջնորդ կենտրոն, «Դոմենային անունների օգտագործման հետ կապված վեճարի կանոնակարգման վերաբերյալ Ուղեցույց». 3.

[61] <http://www.uncitral.org/pdf/english/texts/electcom/2005Convention.pdf>

[62] Եվրոպական պարլամենտի և Եվրոպական հանձնաժողովի թիվ 2000/31/EC ցուցումներ (8 Հունիս 2000) տեղեկատվական ծառայությունների իրավակն որոշ առանձնահատկությունների, մասնավորապես ներքին շուկայում էլեկտրոնային առևտրի վերաբերյալ: <http://europa.eu.int/ISPO/ecommerce/legal/documents/2000_31ec/2000_31ec_en.pdf>

[63] Եվրոպական պարլամենտի և Եվրոպական հանձնաժողովի թիվ 1999/93/EC ցուցումներ (13 Dektembe8 1999) էլեկտրոնային ստորագրությունների համար համայնքի շրջանակների, <http://europa.eu.int/eur-lex/pri/en/oj/dat/2000/l_013/l_01320000119en00120020.pdf>
Թվային ստորագրությունների գործնական կիրառման հետ կապված հիմնախնդիրների վերլուծություն իրականացված է հետևյալ ուսումնասիրությունում. «Էլեկտրոնային ստորագրությունների օրենսդրական և շուկայական առանձնահատկությունները», *Եվրոպական հանձնաժողովի համար իրականացված ուսումնասիրություն – թվային ներնդի տեղեկատվական հասարակություն*, (Սեպտեմբեր 2003),

[64] Հանձնաժողովի ցուցումներ 2002/38/EC (Մայիս 2002), որը լրացումներ և ժամանակավոր փոփոխություններ է կատարում 77/388/EEC ցուցումներում` ռադիո- և հեռուստահաղորդման ծառայությունների, ինչպես նաև էլեկտրոնային տեխնոլոգիաների միջոցով մատուցվող այլ ծառայությունների նկատմամբ ավելացված արժեքի հարկի կիրառման կանոնների վերաբերյալ: <http://europa.eu.int/eur-lex/en/dat/2002/l_128/l_12820020515en00410044.pdf>

[65] Եվրոպական պարլամենտի և Եվրոպական հանձնաժողովի թիվ 2002/58/EC ցուցումներ (12 Հուլիս 2002)` անձնական տվյալների մշակման և էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում գաղտնիության պաշտպանության մասին, <http://europa.eu.int/eur-lex/pri/en/oj/dat/2002/l_201/l_20120020731en00370047.pdf>

[66] <http://www.uncitral.org/pdf/english/texts/procurem/ml-procurement/ml-procure.pdf>

[67] 24, Ապրանքների, Շինարարության և ծառայությունների առքուվաճառքի մասին մոդելային օրենքի կիրառման Ուղեցույց:

[68] Ռուսական ընկերությունների կողմից պայմանագրերի կատարման ապահովման համար օգտագործվող ոչ իրավական միջոցների մասին հարցը քննարկվում է Քեթրին Հոնդլեյի, Պիտեր Մարելի, և Ռենդի Ռիթերմանի աշխատությունում. «Օրենք, իրավահարաբերություններև մասնավոր իրավունքների ապահովում. ռուսական ընկերությունների ռազմավարություն», *Europe-Asia Studies 52/4* (Հունիս 2000): 627–656, <http://www.bsos.umd.edu/econ/murrell/papers/transtrs.pdf>

[69] Որոշ ընկերություններ պրաբլեմատիկ պարտքերը հավաքում են մասնավոր գործակալների միջոցով պարտադրման և վերացման կիրառմամբ, սակայն նման հանցավոր եղանակներով կատարվող գործառույթների իրական ծավալների գնահատումը բավականին դժվար է:

[70] Դուգլաս Նորթ, «Ինստիտուտներ», 5 *The Journal of Economic Perspectives* 97 (1991).

[71] Մարկ Գալանտեր, Marc Galanter, «Արդարադատության տարբեր եղանակներ. դատարաններ և ոչ պաշտոնական կարգավորում», 19 *Journal of Legal Pluralism* 1 (1981).

[72] Տես` Սաթու Կահկյոնեն, յանգ Լի, Պատրիք Մեհեր, և Հաջի Սեմբոյա, «Աֆրիկյան տնտեսությունում պայմանագրային պրակտիկան. արդյունաբերական ձեռնարկություններ և մատակարարներ Տանզանիայում» (Մերիլենդի համալսարան, IRIS Կենտրոն, Աշխատանքային փաստաթուղթ 242, 2001), <http://www.iris.umd.edu/download.aspx?ID=b88f8fd6-1735-446c-a2bb-8d3b308d6e7b>

[73] 18 Մարտ 1965, 4 I.L.M. 532, (1965).

[74] ՄԱԱԶՀ, «Միջազգային ներդրումային համաձայնագրերի միտումները»UNCTAD/ITE/IIT/13 (1999), <http://www.unctad.org/en/docs/iteiit13_en.pdf>

[75] ՏՀԶԿ, *Ներդրումների նկատմամբ արդար և ոչ խտրական վերաբերմունք միջազգային իրավունքում*, Միջազգային ներդրումների մասին ՏՀԶԿ աշխատանքային փաստաթղթեր 2004/3, <http://www.oecd.org/dataoecd/22/53/33776498.pdf>




# Ներդրումների խթանում

Շատ երկրների հաջողվել է ներդրումներ ներգրավել Ներդրումների խթանման գործակալությունների (ՆԽԳ) գործադրման միջոցով: ՆԽԳ-ները մի շարք կարևոր գործառույթներ են իրականացնում, ներառյալ ներդրողների պահանջների բավարարումը, ձեռնարկատիրական գործունեության իրականացմանը նպաստող քաղաքականությունների առաջխաղացումը և այդպես ներդրումների պոտենցիալ հասցեատեր երկրների համար բարենպաստ համբավի ստեղծումն ու պահպանումը: Ի հավելումն ՆԽԳ-ների, ներդրման խթանների խնդրահարույց կիրառումը, որոնք են բյուջետային նկատառումներից առաջացած հարկերի դրույքաչափերի կրճատումը, կարգավորման և իրավական անհրաժեշտության անհրաժեշտ գործիքների ու արդյունավետության պայմանները, հաճախ է օգտագործվել վերջին գործարար միջավայրի բարելավման համար, երբ խոսքը, որոնք պատասխանատու շուկաների խթանման ներդրողների միջև և երբ դրանք չեն փոխարինում Հայկական առաջարկված ենթակառուցվածքային բարեփոխումներին: Այն երկրներում, որտեղ գործարար պայմանների միջավայրի համար անհրաժեշտ հիմնական պայմանները դեռևս լիովին չեն գործում, այնպիսի միջոցառումները, ինչպիսիք են ինքնիշխան երաշխիքները ու քաղաքական ռիսկից ապահովագրումը, կարող են օգնել ներդրողների վստահությանը: Ձեռնարկատիրական գործունեության իրականացման կանխատեսելիության որոշակի բարելավումներ:

## Ներդրումների խթանում

Որպես մի շարք փնփեսություններում ՕՈւՆ-ների կարևորության հեփևանք, համարյա թե բոլոր ԵԱՀԿ երկրներն ակփիվորեն խթանում են ներս ուղղված ներդրումներին: Համաձայն ՄԱԱԶՀ-ի, ներդրումների խթանումը «ծառայությունների մեծ քանակություն է ապահովում, սկսած շուկայի մասին փեղեկափվությունից մինչև փեխնիկա-փնփեսական հիմնավորումների և բնապահպանական ազդեցության գնահափումների նախաձեռնումը»[1]: Բազմակողմանի ներդրումների երաշխավորման գործակալությունը (ԲՆԵԳ), որը Համաշխարհային բանկի գործակալություններից մեկն է, բացի այն, որ կարևոր դեր է ունի քաղաքական ռիսկից ապահովագրման համար, նաև ներդրման խթանման թեմաներով ուսուցանում և խորհրդափվություն է ապահովում զարգացող և անցումային երկրների համար: Եթե որևէ երկիր չի խթանում ներդրումներին, ապա այդ երկրի ներդրումային հնարավորությունների մասին փեղեկության սփացումը մնում է ներդրողների ուսերին, որի դեպքում ամենայն հավանականությամբ, ներդրումների ներգրավման մրցակցության առումով այդ երկիրը կզիճի նույն փարածաշրջանի մեկ այլ երկրի:

### Ներդրումների խթանման գործակալություններ (ՆԽԳ-ներ)

ՕՈւՆ-ների համար ներդրումային խթանման գործակալությունները կարևոր մեխանիզմ են հանդիսանում: Ներդրումների պեփական խթանումը կամ ներդրումների խթանման գործակալությունը ներդրումներ կապարելու նպափակով նպասփավոր երկրի հեղինակության սփեղծման շղթա է հանդիսանում նպասփելով ներդրումային միջավայրի հասփափմանն ու օփարերկրյա ներդրողների համար փեղեկափվության ակփիվ ապահովմանը (Ներդիր 6.1):

Ներդրումների խթանման գործակալության հաջողությունը հիմնականում որոշվում է այնչափով, որչափով գործակալությունը հասնում է իր բարձրագույն նպափակին, որն է օփարերկրյա ուղղակի ներդրումների ավելացումը: Նոր ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումները պեփք է ՆԽԳ-ների կափարած աշխափանքների կիզակեփը հանդիսանան: ՆԽԳ-ները իրենց բարձրագույն նպափակին հասնում է հեփևյալ կերպ.

- Էական և զգալի ազդեցություն գործել ներդրումային խոչընդոփների վերացման և գործարար միջավայրի բարելավման վրա, փորձելով հասկանալ ներդրողների պահանջներն ու մշակել քաղաքականություն և ծրագրային այլընփրանքներ, ապահովել ներդրնմանն նպասփող քաղաքականության պաշտպանություն և արդյունավեփ կապ ու համագործակցություն հասփափել կառավարության այլ մարմինների հեփ;
- Զևավորել երկրի հեղինակությունն որպես ներդրումների ներգրավման նպափակակեփ կիրառելով ներդրումների խթանման և ձևավորման լավագույն փորձերը;
- Խթանում է հեփագա ներդրումների սփացմանը ռազմավարական ներդրողներին, ըսփ առաջին իսկ անհրաժեշփության, օգփակար գործարար փեղեկափվության ապահովման միջոցով և որպես ներդրումային նպափակակեփ երկրի համար արդյունավեփ «բիզնես իրականացման վայր» հեղինակության ապահովում;
- Հասփափում իր ինքնությունն որպես հիմնական գործընկեր ընթացիկ ներդրողների և կառավարության միջև կապ ապահովելու, նրանց նախաձեռնությունների համար փեղեկափվության ձեռք բերման ու նրանց ներդրումների կափարման արագացմանը նպասփող «հաջորդող» ծառայությունների մափուցման նպափակով, բարձրացնելով ներկա ներդրման ծավալը և ներգրավելով գործող ներդրողներին իմիջի խթանման գործում:
- Գործում է որպես անկախ մարմին առանց քաղաքական որևէ ուղղվածության և, որակի, հաճախորդներին մափուցվող ծառայության և աճող ներդրումների վրա կենփրոնացմամբ:

**ՆԵՐԴԻՐ 6.1**

### Չեխինվեստ. Արևելյան Եվրոպայի առաջատար ՆԽԳ

Չեխական ներդրումային գործակալությունը հայտնի է ներդրումների խթանման իր հարուստ փորձով: Այն գործում է որպես Չեխիայի հանրապետության բացառիկ մարմին, որին կարելի է դիմել ներդրումային խթանների համար և որը դասընթացներ ու փորձի փոխանակում է ապահովում ներդրումային խթանման այլ գործակալությունների համար: Չեխինվեստի առաքելությունը ընդլայնվել է իր մեջ ներառելով ԵՄ կառուցվածքային հիմնադրամներից եկող ֆինանսավորման և փոքր ու միջին ձեռնարկատիրության ծրագրերի կառավարումը:

Ինչ՞ն է նման հաջողություն ապահովել Չեխինվեստին: Ստորև բերված են մի քանի հիմնական լավագույն գործոններ.

- *Որակ:* Չեխինվեստը ներդրումային խթանման դաշտի միակ գործակալությունն է, որը ներդրել է ԻՍՕ 9001:2000-ի չափանիշներին համապատասխան որակի կառավարման համակարգ իր մատուցած բոլոր ծառայությունների համար;

- *Կենտրոնացումը ներդրողների, այլ ոչ քաղաքական գործիչների վրա:* Ներդրումային գործակալությունները հիմնականում քաղաքական մարմիններ են, որոնք «պատասխանատվություն են կրում» կոնկրետ ներդրողների ներգրավման կամ որոշակի ֆինանսական գումարների ստացման համար և չեն կենտրոնացնում իրենց գործունեությունը ներդրողներին ծառայություններ մատուցելու և գործարար միջավայրի բարելավման վրա: Ինչպես նշել է Համաշխարհային բանկի աշխատակից Կանդիդոտի Սաշան, կառավարությունները պետք է իրագործեն իրենց սեփական նեղ օրակարգերը, առաջնահերթությունը տալով կարիքավոր տարածաշրջաններ անդրազգային կորպորացիաների ներգրավմանը, այլ ոչ թե ներդրողների պահանջների բավարարմանը: Չեխինվեստը հիմնականում չի զբաղվում խթանմամբ, այլ խորհրդատվություն և օժանդակություն է ապահովում Չեխիայի հանրապետությունում գործող և նոր ձեռնարկատերերի և օտարերկրյա ներդրողների համար:

- Չեխինվեստը համագործակցություն է հաստատել խորհրդատվական ծառայությունների հետ, որոնք օգնում են օտարերկրյա ներդրողներին զարգացնել իրենց ներդրումային ծրագրերը Օտարերկրյա ներդրումների ասոցիացիայի ստեղծմամբ: Խորհրդատվական ընկերությունները միանում են ասոցիացիային և համաձայնվում ընդունել մի շարք պայմաններ, և Չեխինվեստը հնարավորություն է ստանում ուղղել ներդրողներին ասոցիացիայի անդամների մոտ վճարովի մատուցվող ծառայություններից օգտվելու համար, ի լրումն Չեխինվեստի կողմից արդեն իսկ անճար հիմքով մատուցված ծառայությունների: Չեխինվեստը ներդրողների հետ աշխատելու համար ունի ծառայություններ մատուցող որակյալ մասնագետների ցանկ և ֆինանսավորում է ստանում անդամավճարների տեսքով: Խորհրդատվական ընկերություններն, իրենց հերթին, հաճախորդներ են ձեռք բերում Չեխինվեստի կողմից տրված երաշխավորություններով:

- *Ապագայի միտումների նկատմամբ ուշադրություն.* ԵԱՀԿ անցումային երկրների շատ ՆԽԳ-ներ, ի համեմատ արևմտյան երկրների, կենտրոնացել են գնային մրցակցելիության վրա: Գլոբալիզացիան բարձրացրել է և կշարունակի բարձրացնել համաշխարհային տնտեսությունում ծառայությունների և մարդկային կապիտալի վրա հիմնված մասնաբաժինը և առավել կուժեղանա արևելյան Ասիայի երկրների հետ գնային մրցակցությունը: Չեխինվեստը ըմբռնել է դա վաղուց և սկսել ներդրումներ ապահովել տեխնոլոգիայի, կենսատեխնոլոգիայի, գիտահետազոտական և փորձաշինարարական աշխատանքների և առավել բարձր ավելացված արժեք ապահովող այլ արդյունաբերությունների ուղղությամբ;

ՆԽԳ-ներն օգտագործում են հետևյալ միջոցներն իրենց նպատակներին հասնելու համար.

- Օտարերկրյա ներդրողների համար ներդրումային իրավունքների պաշտպանի դերի ընդունում;
- Մասնագիտական տեսանկյունից բանիմաց, տարբեր լեզուներ տիրապետող և պատշաճ կերպով վճարվող աշխատակազմ;
- Հաճախորդների հետ վարվելակերպի ուսուցանում; և
- Իր հիմնական աշխատանքների իրականացման մեջ հաջողության հասնելու ձգտում:

**Որո՞նք են ՆԽԳ-ների գործունեության հիմնական տեսակները:**

*Քաղաքականության մշակմանը և իրականացմանը մանակցություն և ներդրումային խոչընդոտների վերացում:* Հետևողականորեն անկախ և քաղաքականությունից զերծ դիրքորոշում վարելով, ՆԽԳ-ները ձգտում են պաշտպանություն ապահովել ներդրումներին խթանող և միջազգային նորմերին և չափանիշներին համապատասխանող տնտեսական քաղաքականությունների համար: ՆԽԳ-ների դերը ներդրումների համար խոչընդոտների վերացման ուղղությամբ կենտրոնացած է երեք ուղղությունների վրա.

- *Օտարերկրյա ներդրողների հետ խորհրդակցության միջոցով ներդրումների հիմնական խոչընդոտների բացահայտում:* Ներդրումային միջավայրի վրա շոշափելի ազդեցություն ունենալու համար բարեփոխումները պետք է լինեն տեղին և էական ազդեցություն ապահովեն: ՆԽԳ-ները հաշվի են առնում օտարերկրյա ներդրողի կարծիքը ներդրումներին խոչընդոտող ամենակարևոր և «լուծելի» խոչընդոտների բացահայտման համար: ՆԽԳ-ն կառավարությանն է ներկայացնում կոնկրետ քաղաքականություն և օտարերկրյա ներդրողների օժանդակությունների վրա հիմնված ծրագրային առաջարկներ:
- *Վարչական բեռի կրճատմանն օժանդակող աշխատանքներ:* Այն փաստը, որ ՆԽԳ-ների մասնագետները հասկանում են առավել լավ կառուցված կանոնակարգող միջավայրի անհրաժեշտությունը, նշանավորում է, որ նրանք համառորեն ջանում են բարեփոխումներ կատարել այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են ձեռնարկությունների գրանցումն ու արտոնագրումը և հարկային վաչարարությունը: ՆԽԳ-ը կարող է նպաստել օտարերկրյա ներդրողներից լավագույն փորձերի և նորարարական մտքերի ձեռք բերմանը և, համաձայն փոփոխությունների, գնահատել բավարար վիճակը:
- *Մասնավոր հատվածի հետ համակարգված երկխոսության և համագործակցության հաստատում:* Ներդրումային կայուն միջավայրի կարևորագույն բաղադրիչն է հանդիսանում մասնավոր հատվածի հետ համակարգված երկխոսության հաստատումը: Օրինակ, առևտրային օրենքներ նախագծելիս տրամադրվում են ծանուցման ժամանակահատվածներ և այստեղ մասնավոր հատվածի կարծիքը բարձրացնում է վերջնական օրենսդրության որակը: Քննարկումներ, հանրային լսումներ ու այլ մեթոդներ կիրառվում են ներդրողներին հուզող հարցերի ընկալման և կառավարության ռազմավարությունների կամ ծրագրերի բացատրման նպատակով: ՆԽԳ-ը գալիս է երաշխավորելու, որ օտարերկրյա ներդրողն իր «ձայնն» ունի կառավարությունում: Բացի այդ, ՆԽԳ-ը կարող է համակարգել և տրամադրել նախարարությունների տեղեկատվությունը օտարերկրյա ներդրողների համայնքին:

*Բարենպաստ իմիջի խթանում:* ՆԽԳ-ը առաջատար դեր է խաղում երկրի իմիջի, որպես ներդրում կատարելու գրավիչ նպատակակետի, խթանման գործում: Պատասխանատվությունների շրջանակը ներառում է իմիջի հայեցակարգի մշակումը և հիմնական ուղերձների ձևավորումն ու տեղ հասցնելը: Ուղերձների հնարավոր թեմաները ներառում են՝

- *Քաղաքական և մակրոտնտեսական կայունության ընդհանուր բարձրացում:* Զարգացող և անցումային տնտեսություններին, որոնք քաղաքական ընդվզումներ, քաղաքացիական պատերազմ-

ներ կամ տնտեսական ճգնաժամեր են տեսել, խորհուրդ է տրվում խթանել և հրապարակային դարձնել քաղաքական և տնտեսական կայունությանն ուղղված բարեփոխումները:

- *Շուկայի հասանելիություն*: Եթե առավել ցածր գներ ունեցող երկրները սահմանակցում են այնպիսի ռազմավարական շուկաներին, ինչպիսիք են ԵՄ-ն կամ Ռուսաստանը, ապա դա մրցակցային առավելություն է և պետք է նշվի օժանդակող ուղերձներում: Նույնը կիրառելի է Միջին արևելքի, Ասիայի ռազմավարական հասանելիության նկատմամբ:

- *Տեղական շուկա:* Եթե երկիրն ունի մեծաքանակ բնակչություն և, եթե, հատկապես, այնտեղ նկատվում է տնտեսական կայուն աճ, ապա ՆԽԳ-ը պետք է ստեղծի տեղական աճող շուկայի իմիջ:

- *Բնական պաշարներ:* Եթե առկա են այնպիսի բնական պաշարներ, ինչպիսիք են նավթը, բնական գազը, անտառափայտը, գյուղատնտեսական հողերը, հանքաքարերը կամ այլ արժեքավոր ապրանքներ, ՆԽԳ-ը պետք է տեղեկացնի ներդրողներին ներդրումային հնարավորությունների մասին:

- *Տարածաշրջանային և միջազգային ինտեգրում:* ՆԽԳ-ը չպետք է ձախողի հստակ ազդանշանելու այնպիսի կազմակերպություններին, ինչպիսիք են ԵՄ-ը կամ ԱՀԿ-ը, և ազատ առևտրի ու այլ միջազգային առևտրային համաձայնագրերին երկրի անդամակցման մասին: Տնտեսության դրական իմիջին նպաստում են ազատ առևտուրը, ցածր գործարքային գները, շուկային հասանելիությունը և գլոբալ և տարածաշրջանային ինտեգրումը:

- *Մրցակցային գներ/ ներդրումային շահութաբերություն:* Օտարերկրյա ներդրումները հիմնականում հիմնված են նվազեցված ռիսկով համեմատական ներդրումային շահութաբերության վրա: Եթե երկիրն իր մարդկային կապիտալի համար ունի մրցակցային գներ, հող և/կամ էներգիա, ապա այդ երկիրը հզոր մրցակցային առավելություն ունի ներդրումներից զգալի շահութաբերություն ապահովելու համար:

Ուղերձները տրամադրվում են խթանիչ գործիքների կիրառմամբ, որոնք ուղերձների տարածման արդյունավետ ցանցերն են: ՆԽԳ-ների տրամադրած գործիքները հետևյալն են՝

- *Ներկայացումներ:* Ներկայացումները կարող են տրամադրվել հեռանկարային ներդրողներին կամ ՆԽԳ-ների աշխատակազմի կամ պետական պաշտոնյաների միջոցով: Ներկայացումները մոդուլային են որպեսզի հնարավոր լինի դրանք ձևափոխության ենթարկել ներդրողների խմբին ի համապատասխան. այսինքն հաշվի առնել նրանց հետաքրքրությունները, գործունեության բնագավառը, ազգությունը և այլն:

- *Մարկետինգային նյութեր:* ՆԽԳ-ը թողարկում և բաժանում է օրվա պահանջներին համապատասխան, գրավիչ ձևավորմամբ բրոշյուրներ, տեղեկագրեր, գովազդագրեր և կոմպակտ դիսկերի վրա և ինտերնետի միջոցով ներկայացումներ, ինչպես անգլերեն, այնպես էլ այլ լեզուներով:

- *ՆԽԳ ինտերնետային էջ.* ՆԽԳ-ը ունի ակտիվ գործող ինտերնետային էջ, որը կապված է այլ ինտերնետային էջերին և պատշաճ կերպով կապված ՝ փնտրող ծառայություններին: Ինտերնետային էջը պետք է տեղեկատվություն ապահովի տվյալ երկրի ներդրումային առավելությունների վերաբերյալ: Ինտերնետային էջը սովորաբար կապ է ապահովում ներդրումային հնարավորությունների, ներդրումային խթանների և ձեռնարկության գրանցման վերաբերյալ տեղեկատվություն պարունակող էջերի հետ:

- *Զանգվածային լրատվական միջոցների հետ հաստատված հարաբերությունները:* ՆԽԳ լավ աշխատող տնօրենի պարտականությունն է ազգային և միջազգային ԶԼՄ-ներում պարբերաբար երևալը: ՆԽԳ-ը կազմում և թերթերի միջոցով տարածում է նոր խոշոր ներդրումների, շուկա մտնող նոր ձեռնարկությունների, տնտեսական և քաղաքական իրադարձությունների, ռեյտինգների փոփոխությունների, և այլնի մասին հայտարարություններ:

- *Ներդրողների համայնքի հետ կապ:* ՆԽԳ-ն կարող է որոշել հովանավորելու

համաժողովներ, հարց ու պատասխանի նստաշրջաններ և ներդրողների ու պետական պաշտոնյաների հետ անցկացվող կլոր սեղաններ՝ խթանելու և տեղեկացնելու օտարերկրյա ներդրումներով հետաքրքրված համայնքին գործարար միջավայրի ուղղությամբ կատարված բարեփոխումների և նոր ներդրումների մասին:

- *Փորձագիտական առաջնորդություն:* ՆԽԳ աշխատակազմը հաճախ է իր բնագավառին վերաբերող հոդվածներ տրամադրում թերթերին և ամսագրերին, ակտիվորեն մասնակցում է աշխատանքային հավաքներին և հանդիսանում նույն դաշտում գործող մասնագիտական կազմակերպությունների անդամ, և այս բոլորը նրա համար, որպեսզի խթանի օտարերկրյա ներդրումների նկատմամբ երկրի պարտավորվածությանն ու դրանց ընկալմանը:

*Ներդրումների առաջացում* ՆԽԳ-ը աջակցում է նոր ծրագրերում ՕՈւՆ-երի ներգրավմանը շուկայավարման և գովազդա-քարոզչական միջոցառումներով: Այդ միջոցառումներն են՝

- *Տեղեկատվական աջակցություն*: ՆԽԳ աշխատակազմը հանդիպում է հեռանկարային ներդնողների հետ և քննարկում երկրի մրցակցային առավելությունները և տեղեկացնում պոտենցիալ ներդրումային հնարավորությունների և գործընկերների մասին, տեղեկատվություն է ապահովում տարածաշրջանային և տեղական գործակալությունների համար և կիրառում «մեկ կանգառի պատուհան»-ի միջոցով տեղեկատվության տրամադրումը ներդրումներին, ներառյալ ձեռնարկության գրանցմանը վերաբերող ընթացակարգերի վերաբերյալ:

- *Պոտենցիալ ներդրողների հետ աշխատանքի կատարում:* ՆԽԳ-ը զբաղվում է հեռանկարային ներդրողների մոտ հետաքրքրության ձևավորմամբ՝ հնարավոր ներդրողների մասին տեղեկատվության հավաքագրման և գովազդային ու մարկետինգային միջոցառումներում դրանց օգտագործման միջոցով: Դրա համար իրականացնում են հետևյալ կարգի միջոցառումներ՝

  - Համագործակցություն օտարերկրյա դեսպանատների և բիզնես ասոցիացիաների հետ;
  - Պարբերական կապ և համագործակցություն տարածաշրջանային և տեղական ներդրումային խթանման գործակալությունների հետ;
  - Համագործակցություն տնտեսության մեջ ընդգրկված պաշտոնյաների և արտասահմանյան պատվավոր հյուպատոսների հետ;
  - Կոնֆերանսների, համաժողովների և աշխատանքային հավաքների մասնակիցների ցանկի ձեռք բերում և վերլուծում;
  - Տարածաշրջանում կատարվող ընդհանուր հետազոտություններին վերաբերող նորություններին ակտիվ հետևում:

- *Աջակցություն այլ պետական հաստատություններին:* ՆԽԳ-ը հեռանկարային ներդրողներին ուղարկում է օտարերկրյա ներդրումների պահանջ ունեցող այլ պետական հաստատություններ, ինչպիսիք են սեփականաշնորհման գործակալությունը, տարածաշրջանային և տեղական ներդրումային խթանման գործակալությունները, նախարարությունները կամ արդյունաբերական լքված օբյեկտների գործակալությունները, որոնք իրենց փվյալ դիմողներին տեղեկատվական աջակցություն են ապահովում:

- *Ներդրումային առաքելություններ:* ՆԽԳ-ն կազմակերպում է գործուղումներ այլ երկրներ, ուշադրությունը կենտրոնացնելով ամենագրավիչ բնագավառների, տեղայնքների և հեռանկարային ներդրողների վրա:

- *Ներդրողների խթանման համար հասցեագրված աջակցության իրականացում:* Ներդրողների մոտ իրական հետաքրքրվածության առաջացման նպատակով տեղեկատվությունը պետք է համապատասխանի ներդրողների պահանջներին: ՆԽԳ-ն իրականացնում է դա հետևյալ կերպ.

  - Բրոշյուրների, ներկայացումների և ինտերնետային էջերի բովանդակության թարմացում ամենամրցակցային բնագավառների/ արդյունաբերական

ոլորտների ուշադրությանը ներկայացնելու նպատակով;

- Հեռանկարային ներդրողներ հանդիսացող ընկերությունների բացահայտում;
- Ներկայացումների և օժանդակ նյութերի թարգմանություն «առավելագույն հետաքրքրված» երկրների լեզուներով; և
- Արդյունաբերական ոլորտային համաժողովներին մասնակցություն և դրանց ընթացքում ներկայացումների իրականացում;

**ՆԵՐԴԻՐ 6.2**

## Ուկրաինայում միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումների փառաժաշրջանային խթանում

Ուկրաինայում կիրառվում են ներդրումների խթանման ժամանակակից մոտեցումները InventInRivne գործակալությունը հիմնադրվել է Ուկրաինայի ԵԱՀԿ Ծրագրի համակարգողի գրասենյակի (ԵԱՀԿ ԾՀԳ) և Ռիվնե ուկրաինական արևմտյան շրջանի հետ համատեղ՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը աջակցության ծրագրի շրջանակներում: Ներդրումների խթանման գործիքների համակարգը, որը Համաշխարհային բանկի խմբի անդամ հանդիսացող Բազմակողմանի ներդրումների երաշխավորման գործակալության կողմից մշակված լավագույն փորձերի անվճար տրամադրվող համակարգ է, սույն գործակալության հիմնադրման համար որպես մոդել է ծառայել: Մոդելը հարմարեցվել է համապատասխանեցվելու ուկրաինական օրենսդրությանը և խթանելու տեղական իշխանությունների և տարածաշրջանում հիմնական շահագրգիռ կողմերի հետ համագործակցությունը ներդրումների ներգրավումն արագացնելու ու տարածաշրջանի տնտեսական զարգացումը խթանելու նպատակով:

Գործակալությունը ներդրողների համար «մեկ կանգառի պատուհան»-ի ծառայություններ է մատուցում, որի միջոցով արագ իրականացվում է ներդրումների հաստատումը, ընկերությունների գրանցումն ու արտոնագրերի և այլ թույլտվությունների ձեռքբերումը, որոնք անհրաժեշտ են Ուկրաինայում ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նպատակով: Այն նաև ներդրողների համար հիմնական գործընկեր է հանդիսանում այնպիսի խնդիրների լուծման համար, որպիսիք են շուկայական հետազոտությունների վարումը, տեխնիկատնտեսական հիմնավորումների կազմումը, տարածքների բացահայտումն ու աշխատակազմի վերապատրաստումը: Այն օգնում է նաև ուսումնասիրելու Ուկրաինայի Ռիվնե շրջանի շուկան, որպես ներդրումների համար գրավիչ վայր և տեղեկան իշխանություններին խորհրդատվություն է տրամադրում ներդրումային միջավայրի բարելավման նպատակով:

Վերջերս, գործակալության աշխատանքներին բարձր գնահատական է տրվել *Ֆայնենշլ Տայմս* ամսագրում: InvestInRivne գործակալությունը շահել է Եվրոպայում գնային առումով ամենաարդյունավետ քաղաքի և շրջանի մրցանակը ամսագրում տեղակայված Եվրոպական քաղաքներ և տարածաշրջաններ 2006-2007 թվականների մրցակցության սանդղակում: InvestInRivne գործակալությունը նաև հաղթանակած է դուրս եկել Արևմտյան ԱՊՀ–ում, իսկ ամբողջ Արևելյան եվրոպայի տարածքում երկրորդ տեղն է գրավել Ապագայի շրջան դասակարգման մեջ: Ռիվնե շրջանը առաջին ուկրաինական տեղանքն է, որը շահել *Ֆայնենշլ Տայմս* ամսագրի մրցանակը:

«Ներկայացված ցանկը և ճանաչումն ապացուցում է InvestInRivne մոդելի հաջողությունը և հիմք ծառայում իրական ներդրումների համար», ասել է նախաձեռնության պատասխանատու Դր. Վոլկեր Ֆռոբարֆը, ԵԱՀԿ ծրագրերի ավագ պաշտոնյան:

*Ներդրողների համար ծառայություն-ների ապահովում:* ՕՈւՆ-ներ իրականացնելու համար հեռանկարային ներդրողներին խթանելուց բացի, ՆԽԳ-ները տեղեկատվություն և հաճախորդների սպասարկման ծառայություն է ապահովում ընթացիկ ներդրողների համար: Տրամադրվող ծառայություններն են՝

- Ձեռնարկությունների գրանցմանը տրամադրվող աջակցություն: ՆԽԳ աշխատակազմը բացատրում է ձեռնարկության գրանցման գործընթացը, առաջարկում գործընթացի մեկնարկի տարբեր ձևեր և ուղղում ներդրողներին համապատասխան մեկնարկային կետի վրա:
- *Տեղեկատվություն տեղանքի ընտրման նպատակով:* ՆԽԳ-ը տեղեկատվություն է ապահովում (դեմոգրաֆիկ, տրանսպորտային հաղորդակցություն, գներ, և այլն) երկրում տեղայնքների մասին, որպեսզի ներդրողները կարողանան լավ տեղանքի ընտրություն կատարել:
- *Աջակցություն ներդրումների ընդլայնմանը:* ՆԽԳ-ը տեղեկատվություն է տրամադրում ներկա ներդրողներին, որոնք փնտրում են ֆինանսավորման աղբյուրներ, գործընկերներ, ծառայություն մատուցողներ, միջնորդներ կամ իրենց ներդրումներն ընդլայնելու հնարավորություններ:
- *Կապ կոմունալ ծառայություններ և ենթակառուցվածքներ ապահովողների հետ:* Որոշակի հանգամանքներում, ներդրողները, որոնք վերջացրել են թույլատրությունների և արտոնագրերի ստացման գործընթացը, ստիպված են լինում ամիսներով սպասել տնտեսական գործունեության մեկնարկման նպատակով, քանզի չկա էլեկտրաէներգիա կամ կառուցված չե ճանապարհը: ՆԽԳ-ը պետք է կապ հաստատի էներգետիկ բաշխիչ ցանցերի, ջրմուղ և կոյուղու մատակարարների, շինարարական աշխատանքների վարչությունների հետ, եթե ներդրողը դժվարությունների է հանդիպել այդ ծառայությունների անհասանելիության արդյունքում:
- *Ներդրումային դիտանց:* ՆԽԳ-ը վերահսկում է ներդրումների ընթացքը, երաշխավորելով, որ ներկա ներդրումները, հեռանկարային ներդրողները և դրանց հետ փոխկապակցված կազմակերպությունները վերահսկվում են՝ հետաքրքրությունների բնագավառի, առաջացման երկրի, կոնկրետ ժամանակի սահմանման, ներդրման չափի, և այլ նման հանգամանքների տեսանկյունից: Այն նաև իրականացնում է ներդրողների հետ հետագա համագործակցությանն ուղղված այլ միջոցառումներ:
- *Ներդրումային հնարավորություննե-րի տվյալների բազա:* ՆԽԳ-ը պետք է հաճախակի հանդես գա որպես կենտրոնական կապող օղակ ներդրումային հնարավորությունների վերաբերյալ ինտերնետային տվյալների բազա ձևավորելու նպատակով:
- *Հաշվետվությունների տրամադրում:* ՆԽԳ-ը զեկուցում է կառավարությանը, հասարակությանն ու զանգվածային լրատվական միջոցներին ներդրումային նորությունների, վիճակագրական տվյալների և գործարար միջավայրի իրավիճակի վերաբերյալ:
- *Տեղեկատվության հարցումներ:* ՆԽԳ-ը բավարարում է ներդրումների մասին ԶԼՄ-ների, ՀԿ-ների, այլ երկրների կառավարությունների, գիտական հաստատությունների և այլ կազմակերպությունների աշխատակիցների տեղեկատվության ստացման համար հարցումները:

## *Ներդրումային խթաններ*

*Ներդրումային խթանների դերը:* Սույն Ուղեցույցի մեջ հիմնական շեշտադրումը դրվում է գործարար և ներդրումային ոչ-խտրական, պարզ, թափանցիկ և ցածր գներ նախատեսող միջավայրի ստեղծման վրա: Եթե ճիշտ ձևով չկառավարվեն ներդրումային խթանները, ապա դա կարող է անհավասարակշռված և խտրականություն դնող գործարար միջավայրի ստեղծման պատճառ հանդիսանալ և, հետևաբար, պետք է դրանք առավելագույն չափով ճիշտ կառավարվեն:

Այնուամենայնիվ, որոշակի խթաններ կարող են արագ խթանել ՕՈւՆ-երի ներհոսքը դրանք ճիշտ կիրառելու դեպքում: Սույն Ուղեցույցի պատրաստման ընթացքում ԵԱՀԿ-ն - կազմակերպեց քննարկման նստաշրջան տարածաշրջանի գործարար միջավայրի փորձագետների հետ, որի ընթացքում հնչած կարծիքները ներդրումային խթանների կիրառման վերաբերյալ բաժանվեցին: Որոշ փորձա-

գետներ ասացին, որ «եթե ձեր հարևանները խթաններ են ստեղծում, ապա դու էլ պետք է ապահովես դրանք»: Այս փրամաբանական հիմնավորումը համապատասխանում է Համաշխարհային բանկի տեսակետին, ըստ որի այդ խթանները չեն ազդի տարածաշրջանների միջև ընտրության վրա, օրինակ, Չինաստանի կամ Արևելյան եվրոպայի, բայց կարող են ազդեցություն թողնել ներ-տարածաշրջանային ընտրության վրա, երբ հավասար են գործարար միջավայրի գործոնների մեծամասնությունը: Կա համաշխարահային համաձայնություն, ըստ որի խթանները չեն փոխարինում գործարար և ներդրումային միջավայրի ուղղությամբ իրականացված բարեփոխումներին և, որ խթանները պետք է դիտարկել որպես գործող բարենպաստ միջավայրի հավելում: Այս գիտակցությամբ, ստորև ներկայացվում են որոշ երկրներում կիրառված և լավագույն փորձ ծանաչված հնարավոր խթանների մեխանիզմներ:

## *Ֆիսկալ արտոնություններ*

Կառավարությունները ներդրողներին, մասնավորապես, օտարերկրյա, առաջարկում են ֆինանսական և հարկային խթաններ՝ ներդրումների տրամադրման համար իրենց երկրներն առավել գրավիչ դարձնելու համար: Տարածված ֆինանսական խթանները հետևյալն են՝

- Ընկերությունների եկամտահարկի նվազեցված տոկոսադրույքներ;
- Ընկերության գործունեության մեջ վերաներդրված շահույթների նվազեցում հարկման ենթակա եկամտահարկի հաշվարկման ժամանակ;
- Հարկային արտոնություններ կամ իջեցումներ, որոնց դեպքերում կոնկրետ ժամանակահատվածում ընկերությունները չեն վճարում ընդհանուր եկամտահարկ կամ սոցիալական ապահովագրման հարկ;
- Հնարավորություն գրանցելու ներդրման նախնական շրջանի վնասները հետագա տարիների վրա;
- Նվազեցված կամ զրոյական հարկային պարտավորություններ գործազուրկների, վերջերս ավարտած ուսանողների, նախկին զինվորականների վարձման համար;
- Ազատում ԱԱՀ-ի վճարումից կամ դրա հետաձգում;
- ԱԱՀ-ի վճարման հետաձգում մինչև բիզնեսի մեկնարկը;
- ԱԱՀ գերավճարների արագ վերադարձ;
- Կապիտալ ներդրումների ԱԱՀ-ից կամ մաքսային տուրքերից ազատում կամ դրա հետաձգում;
- Կապիտալ ներդրումի արժեքի կամ արժեքի մի մասի պահում ընդհանուր եկամտահարկից;
- Կապիտալ ներդրումների արագացված ամորտիզացիա;
- Գյուղատնտեսական հողերն արդյունաբերական հողերի վերածման գործընթացի հարկերից ազատում;
- Դրամաշնորհների տրամադրում դասընթացների վարման նախաձեռնություններ ի կամ կարիքավոր շրջաններում աշխատատեղերի ստեղծման նպատակով:

Դժվար է դասակարգել խթաններն, ըստ արդյունավետության: Նրանց համեմատական արդյունավետությունը կախված կլինի այնպիսի գործոններից, ինչպիսիք են ներդրման տեսակն ու բնագավառը, ներդրման վերջնական իրականացման համար պահաջվող ժամանակահատվածը, երկրի համեմատական հարստությունն ու խթանները կառավարելու կառավարության հնարավորությունները: Էստոնիան մեծ հաջողություն է արձանագրել վերաներդրված շահույթների խթանի կիրառումից: Խորվաթիան գրավել է որոշ ներդրումներ ի շնորհիվ հարկային արձակուրդների: Շատ դեպքերում Ռումինիայի տեղական իշխանությունները հրաժարվել են գյուղատնտեսական հողերն արդյունաբերականի վերածման ժամանակ հարկ վճարելուց այնպիսի ծրագրերի համար, որոնք նպաստում են աշխատատեղերի ստեղմանն ու հարկային բազայի ընդլայնմանը:

Քանի որ սույն Ուղեցույցի փիլիսոփայության հիմքում ընկած է առավել պարզ և առավել հաջող և խտրականություն չդնող ներդրումային միջավայրին պաշտպանությունը, Ուղեցույցն օժանդակում է ներդրումային խթանների վերաբերյալ ՏՀԶԿ-ի քաղաքականությանը, ըստ որի առաջարկվում են խթաններ, որոնք պետք է թափանցիկ լինեն, հասանելի օտարերկրյա և տեղացի ներդրողներին,

ոչ արդյունաբերական կոնկրետ ուղղվածությամբ և հեշտ կառավարվող: Խթանները պետք է կիրառվեն կանոնների համակարգին համապատասխան և չառաջարկվեն առանձին ներդրումների համար: Խթանների ընտրության ժամանակ պետք է կիրառվեն հետևյալ սկզբունքները՝

- Խթանների վերաբերյալ պետք է պետական ռազմավարություն մշակվի: Ներդրումային խթանները պետք է համաձայնեցվեն տարբեր նախարարությունների միջև: Ներդրողներին երբեմն տրամադրվում են բազմաքանակ խթաններ, որոնք ֆինանսական դեֆիցիտների պատճառ են հանդիսանում, քանի որ նրանց ներգրավելու նպատակով այդչափ խթանները կարող են անհրաժեշտից ավելին լինել:
- Խթանները պետք է թափանցիկ լինեն: Կառավարությունը պետք է հնարավորություն ունենա վերահսկելու խթանների արդյունավետությունը և երաշխավորելու ընկերությունների համապատասխանությունը կանոնակարգերին:
- Խթանները պետք է կիրառվեն սահմանափակ ժամանակահատվածների համար՝ հստակ վավերացման ժամկետով: ՏՀԶԿ-ն առաջարկում է հնգամյա ժամկետ, որն ինքնին բավականին երկար է: Խթանների գործողությունների շրջանը պետք է ներգրավի ներդրողներին և աջակցի նրանց բիզնեսի սկզբնական փուլի ժամանակ այլ ոչ թե օժանդակի կամ ֆինանսավորի ձեռնարկությանը:
- Խթանները պետք է կիրառվեն հնարավորինս առանց խտրականության, համաձայն ներդրման ծավալի և կոնկրետ տարածաշրջանի առանձնահատկության, այլ ոչ թե համաձայն ներդրողի երկրի կամ կոնկրետ արդյունաբերության:
- Բոլոր խթանները պետք է հանրորեն արձանագրվեն: Բոլոր խթանիչ ծրագրերը և կանոնները պետք է հստակորեն թվարկվեն կառավարական ինտերնետային էջերի վրա և հանրությանը հասանելի կառավարական փաստաթղթերում:

Կա մեկ կոնկրետ խթան, որից անհրաժեշտ է խուսափել և դա հարկային երկարաժամկետ արձակուրդներն են: Դրանք ոչ միայն կարող են ֆինանսական միջոցների անհավասարաչափ բաշխման և մրցակցության թուլացման պատճառ հանդիսանալ, բայց քանի դեռ հարկային արձակուրդը չի երկարացվել վավերացման ժամկետից հետո, ընկերությունները կարող են փնտրել առավել ոչ ծախսատար տեղանք կամ բողոքել, որ չեն կարող շարունակել գործառնություններն մինչև որ չստեղծվեն միանման պայմաններ:

Կառավարություններին նաև խորհուրդ է տրվում ունենալ ամբողջ բիզնեսի համար օգտակար պարզության և ցածր տոկոսադրույքների վրա հիմնված ընդհանուր եկամտահարկի կառույցը, այլ ոչ ներդրողների համար ընդհանուր եկամտահարկը նվազեցնելու նպատակ հետապնդող խթանների բարդ սխեման: Թե կառավարության, և թե բիզնեսների համար բարդ է աշխատել խթանների խճճված սխեմայով, այն շուկայում անհավասարակշռության և կաշառակերության առավել մեծ հնարավորություններ էստեղծում:

ԵՄ ուղեցույցները մյուսների միջից առանձնացնում են հետևյալ չափանիշները պոտենցիալ վնասակար միջոցառումները բացահայտելու նպատակով `

- Հարկման արդյունավետ մակարդակ, որը զգալիորեն ցածր է, քան որևէ տվյալ երկրի ընդհանուր մակարդակը;
- Ոչ ռեզիդենտների հարկային արտոնությունները;
- Հարկային խթաններ այն գործողությունների համար, որոնք բևեռացած են տեղական տնտեսությունից և, հետևաբար, ազդեցություն չունեն պետական հարկային բազայի վրա;
- Հարկային արտոնությունների տրամադրում, իրական տնտեսական որևէ գործունեության բացակայության պայմաններում;
- Երբ անդրազգային կորպորացիաների համար նախատեսված շահույթային սահմանումը խույս է տալիս, մասնավորապես ՏՀԶԿ-ի կողմից հավանության արժանացած, միջազգայնորեն ընդունված կանոններից, և
- Թափանցելիության պակաս:

Ընդհանրապես, ԵՄ-ն օժանդակում էտարածաշրջանային հիմքերի վրա և ԱԱՀ ու մաքսային բնագավառներում գործող խթանները: Չեն խրախուսվում օտարերկրյա ներդրողներին ներգրավելու նպատակ հետապնդող լայնածավալ պետական խթանները: ԵՄ-ին

անդամակցելուց հետո, մի շարք երկրներ, ինչպիսին է Սլովակիան, ասփիճանաբար քչացրել են ներդրողներին առաջարկվող խթանների մակարդակը:

Ներդրումային խթանների կիրառման հիմնաքարային փիլիսոփայության վերաբերյալ լավ աղբյուր է հանդիսանում Ներդրումների մասին ՏՀԶԿ բազմակողմ համաձայնագիրը: Առավել տեղեկատվություն կարելի է ձեռք բերել ՏՀԶԿ ինտերնետային էջում:

## Կարիքավոր զոնաներ

Կարիքավոր տարածքների համար խթանների տրամադրումը տնտեսական զարգացման ավանդական մեթոդ է հանդիսանում: Քաղաքային ձեռնարկատիրության զոնաների կամ կարիքավոր զոնաների հաստատումը հաջողվում է, եթե մրցունակ են բիզնեսների և բնակիչների կյանքի պայմանները: Լքված տարածքներում ենթակառուցվածքներ չունեցող կարիքավոր զոնաների ստեղծումը թուլացնում է ընդհանուր մրցակցելիությունը և ոչ լավ միջոց է հանդիսանում նրանց զարգացման համար: Խթանները չպետք է ուղղեն ներդրողներին կամ նորաստեղծ բիզնեսներին հիմնավորապես ոչ գրավիչ տարածքներ (Ներդիր 6.3):

**ՆԵՐԴԻՐ 6.3**

### Քաղաքային ձեռնարկությունների զոնաները Միացյալ նահանգներում

Միացյալ նահանգներում, քաղաքային ձեռնարկատիրության գոտիները տասնյակ տարիներ շարունակ կիրառվել են քաղաքային զոնաների վերակենդանացման նպատակով: Այս տարածքներում բիզնեսներին որոշակի ժամանահատվածով առաջարկվել են նվազեցված եկամտահարկեր կամ սահմանափակ կամ զրոյական գույքահարկ որպեսզի նրանք ներդրումներ կատարեն քաղաքային ձեռնարկատիրության գոտիներում: Բալթիմոր քաղաքն ենթարկվեց քաղաքային անկման, բարձր հանցագործությունների մակարդակի և բիզնեսների արտահոսքի: Քաղաքային ձեռնարկատիրության գոտիներ հաստատվեցին քաղաքի կենտրոնին հարող այն հատվածներում, որտեղ կային հնաոճ ձեռնարկություններ և լքված պահեստներ: Քաղաքային ձեռնարկատիրության գոտիները առաջարկում էին բիզնեսների ներգրավման հատուկ խթաններ, որոնք էին

- Բիզնեսների սարքավորման վրա դրված վաճառքի զրոյական հարկ:
- Զրոյական իրական գույքահարկ այն ժամանակահատվածի համար, երբ տարածքը որակավորվում է որպես քաղաքային ձեռնարկատիրության գոտի:
- Աշխատողների եկամտահարկի հատկացումներում ընկերությունների մասնակցության նվազեցում:

Ձեռնարկատերերին այդպիսով խթաններ տրամադրվեցին գնելու հող, ներդրում կատարելու բիզնեսի մեջ և վարձելու աշխատողներ: Բնակարանային տարածքներում, բնակարանները, որոնք զավթված են եղել իրավաբանական հիմնավորումներից ելնելով, լքված, կամ որոնք անպիտան են համարվել առողջությանը սպառնացող վտանգի վերացման և անվտանգության ապահովման նպատակով, կամ որի նկատմամբ սեփականատերերը չեն կատարել իրենց պարտավորությունները ֆինանսական պատճառներից ելնելով, գնման են տրամադրվել մեկ ԱՄՆ դոլարով այն պայմանով, որ գնորդը տարիների ընթացքում ներդնի առնվազն 100,000 ԱՄՆ դոլար այդ բնակարանների վերականգնման համար: Այդ բնակարաններից շատերի արժեքը ներկայումս գերազանցում է 500,000 ԱՄՆ դոլարին:

Բալթիմորյան հաջողության գաղտնիքն այնն էր, որ քաղաքային ձեռնարկատիրական գոտիներին, չնայած իրենց անբարենպաստությանը, տրամադրվեցին այնպիսի առավելություններ, ինչպիսիք են կարգին ճանապարհները, բնակարանները, մշակութային կենտրոնները և Վաշինգտոնի հետ աշխարհագրական հարևանությունը:

## Ազատ գոտիներ/հատուկ տնտեսական գոտիներ (ՀՏԳ-ներ)

Նույնը կարելի է ասել ազատ գոտիների կամ հատուկ տնտեսական գոտիների ստեղծման համար, որոնք պետք է հաստատվեն այնպիսի տեղանքներում, որոնք աշխարհագրական տեսանկյունից մրցունակ են ներդրողների համար: Ազատ գոտիները հատուկ խթաններով բնորոշված տարածքներ են, հիմնականում ԱԱՀ-ից ազատումն ու մաքսային տուրքերը, բայց և որոնք կարող են ունենալ ավելի շատ խթաններ, ինչպիսիք են շրջակա միջավայրի պահպանման պահանջների կամ աշխատանքային չափանիշների թեթևացումը:

Այս գոտիների արժեքը վիճաբանությունների առարկա է: Մի կողմից, արտահանման կողմնորոշում ունեցող ընկերությունների համար սահմանված արտոնյալ առևտրային պայմաններ առաջարկելով ՀՏԳ-ները կարող են ներգրավել ներդրումներ և արտարժույթի ներհոսք, նպաստել նոր աշխատատեղերի ստեղմանն ու առավել բարենպաստ տեխնոլոգիաների և ենթակառուցվածքի զարգացմանը: Մյուս կողմից, քննադատները դատապարտում են ՀՏԳ-ներին ներդրումների ներգրավման նպատակով հիմնական մրցակցային պայմանների կառուցման փոխարեն խեղաթյուրված խթաններ առաջարկելու համար: Նրանք նաև վիճում են, որ այդ խթանները ֆինանսական բեռ են ստեղծում հարկատուի համար և վնասում շրջակա միջավայրի պահպանման պահանջներին և աշխատանքային չափանիշներին: Քննադատները նաև այն կարծիքին են, որ զոնաների արտոնություններին վրա կատարվող ուղղակի և անուղղակի ծախսերը վնասում են տնտեսության մյուս հատվածներին ու շեղում բարգավաճումը:

Ներկայումս 120 երկրներում գործում են 3,000 ՀՏԳ-ներ, որոնց արտահանման ծավալները կազմում են ավելի քան 600 միլիարդ ԱՄՆ դոլար և որոնք սեփողծում են մոտ 50 միլիոն աշխատողներ: Սա ապացուցում է, որ ազատ գոտիները գտնվում են կիրառման մեջ և հաջողվել են որոշ տարածքներում: Ազատ գոտիների ստեղծման հաջողությունը կախված է զոնայում ընդհանուր մրցակցության, և մասնավորապես դրա տեղանքի վրա: Եթե հասանելի չեն տրանսպորտային միջոցներ և աշխատուժ, ապա գոտին հաջողություն չի արձանագրի: Ռումինիայի Արադ-Քուրթիզի ազատ առևտրի գոտին հաջող է եղել, քանի որ տեղակայված է եղել հունգարական սահմանի մոտակայքում: Սա հնարավորություն է ընձեռել ընկերություններին ԵՄ սահմանի մյուս կողմում Ռումինիայում սահմանված առավել ցածր գների պատճառով ունենալ «օֆշոռ»: Իր անխուսափելի անդամակցումից ելնելով Ռումինիան ստիպված է եղել ուղղումներ մտցնել ազատ գոտիների մասին իր օրենքներում: Այնուամենայնիվ, իր բերանպաստ աշխարհագրական դիրքի և ենթակառուցվածքի համար Արադի զոնան մնում է ներդրումների համար գրավիչ նպատակակետ: Ազատ գոտիների կառավարման լավագույն փորձերի մասին եզրահանգման կարելի է գալ Էգեյան ազատ գոտու օրինակով (Ներդիր 6.4):

## Արդյունաբերական պարկեր

Արդյունաբերական պարկը կարելի է սահմանել որպես հողային տարածք, որը նախատեսված է արդյունաբերական կիրառման և շինարարության համար: Արդյունաբերական պարկերը/տարածքներն ունեն սեփականության երեք հիմնական մոդելներ.

- Պետական սեփականության արդյունաբերական պարկ;
- Մասնավոր հատված, կամ
- Պետական-մասնավոր համագործակցություն կամ համատեղ ընկերություններ:

Արդյունաբերական պարկերի տարածքները, սովորաբար, բայց ոչ միշտ, տեղակայված են այն տարածքներում, որտեղ կա հիանալի հաղորդակցման և տրանսպորտային ենթակառուցվածք, հասանելի էլեկտրաէներգիա և աշխատուժ: Մինչ արդյունաբերական պարկերը կարող են շատ անուններ ունենալ, օրինակ, արդյունաբերական տարածքներ, արտահանման-մշակման զոնաներ, բիզնես պարկեր, բարձր տեխնոլոգիաների պարկեր, արդյունաբերական զարգացման պարկեր և էկո-արդյունաբերական պարկեր, դրանք ունեն երկու ընդհանուր տարբերակող բնութագրեր: Առաջին հերթին, դրանք իրար մոտ հարևանությամբ նույն հողատարածքի վրա տեղակայում են մի շարք ընկերություններ, որոնք իրենց մեջ կիսում են ենթակառուվածքը, կոմունալ ծառայությունները, հիշեց և անվտանգության ծառայություններն ու ընդհանուր տարածքները: Արդյունաբերական պարկերն ունեն նաև պարկի գործունեությունը վերահսկող կառավարման ընդհանուր համակարգ:

**ՆԵՐԴԻՐ 6.4**

### Էգեյան ազատ գոտու փորձերը. Ազատ գոտիների զարգացման առումով

Էգեյան ազատ գոտին Թուրքիայի Իզմիր նահանգին հարևանող խոշոր, ակտիվ և շարունակաբար աճող ազատ գոտի է, որտեղ 1990 թվականից ի վեր իրականացվել է ավելի քան 17 միլիարդ ԱՄՆ դոլարին հավասար ընդհանուր միջազգային առևտուր: Այն թուրքիայի ամենախոշոր ազատ գոտին է: 2005 թվականին ESBAS-ի նախագահին արժանացել է ***օՌւն ամսագրի*** լավագույն գործիչ անվան, իսկ ESBAS-ի ինտերնետային էջը 2004 թվականին շահել է Ազատ գոտիների համաշխարհային ասոցիացիայի լավագույն ինտերնետային էջ մրցանակը:

Ինչպե՞ս է ESBAS-ը հաջողել: Լավագույն փորձերը ներառում են`

- *Գրագետ աշխարհագրական դիրք:* Թուրքիայի երրորդ խոշոր քաղաքի հետ հարևանությունը գոտուն մեծաքանակ աշխատուժ, կյանքի հիանալի պայմաններ, աճող տնտեսություն և արտահանման ուղղվածություն ունեցող նավահանգստի հետ հարևանություն է ապահովում:
- *Տրանսպորտային պլանավորում*: Բացի նավահանգստից 20, իսկ օդանավակայից 10 րոպեի հեռավորություն ունենալու առավելությունից, ESBAS-ն «իր ներսում ունի առաջին կարգի ճանապարհային ցանց»:
- *Ենթակառուցվածք և ծառայություններ:* Գործարարներն ունեն պատրաստի ենթակառուցվածքներ ունեցող տարածքների կամ պատրաստի ձեռնարկությունների ընտրություն: Գոտին կարող է պարծենալ անմիջապես շահագործման պիտանի իր տարածքներով, որոնք համապատասխանում են ԱՄՆ և արևմտա-եվրոպական չափանիշներին:
- *Նվազագույն վարչական խոչընդոտներ և բյուրոկրատիա:* ESBAS-ը ներդողների համար դյուրին է դարձնում գոտում իրենց գործունեությունն ու աջակցում թույլտվությունների տրամադրմամբ և արտոնագրմամբ: Իսկ գոտու օրենքներն ու կանոնակարգերը վստահված գումարների և եկամուտների հեշտությամբ փոխանցման հնարավորություն են ընձեռում:
- *Խթանների խելամիտ կառավարում:* Գոտին ազատված է մաքսային տուրքերից մինչև 2009 թվականը կամ, երբ Թուրքիան կանդամակցի Եվրոպական միությանը, նայած թե, որը շուտ կլինի: Էգեյան ազատ գոտին այսպիսով առաջարկում է գրավիչ խթաններ, չնայած սահմանափակում է դրանց հասանելիության շրջանակներն ու ժամկետները:

Միջազգային չափանիշներին համապատասխանող արդյունաբերական պարկերը սովորաբար վարձակալներին առաջարկում են հետևյալը`

- Շուկայական գներ սպասարկվող արդյունաբերական տարածքների կամ վարձակալման, կամ վաճառքի նպատակով;
- Աշխատուժի հասանելիություն հարևան փոքր և մեծ քաղաքներից;
- Տրանսպորտային կապ այնպիսի կարևոր օբյեկտների հետ, ինչպիսիք են քաղաքային տարածքները, օդանավակայանները, երկաթուղիները, ծովային նավահանգիստներն ու բեռնափոխադրման տերմինալները;
- Հեռահաղորդակցման արդյունավետ ցանց, որն առաջարկում է հեռախոս, ինտերնետ և այլ առաջադեմ ծառայություններ;
- Պատշաճ պլանավորված, արհեստավարժորեն նախագծված հողամասեր, որտեղ ներկառուցված են ճանապարհներ, դրենաժային համակարգեր, կոյուղիներ, էլեկտրաէներգիա և ջուր;
- Արդյունաբերական պարկ դուրս ու ներս տանող ճանապարհներ, որոնք ապրանք-

ների և ծառայությունների առաքման հնարավորություն են ընձեռում;

- Հաճույքներ, ինչպիսիք են արդյունաբերական պարկը կամ կենտրոնը, հանրային տրանսպորտի շղթաներ, ինչպիսիք են ավտոբուսային կանգառն ու ավտոկանգառները, և հաճելի շրջակա միջավայրն իր գեղատեսիլ վայրերով;
- Պարկի մուտքի և գործառնությունների մեկնարկման համար արագացված ընթացակարգեր;
- Վարձակալների նկատմամբ հավասար մոտեցում, առանց օտարերկրացիների և տեղացիների միջև խտրականության:

Արդյունաբերական պարկերի առավելությունն այն է, որ դրանք արագացնում են ներդրումային ծրագրի, կամ ՓՄՁ-ի շահութաբերության մեկնարկման ընթացքը: Արդյունաբերական պարկից դուրս գտնվող բիզնեսներին անհրաժեշտ է՝

- Դիմել և վճարել հողի ձեռքբերման դիմաց;
- Նախապատրաստել, լցնել և հարթեցնել հողը;
- Հավելյալ գին վճարել կոմունալ ծառայությունների հասանելիությունն ապահովելու նպատակով;
- Կառուցել արտադրության թափոնների իրենց սեփական համակարգերը;
- Տեղայնքի նկատմամբ համապատասխան հասանելիություն ապահովել:

**ՆԵՐԴԻՐ 6.5**

**Քաղաք Նյու Յորքում շահագրգիռ կողմերի ընդգրկումն, որպես լավագույն փորձ**

Արդյունաբերությունը պաշտպանելու և ընդլայնելու նպատակով Նյու Յորք քաղաքը մշակել է ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում են կոնկրետ տարածքներ որպես «արդյունաբերական գոտիներ»: Նյու Յորք քաղաքին պատկանող հողերը, ներառյալ ազատ հողատարածքներն ու հարկերի չմուծման պատճառով օտարված հողերը պահվում են արդյունաբերական զարգացման համար, ներառյալ արդյունաբերական պարկերը:

Սույն ծրագրի իրականացման նպատակով Նյու Յորք քաղաքում հաստատվել է Արդյունաբերական և արտադրական բիզնեսների գրասենյակ, որը պատասխանատու է քաղաքականության իրականացման և արդյունաբերական և արտադրական բիզնեսներին ծառայությունների մատուցման վերահսկման և համակարգման համար: Արդյունաբերական և արտադրական բիզնես խորհուրդը ստեղծվել է գրասենյակի աշխատանքները վերահսկելու և կառավարելու նպատակով: Խորհուրդը մասնավոր և պետական հատվածի ներկայացուցիչներից բաղկացած մարմին է, որի անդամները նշանակվում են քաղաքապետի կողմից և այն ստեղծված է քաղաքի ղեկավարությանը արդյունաբերական ոլորտի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու և դրա կարիքների բավարարման նպատակով ռազմավարական մոտեցումը խթանելու համար: Խորհրդի կազմում ընդգրկված են 15 անդամ, որոնք ներկայացնում են արդյունաբերական ձեռնարկությունների շահերը: Անդամները բնագավառի արդյունաբերական ընկերությունների ներկայացուցիչներ են, բիզնեսների ղեկավարներ, հետազոտողներ և գիտական աշխատողներ, անշարժ գույքի մեջ մասնագիտացված փաստաբաններ: Խորհուրդը ստեղծագործ մոտեցում է ապահովում արդյունաբերական քաղաքականության լավագույնս մշակման համար (ներառյալ արդյունաբերական պարկերի խթանումը), նպաստում է շահագրգիռ կողմերի միջև կայուն երկխոսության հաստատմանը և ցուցաբերում է բարձր մակարդակի ուշադրություն:

Աղբյուր. ԱՄՆ ՄԶԳ Ուկրաինայում իրականացվող ԱՀԿ անդամակցության և ներդրումային խթանման ծրագիր:

- Աջակցել ծառայություններ մատուցողներին պայքարել տեղական իշխանություններից թույլտվությունների ստացման վարչական խոչընդոտների դեմ;

- Որպեսզի նրանց չտրամադրվեն այն ընդհանուր աղբյուրները, որոնք նրանք կունենային արդյունաբերական պարկում:

Քանի որ սույն ծառայությունների ծախսերը կիսվում են, գործառնությունների ընդհանուր գումարը հաճախ առավել ցածր է արդյունաբերական պարկերում, և ՓՄՁ-ները շահում են բիզնեսների կուտակումիցՊատշաճ կազմակերպված արդյունաբերական պարկերը կարող է օգնել բիզնեսներին թույլտվությունների և արտոնագրերի տրամադրման խնդիրներում, կանոնադրության հարցերում և ապահովել կոմունալ ծառայությունների նկատմամբ հասանելիություն: Ավելին, հաջողված արդյունաբերական պարկերը կարող են նպաստել առավել մեծ տնտեսական մրցակցությանը անդրազգային ընկերությունների ներգրավմամբ և ՓՄՁ-ների խթանմամբ, որոնք իրենց հերթին կարող են նպաստել գործարար միջավայրին: Պետք է շեշտել, որ արդյունաբերական պարկերը չեն կարող փոխարինել բարենպաստ գործարար միջավայրին: Ինչևիցե, առաջին կարգի ընկերությունների ներգրավումը հաճախ «բարձրացնում է» գործարար միջավայրի որակը, ինչպես դա նկատվել է այնպիսի երկրներում, ինչպիսիք են Սլովակիան, Ռումինիան և Բուլղարիան և օգնում է երկրներին ըմբռնել առավել բարենպաստ գործարար միջավայրի արժեքը:

Թե մասնավոր, թե պետական արդյունաբերական պարկերի լավագույն փորձերի մի քանի օրինակներ կան: Անկախ արդյունաբերական պարկի մասնավոր կամ պետական հովանորության, կան դրանց հաջողության երեք հիմնական գործոններ, որոնք են՝

- *Տեղանք:* Սեփականության զարգացման ոսկե կանոնը գործում է նաև արդյունաբերական պարկի զարգացման պարագայում. «տեղանք, տեղանք և տեղանք»: Մինչև հավուր պատշաճի չընտրվի արդյունաբերական պարկի վայրը, այն գրավիչ չի լինի շատ արտադրող ձեռնարկությունների համար: Չափանիշները բերված են ստորև.

- Հարևանություն եկաթուղային խաչմերուկին, օդանավակային, ծովային կամ գետային նավահանգստին կամ խոշոր ճանապարհների ցանցին: Ամենամոտ քաղաքային կենտրոնին կապող տրանսպորտային միջոցները պետք է լինեն արագ, ոչ թանկ և հուսալի:

- Ընդունելի գների սահմաններում հմուտ աշխատուժի հասանելիություն:

**ՆԵՐԴԻՐ 6.6**

**Արդյունաբերական պարկերը Չեխիայի հանրապետությունում և Հունգարիայում**

Չեխիայի հանրապետությունն ու Հունգարիան այն երկու երկրներն են, որոնք, արդյունաբերական պարկերի ստեղծման միջոցով, հաջողությամբ բարձրացրել են արդյունաբերական զարգացման մակարդակը: Չեխիայի հանրապետությունում կան թե պետության կողմից հովանավորվող, թե մասնավոր արդյունաբերական պարկեր: Առևտրի նախարարությունն ու Չեխինվեստը զեկուցել են, որ կան ավելի քան 84 արդյունաբերական գոտիներ և, որ 2004 թվականին ներդրողները զբաղեցրել են արդյունաբերական օգտագործման համար հատկացված և դրա նպատակով կոնկրետ մշակված հողերի 70 տոկոսը: Հաշվարկվել է, որ Չեխիայի հանրապետությունում պետական սեփականություն հանդիսացող պարկերի զարգացման համար ներդված յուրաքանչյուր կրոնի համար մասնավոր ընկերությունները պարկերի ներսում նոր արտադրական հզորությունների մեջ ներդնում են միջինը 36 կրոն: Հունգարիան առաջարկում է արդյունաբերական պարկերի լայն ընտրանի. ներդրողներն, ըստ իրենց բիզնեսի տեսակի, կարող են ընտրություն կատարել ավելի քան 160 գործող արդյունաբերական պարկերի մեջ: Հունգարիայի պարկերում արդյունաբերական գործունեությունը ապահովում է արտահանման 40% և արդյունաբերական արտադրանքի 25% համապատասխանաբար: Արդյունաբերական պարկերում արտադրողականությունը 70 տոկոսով բարձր է ընդհանուր արդյունաբերության միջինից և միայն 15 տոկոսով է զիճում ԵՄ միջինին:

- *Ենթակառուցվածքային ծառայություններ*: Արտադրական ընկերությունները պահանջում են զանազան միջոցների հասանելիություն՝ էլեկտրաէներգիա, հեռախոս, ինտերնետ, կեղտաջրերի հեռացում և տրանսպորտ: Կարևոր են կոմունալ ծառայությունների կայուն մատակարարումը, բարձր և չընդմիջվող որակն ու ցածր գները:

- *Ղեկավարություն:* Ղեկավարությունը պետք է արհեստավարժ և փորձառու լինի արդյունաբերական պարկերի գործողությունների վարման համար, լինի նաև նրբանկատ և առաջնահերթությունը տա իր վարձակալների պահանջների բավարարմանը:

Կան երկու հետաքրքիր օրինակներ, որոնք կարող են կառավարություններին նորարական փորձ առաջարկել, որոնք են Ploiesti արդյունաբերական պարկը Ռումինիայում և Beocin արդյունաբերական պարկը Սերբիայում:

**ՆԵՐԴԻՐ 6.7**

### Արդյունաբերական պարկերը Ռումինիայում և Սերբիայում

Ploiesti արդյունաբերական պարկը արդյունաբերական լքված օբյեկտների և նախկինում շինարարության նպատակով չօգտագործված տարածք է Բուխարեստից 56 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ploiesti քաղաքում: Միջազգային օդանավակայանը գտնվում է Ploiesti-ի և Բուխարեստի արանքում: Հետևաբար, պարկը Բուխարեստից ցածր գներով հարևանություն է ապահովում օդանավակային և մայրաքաղաքին: Արդյունաբերական պարկը գտնվում է ռազմաարդյունաբերական գործարանի նախկին տարածքում և դրա հողատարածքը կառավարության կողմից փոխանցվել է տեղական համայնքին: Պարկի ստեղծողները ավելացրել են հարակից չմշակված հողերը գործարանի տարածքին, հնարավորություն ընձեռելով պարկի ղեկավարներին առաջարկել նախկինում գոյություն ունեցող հարմարությունները կամ հողը նախկինում շինարարության համար չօգտագործվող տարածքի զարգացման համար: Ռումինական կառավարությունն առաջարկում է խթաններ, ներառյալ ենթակառուցվածքի մեջ կապիտալ ներդրման մինչև 20 տոկոս շահութահարկի իջեցում, հետաձգման ենթակա ԱԱՀ վճարումներ և կառավարությունների հետ բանակցությունների արդյունքում ի հայտ բերված դեպքերի համար կոնկրետ խթաններ: Այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են Jazaki-ն և Johnson-ը արտադրություն են ստեղծել պարկում:

Beocin բիզնես պարկը համատեղ սոցիալական պատասխանատվության ծրագիր, որը նախաձեռնվել է Լաֆարժ Սերբիա և Մոնտենեգրոյի կողմից: Բիզնես պարկը շահույթ չհետապնդող ծրագիր է և Լաֆարժի բոլոր օգուտներից, ինչպիսիք են պակաս թանկ հողն ու համատեղ ծառայություններն ուղղակիորեն օգտվում է ներդրողը: Ծրագիրը կառավարությունից հզոր աջակցություն է ստանում: Միջազգային տնտեսական հարաբերությունների նախարարությունն աջակցում է ներդրողներին բոլոր անհրաժեշտ թույլտվությունների ստացման համար: Սերբիայի ամենազարգացած բիզնես տարածքում՝ Վոջվոդինա շրջանում (Նովի սադից 20 կմ հեռավորության վրա, Բելգրադից 100 կմ հեռավորության վրա, խորվաթական սահմանից 30 կմ հեռավորության վրա, հունգարական սահմանից 120 կմ հեռավորության վրա, ռումինական սահմանից 100 կմ հեռավորության վրա) տեղակայված լինելով բիզնես պարկն առաջարկում է բարձր որակավորում ունեցող ցածր գնով աշխատուժի հասանելիություն: Չկան այլ հավելյալ խթաններ, քան նրանք, որոնք տրամադրվում են ներդրողներին: Նախկին պետական միություն Սերբիա և Մոնտենեգրոն ունի արևելյան եվրոպայում ցածրագույն շահութահարկի դրույքաչափ (ընդամենը 10 տոկոս): Պարկը գրավիչ է, քանզի երաշխավորված են արդյունաբերական նպատակով օգտագործման հողերը, գործողությունների մեկնարկման համար պահանջվում է կարճ ժամանակահատված, առկա է ենթակառուցվածքների և ծառայությունների որակը և լավն է աշխարհագրական դիրքը: Երեք միջազգային ներդրողներ, Լաֆարժը, Ասամերն ու Վիտեռսդորֆը, իրենց մասնաճյուղերն ունեն Beocin բիզնես պարկում:

Արդյունաբերական պարկերը կարող են նպաստել ՕՈւՆ-ների ներգրավմանը և տեղանք ապահովել ՓՄՁ-ների համար, բայց նրանք պետք է դիտարկվեն որպես շուկայական պահանջի արձագանք և արդյունաբերական ամուր հիմքի մի մաս: Արդյունաբերական պարկերը չպետք է փոխարինեն գործարար միջավայրի համար մշակված ռազմավարություններին կամ ձեռնարկությունների զարգացմանը: Ավելին, արդյունաբերական պարկերը կարող են միայն օգնել այն բիզնեսներին, որոնք ընդունակ են օգտագործել իրենց առավելությունները: Բիզնեսների մի զգալի մաս չպետք է աջակցվի արդյունաբերական պարկերի զարգացմամբ: Հիմնականում արդյունաբերական պարկերը ձեռնարկություններ են, այլ ոչ քաղաքականություններ կամ ծրագրեր:

*Մինչ դրանք զգալի արժեք են ներկայացնում համայնքների համար և օգնում խթանել տնտեսական զարգացմանը, կարևոր է չծանրաբեռնել արդյունաբերական պարկերին տնտեսական զարգացման պետական նպատակների իրագործման պատասխանատվությամբ:*

## Ներդրումային երաշխիքներ և ապահովագրություն քաղաքական ռիսկից

Կոնկրետ իրավիճակներում, ընկերությունները վերլուծում են ներդրման հեռանկարներն ու գտնում, որ վերադարձվող շահույթը համապատասխանում է իրենց նախատեսումներին, և որ նրանք ի վիճակի են ֆինանսական աղբյուրներ ապահովել ներդրման համար: Նրանց դեռևս կարող է մտահոգել, որ երկրի ներդրումային և քաղաքական միջավայրերը չափազանց մեծ ռիսկ են հանդիսանում ներդրումների ընթացքի համար: Ներդրումներին այս հանգամանքներում խթանելու նպատակով երկրները պետք է այսպես կոչված «ինքնիշխան երաշխիք» տրամադրեն: Այդ երաշխիքի տրամադրմամբ, կառավարությունը ֆինանսական երաշխիք է ապահովում կորուստների կամ չվճարման դեպքերի համար, որոնք երկրի քաղաքական կամ իրավական, կամ, որոշ դեպքերում, տնտեսական իրավիճակների արդյունք են հանդիսանում: Քաղաքացիական պայքարը, տնտեսական փլուզումը, կառավարության կործանարար անցումները, ակտիվների կառավարության կողմից օտարումը և պայմանագրերի խախտումն այն դեպքերն են, որոնք խոչընդոտում են ներդրման իրականացումն ու կարող են ինքնիշխան երաշխիքի պահանջ առաջացնել: Երաշխիքներն ներդրողներին աղքատիկ բիզնես գործարքներից պաշտպանելու համար չեն, այլ պետք է օգնեն նրանց իրականացնել տրամաբանական բիզնես գործարքներ անկանխատեսելի միջավայրում:

Շատ ներդրողներ չեն ցանկանում ընդունել ինքնիշխան երաշխիք անբարենպաստ ներդրումային միջավայր և քաղաքական դաշտ ունեցող կառավարություններից: Փոխարենը, ներդրողը պետք է տնտրի կամ երաշխիքներ երրորդ կողմի երաշխավորից կամ տնտրի քաղաքական ռիսկի երաշխիք: Նման հանգամանքներում, երրորդ կողմ երաշխավորը, սովորաբար դա զարգացման բանկ է, պետք է առաջարկի երաշխիք անկախ ինքնիշխան կառավարությունից, կամ կառավարության կողմից առաջարկված ինքնիշխան երաշխիքին որպես «պահուստային երաշխիք»:

ՎԶԵԲ-ը և Համաշխարհային բանկը երաշխիքներ են տրամադրում ներդրողներին ԵԱՀԿ զարգացող և անցումային տնտեսություններում ծրագրերի իրականացման համար: Ներկայումս, Համաշխարհային բանկի երաշխիքային ծրագիրը թերօգտագործված է և տնտրում է հավելյալ մասնակիցների: Շատ երաշխիքային ծրագրեր կենտրոնացած են ենթակառուցվածքի և արդյունաբերական ծրագրերի վրա, բայց այլ բնագավառներում ևս կան հնարավորություններ: Օրինակ, 2003 թվականին, Ուզբեկիստանի տեղական բանկը շվեյցարական Նեսթլե ընկերությանը տրամադրեց երկուս և կես միլիոն եվրոյի վարկ վերջինիս բիզնեսն ընդլայնելու համար: ՎԶԵԲ-ը տեղական բանկին երաշխիք տրամադրեց պաշտպանելու բանկը ցանկացած ձախողված գործարքից: Երաշխիքները գին ունեն: Երաշխավորված գումարի արժեքը վճարվում է ներդրողի կողմից: Գումարը սովորաբար մեծ չէ՝ ցածր միանիշ թվերով: Այնուամենայնիվ, երաշխիքները բարձրացնում են ներդրման գինը. մեկ այլ հաստատում այն իրողության, որ բարենպաստ գործարար միջավայրի առկայության պարագայում մուտքի գինը ցածր է:

Քաղաքական ռիսկի երաշխիքն այն ապրանքն է, որը ներդրողները գնում են պիտանի

ծրագրերը ձախողումներից պաշտպանելու համար, ինչպիսիք կարող են լինել.

- Արժույթի փոխանցման սահմանափակումներ;
- Սեփականությունից զրկում;
- Պատերազմ և քաղաքացիական ընդվզումներ;
- Պայմանագրի պարտավորությունների չկատարում:

Չնայած որ քաղաքական ռիսկերը նույնպես բարձրացնում են ծրագրի գինը, եթե ներդրողը ֆինանսական աղբյուրներ է փնտրում, բայց այն նաև երբեմն հնարավորություն է ընձեռում պարտապանին ստանալ առավել բարենպաստ ֆինանսավորում, քանզի իջնում է ծրագրի ռիսկը: Բազմակողմանի ներդրումների երաշխավորման գործակալությունը (ԲՆԵԳ) և Մասնավոր ներդրումների արտասահմանյան կորպորացիան (ՄՆԱԿ) քաղաքական ռիսկի երաշխիքի զարգացմանն ուղղված երկու առաջատար երաշխավորներ են հանդիսանում:

**ՆԵՐԴԻՐ 6.8**

## ՆԲԵԳ -ը Մոսկվայում

ՆԲԵԳ-ը 56.4 միլիոն ԱՄՆ դոլար տրամադրեց Մոսկվայից դուրս տեղակայված Ռուսաստանում առաջինը մասնավորեցված կոյուղային ջրերի մաքրման գործարանին: Ծրագիրը, որի նպատակն էր բավարարել ջրամատակարման նկատմամբ քաղաքի աճող պահանջարկը, ներառում է նաև նախկինում շինարարության համար չօգտագործված տարածքում խմելու ջրի մաքրման գործարանի կառուցումը, որը 4 տոկոսով կբարձրացնի Մոսկվա քաղաքի խմելու ջրի մատակարարման հզորությունը: Շինարարությունը սկսվել է 2003 թվականի սեպտեմբերին՝ կառուցել, տիրապետել, գործարկել և փոխանցել 13,5 տարի տևողությամբ կոնցեսիոն պայմանագրով մասնավոր ձեռնարկության մասնակցությամբ: Ջուրը Մոսկվա գետից խողովակով կհոսի մշակման գործարան, որտեղ այն ֆիլտրման կենթարկվի ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ: Ներդրումային խթանման գործակալություններին խրախուսվում է լավ իրազեկված լինել ֆինանսական աղբյուրների մասին, որոնք նրանք հնարավորություն ունենն ստանալ Եվրոպական ներդրումային բանկից, ՎԶԵԲ-ից, Միջազգային ֆինանսական ընկերությունից, ԲՆԵԳ-ից, Համաշխարհային բանկից, Մասնավոր ներդրումների արտասահմանյան կորպորացիայից, Առևտրի և զարգացման ԱՄՆ գործակալությունից և այլ կազմակերպություններից:

## Եզրահանգումներ և առաջարկություններ

ՕՈւՆ փափագող երկրները պետք է ներգրավվեն ներդրումային խթանման գործընթացի մեջ: Ներդրումային խթանումն իր մեջ ներառում է քաղաքականության պաշտպանություն, հեղինակության ձևավորում, ներդրումների ստեղծում և ներդրողներին տրամադրվող ծառայություններ: ԵԱՀԿ մասնակից երկրներին, ինչպիսիք են Չեխիայի հանրապետությունը, Իռլանդիան և Բալթյան հանրապետությունները, հաջողել է գրավել ներդրողների ուշադրությունը:

Ի վերջո, առավել բարենպաստ ներդրումային միջավայրը ներդրողներին առավել լավ բիզնես առաջարկների ներկայացման հնարավորություն է ընձեռում: Ներդրումային խթանները չեն փոխարինում բարենպաստ գործարար միջավայրին և պետք է կիրառվեն որպես գերագույն կարգի բիզնես միջավայրի հավելում: Կառավարությունները պետք է ուշադիր լինեն «չխոչընդոտելու» խթաններին և գնահատեն ու լիովին ըմբռնեն դրանց ֆինանսական հետևանքները: Հակառակ դեպքում նրանք կաշառակերության և ֆինանսական աղքատիկ արդյունքների ռիսկի են դիմում: Խթանները պետք է կիրառվեն ոչ խտրականորեն և հասանելի լինեն և արտասահմանյան, և տեղական ընկերությունների համար:

Առաջարկված լավագույն փոձերը հետևյալն են՝

*Ներդրումային խթանում*

- Ներդրումային խթանման գործակալության գործունեության բարելավում. ռազմավարական և գործառնական լավագույն փորձերը կարելի է սովորել առաջատար ՆԽԳ-ների գործունեությունից, ինչպիսիք են Իռլանդիայի արդյունաբերական զարգացման գործակալությունը և Չեխինվեստը: ՆԽԳ-երին խորհուրդ է տրվում կապեր ստեղծել այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են ԲՆԵԳ-ը և Ներդրումային խթանման գործակալությունների համաշխարհային ասոցիացիան (WAIPA):
- Ներդրումների խթանման նպատակային քարոզարշավների կազմակերպում. երկրները պետք է հնարավորություն ունենան սպառման շուկայի նպատակով ներկայացնել իրենց տնտեսությունների ամենամրցունակ բնագավառները՝ ամենաակտիվ սեկտորներն ու զարգացող շրջանները, ամենահավանական ներդրողներին:

*Ներդրումային խթաններ*

- Ցածր հարկման տոկոսադրույքն ու ոչ այնքան բարդ հարկային համակարգն ավելի լավ է, քան ներդրողի երկրի կամ արդյունաբերության վրա հիմնված բարդ հարկային խթանների շարանը:
- Ֆինանսական խթանները պետք է կիրառվեն ոչ ավել քան հինգ տարի:
- Հատուկ տնտեսական գոտիները, ինչպիսիք են ազատ կամ արտահանման գոտիները, պետք է տեղակայված լինեն այնպիսի տարածքներում, որոնք ցանկալի են ներդրողների համար, այլ ոչ լքված օբյեկտների տարածքները, որոնք իջեցնում են ներդրման ենթակա տեղայնքի մրցակցելիությունը:

*Արդյունաբերական պարկեր*

- Արդյունաբերական պարկերը տնտեսական զարգացման միջոց չեն հանդիսանում, այլ շուկայի պահանջներից բխող երևույթ: Այնուամենայնիվ, արդյունաբերական պարկեր կան համարյա բոլոր զարգացող շուկայական տնտեսություններում: Պետությունը պետք է երաշխավորի մասնավոր պարկեր ստեղծողների համար ընդունելի գներով հողի հասանելիություն և պետք է ստեղծի պետական հովանավորություն ունեցող պարկեր, որոնք բավարարում են ներդրողների պահանջներն ու չեն խոչընդոտում մասնավոր սեկտորին իր սեփական արդյունաբերական պարկերի ստեղծման համար:

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ԲՆԵԳ. <www.miga.org>

ՕՈւՆ խթանման կենտրոն. <www.fdipromotion.com>

Ներդրումների խթանման գործակալությունների համաշխարհային ասոցիացիա.
<www.waipa.org>

ՏՀԶԿ Ներդրումային համաձայնագիր <www.investmentcompact.org>

ՏՀԶԿ ներդրումների վարչություն
<www.oecd.org/topic/0,2686,en_2649_34529562_1_1_1_1_34529562,00.html>

ՄԱԱԶԿ ներդրումների և տեխնոլոգիաների խթանում. <www.unido.org/doc/18264>

ՄԱԱՀ Օտարերկրյա Ուղղակի ներդրումներ
<www.unctad.org/Templates/StartPage.asp?intItemID=2527ևlang=1>

Ազատ գոտիների համաշխարհային կոնվենցիա. <www.freezones.org>

## ՀՂՈՒՄՆԵՐ

---

[1] «Արդյո՞ք Հատուկ տնտեսական գոտիների տրված հասույթները գերազանցում են ծախսերին» <http://rru.worldbank.org/Discussions/Topics/Topic40.aspx>

## Գլուխ 7

# Փոքր և միջին ձեռնարկու-թյունների (ՓՄՁ-ների) զարգացում և խթանում



Տնտեսական զարգացման հիմնարարային բաղադրիչ է համարվում փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) զարգացումը: ՓՄՁ-ների աշխատատեղերի ստեղծման լավագույն աղբյուր են հանդիսանում, ինչպես նաև օգնում են խթանել նորարարությունը, գործարարական ակտիվությունն ու մրցակցությունը: Այս գլխում առանձնակի ուշադրություն է հատկացվում ԱՊՀ երկրների տնտեսական և սոցիալական զարգացման համար ՓՄՁ-ների աջակցության և այս ոլորտի հաջող զարգացման համար բարենպաստ օրենսդրական և ենթակառուցվածքային միջավայրի կարևորության վրա: Այստեղ նաև քննարկված է, թե ինչպես ֆինանսական, կրթական և ձեռնարկությունների աջակցության բնագավառներում կառավարությունների կողմից նախաձեռնված ՓՄՁ աջակցման ծառայությունները առանց շուկան խեղաթյուրելու կարող են նպաստել ՓՄՁ-ների զարգացմանը:

## ՓՄՁ զարգացման կարևորությունը

ՓՄՁ-ների աճը փնփեսական զարգացման հիմնաքարակային բաղադրիչ է հանդիսանում: ՓՄՁ-ներն կազմում են են բիզնեսների ավելի քան 90 փոկոսը և, ընդհանրապես, հանդիսանում են աշխապապեղերի զարգացման խոշորագույն շարժիչ զարգացող և անցումային երկրներում, հաճախ ապահովվելով աշխապապեղերի 60 փոկոսը: Ընկերությունների մեծամասնությունն ունի 100 մարդուց պակաս աշխապողներ: Ավելի քան հիսուն երկրներում վաթսուն հազար հոգու մասնակցությամբ արված ուսումնասիրությունն ի ցույց հանեց, որ նոր բիզնեսի մեկնարկումը դիփարկվում է որպես աղքապությունից խուսափելու ամենաարդյունավեփ մեթոդ: (Նկար 7.1):

Նոր ձեռնարկությունների սփեղծումը աշխապելու հնարավորություն է ընձեռում նոր և նոր մարդկանց, բերում նոր հարկապուներ, ապահովում ապրանքներ և ծառայություններ փեղական, փարածաշրջանային և գլոբալ շուկաների համար distribution.” «ՓՄՁ-ները աշխապապեղերի սփեղծման, մրցակցության, փնփեսական ակփիվության և նորարարության աղբյուր են հանդիսանում. դրանք խթանում են ձեռնարկափիրական ոգուն և ունակությունների փարածմանը: Քանի որ դրանք առավել լայն են սփռված, քան մեծ ընկերությունները, ՓՄՁ-ները նաև նպաստում են եկամուփների առավել լավ բաշխմանը:»[1]

**ԳԾԱՊԱՏԿԵՐ 7.1**

**Աղքապության հաղթահարման ծանապարհների ընկալումը**




## ՓՄՁ-ների փնփեսական ազդեցությունը

Աղյուսակ 7.1-ում ներկայացվում է այն կարևոր դերը, որ ունեն ՓՄՁ-ները զարգացած փնփեսություններում: ՓՄՁ-ները մեծ ներդրում ունեն ՀՆԱ-ում և աշխապեղերի սփեղծմանը զարգացած այնպիսի փնփեսություններ ունեցող աշխարհիս խոշորագույն երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Ճապոնիան, Գերմանիան, Ֆրանսիան, Իփալիան և Միացյալ թագավորությունը:

**ԱՂՅՈՒՍԱԿ 7.1**

### Զարգացած երկրներում ՓՄՁ-ների զարգացման և խթանման հիմնական ցուցանիշները

| Ցուցանիշներ | ԱՄՆ | Կանա-դա | Ճապո-նիա | Գերմա-նիա | Ֆրան-սիա | Իտա-լիա | Միացյալ Թագավո րություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՓՄՁ ներդրումը ՀՆԱ-ում | 52% | 43% | 52% | 57% | 50% | 55% | 53% |
| ՓՄՁ օժանդակությունն աշխատատեղերի ստեղծմանը | 50% | 47% | 70% | 70% | 57% | 71% | 56% |
| ՓՄՁ-ների թվաքանակը բոլոր ընկերություններում | 98% | 99,8% | 99% | 99% | 98% | 99% | 99% |

Աղբյուր. Փոքր բիզնեսին նվիրված 5-րդ համառուսական հավաք, 2004 թվականի մարտ:

ՓՄՁ-ների ազդեցությունն պակաս ակտիվ է զարգացող և անցումային երկրներում, որտեղ դրանք պակաս դերակատարություն ունեն ՀՆԱ-ի և աշխապեղերի ստեղծման համար: Այն երկրները, որոնք փոքր առաջընթաց են արձանագրել տնտեսական անցման մեջ, ունեն մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ում (29%) և աշխատեղերի ստեղծման մեջ (28%) ցածրագույն բաժին (Աղյուսակ 7.2): Փորձագետները հաշվարկում են, որ տնտեսության, աշխապատեղերի ստեղծման և անվտանգության ապահովման մեջ ՓՄՁ-ների մասնակցությունը զգալի դարձնելու նպատակով «եթե փոքր ձեռնարկությունների աշխատատեղերի և ավելացված արժեքի ստեղծման մեջ մասնաբաժինը կազմում է մոտ 40 տոկոսաապա նոր ստղեծվող կարող են վերցնել հին սեկտորի ֆինանսական միջոցներն ու օժանդակեն կայուն աճին: Ուղղակի բարձր արդյունավետություն ունեցող փոքր ձեռնարկությունների մի փոքր քանակություն ունենալը բավարար չէ: Եթե փոքր բիզնեսներն արագ կերպով աշխապատեղեր չապահովեն, ապա դրանք չեն ստեղծի այն վճռորոշ զանգվածը, որը ճանապարհ է հարթում դեպի տնտեսական զարգացում:» [2]

**ԱՂՅՈՒՍԱԿ 7.2**

### Անցումային տնտեսություններում ՓՄՁ զարգացվածության միջին ցուցանիշը

| Նկարագրություն | Զարգացող շուկայով առաջատար պետություններ | Դեպի շուկայական տնտեսության արագ տեմպերով անցում կատարող երկրներ | Դեպի շուկայական տնտեսություն անցման մեջ գտնվող երկրներ | Դանդաղ տեմպերով դեպի շուկայական տնտեսություն անցում կատարող երկրներ |
|---|---|---|---|---|
| Մասնավոր հատվածի բաժինը տնտեսությունում (%) | 65,9 | 67,5 | 64,0 | 46,9 |
| ՓՄՁ հատվածի մասնակցույունը ՀՆԱ-ում (%) | 51,9 | 46,5 | 40,0 | 27,9 |
| ՓՄՁ ոլորտներում զբաղվածների տեսակարար կշիռը (%) | 63,1 | 41,8 | 35,9 | 29,2 |
| ՀՆԱ մեկ շնչին, ԱՄՆ ‰ | 5758 | 2882 | 1368 | 877 |
| ՓՄՁ մասնաբաժինը ՀՆԱ-յում, ԱՄՆ ‰ մեկ շնչին | 13,54 | 436 | 158 | 33 |
| ՓՄՁ զարգացվածության ցուցանիշը | 0,22 | 0,13 | 0,10 | 0,038 |

Աղբյուր. ՄԱԵՏՀ գործառնությունների համակարգման բաժին (Ժնև 2004); ՎԶԵԲ Անցումային զեկույց; ՓՄՁ ազգային պատասխանատուներ

## *ՓՄՁ-ների նվազող ազդեցությունը շնորհիվ ստվերային տնտեսության*

«Ստվերային տնտեսության» չափերն ու գրավչությունն ի համեմատ «պաշտոնական տնտեսության», նվազեցնում է ՓՄՁ-ների տնտեսական ազդեցությունը: Նկար 7.2-ում ներկայացված է ցածր եկամուտներ ունեցող երկրների իրավիճակը, որտեղ ստվերային տնտեսությունում աշխատատեղերն ու արտադրանքն ավելին են, քան ՓՄՁ հատվածում: Տնտեսական զարգացման համար վճռորոշ է ոչ ստվերային տնտեսությունից օրինական բիզնեսներին անցման համար իրականացված տնտեսական միջոցառումները:

**ԳԾԱՊԱՏԿԵՐ 7.2**

**Զբաղվածության և ՀՆԱ մեջ մասնաբաժին (%)**







Օրինական ձեռնարկություններում աշխատանքի անցումն երաշխավորում է առավել շատ աշխատողների թոշակներով ապահովմամբ, անվտանգության կանոնակարգերի պահպանմամբ ու առողջապահական նպաստների տրամադրմամբ; սա, առանձնապես կարևոր է կանանց և երիտասարդների համար, որոնք կազմում են ոչ պաշտոնական հատվածի մեկ երրորդը: ԵԱՀԿ-ն հատկապես ակտիվ գործունեություն է ծավալում Հարավ-Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում նորաստեղծ օրինական բիզնեսների աջակցման ուղղությամբ: Ի վերջո, աշխատատեղերի առավել օրինական կարգով ստեղծումը նպաստում է առավել բարձր հարկային մուտքերի միջոցով սոցիալական ապահովության նպաստների ֆինանսական ակտիվությանը:

## *ՓՄՁ-ների ներուժի ապահովում բարեփոխված գործարար միջավայրի միջոցով*

ՓՄՁ հատվածը մեծապես նպաստում է տնտեսական աճին, աշխատատեղերի ստեղծմանն ու աղքատության նվազեցմանը: Անկախ նրանից, թե դրանք ԱՄՆ-ում «Սիլիկոնային հովտի» նորաստեղծ բիզնեսներ են, թե փոքր տեքստիլ արտադրամասեր Բանգլադեշում կամ Աֆրիկայում, նոր ձեռնարկություններն ունեն ձևափոխման հնարավորություն: Ինչևիցե, որպեսզի ՓՄՁ-ները հասնեն ցանկալի արդյունքի, ձեռնարկատերերը պետք է շահագրգռված լինեն ստեղծելու օրինական ձեռնարկություններ և ձգտեն, որպեսզի իրենց ձեռնարկությունները շարունակեն գոյատևել: Ամենակարևոր գործոնը, որը պետք է հաշվի առնել ձեռնարկատերերին աշխատել օրինական և օգնել նրանց գոյատևել դա գործարար միջա-

վայրի սպեղծումն է: Եթե պարփավորություն- ները գերակշռեն պոփենցիալ առավելություն- ներին, ապա բիզնեսները սփվերային փնփե- սությունից հրաժարվելու շափ քիչ դրդապափ- ճառներ ունեն: Նույնիսկ ամենալավ գործա- րար միջավայրերում նոր բիզնեսների մեծա- մասնությունը ձախողվում է: Ոչ բարենպասփ գործարար միջավայրն իր բարձր հարկերով, կաշառակերությամբ և ճնշող վարչարարութ- յամբ առավել մեծ ռիսկի փակ է դնում հաջո- ղության հեռանկարները:

Համաձայն Ուղեցույցի հարցաշարի պա- փասխանների մեծամասնության, ՓՄՁ-ների զարգացման հիմնական խոչընդոփները հեփևյալն էին՝

- Չափից դուրս շափ և վիճարկելի կանոնա- կարգեր;
- Չափազանց շափ պարփավորություններ ընդգրկող վարչարարություն (գրանցում, արփոնագրում, հարկեր և այլ նման հան- գամանքներ);
- Կաշառակերություն, և
- Պայմանագրերի կնքման և վեճերի լուծ- ման հեփ կապված դժվարություններ:

Ձեռնարկափիրությանն խանգարող նշված խոչընդոփները նույնն են, ինչ որ Հարցաշա- րում նշված ՕՈւՆ-ներին խանգարող խոչըն- դոփները: Հարցաշարում նշված հափկապես ՓՄՁ-ներին խանգարող արգելքները հե- փևյալն էին՝

- Բիզնեսի մեկնարկի և զարգացման համար անհրաժեշփ գումարի պակաս;
- Բարձր հարկեր;
- Ակփիվների սահմանափակ հասանե- լիություն; և
- Կառավարման ունակությունների պա- կաս:

Ուղեցույցի հարցաշարի արդյունքները համապափասխանում են միջազգային զար- գացման գործակալությունների (ՕՆԽԾ, ՄՖԿ, ՎԶԵԲ) և ազգային հեփազոփական հասփափությունների կողմից 27 անցումային երկրներում իրականացված ՓՄՁ հեփազո- փություններից սփացված փվյալներին: Նկար 7.3-ում նշված են այն վեց պարփադիր բա- ղադրիչները, որոնց նկափմամբ ՓՄՁ-ները պեփք է ունենան հասանելիություն գոյափևե- լու ամենամեծ հնարավորություն ունենալու համար: Կառավարություններից չի ակնկալ- վում ուղղակի աջակցություն մասնավոր ձեռ- նարկություններին, բայց նրանք պափասխա- նափու են սփեղծվող ձեռնարկությունների համար հնարավորություններ փրամադրող դաշփի ապահովման համար: Շուկաների, ֆի- նանսական աղբյուրների, կրթության, հողի, փեխնոլոգիաների և օժանդակ ծառայություն- ների նկափմամբ հասանելիությունը թույլ կփա մրցակցող ձեռնարկություններին գո- յափևել և զարգանալ ազափ շուկաներում:

**ԳԾԱՊԱՏԿԵՐ 7.3**



## *ՓՄՁ օժանդակող քաղաքականության դաշտի ստեղծում*

2003 թվականին, ԵԱՀԿ երկրները հավանության արժանացրին կազմակերպության Տնտեսական և բնապահպանական գործունեության ռազմավարական փաստաթուղթը, որով այլ պարտավորությունների հետ միասին ստանձնեցին նաև ստեղծել գործարարության համար բարենպաստ միջավայր և խթանել ՓՄՁ-ներին. «Պատշաճ կառավարումը ենթադրում է տնտեսական քաղաքականությունների, հաստատությունների և օրենսդրական դաշտի ստեղծում, որտեղ կարող է բարգավաճել բիզնեսը և բարձրանալ ներդրողների վստահությունը: Սա իր մեջ ներառում է գործարար միջավայրի համար բարենպաստ օրենսդրություն, որը խթանում է և պաշտպանում մասնավոր սեփականությունը, առաջադրում է տնտեսական գործունեության հստակ կանոններ և կանոնկարգեր և պարզեցնում ու արդիականացնում է ընթացակարգերն ու պահանջները: Մենք մտադիր ենք ստեղծել բիզնեսի, ներառյալ ՓՄՁ-ների զարգացմանը, ինչպես նաև ներդրումների խթանմանը համապատասխանող հստակ իրավական և ինստիտուցիոնալ շրջանակներ»[3]:

2000 թվականի հունիսին, Եվրոպական հանձնաժողովի անդամ երկրների պետությունների ու կառավարությունների ղեկավարները հաստատեցին Փոքր բիզնեսների վերաբերյալ Եվրոպական հռչակագիրը[4] խրախուսելու ձեռնարկատիրությանն ու բարեփոխելու գործարար միջավայրը ի օգուտ փոքր բիզնեսների:

Նրանք այդպիսով պարտավորվեցին աշխատել տաս ընդգրկուն բնագավառների ուղղությամբ.

- Կրթություն և դասընթացների վարում ձեռնարկատիրության վերաբերյալ;
- Բիզնեսի առավել էժան և արագ մեկնարկ;
- Առավել բարենպաստ օրենսդրություն և կանոնակարգում;
- Հմտությունների հասանելիություն;
- Ինտերնետի միջոցով կապի բարեփոխում;
- Միասնական շուկայից հնարավոր օգուտների քաղում;
- Հարկային և ֆինանսական խնդիրներ;
- Փոքր ձեռնարկությունների տեխնոլոգիական հնարավորությունների հզորացում;
- Էլեկտրոնային բիզնեսի հաջող մոդելներ և փոքր բիզնեսի առաջնակարգ օժանդակում; և
- ԵՄ և ազգային մակարդակով ՓՄՁ շահերի առավել հզոր և արդյունավետ ներկայացում:

ՓՄՁ հռչակագրի առավելությունները չեն սահմանափակվում ԵՄ երկրների համար: 2003 թվականին, Փոքր ձեռնարկությունների եվրոպական հռչակագիրը հաստատվեց նաև արևմտյան Բալկանյան երկրների և Մոլդովայի կողմից: ԵՄ ՓՄՁ-ների ստանձնումն օգնեց այս երկրներին արագացնել իրենց ՓՄՁ -զարգացման քաղաքականությունների և գործողությունների պլանների մշակումը և գնահատել իրենց տարեկան առաջընթացը հստակ փուլերի և ցուցանիշների համեմատությամբ: ԱՊՀ Առևտրի պալատը փորձեր է ձեռնարկել դասակարգել ԱՊՀ փորձը ՓՄՁ -զարգացման մեջ և ստանդարտացնել ՓՄՁ -սահմանումներն ու աջակցող գործողությունները:

**ՆԵՐԴԻՐ 7.1**

### ՓՄՁ քաղաքականությունը Ղազախստանում

Ղազախստանի նախագահը 2005 թվականի փետրվարի 18-ին «Ղազախստանն արագ տեմպերով աճող տնտեսական, սոցիալական և քաղաքական արդիականացման ճանապարհին» վերնագրված ուղերձում ՓՄՁ զարգացման վերաբերյալ իր մոտեցումը բնութագրել է հետևյալ կերպ.

Նախատեսվում է փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման հիմնավորապես նոր մոտեցում, որի միջոցով պետք է ստեղծվի ձեռնարկության իրական ոգու արարման համար բարենպաստ միջավայր: Մասնավոր ձեռնարկությանը թարմ նոր շարժիչ ուժ հաղորդելու համար ոչ հիմնական գործառույթները պետք է տրվեն փոքր և միջին ձեռնարկություններին:

Հատուկ պետք է նշել նախագահի կոչը կառավարության և մասնավոր հատվածի միջև համագործակցության զարգացման ուղղությամբ և ՓՄՁ զարգացման համար բարենպաստ միջավայր ստեղծելու իր կողմից կառավարության խրախուսումը: 2006 թվականին Ղազախստանն ընդունեց «Մասնավոր ձեռնարկատիրության» մասին նոր օրենք, որը փոխարինեց նախկին օրենքներին ու թարմացրեց ՓՄՁ կանոնակարգերը:

Ուղեցույցի հարցաշարին համաձայն, Ղազախստանում հաջողությամբ իրականացվեցին ՓՄՁ զարգացման վեց պետական ծրագրեր: Այդ ծրագրերը նպաստեցին ՓՄՁ հատվածի կայուն զարգացմանը, բարձրացրին ՓՄՁ մասնեբաժինը գերակայող տնտեսական ոլորտներում, խթանեցին աշխատատեղերի ստեղծմանը, իրապես մրցունակ միջավայրի զարգացմանը, ՓՄՁ իրավական պաշտպանության բարելավմանը, վարկերի և ֆինանսական միջոցների նկատմամբ առավել դյուրին հասանելիությանը, բիզնես դասընթացների անցկացմանն ու ՓՄՁ-ների մասին տեղեկատվական աղբյուրների հասանելիությանը»:

## *ՓՄՁ-ների բեռի նվազեցում*

Ոչ բարենպաստ գործարար միջավայրն առավել շատ բացասաբար ազդում է ՓՄՁ-ների, քան մեծ բիզնեսների վրա, որովհետև ՓՄՁ-ներն ունեն պակաս քաղաքական ազդեցություն, իրավական ընթացակարգերի ձեռնարկման կամ վարման համար անբավարար կանխիկ դրամ և կանոնակարգերին համընթաց քայլելու անբավարար միջոցներ: ՏՀԶԿ 11 երկրներում անցկացված ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ յուրաքանչյուր մեկ աշխատողի կտրվածքով վարչական ծախսերը հինգ անգամ առավել են ՓՄՁ--ների, քան մեծ ընկերությունների համար (Նկար 7.4): Փոքր ընկերությունները չունեն լայնածավալ գործառնություններ, որոնք անհրաժեշտ են համապատասխանության ծախսերի ապահովման համար:

**ԳԾԱՊԱՏԿԵՐ 7.4**




Աղբյուր. ՏՀԶԿ (2001), վարչական խոչընդոտների վերաբերյալ բիզնեսների ընկալումը

## *ՓՄՁ-ներին հատուկ խոչընդոտների վերացման միջոցառումներ*

Օտարերկրյա ներդրողներին ու խոշոր ընկերություններին խանգարող հիմնական խոչընդոտները (որոնք ներկայացված են Գործարար միջավայրի բարեփոխմանն ուղղված պետական գործողություններ և քաղաքականություններ վերնագրով Գլուխ 4-ում) նույնն են, ինչ որ ՓՄՁ-ների վրա բացասաբար ազդող խոչընդոտները: ԱՄՆՄԶԳ-ի, ԵՄ-ի և այլ կազմակերպությունների օժանդակությամբ շատ երկրներ ձեռնարկել են բիզնեսների վրա ազդող խոչընդոտների նվազեցմանն ուղղված միջոցառումներ: ՓՄՁ-ների վրա առանձնակիորեն բացասաբար ազդող երկու խոչընդոտներն են բիզնեսի գրանցման գործընթացը և պետական ստուգումները: Եթե որևէ մեծ ընկերություն ներդրում է կատարում հիսուն միլիոն արժողություն ունեցող գործարանի մեջ, որը պահանջում է երկու տարվա նախագծում և շինարարություն, ապա երեսուն օրյա գրանցման գործընթացը և փորձագետների և իրավաբանների ծառայությունների համար տրամադրվող տասնհինգ հազար եվրո գումարը համեմատաբար ցածր է: Իր առաջին ծրագիրը սկսելուն սպասող ՓՄՁ-ի համար գրանցման ծախսերն ու ձգձգումները կարող են վճռորոշ լինել:

*Բիզնեսի գրանցում:* Փոքր ձեռնարկության մեկնարկի համար հատկապես կարևոր է ժամանակին շուկա մուտք գործելը: Ձեռնարկության գրանցման համար հաստատված ժամանակահատվածը հայտնի է որպես գործարար միջավայրի որակի լավ ցուցանիշ: Ամենազարգացած երկրներն ունեն բիզնես գրանցման համար տրամադրված մեկ-օրյա ժամկետ, մինչդեռ այլ երկրներում գրանցումը կարող է ամիսներ տևել: Բիզնեսի գրանցման արագացման լավագույն փորձը մեկ կանգառի մոդելն է: Մեկ կանգառի մոդելի պարագայում բիզնեսի սեփականատիրոջից պահանջվում է ներկայացնել գրանցմանն առնչվող փաստաթղթերը միայն մեկ տեղ: Ուկրաինայում վերջերս հաջողությամբ պսակվեց մեկ կանգառի մոդելի կիրառումը: 2004 թվականին ուժի մեջ մտած Իրավաբանական միավորների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման մասին ուկրաինական օրենքը հնարավորինս պարզեցրել է գրանցման գործընթացը: Ձեռնարկատերերին այլևս անհրաժեշտ չի անձնապես ներկայանալ վեց տարբեր պետական գերատեսչություններ: Նոր օրենքով կրճատվում է ձեռնարկատերերի ուղղակի շփումը պետական պաշտոնյաների հետ, պետական ռեգիստրն է, որն ընդունում է դիմումներն ու իրականացնում գրանցման և պարտադիր կատարման բոլոր գործառույթները: Այս մոտեցման շնորհիվ լուծվել են հիմնական խնդիրներ և մինչև չորս օր կրճատվել է գրանցման համար հատկացված ժամկետը[4]: Ինչևիցե, մեկ կանգառի պատուհանը չի փոխարինում գրանցման բյուրոկրատական գործընթացին. մեկ պատուհանը չի կարող օգտակար լինել բիզնեսներին, եթե գրանցման գործընթացը ժամանակատար է և ոչ թափանցիկ:

*Պետական ստուգումներ.* Ստուգումները ՓՄՁ-ների համար ժամանակատար և ծախսատար են: Սովորաբար, ՓՄՁ-ների համար առավել դժվար կառավարելի է արտադրողականության կորուստը ֆինանսական ստուգումների կամ ստուգումների ժամանակ: ՓՄՁ-ները չեն կարող իրենց թույլ տալ վճարում ապահովել ֆինանսական և իրավաբանական աշխատողների համար և չունեն վարչական աշխատողներ ստուգողներին աջակցելու նպատակով: Օրինակ, Ռուսաստանը պարտավորվել է նվազագույնի հասցնել բիզնեսին առնչվող մի շարք ֆինանսական և այլ ստուգումներ: Կառավարությունն առաջարկել է փոքր բիզնեսների ստուգման ժամանակ հետաձգել դրանց կողմից կատարվող վճարումներն ու ֆինանսական պարտավորությունները վերջինների գործունեության առաջին երեք տարիների ընթացքում: Դրա նպատակն է առաջիկա հինգ տարիների ընթացքում 90 տոկոսով կրճատել ՓՄՁ-ներին խանգարող չափազանց շատ վարչական խոչընդոտները, որպես ներկայումս Ռուսաստանում ընթացքի մեջ գտնվող վարչարարարական բարեփոխման հիմնական քայլերից մեկը: Երկրների կողմից իրականացվող այլ միջոցառումներից են՝ տարվա ընթացքում ընկերությունում իրականացվող ստուգումների քանակի սահմանափակում; պետական իշխանության ներկայացուցիչների հետ փոխհարաբերություններում ընկերության իրավունքները երաշխավորող նորմերի մշակում և ընդունում (որով ուրվագծվում է, թե ինչ պետք է ակնկալի ընկերությունը ստուգումից); ստուգումների հետ կապված սխալների ուղղման հնարավորության ստեղծում:

*ՓՄՁ-ների համար բարենպաստ կանոնակարգիչ ազդեցության գնահատում (ԿԱԳ-ներ):* Բացի այն փաստից, որ շատ

երկրներ ձախողել են իրականացնել ԿԱԳ-երը նախքան նոր կանոնակարգերի ներմուծումը, բոլոր ԿԱԳ-երը պետք է հատուկ ուշադրության փակ վերցնեն ՓՄՁ-ներին, քանզի նոր կանոնակարգերը հաճախ առավել մեծ ազդեցություն են թողնում ՓՄՁ-ների, քան առավել մեծ բիզնեսների վրա: Միացյալ Թագավորությունում բոլոր նոր կանոնակարգերն ենթակա են ԿԱԳ-երի, որոնք ընդգրկում են «փոքր բիզնեսի թեստը» երաշխավորելու, որ դրանք չեն պարտադրի անհամապասխան պարտավորություններ փոքր բիզնեսների վրԱՄՆ-ում, շատ նահանգներ փոքր բիզնեսների համար ընդունում են «վարչական ճկունության» մասին օրենքներ:

ՓՄՁ-ների վրա պարտադրվող վարչական բեռը նվազեցնելու նպատակով Կառավարությունները կարող են կիրառել նաև այլ ռազմավարություններ, որոնք են՝

- Կառավարական գերատեսչության սպեղծում կամ ՓՄՁ գործակալությունից կամ նախարարությունից ներկայացուցչի նշանակում առավել լայն վարչական զարգացման և բարեփոխման գործընթացների մեջ ՓՄՁ-ների տեսանկյունները ներկայացնելու նպատակով;
- Պետական և մասնավոր հատվածների միջև գործնական երկխոսության ընթացքում փոքր բիզնեսի հատվածի կողմից ձայնի երաշխավորում;
- Հատուկ ՓՄՁ-ների համար մշակված օրենքների և փաստաթղթերի պարզ լեզվով շարադրանքի և ուղեցույցի հետ համապասպախանության երաշխավորում;
- ՏՏ հասանելիության երաշխավորում, որը ՓՄՁ-ներին էլեկտրոնային կառավարման միջոցներից օգտվելու հնարավորություն է ընձեռում:

## ՓՄՁ զարգացման պետական աջակցության ծրագրի ձևավարում

Ուղեցույցում շեշտադրվում են գործարար և ներդրումային միջավայրի բարելավման նպատակով արված ոչ պետքական կանոնակարգերի վերացման, առավել լավ օրենքների ներմուծման, թափանցելիության մասին առաջարկները, որոնք առավել նախապատվելի են, քան նախաձեռնությունների կամ կառավարական թանկ ծրագրերի միջոցով վերը նշված միջավայրի ապահովումը: Ընդհանուր նպատակը տնտեսական մրցակցելիությունն է, որովհետև մրցունակ տնտեսությունը գրավիչ է ՕՈւՆ-ների և խրախուսիչ ձեռնարկատիրության համար: Մակրո մակարդակում, ՓՄՁ-ների ներկայությունը ավելացնում է տնտեսության մրցունակությունը: Միկրո մակարդակում, ՓՄՁ-ները կարող են դժվարությունների հանդիպել առավել խոշոր ձեռնարկություններ-ի հետ մրցակցության ժամանակ: Մրցունակ դառնալու իր աճի և հասանացման ճանապարհին ՓՄՁ-ը կարող է պետական աջակցություն ակնկալել, բայց այդ աջակցությունը չպետք է կայունացնող լինի: Շուկայական տնտեսությունները չեն օժանդակում անարդյունավետ բիզնեսներին, այլ ստեղծում են պրամաբանական սահմաններում վարչական պարտավորություններ, ֆինանսների և գիտելիքների նկատմամբ հասանելիություն ապահովող դաշտ: Մրցունակ դառնալուն պես ձեռնարկություններն այլևս իրավունք չեն ունենում օգտվել վերը նշված առավելություններից:

## ՓՄՁ-ների հարկային արտոնություններ

Բոլոր ձեռնարկությունները, թե մեծ, թե փոքր, պետք է կապարեն իրենց բաժին հարկային մուծումները: Զարգանալու և բարեպաշտ հարկատու դառնալու համար փոքր բիզնեսներին աջակցելու նպատակով կառավարությունների կողմից խելամիտ քայլ կլինի ՓՄՁ-ներին սահմանափակ հարկային արտոնություններ տրամադրել:

*Պարզեցված հարկեր:* ՓՄՁ-ների համար բեռ են հանդիսանում հարկային վարչարարության բարդ համակարգերը: Թանկ փորձաքննություն պահանջող բարդ հարկային հայտարարագրերը կրճատում են ՓՄՁ-ների շահութաբերությունը: Հարկերի մասին հաշվետվության ծավալի և բարդության նվազեցումը ՓՄՁ-ներին հնարավորություն է ընձեռնվում իրենց հիմնական ուշադրությունը բևեռել ձեռնարկության զարգացման ուղղությամբ: Սահմանափակ աշխատողներ և ապրանքաշրջանառություն ունեցող ձեռնարկությունների համար հարկային համակարգե-

րի մեծամասնությունը պարզ է՝ հիմնված եկամտի կամ ապրանքաշրջանառության տոկոսի վրա: Օրինակ, Լիտվայում, փոքր ձեռնարկությունները, որոնց ընդհանուր եկամուտը տարեկան կտրվածքով չի գերազանցում 100 հազար լիտին (ԱՄՆ 26,000 դոլար) կարող են նախընտրել պարզեցված հարկման տարբերակը: Ռումինիայում մինչև 10 աշխատող և 100,000 եվրո տարեկան ընդհանուր եկամուտ ունեցող ձեռնարկությունները վճարում են ընդհանուր եկամտի 3 տոկոսի չափով հարկ: Ալբանիայում հարկային սահմանված դրույքաչափը տարածվում է մինչև 2 միլիոն լեկ (ԱՄՆ 14,000 դոլար) տարեկան ապրանքաշրջանառություն ունեցող միկրո-ձեռնարկությունների վրա: Երկուսից ութ միլիոն լեկ տարեկան ապրանքաշրջանառությամբ փոքր ձեռնարկությունները վճարում են ապրանքաշրջանառության 4 տոկոսի չափով մեկ միասնական հարկ:

Ռուսաստանում պարզեցված հարկային համակարգի ներքո հարկային վճարումներ կատարող ՓՄՁ-ներին առաջարկվել է եկամտի 6 տոկոսի չափով կամ ծախսերը հանած եկամտի 15 տոկոսի չափով միասնական հարկային դրույքաչափեր: Ձեռնարկատերն ունի հարկային համակարգերի ընտրության հնարավորություն: Պարզեցված հարկային համակարգն ընտրած բիզնեսները չեն վճարում ԱԱՀ, բացի Ռուսաստանի Դաշնության մաքսային տարածք ներմուծված ապրանքների համար:

Երբ ՓՄՁ-ներին առաջարկվում է հարկային պարզեցված սխեմաներ, կառավարությունները պետք է զգուշավոր լինեն ընկերությունների փոքր ձեռնարկությունների արհեստական մասնատումից հարկման ենթակա ցածր եկամուտների սահմաններում մնալու և նախընտրելի հարկային ռեժիմի որակավորվելու համար:

## *ՓՄՁ-ների համար ձեռնարկատիրական մշակույթի և մարդկային կապիտալի զարգացում*

Ինչպես նշված է ԵԱՀԿ Տնտեսական և բնապահպանական ուղղության ռազմավարական փաստաթղթում. «Մարդկային կապիտալը տնտեսական աճի և զարգացման հիմնական գործոն է հանդիսանում, որը պահանջում է գիտելիքներ և հմտություններ այլ բնագավառների թվում տնտեսական, գործնական, վարչարարական, իրավական և գիտական բնագավառների համար:[5] Մենք կձեռնարկենք համապատասխան միջոցառումներ կրթության և դասընթացների խթանման համար և կընդլայնենք համագործակցությունը հատուկ մասնագիտական միջազգային հաստատությունների և կազմակերպությունների հետ այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են աճող ընկերակցությունների և ինտերնետուրային ծրագրերի միջոցով կրթական, հետազոտական և դասընթացներ կազմակերպող հաստատությունների նկատմամբ հասանելիության ապահովումն ու ընդլայնումը»[6]:

Համապատասխան իրավական և կանոնակարգիչ դաշտի ստեղծումից անմիջապես հետո պետք է հասանելի լինի մարդկային կապիտալը, եթե ձեռնարկությունները պարտավորվել են հաջողության հասնել այդ դաշտում: Ազգային կրթական համակարգերում բիզնեսի և ձեռնարկատիրության մասին դասընթացները կազմում են այն բաղկացուցիչ մասը, որն երաշխավորում է ձեռնարկությունների գոյատևման և բարգավաճման համար անհրաժեշտ մարդկային կապիտալի առկայությունը:

*Ձեռնարկատիրության կրթում:* Շատ ԵԱՀԿ երկրներ, տնտեսական զարգացման տարբեր փուլերում գիտակցել են ձեռնարկատիրության մասին դասընթացների կարևորությունը և, համապատասխանաբար ստեղծել ազգային ծրագրեր: Ֆինլանդիայում, Կրթության ազգային վարչությունը դպրոցների համար բոլոր մակարդակներում (պարտադիրից մինչև բարձրագույն միջին) ստեղծել է հիմնական ուսումնական ծրագիր, որտեղ ձեռնարկատիրության խթանումը ներառված է որպես հիմնական նպատակ, թե որպես միջուսումնական թեմա, և թե որպես առարկա: 2004-ից 2006 թվականներն ընկած ժամանակահատվածում նոր ծրագիր է մշակվում, որտեղ շարունակվում է մեծապես կարևորվել ձեռնարկատիրության դերը: Ֆինլանդիայում, բոլոր միջնակարգ դպրոցներում ձեռնարկատիրության վերաբերյալ կրթությունն առաջարկվում է որպես այլընտրանքային առարկա, իսկ մասնագիտական տեխնիկական ուսումնարաններում այն ուսումնական ծրագրի պարտադիր բաղկացուցիչն է հանդիսանում: Երբ գալիս է ծրագրերի կոնկրետ իրականաց-

ման ժամանակը, դպրոցների և բիզնեսների միջև պարբերաբար խրախուսվում է համագործակցությունը և ուսուցիչների համար կազմակերպվում են դասընթացներ:

Լեհաստանում Կրթության և սպորտի պետական նախարարությունն ազգային ուսումնական ծրագրում ընդգրկել է ձեռնարկատիրություն առարկան: Սկսած 2002 թվականից այնտեղ միջնակարգ դպրոցներում և մասնագիտական ուսումնարաններում որպես պարտադիր առարկա դասավանդվում է «Ձեռնարկության հիմունքները»[7]: Դրա նպատակն է զարգացնել ձեռնարկատիրական անհրաժեշտ փոխհարաբերություններ և սովորել, թե ինչպես ստեղծել ձեռնարկություն: Կրթության նախարարության կողմից հստակ սահմանվում են դպրոցների կողմից պարտադիր կատարման առաջադրանքները: Դպրոցները կարող են օգտագործել գոյություն ունեցող ծրագրերը, ներառյալ ՀԿ-ների կողմից առաջարկվածները, կամ մշակել նոր ծրագրեր կրթական գերատեսչության կողմից սահմանված չափանիշների համաձայն:

*Մասնագիտական հմտությունների զարգացում:* Միջին չափի ձեռնարկությունները «հմուտ աշխատուժի բացակայությունն» հաճախ մատնանշում են որպես հաջողության առավել մեծ խոչընդոտ, քան «հասանելի ֆինանսների պակասը»: ՓՄՁ-ների մեծամասնությունը չունի ֆինանսական միջոցներ տեղում դասընթացներ և մասնագիտական կրթություն ապահովելու համար, և այդ պատճառով է, որ շատ ԵԱՀԿ երկրներ ակտիվ գործունեություն են ծավալում երիտասարդների շրջանում մասնագիտական հմտությունների խթանման համար:

Նման ծրագրի օրինակ կարող է ծառայել ՓՄՁ-ների համար Ալբանյան վերապատրաստման ազգային ծրագիրը: Ծրագրի նպատակն է մշակել ձեռնարկատիրական կուլտուրա, բարելավել բիզնեսն օժանդակողների հնարավորությունները և գոյություն ունեցող ձեռնարկությունների միջև մրցունակությունը: Ծրագիրը բաղկացած է հիմնական և ժամանակակից բիզնես և հատվածին/կլաստերին հատուկ բիզնես մոդուլներից և խորհրդատվությունից[8]:

Ավստրիայի Տնտեսության և աշխատանքի նախարարությունը մշակել է ժամանակակից ուսումնական ծրագրեր, որոնք կենտրոնացած են «բարձր տեխնոլոգիաների», հատուկ կարիքների բավարարման բնագավառների կրթման, և գործնական դասընթացների միջոցով կրթման վկայական ստանալու վրա:

## *ՓՄՁ-ների ֆինանսավորման խոչընդոտները*

ՓՄՁ-ներին զարգացման համար կապիտալ է անհրաժեշտ: Նրանց անհրաժեշտ է վարձել տարածք, գնել սարքավորում և վարձել աշխատողների: Չնայած որ Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում տարածված բնույթ է սկսել կրել առևտրային բանկի կողմից վարկերի տրամադրումը, ՓՄՁ-ների համար տրամադրվող ֆինանսավորումը մնում է դեռևս անբավարար, հատկապես անցումային երկրներում: Արդար լինելու համար ասենք, որ տոկոսադրույքներն ընդհանուր առմամբ իջնում են և առավել շատ բանկեր են սկսում ծրագրեր մշակել ՓՄՁ շուկայի համար: Այնուամենայնիվ, ֆինանսների հասանելիությունը հիմնականում սահմանափակ է:

Ֆինանսների ստացման հարցում ՓՄՁ-ների հիմնական խոչընդոտներն են՝

- Բանկերի կողմից ներդրումների ընդունումը ռիսկային է և չափազանց ժամանակատար համեմատաբար փոքր վարկերի համար;
- Բանկերի կողմից պահանջվող բարձր տոկոսաչափեր և գրավ;
- Փորձառության և բիզնես ծրագրերի պակաս;
- Այն ընկալումն, որ ղեկավարությունը ոչ արհեստավարժ է, և;
- Մայրաքաղաքում և մեծ քաղաքներում բանկերի աշխարհագրական կուտակումը նվազեցնում է հեռավոր շրջաններում գտնվող ՓՄՁ-ների բանկերի նկատմամբ հասանելիությունը:

Քանի որ ՓՄՁ-ները դժվարանում են օգտվել վարկերի ստացման ավանդական միջոցներից, կառավարություններն ու դոնոր կազմակերպություններն օգնել են ՓՄՁ-ների համար մշակել այլընտրանքային ֆինանսական մեխանիզմներ:

## *Ֆինանսավորման այլընտրանքային մեխանիզմներ*

Միկրոֆինանսավորման ծրագրեր: Միկրոֆինանսավորման ոլորտը համեմատաբար նոր է ի համեմատ ավանդական բանկային համակարգի - այն,փաստորեն, հազիվ քսան տարվա պատմություն ունի: Ինչևիցե, փորձը ցույց է տվել, որ միկրոֆինանսավորումը բանկային վարկ ստանալու հնարավորություն չունեցող փոքր ձեռնարկատերերին օգտակար լինելու ամենաարդյունավետ միջոցներից է: Միկրոֆինանսավորման հաստատություններն (ՄՖՀ) են պետական աջակցությամբ ստեղծված ՓՄՁ զարգացման հիմնադրամները, դոնորային աջակցությամբ ստեղծված միկրոֆինանսավորման կազմակերպությունները, վարկային միություններն ու վարկային կոոպերատիվները: ՄՖՀ-ների կողմից մշակել է վարկավորման և մոնիտորինգային հստակ տեխնիկաներ և իր փոքր հաճախորդներից ստացել փոխհատուցման բարձր դրույքաչափեր:

Միկրոֆինանսավորման ծրագրերն արդյունավետ միջոցներ են հանդիսանում տնտեսական զարգացման և աղքատության նվազեցման համար: Միկրո և գյուղական ֆինանսավորումն ապահովում է կայուն, շուկայամետ զարգացում աշխատելով բնակչության այն հատվածի հետ, որին հասու չէ ավանդական շուկայական տնտեսությունը: Աղքատների օժանդակմամբ, վարկերի տրամադրմամբ ու բիզնեսի աջակցմամբ այս ծրագրերն օգնում են մարդկանց բարձրացնել իրենց եկամուտները և աշխատատեղերի աճող քանակի միջոցով կյանքի ապրուստի միջոցների առավել մեծ հնարավորություն ստեղծել, ինչպես նշված է Թուրքմենիստանի դեպքում (Ներդիր 7.2):

**ՆԵՐԴԻՐ 7.2**

### ԵԱՀԿ աջակցությունն ուղղված Թուրքմենիստանի գյուղացիական ասոցիացիաներին

2004 թվականի սկզբից ԵԱՀԿ Աշխաբադի գրասենյակը ֆինանսավորել է միկրովարկավորման վերականգնվող փորձնական ծրագիր չորս կամավոր գյուղացիական ասոցիացիաների (ԿԳԱ) համար Ախալ և Լեբափ շրջաններում: Այս ծրագիրն իրականացվել է համաֆինանսավորման միջոցով Եվրոպական միության ՏԱՍԻՍ ծրագրի հետ համագործակցության շրջանակներում: ԵԱՀԿ բաղադրիչն են կազմում դասընթացները, սարքավորումներն ու վերականգնվող միկրովարկավորման դրամագլուխը: Չորս ԿԳԱ-ներն ընտրվել էին աշխատատեղերի երաշխավորման և աշխատատեղերի ստեղծման ԵԱՀԿ օժանդակության փորձնական փուլի համար: Մասնակից գյուղացիներն սկզբից համայնքային մակարդակի վրա անցան երեք-ամսյա դասընթացային շրջան բիզնեսի հիմունքների, հաշվապահության, պլանավորման և առևտրման հմտությունների վերաբերյալ: Այնուհետև նրանք նախապատրաստեցին իրենց անհատական վարկավորման դիմումները, դրանց կցելով համապատասխան գործարար ծրագրեր: Թուրքմենական մանաթով տրամադրվող 100-ից 250 ԱՄՆ դոլարի վարկը վճարվեց 2004 թվականի հոկտեմբերին: Ֆինանսավորում էր հարկավոր ընտանի կենդանիների, արմատների ու տնկիների, գոմերի և թռչնաբուծարանների նորոգումների, ջերմոցների, հողի և դրենաժային ենթակառուցվածքի և շուկայավարման ցանցի զարգացման համար:

ԿԳԱ-ների կողմից վերադարձելիության տոկոսը 100 է եղել: Ծրագրի մոնիտորինգի ընթացքում տարածքներ կատարած այցի ժամանակ մասնակից գյուղացիներն իրենց գոհունակությունն են հայտնել ծրագրի վերաբերյալ, բացատրելով, որ իրենց նվաճումներն անհնար կլինեին առանց միկրովարկերի, քանի որ նրանք չունեն վարկավորման կամ գումարի ստացման այլընտրանքային տարբերակ: Բոլոր չորս ԿԳԱ-ներն իրենց պատրաստակամությունը հայտնեցին շարունակել ծրագիրն ու ընդլայնել անդամների քանակը: Ներկայացուցչությունը ներկայումս պլանավորվում է շարունակել աջակցությունն երկարացնելով ԿԳԱ ծրագիրն ու մեծացնելով շահառուների բազմազանությունն ու քանակը, կամ ստեղծելով վարկային միության հնարավորություններ:

Աղբյուր. ԵԱՀԿ Աշխաբադի գրասենյակ, մամլո հաղորդագրություն, 2005 թվական:

ՄՖՀ-ը հաճախ կառավարություններից և /կամ դոնորներից (բացի վարկային կոոպերատիվներից) սկզբնական աջակցություն են պահանջում որպեսզի վերջիններս ապահովեն մեկնարկի համար անհրաժեշտ դրամագլուխը, աշխատակազմի համար դասընթացների անցկացումը, հաշվապահական և կառավարման տեղեկատվական ծրագրային փաթեթի գնումը և/կամ որակի բարելավումը, համակարգչային միջոցները, սեյֆերը, կահույքը և դասընթացները: Ինչևիցե, ի վերջո, միկրոֆինանսավորման հաստատությունները պետք է օպերատիվ և առևտրային առումներով ակտիվ լինեն, որպեսզի ֆինանսական ծառայություններն առավել երկար ժամկետով տրամադրվեն բերելու էական և կայուն աճ փոքր ձեռնարկությունների ֆինանսական ծառայությունների ծավալի և բազմազանության առումով: Սրան հասնելու նպատակով հետևյալ միջոցառումները պետք է ձեռնարկվեն՝

- Մշակել իրավական դաշտ ՄՖՀ-ի համար, որպեսզի հնարավոր լինի իրականացնել դեպոզիտի վերցման և վարկավորման գործառնություններ;
- Նորարարական լուծումներ տալ գրավների հետ առընչվող խնդիրներին, ինչպիսիք են գրավի առավել ճկուն ձևերի ընդունումը, մասնավորապես, մի քանի ֆիքսված ակտիվներ ունեցող ՓՄՁ-ների, կամ խմբային երաշխիքների օգտագործման համար;
- Առավել կարևորել կանխիկ հոսքը, քան հաշվապահական հաշվեկշիռը վարկի ծավալի գնագատման ժամանակ;
- Վարկային դիմումների արդյունավետ և թափանցիկ գնահատման մեթոդաբանություններ:

2003 թվականին Ղրղզստանի հանրապետությունն ընդունեց Միկրոֆինանսավորում իրականացնող կազմակերպությունների[9] մասին օրենք, որին 2003 և 2004 թվականներին հետևեցին Ղազախստանն ու Տաջիկստանը: ՄՖՀ-ի իրավաբանական կարգավիճակը հաստատող այս օրենքների ընդունմամբ տեղական կազմակերպություններն իրավունք ձեռք բերեցին իրականացնել միկրոֆինանսավորման գործառնություններ:

*Միկրովարկավորմամբ մասնագիտացած բանկեր:* Վերջին տասնհինգ տարիների ընթացքում ԵԱՀԿ անցումային երկրներից շատերում միջազգային զարգացման և ֆինանսավորման հիմնական կազմակերպությունները ստեղծեցին մի շարք մասնագիտացված միկրովարկավորման բանկեր: Միկրովարկավորում իրականացնող բանկերը, ինչպիսին է ԿՄԲ բանկը Ռուսաստանում, զգալի մրցակցային ճնշում է ստեղծել առավել խոշոր բանկերի վրա ցածրացնելու նրանց նվազագույն վարկի չափասահմանը, ընդլայնելու նրանց մանրածախ գործառնությունները և առաջարկելու հասանելի ապրանքներ գեր փոքր և փոքր բիզնեսների համար: Դոնորային և մասնավոր փոնդերի կողմից ֆինանսավորված Պրոկրեդիտ բանկն ակտիվ գործունեություն է ծավալում Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում:

*Վարկի երաշխավորման սխեմաներ:* Երաշխիքները հանդիսանում են այն գործիքներից մեկը, որոնք կիրառվում են այն փոքր բիզնեսների վարկավորման համար, որոնց գույքը չի բավարարում բանկի գրավադրման պահանջը: Երաշխիքները կարող են տրամադրվել կառավարության, բիզնես ասոցիացիաների, և/կամ մասնավոր բանկերի կողմից: Դրանք ծածկում են վարկային գումարի 50 - 90%-ը՝ երաշխիքային 1-ից 5% վարձապրությամբ: Երաշխիքները բանկին կարող են տրամադրվել երաշխիքային նամակի, արժեթղթերի և/կամ բանկային դեպոզիտի ձևով: Պետական երաշխիքները սովորաբար կառավարվում են երաշխիքային կամ ՓՄՁ հիմնադրամի կողմից և վարկային դիմումները գնահատվում են բանկային պաշտոնյաների կողմից և համատեղ վերահսկվում բանկի և երաշխիքային հիմնադրամի կողմից:

*ՓՄՁ երաշխիքային ծրագիրը սկսել է իր գործունեությունը ԵՄ-ում 1998թ.-ից: Այն բանկերին երաշխիքներ է տրամադրում ՓՄՁ վարկերի մարման համար, ինչպես նաև հավելյալ երաշխիքներ պետական և տարածաշրջանային կառույցներին: 2003 թ.-ի վերջին, հաստատությունը ընդհանուրը 308 միլիոն եվրո արժողությամբ պայմանագրեր կնքեց 48 ֆինանսական միջնորդների հետ: 2003թ.-ի վերջին, հաստատությունից օգտվող ՓՄՁ-ների ընդհանուր քանակը կազմեց 166,279 համեմատ նախորդ տարվա 127,812-ի: 10 և ավելի քիչ աշխատողներ ունեցող վերջնական շահառուները կազմեցին ՓՄՁ-ների ընդհանուր թվի 93%-ը, իսկ ամենաքիչը 50 աշխատողներ ունեցող վերջնական շահառուները կազմեցին ՓՄՁ-ների ընդհանուր թվի 97 %-ը[10]:*

**ՆԵՐԴԻՐ 7.3**

**Դրամական փոխանցումների կապակցում – ռիսկային կապիտալ ՓՄՁ-ների համար: Սիլիկոն Հայաստանի օրինակ**

Աշխատանքային միգրանտների կողմից տուն ուղարկած գումարն ոչ միայն եկամտի կարևոր աղբյուր է հանդիսանում դրա ընտանիքների, այլ նաև նրանց երկրների համար. զարգացող երկրների համար դրամական փոխանցումները միայն ՕՈւՆ-ին զիճում արտաքին ֆինանսավորման որպես աղբյուր և վերջին հինգ տարիների ընթացքում այդ դրամական փոխանցումների շնորհիվ զգալիորեն բարձրացել է միջազգային օժանդակության դրամական հոսքերի ծավալը: Դրամական փոխանցումները կարելի է օգտագործել սպառման, բայց նաև ներդրումներ կատարելու համար, ինչպես օրինակ տների կառուցման և բիզնեսների մեկնարկման նպատակով: Դրամական փոխանցումների վերցման և Սփյուռքի կողմից կատարվող ներդրումների հետ դրանց կապակցման ամենահիանալի օրինակը Սիլիկոն Հայաստանն է:

Սիլիկոն Հայաստանը հիմնադրվել է որպես հայկական բարձր տեխնոլոգիաների/ՏՀՏ արդյունաբերության առաջին պորտալ և ձևավորվել է խթանելու Հայաստանի տեխնոլոգիաների բարգավաճող հատվածին միջազգային շուկաներում առավել հաճախ ներկայացմանը, հեռանկարային զնորդների, գործընկերների և ներդրողների միջոցով: Սիլիկոն Հայաստանը կամուրջ է հանդիսանում ռազմավարական կարևորություն ունեցող բարձր տեխնոլոգիաների/ՏՀՏ արդյունաբերության հատվածի և հայկական սփյուռքի անդամների միջև, որոնց հնարավորությունները թույլ են տալիս օժանդակել այս հատվածի բարգավաճմանը: Հայաստանյան ընկերությունների, հայկական սփյուռքի և տեխնոլոգիաների համաշխարհային համայնքի միջև բիզնես կապերի և ցանցի ստեղծմամբ պորտալը փորձում է օգտագործել հայկական սփյուռքի հնարավորություններն օժանդակելու Հայաստանի տնտեսական զարգացմանը:

Առաքելությունը.

- Օժանդակել հայկական բարձր տեխնոլոգիաների/ՏՀՏ արդյունաբերության մեջ արդեն շատացող աշխատատեղերի ստեղծմանը, դրա արտադրողականության ու շուկայի մասնեբաժնի աճին;
- Օժանդակել իդեալական բիզնես միջավայրի ստեղծմանը հայկական բարձր տեխնոլոգիաների/ՏՀՏ արդյունաբերության համար հավելյալ օտարերկրյա ներդրումներ ներգրավելու նպատակով;
- Զարգացնել Հայաստանում տեղեկատվական հասարակության ստեղծումը և գիտելիքների վրա հիմնված տնտեսությունը;
- Դիրք և ճանաչելիություն ապահովել Հայաստանի համար համաշխարհային շուկայում, որպես ներդրումների համար արժեք ներկայացնող/ցածր ռիսկեր երաշխավորող բարձր տեխնոլագիաների/ՏՀՏ պարածք:

Զարգացող երկրներում, ներառյալ Հայաստանում, ընկերությունների, մասնավորապես ՓՄՁ-ների, ընդլայնման միակ ամենագլխավոր խոչընդոտը շուկայի և նոր շուկաներ մուտք գործելու մասին գիտելիքների պակասն է: Այս ծրագրով փորձ է արվում նվազագույնի հասցնել այս խոչընդոտը զարգացնելով բիզնես կապերը հայրենի երկրներում գործող ընկերությունների և սփյուռքի բիզնեսների միջ: Սփյուռքի ներուժի գոյությունը հիմնական պոտենցիալ մրցակցային առավելությունն է: Սիլիկոն Հայաստանը փորձում է օգնել հայկական ՏՏ ընկերություններին շահագործելու այդ մրցակցային առավելությունը:

Աղբյուր. Սիլիկոն Հայաստան:

ԵԱՀԿ մասնակից որոշ երկրները խառը հաջողություններ արձանագրեցին երաշխիքների տրամադրման գործում: ԵԱՀԿ երկրներում իրականացված վարկային երաշխիքի սխեմաներից քաղված լավագույն փորձերն ու դասերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

- Առաջնային երաշխիքը չպետք է գերազանցի վարկային գումարի առավելագույն 50 տոկոսը կանխելու երաշխիքի ներքո արված որևէ անպատասխանատու գործողություն կամ վարկ վերցնողի, կամ բանկի կողմից;
- Պետական երաշխիքների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի ստացողի բանկում երաշխիքային հիմնադրամի հաշվին առկա միջոցների ծավալը` երաշխավորելու պոտենցիալ կորստի ծածկումը;
- 1-3 տոկոս կազմող կոմիսիոն փոխհատուցումը պետք է վերցվի նախքան երաշխիքի տրամադրումը ծածկելու երաշխիքային կառավարման ծախսերն, ի հավելումն տարեկան կտրվածքով գանձվող կոմիսիոն գումարի, և
- Երաշխիքային Հիմնադրամը պետք է անկախ և թափանցիկ կառավարվի խարդախություններից խուսափելու համար և աշխատանքները պետք է վարել այն կերպ, որպեսզի ցանկացած ժամանակ հնարավոր լինի օբյեկտիվ գնահատման ենթարկել երաշխիքային հիմնադրամի փաթեթը:

## *Ձեռնարկությունների օժանդակման ծառայությունների նկատմամբ հասանելիություն*

Քանի որ բիզնեսները հիմնականում մեկնարկում են հայրենի երկրներում, ապա ՓՄՁ-ները հաճախ տուժում են գրասենյակային կամ արդյունաբերական տարածքի չլինելու պատճառով, արտադրական արդյունավետ տեխնոլոգիաների, կառավարման և վերահսկման համակարգերի բացակայությունից և խորհրդատվական և ՏՏ հմտությունների նկատմամբ հասանելիության պակասից

*Բիզնեսի օժանդակման կենտրոններ:* Օժանդակող հաստատությունների շրջանում, բիզնես խորհրդատվական, խորհրդակցական և տեղեկատվական կենտրոնները դիտարկվել են որպես առանձնակիորեն արդյունավետ մեխանիզմներ, որոնք օգնում են ձեռնարկատերերին նոր բիզնեսներ մեկնարկել, գոյատևել իրենց նախնական շրջանում ու հզորացնել գոյություն ունեցող ձեռնարկությունները: Բիզնես ծառայություններ մատուցող կենտրոնների առաջնային նպատակն է օգնել սկսնակներին և բարձրացնել գործող ՓՄՁ--ների միջև մրցակցելիությունը (Ներդիր 7.4): Ծառայությունների մեծամասնությունը պետք է ցածր գներով տրամադրվեն կամ ամբողջովին անվճար սկսնակների համար (Աղյուսակ 7.3):

ՆԵՐԴԻՐ 7.4

### Բիզնես օժանդակման կենտրոնների օրինակներ

Ավելի քան 500 բիզնես խորհրդատվական և տեղեկատվական կենտրոններ և բիզնեսի աջակցման գործակալություններ գործում են Միավորված ազգերի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) տարածաշրջանում; դրանցից 274-ը Եվրո տեղեկատվական կենտրոններ են (ԵՏԿ), որոնք ստեղծվել են Եվրոպական հանձնաժողովի աջակցությամբ: Կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրներում կան 43 ԵՏԿ-ներ: Բալթյան հանրապետություններում կան երկու ԵՏԿ-ներ և մեկ թղթակցային կենտրոն: ԱՄՆ-ում ստեղծվել են բիզնեսին օժանդակող ավելի քան հազար հաստատություններ:

Ադրբեջանում, ավելի քան 40 տարածաշրջանային բիզնես խորհրդատվական կենտրոններ երկրի ամբողջ տարածքով օժանդակում են փոքր և միջին բիզնեսների զարգացմանը:

Ռուսաստանն ունի ՓՄՁ խթանման ծառայությունների մի ամբողջ շարք, ինչպիսիք են ՓՄՁ օժանդակման տարածաշրջանային կենտրոններն ու ՓՄՁ զարգացման ռուսաստանյան գործակալությունը: Գործակալությունն իր հերթին ստեղծել է գործակալությունների տարածաշրջանային ցանց, որոնք աշխատում են Ռուսաստանի ավելի քան 50 շրջանների համար: Գործակալությունները ծառայություններ են մատուցում ներդրումային ծրագրերի ուսումնասիրման համար և փորձագետների միջոցով ֆինանսական խորհրդատվություն ապահովում այնպիսի հարցերի համար, ինչպիսիք են աուդիտն ու հաշվապահությունը: Նրանք բիզնես գործընկերներին շրջանի գործարար միջավայրի, գործող օրենսդրության, հարկման համակարգի, հաշվապահական կանոնների մասին տեղեկատվություն և հաշվետվություն են ապահովում: Նրանք նաև օգնում են պատրաստել պայմանագրեր և ձևակերպել փաստաթղթեր, տրամադրել իրավաբանական օժանդակություն բանակցությունների և գրանցման ընթացակարգերի ժամանակ և Ռուսաստանում բիզնեսի վարման վերաբերյալ դասընթացներ և աշխատանքային հավաքներ կազմակերպել:

ԱՂՅՈՒՍԱԿ 7.3

### Բիզնես օժանդակող կենտրոնների կողմից մատուցվող տիպային ծառայություններ

| **համակարգչային ծառայություններ** | **մասնագիտական ծառայություններ** | **վարձակալության ծառայություններ** | **աշխատուժի հետ կապված ծառայություններ** | **գործառնական և այլ ծառայություններ** |
|---|---|---|---|---|
| սարքավորումների հետ կապված խորհրդատվություն | իրավաբանական գործունեություն | կրանսպորտային միջոցների և շինարարական սարքավորումների վարձակալում | աշխատակիցների ընդունում | անվտանգության ծառայություններ |
| համակարգչային ծրագրերի հետ կապված խորհրդատվություն | հաշվապահական/ հարկային խորհրդատվություն | գրասենյակային սարքավորումների ներառյալ համակարգիչների վարձակալություն | աշխատակիցների տրամադրում | արդյունաբերական մաքրում |
| տվյալների մշակում | կառավարման խորհրդատվություն | | | մարքեթինգային օգնություն |
| տվյալների բազայի սպասարկում | շուկայի հետազոտություն | | | թարգմանչական գործունեություն |
| տեխնիկական փորձարկում և վերլուծություն | գովազդում | | | փաթեթավորման ծառայություններ |
| | տեխնիկական ծառայություններ, ճարտարապետական և ճարտարագիտական գործունեություն, | | | ցուցահանդեսներ |

*Բիզնես ինկուբատորներ:* Բիզնես ինկուբատորը սահմանվում է որպես մի կազմակերպություն, որը ստեղծում է բոլոր բարենպաստ պայմանները ընկերության մեկնարկի համար: Ինկուբատորն օգնում է բիզնեսներին իրենց համար հասանելի դարձնել վարկատուների և ներդրողների ծառայությունները, գրասենյակային սարքավորումը, խորհրդատվական ծառայություններն ու դասընթացային ծրագրերը (Ներդիր 7.5):

Բիզնես ինկուբատորի հասկացողությունը զարգացել է վերջին 30 տարիների ընթացքում Բիզնես ինկուբատորների «առաջին սերունդը» (1980-ական թվականներ) ձեռնարկատերերի մանրազնին ընտրված խմբերին հիմնականում առաջարկում էր գնային տեսանկյունից ընդունելի տարածք և համատեղ օգտագործելու նպատակով շենքեր: 1990-ական թվականներին, ինկուբատորները սկսեցին նաև խորհրդատվական ծառայություն ապահովել, զբաղվել ունակությունների և գիտելիքների բարձրացմամբ և շենքի ներսի վարձակալների և դրսի մասնաճյուղերի համար ծառայությունների ցանցի ստեղծմամբ: Ինկուբատորների բիզնես մոդելի մեջ շահույթ չհետապնդող ինկուբատորներից դեպի շահույթ հետապնդող ինկուբատորների անցում է նաև կատարվել: Շահույթ հետապնդող ինկուբատորները նպատակ են հետապնդում ակտիվություն հաղորդել ՏՀՏ ընկերություններին:

**ՆԵՐԴԻՐ 7.5**

### Հայաստանի Գորիս քաղաքում բիզնես ինկուբատորի ծրագրի մեկնարկ

ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակի կողմից օժանդակվող երկրի տնտեսական զարգացմանն նպաստող միջոցառումներից մեկն էր բիզնես ինկուբատորի ստեղծումը Գորիս քաղաքում: Այն փաստը, որ մարզի 80 տոկոսի ՀՆԱ-ն ապահովվում է չորս հանքահորային ընկերությունների կողմից գալիս է ասելու, որ ՓՄՁ-ների տնտեսական զարգացումն ու դրանց աջակցությունը առաջնահերթությյն խնդիր են հանդիսանում:

Հայաստանյան ՄԱԶԾ-ի հետ համատեղ, ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հովանավորել է Գորիսում բիզնես ինկուբատորի ստեղծման տեխնիկակա-տնտեսական ուսումնասիրությունն ու նախագծման իրականացումը:

Արդյունքները ներկայացվել են բիզնես ինկուբացիայի հանրաճանաչ փորձագետի ուշադրությանը, որպեսզի տեղական իշխանությունների կողմից տրամադրվող տարածքների բարելավման նպատակով դոնորային միջոցների գրավման համար գործողությունների ծրագիր կազմվի: Վերանորոգման աշխատանքներին կհետևի «Հաջող սկզբի» նախաձեռնությունը, որը համատեղ ջանքերով կիրականացվի GTZ Pro ՓՄՁ ծրագրի հետ կյանքի կոչելի բիզնես մտահղացումների և դրանց իրականացնող ձեռնարկատերերի բացահայտման նախնական նպատակով:

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ, Հայաստան:

*Նորարարական կենտրոններ:* Նորարարությունը ընկերության մրցունակության հիմնական որոշիչն է, թե արագ զարգացող բարձր տեխնոլոգիաների, թե առավել ավանդական հատվածներում: Փոքր բիզնեսների մեծամասնության գոյատևման, աճի և նոր որակյալ աշխատատեղերի ստեղծումն առավել ու առավել շատ հիմնված է իրենց բիզնես ռազմավարության կենտրոնում նորարարության դրման ունակության վրա: Իրենց հերթին փոքր նորարարական ընկերությունները կարևոր դեր են խաղում աճի պոտենցիալի բարձրացման վրա երաշխավորելով տարածաշրջանային և ազգային նորարարական համակարգերի կենսագործունեությունը: Նորարարական միջին փուլը տևում է հինգից յոթ տարի մինչև որ դրա արդյունքում շուկայում սպառման ենթակա ապրանք է արտադրում: Նույնիսկ բարձր ռիսկայնություն ունեցող վենչուրային կապիտալը չի ֆինանսավորում նորարարության իրականացման առաջին փուլերը փուլերը: Կառավարությունը կարող է աջակցել նորարար սկսնակներին և ընդգրկել մասնավոր հատվածի գործընկերներին տեխնոլոգիայի առևտրայնացման փուլում: Ռուսաստանում գործող FASIE–ն կարող է օրինակ ծառայել (Ներդիր 7.7): Նորարարական կենտրոնները նորարարական ՓՄՁ-ներին աճի հնարավորություններ են ընձեռում (Ներդիր 7.6):

**ՆԵՐԴԻՐ 7.6**

## Միացյալ թագավորության Օքսֆորդ քաղաքում գործող նորարարական կենտրոններ

Նորարարական կենտրոնները տարբերվում են բիզնես աջակցման կենտրոններից և գրասենյակներից աշխատանքային միջավայրի առումով: Նրանք փոքր ընկերություններին աշխատանքային տարածք են տրամադրում խրախուսող և օժանդակող միջավայրում: Նրանց նպատակն է առավելագույնի հասցնել բիզնեսների ստեղծումն ու զարգացումը աճի ակնկալիքով: Բնորոշ առանձնահատկություններն են՝

- Մասնագիտացած փոքր ընկերության ենթակառուցվածքն ու իմիջը;
- Նույն մտածելակերպի տեր ձեռնարկատերերի, անհատների և ընկերությունների խմբավորումներ;
- Միայն մեկ ամիս զբաղեցնելու ծանուցմամբ ուղղակիորեն տրամադրվող արտոնագրի ճկունությունը;
- Մուտքի ընտրություն բիզնես կենսունակությունն ու աճի պոտենցիալը երաշխավորելու համար;
- Տեղեկատվական աղբյուրների և խորհրդականների ցանցի նկատմամբ հասանելիության ապահովում և գործնական օգնություն;
- Կենտրոնական ղեկավարության և հաճախորդների բիզնեսների միջև սերտ համագործակցություն, և
- Օժանդակ միջոցառումների վրա կենտրոնացում ընկերությունների արագ աճի նպատակով:

Միացյալ թագավորության Փոքր բիզնեսի ծառայության համաձայն, բիզնեսի օժանդակության օքսֆորդյան նորարարական բանաձևը իրոք որ աշխատում է: Նրանց արված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ օքսֆորդյան նորարարական կենտրոնների որևէ մեկից օգտվող սկսնակ բիզնեսները հաջողության առավել մեծ հնարավորություն ունեն. առաջին վճռորոշ երկու տարիների ընթացքում նրանք արձանագրում են 89% գոյատևման մակարդակ, որն էապես առավել լավ է, քան Միացյալ թագավորության միջին 78 տոկոսը:

Աղբյուր. http://www.oxin.co.uk/busenv/index.php

**ՆԵՐԴԻՐ 7.7**

## Փոքր նորարարական ձեռնարկություններին աջակցության ռուսական Հիմնադրամ (ՓՆՁԱՌՀ)

ՓՆՁԱՌՀ-ն 1994թ-ին ստեղծված շահ չհետապնդող պետական կազմակերպություն է: Այն ունի Հետազոտությունների և Զարգացման ֆեդերալ բյուջեի 1.5%-ին հավասար տարեկան բյուջե (2006 թվականին այն կազմել է մեկ միլիարդից քիչ ավել գումար) և գրասենյակներ Ռուսաստանի դաշնության 29%:

Հիմնադրամի հիմնական նպատակներն են`

- Փոքր նորարարական ձեռնարկությունների զարգացմանն և դրանց աջակցմանն ուղղված Կառավարության քաղաքականության իրականացում;
- Ֆինանսական, տեղեկատվական և այլ տեսակի ուղղակի օժանդակություն փոքր նորարարական ձեռնարկություններին և նոր բարձր տեխնոլոգիաների ապրանքների մշակման և արտադրման ծրագրերի իրականացում;
- ՓՄՁ-ների համար ենթակառուցվածքի ստեղծում և զարգացում:

ՓՆՁԱՌՀ-ն փոքր բիզնեսներին պետական և սոցիալական աջակցություն ապահովող օրենքների և օրենսդրական ակտերի մշակման նախաձեռնողն ու մասնակիցն է:

Իր ստեղծման օրվանից ի վեր, կազմակերպությանն են դիմել երկրի տարբեր շրջաններում տեղակայված ավելի քան 4,000 ՓՄՁ--ներ: Կազմակերպության մրցույթային հանձնաժողովն ու փորձագետները ֆինանսավորման նպատակով շուրջ 2,000 ծրագրեր են ընտրել:

2006 թվականի հունվարի 1-ի տվյալներով, ՓՆՁԱՌՀ-ը ստացել է Հետազոտական և Զարգացման ծրագրերի ավելի քան 10,000 դիմումներ և դրանցից 4,000-ը ստացել են ավելի քան 2,5 միլիարդ ռուբլու ֆինանսավորում: Ծրագրերը գնահատվում են անկախ փորձագետներից կազմված հանձնաժողովների կողմից, որոնց մեջ ընդգրկված են գիտնականներ, տնտեսագետներ և շուկայի մասնագետներ: Ընդհանուր թվող ծրագրերի ընտրությանը մասնակցում են 2,455 անկախ փորձագետներ:

ՓՆՁԱՌՀ դրամաշնորհների մեծամասնությունը տրվում է փոքր, նորարարական և տեխնոլոգիաներով հագեցած ընկերությունների RD առևտրայնացման օժանդակության նպատակով մեքենաաարքավորումների արտադրության և գործիքների պատրաստման բնագավառներում (21 տոկոս); ՓՄՁ-ների օժանդակության ենթակառուցվածքում (18 տոկոս); բժշկության և դեղորայքի(10 տոկոս) և էլեկտրական և էներգետիկ բնագավառներում (9 տոկոս):

ՓՆՁԱՌՀ մինչև 15 տոկոս բյուջեն ծախսվում է նորարարական և տեխնոլոգիական կենտրոնների, հետազոտական և զարգացման առևտրականացման գրասենյակների, հետազոտական և զարգացման առևտրայնացման մեջ ուսանողների և երիտասարդ գիտնականների ընդգրկման և ղեկավարության համար դասընթացների վարման վրա: Ռուսաստանում ստեղծվել են ավելի քան երեսուն ՏՀՏ-ներ ավելի քան 100,000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, որը շուկայականից ցածր գներով վարձակալության է տրվում հարյուրավոր նորարարական ՓՄՁ-ներին:

ՓՆՁԱՌՀ կողմից օժանդակվող ՓՄՁ-ները սերիական արտադրության մեջ են դրել ավելի քան 1,000 հայտնագործություններ, վաճառքի արդյունքում ստացել են տասնյակ միլիարդավոր ռուբլիների օգուտ, չնայած որ նրանց կողմից վճարված հարկերը գերազանցել են իրենց ծրագրերում ֆեդերալ բյուջեի ներդրումը 2.4 զործոնով: Շահառու ՓՄՁ-ները արտադրողականության մեջ բարձր ցուցանիշներ են արձանագրել: ՓՆՁԱՌԿ կողմից օժանդակվող ՓՄՁ-ներն իրենց համապատասխան արդյունաբերություններում, ինչպիսիք են ծրագրային ապահովումը, գիտական և բնապահպանական մեխանիզմերը, ռուսական շուկայի զգալի մասնեբաժին են կազմում:

ՓՆՁԱՌԿ-ը առանձնակիորեն մտահոգված է ապրիճանաբար ուղղել իր աջակցությունը դեպի այն ծրագրերը, որոնք գնտվում են նորարարական փուլի վաղ շրջաններում և զարգացնել համագործակցությունը նորարարական ծրագրերի մեջ ընդգրկված առևտրային կառույցների և այլ ֆինանսավորման գործակալությունների հետ:

Աղբյուր. www.fasie.ru

## *Շուկաների հասանելիություն և կլաստերների զարգացում*

Համաշխարհային առևտրի պոտենցիալ օգուտները քաղելու հնարավորություն է ընձեռում ավելացված արժեքի տարբեր փուլերում արտադրության միջազգային շղթայի մեջ ՓՄՁ-ների ընդգրկումն առավել խոշոր ընկերությունների և օտարերկրյա մասնաճյուղերի հետ կապերի հաստատման միջոցով: ՓՄՁ--ների համար այս կապերը վճռորոշ բացակայող աղբյուրների նկատմամբ հասանելիություն են ապահովում, որոնցից ամենակարևորներն են միջազգային շուկաները, ֆինանսական միջոցները, տեխնոլոգիաները, ղեկավարման ունակություններն ու գիտելիքները:

ՓՄՁ-ները կարող են հավելել խոշոր ընկերություններին իրենց արժեքի ավելացման շղթայում, կիրառելով ճկունության առավելություններն ու առավել ցածր գործարքային ծախսերն ի շնորհիվ հաճախորդների հետ առավել սերտ կապի և որոշումների առավել արագ կայացման, այն դեպքում երբ խոշոր ձեռնարկություններն օգտվում են մասշտաբների առավելությունից: Հետևաբար, մրցունակությունը փոքր և խոշոր ընկերությունների ճիշտ խառնուրդի և աշխատուժի հավասարաչափ բաժանման հարց է, որը միավորում է մասշտաբային տնտեսությունները ճկունության և մասնագիտացման առավելությունների հետ:

**ՆԵՐԴԻՐ 7.8**

**Անդրազգային ընկերություններն ու ՓՄՁ-ները Ռուսաստանում**

Ինչպես հաղորդվել է, Բոինգն օգնել է մի շարք ռուսական ընկերությունների բավարարել որակի միջազգային չափանիշները, որոնք պահանջվում են միջազգային օդանավերի արտադրության նպատակով նյութերի և մասերի մատակարարման համար: Նմանապես, Ikea, Pratt, Whitney և McDonalds ընկերությունները ստեղծել են ՓՄՁ-ները մատակարարող տեղական ցանցեր: Մասնագիտացված իր ծրագրի միջոցով, ՄՖԿ-ն հույս ունի զարգացնել մատակարարման նմանատիպ ցանցեր Ֆորդի համար Ռուսաստանում իրականացված գործողություններում իր ներդրումների առընչությամբ: Յուրաքանչյուր դեպքում, տեղական ՓՄՁ-ներին ուսուցանվում է բավարարել ակտիվ, բազմազգ ընդհանրական հաճախորդի համար սահմանված որակի ճշգրիտ չափանիշները: Արդյունքում, տեղական ՓՄՁ-ները տեղ են գտել արժեքի ավելացման համաշխարհային շղթայում:

Աղբյուր. Գիտելիքներից դեպի հարստություն.Վերափոխվող Ռուսաստան:

Գիտություն և տեխնոլոգիաներ ժամանակակից գիտատար տնտեսության համար,

Համաշխարհային բանկի քաղաքականության ուսումնասիրության աշխատանքային զեկույց 2974, 2003 թվականի փետրվար:

*ՓՄՁ-ների կլաստերները:* Մեկ այլ լավագույն փորձ է ՓՄՁ-ների և անդրազգային կորպորացիաների (ԱԱԿ) միջև կապի խրախուսումը: Երբ միմյանց հետ համագործակցում են ԱԱԿ-ներն ու ՓՄՁ-ները, արդյունքում հաճախ ձևավորվում են մատակարարման տեղական ցանցեր, խմբավորումներ և տեխնոլոգիաների առատություն: Կառավարությունները կարող են նպաստել այդ համագործակցությանը տեղեկատվության ապահովմամբ: ՏՀԶԿ-ն տրամադրում է քաղաքականության փորձերի մասին առավել պարզ տեղեկատվություն իր *Փոքր և միջին ընկերությունների և անդրազգային կորպորացիաների միջև կապերի խրախուսման* իր հրատարակությունում:

Ամենահաջողված խմբավորումները, ինչպիսիք են Silicon Valley-ը, Իտալիայում Emilia Romagna-ն և Baden-WФrttemberg–ը Հյուսիսային Գերմանիայում, ցույց են տալիս, որ ՓՄՁ--ները կլաստերավորելու մոտեցումը համատեղ գործողությունների իրականացման արդյունքում կարող է մեծապես նպաստել տարածաշրջանային զարգացմանը: Կլաստերների միջև կապի հաստատումն առանձին ՓՄՁ-ներին իրենց խնդիրները լուծելու և միևնույն ժամանակ մրցակցային դիրքերը բարելավելու կարևոր միջոց է ապահովում: ԵԱՀԿ երկրներում կլաստերների ձևավորման նախաձեռնությունները ցույց են տվել, որ կապերի հաստատումն առավել հաջողված է լինում, երբ ձեռնարկությունները գործում են իրար հետ

հարևանությամբ և օգտվում միևնույն գործարար աշխարհից, ինչպիսիք են ապրանքների համար ստեղծված շուկաները, ենթակառուցվածքային պահանջները, կամ արտաքին մրցակցությունը բավարարելու անհրաժեշտությունը: Նման խմբերի կամ խմբավորումների շրջանում, ձեռնարկությունների համատեղ նախաձեռնություններն առավել հզոր են ի շնորհիվ շահագրգիռ կողմերի վճռորոշ մեծամասնության, առավել շահութաբեր են, քանզի կիսում են ֆիքսված ծախսերն ու համակարգման տեսանկյունից առավել դյուրին, քանզի իրար մոտ տեղակայված լինելը նպաստում է փոխադարձ ծանոթությանն ու վստահությանը[11]:

**ՆԵՐԴԻՐ 7.9**

## ՓՄՁ կլաստերները Ուկրաինայում

1997 թվականին, Խլեմնիցկի շրջանի տեղի ձեռնարկատերերն ու իշխանությունները համագործակցեցին ըստ բնագավառների կլաստերների ստեղծման ուղղությամբ: Օրինակ, շինարարական կլաստերը 5,000 նոր աշխատատեղեր ստեղծեց, իսկ տեքստիլ կլաստերը մինչև 3,000: Վաղ 1990-ականներին, Խլեմնիցկի շրջանի հագուստեղենի 90 տոկոսը ներկրվում էր Լեհաստանից, Թուրքիայից և ԱՄՆ-ից: Տաս տարի հետո, ժամանակակից հագուստեղենի 75 տոկոսն ապահովվում էր տեքստիլ կլաստերի ձեռնարկությունների կողմից: 1999-2003 թվականների ընթացքում Կամենեթս-Պոդոլսկի տուրիզմի կլաստերի զարգացման արդյունքում եռակի անգամ բարձրացավ զբոսաշրջիկների քանակը: Տուրիստական բիզնեսի զարգացումն ակտիվացրել է տեղական շինարարությունն ու սննդի մշակման կլաստերները: Կլաստերների ձևավորման դրական արդյունքները հետաքրքրություն են առաջացրել նույնը ձեռնարկելու Ուկրաինայի այլ շրջաններում և քաղաքներում (օրինակ, Կարպատներում, Պոլեսիում և Ղրիմում): Ուկրաինայում կլաստերների ձևավորման գործընթացը աջակցվում է թե կառավարության, թե բիզնեսի խթանման ոչ-պետական գործակալությունների կողմից, որոնք կազմակերպում են տեղեկատվական նստաշրջաններ և դասընթացային աշխատանքային հավաքներ ընկերությունների և տեղական ղեկավար մարմինների համար:

Աղբյուր. http://www.unece.org/ie/wp8/industres.html

Արդյունաբերական թաղամասերի կամ կլաստերների հիմնական բնորոշիչներն են՝

- ՓՄՁ-ների աշխարհագրական հարևանությունը;
- ոլորտային մասնագիտացումը;
- փոքր և միջին ընկերությունների գերակայող մեծամասնությունը;
- ընկերությունների միջև սերտ համագործակցությունը;
- Նորարարության նպատակով ընկերությունների միջև մրցակցությունը;
- սոցիալ-մշակույթային նմանությունը, որը նպաստում է վստահության ձևավորմանը;
- ակտիվ ինքնաօժանդակ կազմակերպություններ;
- Օժանդակող շրջանային և մունիցիպալ ղեկավար մարմիններ:

Ամենահաջողված կլաստերները կառավարության կողմից օժանդակվող նախաձեռնություններն են, ինչպիսիք են Ռուսաստանի Սանկտ Պետերբուրգ, Զելենոգրադ և Տոմսկ քաղաքներում էլեկտրոնային տեխնիկայի կլաստերը, կամ Ուկրաինայի տեղական մակարդակների վրա իրականացվող նախաձեռնությունները (Ներդիր 7.9):

*Իրական ծառայության կենտրոններ:* Իտալական արդյունաբերական թաղամասերի խթանման գործոնը, որը մեծ ուշադրության է արժանացել, «իրական ծառայություններ» են, որոնք տարածաշրջանին բնորոշ արդյունաբերական ավանդույթներին առավելագույնս հարմարեցված բիզնեսի զարգացմանն օժանդակող ծառայություններ են առաջարկում: 56 արդյունաբերական թաղամասերում բացահայտվել են ավելի քան 130 իրական ծառայության կենտրոններ: Այս

կենտրոններն առաջարկում են ծառայություն-ների լայն շրջանակ, որոնցից են`

- վարկերի երաշխավորումը;
- արտահանման ապահովագրում և/կամ խթանում;
- ձուցահանդեսների կազմակերպում;
- շուկաների/տեխնոլոգիաների զարգացման մասին տեղեկատվության հասանելիություն;
- հաճախորդների դասակարգում;
- խորհրդատվություն;
- դասընթացներ;
- թափոնների կառավարում;
- աղտոտվածության վերահսկում;
- որակի հավաստագրում և ապրանքանիշերի բաշխում;
- Ապրանքի խթանում;
- որարարությանն աջակցում;
- կիրառվող հզորությունների խմբակային վաճառք, և
- ապրանքների տեսպավորում:

Այս կենտրոնները պատկանում են արտադրողների ասոցիացիաներին, տեղական կառավարման մարմիններին կամ ՓՄՁ-ներն օժանդակող գործակալություններին, կամ այս մարմինների համագործակցության արդյունքում ստեղծված միացություններին:

## *Եզրահանգումներ և առաջարկություններ*

Աշխատատեղերի ստեղծման, աղքատության նվազեցման, տնտեսական աճի և նորարարությունների մեջ ՓՄՁ-ների կարևորությունը գիտակցելով կառավարությունները պետք է իրենց վրա վերցնեն ՓՄՁ զարգացման խթանումը: Իրավական, կանոնակարգիչ և վարչական առումներով «ՓՄՁ-ներին բարենպաստ» միջավայր ստեղծելուն հակված Կառավարություններին հետևյալ միջոցառումներն են առաջարկվում՝

*ՓՄՁ քաղաքականությունների և ծրագրերի բնագավառում՝*

- ՓՄՁ ծրագրերի ստեղծում, որոնք կօգնեն ՓՄՁ-ներին հաղթահարել շուկայում տեղի ունեցած ձախողումների արդյունքները, բայց առանց շուկայական կառույցների անօրինական ոչնչացման կամ մրցակցությանը խանգարող արգելակների ստեղծման, և արդյունավետություն պարբերաբար գնահատող ծրագրերի ստեղծում:
- Ծրագրերի կենտրոնացումը հետևյալ ուղղություններով. կառավարման ունակությունների բարելավում; ընդունելի պայմաններով ֆինանսների հասանելիության ապահովում; ՓՄՁ հնարավորությունների հզորացում կառավարության կողմից ստացվող օժանդակությունների մրցույթային պայմաններով ձեռք բերման համար; ՓՄՁ-ներին խորհրդատվության և տեղեկատվության արագ ստացման հնարավարության ընձեռում; տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման նպատակով ՓՄՁ հնարավորությունների ստեղծում; և այլ ՓՄՁ-ների և խոշոր ընկերությունների հետ կապերի բարելավում նորարարական կլաստերների ստեղծումն ու զարգացումը խրախուսելու նպատակով:

*Բիզնես կանոնակարգման բնագավառում՝*

- Պարզ, թափանցիկ և գործառույթների իրականացման ցածր համապատասխանության-արժեք ունեցող հարկային համակարգ հարկային արդար դրույքաչափերով, հաշվի առնելով գեր փոքր ձեռնարկությունների համար նվազեցված և/կամ պարզեցված հարկերի ապահովման կարևորությունը:
- Բիզնեսի գրանցման համակարգի պարզեցում և ինտերնետի միջոցով գրանցման հասանելիության երաշխավորում:
- Բիզնեսի արտոնագրման պահանջների պարզեցում:

*Ֆինանսական ծառայությունների բնագավառում՝*

- Երաշխավորել, որ ֆինանսական հատվածին վերաբերող կանոնակարգերում (բանկային համակարգ, ապահովագրություն, վարձակալություն) ճանաչվում են ՓՄՁ–ների պարտադրումները և, որ համապատասխան իրավական և կանոնադրական մեխանիզմներ են ներմուծվում հնարավոր դարձնելու ակտիվների մասնայական հասանելիությունը ՓՄՁ-ների կողմից դրանք որպես գրավ օգտագործելու նպատակով:

*Բիզնես մշակույթի, կրթության և դասընթացների բնագառավում՝*

- Ձեռնարկատիրական մշակույթի ձևավորում բիզնեսի վարման կրթման և ձեռնարկատիրության դրական իմիջի խթանման միջոցով:
- Անդամակցային կազմակերպությունների ստեղծման և դրանց անդամակցման նպատակով ՓՄՁ-ների համար բարենպաստ պայմանների ապահովում:

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ԵԱՀԿ, Տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգողի գրասենյակ.
<http://www.osce.org/eea/>

ԵԱՀԿ, Տնտեսական և բնապահպանական ուղղության ռազմավարական փաստաթուղթ,
<http://www.osce.org/item/16350.html>

ԵԱՀԿ, *Կաշառակերության դեմ պայքարի լավագույն փորձ.*
<http://www.osce.org/eea/item_11_13568.html>

ՏՀԶԿ, Ձեռնարկատիրության, ՓՄՁ և տեղական զարգացման հարցերով կենտրոն.
http://www.oecd.org/department/0,2688,en_2649_33956792_1_1_1_1_1,00.html <
http://www.doingbusiness.org/>

ՎԶԵԲ, *Անցումային զեկույց և Գործարար միջավայրի ու ձեռնարկությունների գործունեության Ուսումնասիրություն.* <http://www.ebrd.com/pubs/econo/series/tr.htm>

*Փոքր ձեռնարկությունների Եվրոպական հռչակագիր.*
<http://europa.eu.int/scadplus/leg/en/lvb/n26002.htm>

*Նորարարական և միջազգայնորեն մրցունակ ՓՄՁ-ների աճի խթանման վերաբերյալ Ստամբուլյան նախարարական հռչակագիր*
<http://www.oecd.org/document/16/0,2340,en_2649_201185_32020176_1_1_1_1,00.html>

ՏՀԶԿ, Փաքր և միջին ձեռնարկությունների ու անդրազգային կորպորացիաների միջև կապերի խրախուսում < http://www.oecd.org/dataoecd/62/30/35795105.pdf>

Օքսփորդի նորարարական կենտրոններ < http://www.oxin.co.uk/busenv/index.php>

## ՀՂՈՒՄՆԵՐ

---

[1] Դր. Սուպաչայ, ՄԱԱԶՀ Գլխավոր քարտուղար, 2006.

[2] Սուպաչայ Պանիչպակդի, *Անցում: Առաջին տասը տարիները,* Համաշխարհային բանկ (2002).

[3] ԵԱՀԿ, Տնտեսական և բնապահպանական ուղղության ռազմավարական փաստաթուղթ,
<http://www.osce.org/item/16350.html>

[4] ՏՀԶԿ, *Գլոբալ շուկայում ձեռնարկատիրության ու նորարարական ՓՄՁ-ների խթանում. դեպի առավել պատասխանատու և ընդգրկուն գլոբալիզացիա* (2004), <www.oecd.org/searchResult/>

[5] ՄՖԿ Ուկրաինա.

[6] ԵԱՀԿ, Տնտեսական և բնապահպանական ուղղության ռազմավարական փաստաթուղթ,
<http://www.osce.org/item/16350.html>

[7] Տես՝ *Փոքր ձեռնարկությունների Եվրոպական հռչակագրին նվիրված խորհրդաժողովի արձանագրություն, Լյուքսեմբուրգ* (Եվրոպական Հանձնաժողովի Ձեռնարկությունների և արդյունաբերության հարցերով Գլխավոր տնօրինություն, 15–16 Հունիս 2005),
<http://europa.eu.int/comm/enterprise/events/charter/doc/2005_lux/lux_summary.pdf>

[8] *Մոլդովայում և Արևմտյան Բալկաններում Փոքր ձեռնարկությունների Եվրոպական հռչակագրի դրույթների իրականացման վերաբերյալ հաշվետվություն* (Բրյուսել, 2005).

[9] <http://counterpart.org.kg/Russian/useful/59>

[10] ԵՄ, *Փոքր և միջին ձեռնարկությունների համար Եվրոպական Միության կողմից իրականացվող միջոցառումները,* (ՓՄՁ Հանձնակատարի զեկույց, 2005).

[11] <http://www.unido.org/doc/4310>

## Գլուխ 8



# Առավել բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի ապահովում և ամրապնդում

Կառավարությունների երկար ժամանակի [illegible] պետք է [illegible] զարգացման համար և չպետք է ժամանակավոր փոփոխություններ իրականացնեն կարճաժամկետ [illegible] նպատակով: Նրանց զարգացման փիլիսոփայությունը [illegible] է [illegible] [illegible] [illegible] [illegible]: Այդ քայլերի թվում [illegible], [illegible] է շրջակա միջավայրի պաշտպանության ապահովումը, [illegible] և կենսաբազմազանության [illegible]: Էներգախնայողության [illegible], [illegible] ռեսուրսների [illegible] [illegible] համար [illegible] [illegible]: [illegible] պետք է [illegible] և կիրառվեն [illegible] [illegible] շրջանակներում [illegible] ձեռնարկությունների միջև [illegible]: Միևնույն [illegible] պետք է [illegible] արդյունավետության [illegible] [illegible] համար: Նման ընկերությունների վրա [illegible], կառավարությունները կարող են [illegible] սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) [illegible] [illegible] [illegible] համապատասխանության [illegible] էթիկական, իրավական, [illegible] և հանրային չափանիշները:

Կառավարությունները կարող են նաև [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] զարգացման [illegible] ընկերությունների հետ համագործակցությամբ:

## Կայուն զարգացում

Մինչև հիմա, Ուղեցույցը գլխավորապես կենտրոնացած է եղել ԵԱՀԿ երկրներում առավել բարենպաստ և շահութաբեր գործարար և ներդրումային միջավայրի խթանման հաշվարկով մշակված նախաձեռնությունների վրա այդ երկրներում տնտեսական բարգավաճման մակարդակների բարձրացման նպատակով: Ուղեցույցը առավել շատ ՕՈւՆ և ձեռնարկատիրության մակարդակի բարձրացման ձգտող երկրներին քարոզում է «բացել» իրենց տնտեսությունները և վերացնել ոչ անհրաժեշտ կանոնակարգերը: Ինչևիցե, երկրները պետք է վստահ լինեն իրենց հասնող ներդրումների կայունության և դրանց հետևող տնտեսական զարգացման մեջ: Չնայած որ կառավարությունները պետք է սահմանափակեն իրենց դերը բիզնես գործունեության մեջ ու դրա նկատմամբ իրավասությունները, նրանք, այնուամենայնիվ, պետք է վերահսկեն բիզնես գործունեությունը հասարակության և շրջակա միջավայրի պաշտպանվածության մեջ համոզված լինելու համար:

Որպես կայուն զարգացման հիմնական սկզբունքներ հաճախ են նշվում հետևյալ երեք գործոնները.

- Տնտեսական աճ;
- Շրջակա միջավայրի պաշտպանություն; և
- Սոցիալական զարգացում:

Չնայած որ, սույն ուղեցույցի հիմնական շարժիչ ուժը տնտեսական զարգացմանը ձգտումն է, ԵԱՀԿ երկրներում երկարաժամկետ կայուն ներդրումների առումով սխալ կլինի չնշել մյուս երկու հիմնական սկզբունքների կարևորության մասին:

## Շրջակա միջավայրի պաշտպանություն

Հազարամյակի հռչակագիրը և դրան հարող Հազարամյակի զարգացման նպատակները (ՀԶՆ-ներ) հստակորեն պարտավորություն են դնում համաշխարհային հանրության առջև քայլեր ձեռնարկել շրջակա միջավայրի կայունության ուղղությամբ առավել լայն գլոբալ օրակարգի համատեքստում, որի նպատակն է աղքատության և թերսնման նվազեցումն ու կրթության և առողջապահության ապահովումը Ինչ վերաբերում է գործարար միջավայրին, առավել մրցունակ և բարգավաճ պետություններն են, ինչպիսիք Սկանդինավյան երկրներն են, որոնք բնապահպանական ամուր քաղաքականություններ ունեն:

Հետևաբար, կառավարությունները պետք է լավ մտածեն մինչև օրինական չափանիշների նվազեցումը կամ ՕՈւՆ ներգրավելու նպատակով դրանց գործադրումը ռիսկի փակ դնելը: Չնայած որ բնապահպանական չափանիշների նվազեցումը կարող է գայթակղել աղտոտող արդյունաբերություններին բնապահպանական տեսանկյունից առավել խիստ տնտեսություններում աշխատելու փոխարեն, փորձը ցույց է տալիս, որ երկարաժամկետ հեռանկարում այս քայլն անխուսափելիորեն սպառնալի հետևանքներ կթողնի ազգային կայունության վրա: Հատկապես գյուղատնտեսության վրա հիմնված տնտեսությունների պարագայում խոշորածավալ քաղաքային աղտոտումը կործանարար հետևանքներ կարող է ունենալ շրջակա գյուղատնտեսական շրջանների էկո-համակարգի վրա, էլ չխոսենք բնակչության առողջության մասին: Ափամերձ տարածքներում թափոնների հոսքի դեմ պայքարելու նպատակով հնարավորությունների բացակայությունը կարող է լուրջ վնաս հասցնել տեղի ձկնային արդյունաբերությանը: Զբոսաշրջիկության բնագավառը նույնպես կախված է շրջակա միջավայրի պաշտպանությունից. յուրաքանչյուր հանգստացող գիտակցում է մաքուր ծովափի կարևորության մասին: Դժվար է ճիշտ հաշվեկշիռ դնել շրջակա միջավայրի պաշտպանության և տնտեսական և տեխնոլոգիական առաջընթացի միջև: Ինչևիցե, շրջակա միջավայրի պաշտպանության ռիսկի գիտականորեն գնահատման պահանջը խելացի քայլ է, որը կպաշտպանի շրջակա միջավայրն առանց տնտեսական զարգացմանն անտեղի խանգարելու: Բայց կառավարությունները պետք է նաև խուսափեն այն կանոնակարգերից և միջոցներից, որոնք առավելագույնս անհամապատասխան են գործունեության ռիսկի հետ:

Բնապահպանական կանոնակարգերը պետք է կիրառվեն միևնույն գործունեությամբ զբաղված բոլոր ձեռնարկությունների նկատմամբ առանց խտրականության: Եթե բնապահպանական խիստ միջոցառումները կիրառվում են միայն փոքրամասնության նկատմամբ, օրինակ՝ օտարերկրյա ընկերությունների, ապա այդ չափանիշները խաթարում են բնապահպանական ամբողջ կառույցը, ճնշում տնտեսական զարգացումն ու, ամենայն հավանականությամբ, կաշառակերության ու հովանավորչության առիթ հանդիսանում: Մյուս կողմից, համընդհանուր կիրառման արդյունքում խթանվում է այն գաղափարախոսությունը, որը նպաստում է բարգավաճող շուկայական տնտեսության հիմք հանդիսացող մրցակցության զարգացմանը:

Շրջակա միջավայրի պաշտպանությունն ու կայունությունը հնարավորություններ են ստեղծում ներդրումների համար: Երկրները կարող են ներդրումներ ներգրավել ածխածինը նվազեցնող բարձր տեխնոլոգիական արդյունաբերական ծրագրեր իրականացնելու համար՝ քվոտաների միջազգային առևտրի մեխանիզմի գործադրման միջոցով: Կիոտոյի արձանագրությունը վավերացրած երկրները իրավասու են իրենց երկրներում կիրառել Համատեղ իրականացումն (ՀԻ) ու Մաքուր զարգացման մեխանիզմների (ՄԶՄ) ծրագրերը:

**ՆԵՐԴԻՐ 8.1**

### Բնապահպանական ներդրումների հնարավորությունները Ռուսաստանում

Հյուսիսային հարթվածի բնապահպանական ծրագիրը նորարարական համատեղ նախաձեռնություն է ի պատասխան Ռուսաստանից և միջազգային հանրությունից եկող ահազանգերի լուծում հյուսիս-արևմտյան Ռուսաստանի ամենաճնշող բնապահպանական խնդիրներից մի քանիսին: Այս նախաձեռնությունն իրականացվել է ՎԶԵԲ-ի, Սկանդինավյան ներդրումային բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Համաշխարհային բանկի հետ համատեղ:

Հյուսիսային հարթվածի բնապահպանական ծրագիրը (ՀՀԲԾ) բաղկացած է 16 գերակա հանդիսացող ծրագրերից, որոնց ընդհանուր գումարը համարյա երկու միլիոն եվրո է կազմում: Այդ ծրագրերի նպատակն է բնապահպանական լուծումներ ապահովել հյուսիս-արևմտյան Ռուսաստանի երկրների համար թաղային ջեռուցման, կոշտ թափոնների կառավարման, կոյուղային ջրերի մաքրման և էներգետիկ միջոցների արդյունավետ կիրառման բնագավառներում: ՀՀԲԾ-ն իրապես փոխել է հյուսիս-արևմտյան Ռուսաստանի, և, ընդհանրապես, Հյուսիսային հարթվածի շրջակա միջավայրի և բնակչության վիճակը:

ՀՀԲԾ-ն հզոր միջազգային դաշտ է ապահովում կառավարությունների համար անհրաժեշտ իր ֆինանսական միջոցներով, միջազգային ֆինանսական հաստատություններով, մասնավոր ներդրողներով, ռուսական իշխանությունները և այլոք, ովքեր համագործակցում են արդեն երկար տարիների պատմություն ունեցող շրջանի բնապահպանական խնդիրների լուծման ուղղությամբ: ՀՀԲԾ-ն Եվրոպական հանձնաժողովի, Ռուսաստանի դաշնության, ՎԶԵԲ-ի, Եվրոպական ներդրումային բանկի, Սկանդինավյան ներդրումային բանկի և Համաշխարհային բանկի կարևոր շղթա է հանդիսանում միաձուլելով նրանց փորձն ու միջոցները բնապահպանական ծրագրերի մի ամբողջ շարքի մշակման և իրականացման վրա:

Աղբյուր. www.ndep.org

Բնապահպանական եպրնթացը, միջոցների պակասը, բնական պաշարների հարսպության անհավասար բաշխումն երկրների ներսում և նրանց միջև լարվածության պոտենցիալ դրդիչներ կամ արագացնող գործոններ են հանդիսանում: Շրջակա միջավայրի պաշտպանության նվազեցումն ու միջոցների պակասը աղետների ընդհանուր համակարգի այն երկու գործոններն են, որոնց մեջ սերտորեն միահյուսվում է սոցիալ-տնտեսական խնդիրների մի ամբողջ շարան: Բնապահպանական եպրնթացն ու բնական պաշարների պակասը սոցիալ-տնտեսական այս խնդիրների պատճառն ու արդյունքն են, կամ արագ հասունացել են դրանց միջոցով:

Ինչպես նշվում է ԵԱՀԿ Տնտեսության և բնապահպանական ուղղության ռազմավարական փաստաթղթում. «Բնապահպանական եպրնթացը, բնական պաշարների անկայուն կիրառումը, թափոնների վերամշակման և տնօրինման սխալ կառավարումը մեծ բացասական ազդեցություն են ունենում առողջության, բարգավաճման, կայունության և մեր վնասված էկոհամակարգերի վրա»: Ահա թե ինչու ԵԱՀԿ-ն լրջորեն խթանում է շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում ԵԱՀԿ մասնակից երկրների միջև համագործակցության ստեղծմանը, մասնավորապես իր Շրջակա միջավայրի պաշտպանության և անվտանգության նախաձեռնության միջոցով (ՇՄՊԱՆ)-ի միջոցով: www.envsec.org

## *Սոցիալական զարգացում*

Նավթի պաշարներով հարուստ Կասպյան ծովին հարող երկրներն օտարերկրյա մեծաքանակ ներդրումներ ստացան և արձանագրեցին մեծ տնտեսական աճ: Եվ չնայած դրան, նրանց ընդհանուր բնակչության կեսն ապրում է օրեկան մեկ դոլարից պակաս գումարով: Երբ տնտեսական զարգացումը շատ սահմանափակ ազդեցություն է ունենում սոցիալական զարգացման և աղքատության նվազեցման վրա, ապա փվյալ երկիրն այդ տնտեսական զարգացումից մեծ օգուտ չի քաղում և նվազում է այնտեղ առավել բարենպաստ գործարար միջավայր ստեղծելուն ուղղված ընդհանուր աջակցությունը: Եթե կառավարությունները ցանկանում են բարելավել և հզորացնել գործարար միջավայրը, նրանք պետք է խրախուսեն, և ոչ միայն ուղղակի խրախուսեն, բիզնեսներին ընդունել կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը: Կառավարությունների և բիզնեսների միջև համագործակցությունը նպաստում է սոցիալական զարգացմանը[1]:

## *Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն (ԿՍՊ)*

Այն որ առավել շատ բիզնես ղեկավարներ են գիտակցում կորպորատիվ սոցիալական պատասխանատվության անհրաժեշտությունը, ակնհայտ երևում է ՄԱԿ-ի Գլոբալ Համաձայնագրի տաս սկզբունքներն ընդունած կազմակերպությունների աճող քանակից (Ներդիր 8.2) և ՄԱԿ-ի ՀԶՆ-ների իրականացմանն օժանդակելու գործարար համայնքի պարտավորության ստանձնումից:

*Ո՞րն է ԿՍՊ-յան սահմանումը:* Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը սահմանվում է որպես գլոբալ շարժում, որի շրջանակներում ընկերություններն ու կազմակերպությունները կամավոր հիմքերի վրա իրենց գործառնությունների և հաշվետու աշխատանքների մեջ ընդգրկում են սոցիալական և բնապահպանական միջոցառումների իրականացումը[2]: Միասնական պատասխանատվության առավել հզոր շարժիչ ուժերից են մրցակցային առավելության բարելավման հնարավորությունը, «հեղինակային կառավարումը», քաղաքականության վրա ներազդող «ազդեցիկ խումբը» և սպառողական քաղաքական մեթոդները, կանոնակարգումը կամ դրա սպառնալիքը, և փոփոխություններն այն կերպ, ինչպես գլոբալ մակարդակով կազմակերպվում են արտադրությունն ու շուկայավարումը:

ՆԵՐԴԻՐ 8.2

## Միավորված ազգերի Գլոբալ համաձայնագրի սկզբունքները

**Մարդու իրավունքներ**

Սկզբունք 1. Իրենց ազդեցության շրջանակներում բիզնեսները պետք է աջակցեն և հարգեն միջազգայնորեն հրապարակված մարդու իրավունքների պաշտպանությունը, և

Սկզբունք 2. Հավաստեն, որ մասնակիցը չեն մարդու իրավունքների ոտնահարման:

**Աշխատուժ**

Սկզբունք 3. Բիզնեսները պետք է նպաստեն ասոցիացիացման ազատությանը և բանակցությունների միասնական վարման արդյունավետ իրավունքի ընդունմանը;

Սկզբունք 4. Բռնի և պարտադրվող բոլոր տեսակի աշխատանքների վերացում;

Սկզբունք 5. Երեխաների աշխատանքի խստիվ վերացմանը, և

Սկզբունք 6. Աշխատատեղերի ստեղծման և զբաղվածության առումով խտրականության վերացում:

**Շրջակա միջավայր**

Սկզբունք 7. Բիզնեսները պետք է աջակցեն բնապահպանական խնդիրների լուծման նպատակով ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումներին;

Սկզբունք 8. Ձեռնարկել շրջակա միջավայրի պաշտպանության առումով պատասխանատվությունը խթանող նախաձեռնություններ; և

Սկզբունք 9. Խրախուսել շրջակա միջավայրի պաշտպանության համար բարենպաստ տեխնոլոգիաների զարգացումն ու տարածումը:

**Կաշառակերության դեմ պայքար**

Սկզբունք 10. Բիզնեսները պետք է աշխատեն կաշառակերության դեմ իր բոլոր արտահայտումներով, ներառյալ դրամի բռնի կորզումն ու կաշառքի ընդունումը:

## ԿՍՊ և պետական հատված

Ինչպես նշել է Միջազգային ֆինանսական կորպորացիայի նախագահի տեղակալ Պետեր Վոյսկեն, «Որպեսզի բիզնեսները շարունակեն բարելավել իրենց սոցիալական և բնապահպանական ուղղվածության աշխատանքները, պետական հատվածը պետք է ապահովի երկու հիմնական գործոններ. (1) հստակություն իր կանոնակարգերում, որոնք բոլոր ընկերությունների կողմից պահանջվող հիմնական չափանիշներն են, և (2) պետական միջնորդության կանխատեսելիություն»: ԿՍՊ-յան մասնավոր ընկերությունների կամավոր փորձերը չեն հանդիսանում և չեն կարող լինել պատշաճ կառավարման արդյունավետ փոխարինողներ: Քանի որ ԿՍՊ-ն ինքնին կամավոր բնույթ է կրում, կառավարությունների համար հրամայական է ճնշմամբ չպարտադրել ընկերություններին միանալ ԿՍՊ-ին և ոչ էլ ընկալել այն որպես ճնշմամբ պարտադրվող: Սա վնասում է գործարար միջավայրին և բարձրացնում կաշառակերության հնարավորությունները: ԿՍՊ-ին խթանելու կառավարությունների ամենալավ միջոցը բարենպաստ գործարար միջավայրի ստեղծումն է: Պատասխանատվություն ցուցաբերող կառավարությունը ճիշտ վարքագծի օրինակ է ծառայում և խթանում է վերջինի ապահովումը բոլոր մակարդակներում գտնվող ընկերությունների կողմից՝ միջազգային, պետական և տեղեկան: Կառավարությունները կարող են առավելագույնս աջակցել և հզորացնել գործարար միջավայրն ոչ թե ԿՍՊ-յան հանձնարարմամբ կամ պարտավորեցմամբ, այլ այնպիսի միջավայրի ձևավորմամբ, որտեղ ընկերությունները կայուն զարգանում են և գործում պատասխանատվության մեծ զգացումով[3]:

Պետական հատվածը կարող է նաև ԿՍՊ--յան շարժիչ ուժեր հաղորդողի դեր կատարել: Քանի որ շատ երկրներ թույլ են տվել հարկատուներին գումարը տրամադրել ՀԿ-ներին կամ բարեգործական նպատակներով, Հունգարիան և Ռումինիան ներմուծել են 1 տոկոսի մասին օրենքը, որը թույլ է տալիս ընկերություններին հատկացնել իրենց շահութահարկի մեկ տոկոսը կոնկրետ գրանցված ՀԿ-ին կամ բարեգործության: Կառավարությունները կարող են նաև խթաններ տրամադրել էներգո արդյունաբերության մեջ գործող ընկերություններին բազմազանություն մտցնելու իրենց էներգո մատակարարման մեջ և ձեռնարկելու էներգետիկ արդյունավետության միջոցառումներ, որոնք դրական ֆինանսական արդյունքներ կապահովեն և կնվազեցնեն «էկոլոգիայի վրա թողնված ազդեցությունը»:

## Ոլորտային վարքագծի կանոններ

Ավելի ու ավելի շատ ձեռնարկություններ են ներկայումս կամավոր հիմքերի վրա մշակում վարքագծի կանոններ նպատակ ունենալով արդյունքում ունենալ բիզնեսի, էթիկական, սոցիալական և բնապահպանական բարձր մակարդակի վրա դրված վարքագիծ:

*Քիմբերլիի գործընթացը:* Քիմբերլիի գործընթացը կառավարության, քաղաքացիական հասարակության և ադամանդագործության արդյունաբերության համատեղ նախաձեռնված գործընթաց է կանխելու օրինական կառավարությունների դեմ պատերազմների ֆինանսավորման նպատակով ապստամբների կողմից ադամանդների օգտագործումը: Թանկարժեք քարերի անօրինական վաճառքն ավերիչ բախումների պատճառ է հանդիսացել այնպիսի երկրներում ինչպիսիք են Անգոլան, Կոտ դը վուարը, Կոնգոյի դեմոկրատական հանրապետությունն ու Սիերա լիոնեն: Քիմբերլիի գործընթացի Վկայագրման սխեման նորարարական, կամավոր համակարգ է, որը մասնակիցների դեմ մեծ պահանջներ է դնում վկայագրելու, որ չտաշված ադամանդների փոխադրումը կապ չունի բախումների պատճառ հանդիսացող ադամանդների հետ: Kimberley Քիմբերլիի գործընթացի մեջ ընդգրկված են քառասունհինգ պաշտոնական մասնակիցներ, ներառյալ Եվրոպական համայնքը: Քիմբերլիի գործընթացի մեջ ընդգրկված մասնակիցները կազմում են չտաշված ադամանդների համաշխարհային արտադրության մոտ 99,8 տոկոսը[4]:

*Էլեկտրոնային արդյունաբերության վարքագծի կանոններ:* Այս արդյունաբերության կանոնները մշակվել են վերջերս ստեղծելու և խթանելու համատեղ արդյունաբերության ակնկալիքները սոցիալապես պա-

պատասխանատու գործողությունների համար էլեկտրոնային արդյունաբերության զլոբալ մատակարարարման ամբողջ ցանցով: HP-ն - վարքագծի նպատակով համագործակցություն է հաստատել իր ընկերության, Dell-ի, IBM-ի և էլեկտրոնային արտադրությամբ զբաղվող Celestica, Flextronics, Jabil, Sanmina SCI և Solectron ընկերությունների միջև: Ընդունվելով 2005 թվականին վարքագծի կանոնները մոնիտորինգ իրականացնողների աշխատանքի համար ներդաշնակ մոտեցման ճանապարհ են հարթում սոցիալական պատասխանատվության տարբեր բնագավառների շրջանում, ներառյալ աշխատուժն ու աշխատատեղերի ստեղծումը, առողջապահությունն ու անվտանգությունը, էթիկան, շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Առաջատար ընկերությունները ջանել են երաշխավորելու, որ մարդու իրավունքների մասին իրենց պարտավորություններն արտացոլվեն կորպորատիվ գործունեության մեջ: Որոշ արտադրություններում, մասնավորապես հագուստեղենի, ընկերություններն ընդհանուր համաձայնության են եկել ոչ միայն վարքագծի կանոնների, այլ նաև Արդար աշխատուժի ասոցիացիայի սկզբունքների վրա հիմնված անկախ մոնիտորինգի շուրջ մեծացնելու իրենց և իրենց մատակարարների հնարավորությունները գործելու իրենց խոսքին համաձայն:

## ԿՍՊ. տնտեսական հիմնավորում

Ավելի ու ավելի ակնհայտ են դառնում ԿՍՊ-յան աշխատանքները, քանի որ «լավ գործ անելն ու լավ անելն առավել և առավել անհրաժեշտ են դառնում և փոխադարձաբար օժանդակող»: (Ներդիր 8.3 ): Նորմ է դառնում պատասխանատվության մրցակցելիության հայեցակարգը, որի շրջանակներում բիզնեսները համակարգված և համապարփակ ձևով պարգևատրվում են կորպորատիվ սոցիալական պատասխանատվությամբ առավել ակտիվ զբաղվելու և պատժվում հակառակի համար: Շատ ուսումնասիրություններ հաստատում են, որ այն կերպ, ինչպես ընկերությունը լուծում է իր սոցիալական և բնապահպանական խնդիրները, հաճախ ռիսկի մակարդակների և ընդհանուր կառավարման որակի լավ ցուցանիշ է հանդիսանում, որոնցից երկուսն էլ ընկերությունների երկարաժամկետ հաջողության որոշիչ պայմաններն են հանդիսանում[5]: Օրինակ, նավթի և գազի վերաբերյալ Գոլդման Սաշի վերջին հաշվետվության մեջ ամփոփվում է, որ այն ընկերությունները, որոնք լավագույն արդյունքն են ցուցադրել սոցիալական պատասխանատվության առումով և երկարաժամկետ հեռանկարում ցածր ածխածնային ապագա են տեսնում, հանդիսանում են շուկայի ռազմավարական ծրագրերը տնօրինող գերակշիռ մեծամասնությունը: ԵՄ-ն խթանում է պատասխանատու ձեռնարկատիրությանը ԿՍՊ-յանը խոշոր բիզնեսների և մասնավորապես ՓՄՁ-ների շրջանում: ԿՍՊ-ն կարող է շատ համապատասխան լինել ՓՄՁ-ների համար. այն կարող է նրանց համար նոր բիզնես հնարավորություններ ստեղծել, պայմաններ ստեղծել հաճախորդներին առավագույնս բավարարելու և օրինապահություն ապահովվելու համար, առավել շահագրգիռ աշխատողներ ապահովել, բարելավել տեղական համայնքի և պետական իշխանությունների հետ հարաբերությունները, խնայել ծախսերը և բարձրացնել ընկերության հեղինակությունը:

**ՆԵՐԴԻՐ 8.3**

## Սոցիալական պատասխանատվության ՓՄՁ օրինակ. Թուրքիա

ARGE–ն 1991 թվականին հիմնված 15 աշխատողներից բաղկացած մեկ միլիոն եվրո շրջանառություն ունեցող կառավարման խորհրդատվություն մատուցող ընկերություն է: ARGE-ն ապահովում է խորհրդատվական ծառայություններ բիզնես ռազմավարության, բիզնեսի գերազանցության մեթոդոլոգիաների, ինստիտուցիոնալ և կազմակերպչական զարգացման և փոփոխության կառավարման բնագավառներում;

ARGE-ն խրախուսում է իր բոլոր աշխատողներին անցկացնել մեկ վճարվող աշխատանքային օր շաբաթվա նեջ ՀԿ աշխատանքների ուղղությամբ բարելավելու համայնքներում կյանքի որակը տեղական, պետական և գլոբալ մակարդակների վրա: Նպատակն է բարձրացնել կառավարման որակն ու քաղաքացիական կազմակերպությունների արդյունավետությունը: ARGE-ի նախագահը նախաձեռնել է և վարել 1998 թվականի *Ազգային Որակի Շարժումը* և ՓՄՁ-ների, պետական հատվածի և առաջին անգամ Եվրոպայում նաև ՀԿ-ների համար որակի կատեգորիաների նոր որակ: Ուսումնական նպատակներով օրինակ է պատրաստվել ցուցադրելու ՈԿԵԿ (Որակի կառավարման եվրոպական կազմակերպության) գերազանց մոդելը ՀԿ-ների համար:

ARGE-ն նաև խրախուսում է միջ-ոլորտային համագործակցությունը տարբեր կազմակերպությունների միջև: Այն նախաձեռնել է Թուրքական որակի ասոցիացիայի առաջին ծրագիրը և մասնակցել դրան խրախուսելու կառավարման փորձ ունեցող անհատներին աշխատել ՀԿ-ում կեսօրյա/լրիվ աշխատանքային ժամի հիմունքներով: ARGE -ն արդյունավետ գործունեություն է վարել ստեղծելու Կորպորատիվ կամավորականների ասոցիացիա խթանելու կամավոր գործունեությունը մասնավոր հատվածում: Այն օժանդակել է այդ սխեմային կամավորական գործունեություն ապահովելով պլանավորման, կառավարման և այս աշխատանքների հրապարակման, ինչպես նաև բովանդակություն և մեթոդոլոգիա մշակելով տարածման համար: Մասնակից ընկերությունները գնահատում են իրենց աշխատողների կամավորական օժանդակությունններն իրենց տարեկան կատարողական զեկույցներում:

ARGE–ն աշխատում է տարբեր հասարակական կազմակերպությունների հետ խթանելու ՀԿ կառավարման մեջ պատշաճ կառավարման սկզբունքներին: Այն Բոսֆորի համալսարանի հետ համագործակցության շրջանակներում մշակել է ԿՀ կառավարման վկայագրման ծրագիրը:

Բիզնեսի օգուտները.

- ARGE-ն *Dünya* առաջատար բիզնես թերթում հրապարակված ուսումնասիրության մեջ դասակարգվել է որպես Թուրքիայի երեք առաջատար խորհրդատվական ընկերություններից մեկը:
- Կամավորականության խթանումը նաև շահագրգռում և պահում է որակյալ աշխատողների:

Հասարակության/շահառուների օգուտները.

- Կորպորատիվ կամավորական ասոցիացիան գրավում է առավել և առավել շատ մասնագետների աշխատել կամավոր հիմքերի վրա, օգնելով ստեղծել քաղաքացիական հասարակության առավել արդյունավետ ինստիտուտներ:
- Ավելի քան 1,000 մասնավոր/պետական հատվածների հաստատություններ և ՀԿ--ներ բարելավել են իրենց կառավարման որակը, այդպիսով օգուտ տալով աշխատողներին և շահառուներին:

Աղբյուր: http://www.generationeurope.eu.com; www.arge.com

## *Եզրահանգումներ և առաջարկություններ*

Կայուն զարգացումն անհնար է առանց գործարար և ներդրումային հզոր միջավայրի: Ընկերությունների գոյատևման և պատասխանատու գործունեության համար պետք է մշակվի կանոնակարգման և կառավարման համապատասխան դաշտ: Բնապահպանական կանոնակարգումը մի դաշտ է, որտեղ կառավարությունը պետք է ապահովի հավասարակշռված կանոնակարգում, որը կերաշխավորի պետական շահերի պաշտպանությունը, ինչպես նաև ձեռնարկությունների առևտրային կենսունակությունը: Անհրաժեշտ դաշտի ձևավորումից հետո, կառավարությունները կարող են օժանդակել բիզնես միջավայրի երկարաժամկետ կայունությանը խրախուսելով, այլ ոչ պարտադրելով կամ ճնշելով ձեռնարկություններին գործել պատասխանատվության զգացումով: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը ձեռնարկության պատասխանատվությունն է: ԿՍՊ-յան մեջ ընդգրկված ընկերությունները հակված են առավել շահութաբեր լինել: Այս բնագավառի լավագույն փորձերը ներառում են արդյունաբերության վարքագծի կանոնների շուրջ համաձայնություն և կամավորական աշխատանքներում աշխատողների մասնակցության խրախուսում:

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Կայուն զարգացման հարցերով ՄԱԿ-ի բաժանմունք. <www.un.org/esa/sustdev/>

ՏՀԶԿ կայուն զարգացում:
<http://www.oecd.org/topic/0,2686,en_2649_37425_1_1_1_1_37425,00.html>

ՄԱԿ-ի գլոբալ համաձայնագիր. <www.globalcompact.org>

Arge: <www.arge.com>

Բնապահպանական ծրագրի հյուսիսային բաժանմունք. <www.ndep.org>

## ՀՂՈՒՄՆԵՐ

---

2005 Մարդկային զարգացման ՄԱԿ-ի զեկույց

[2] <www.worldbank.org>

[3] ՄՖԿ, ՎՁԵԲ, Պետական հատվածի դերը կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հզորացման գործում. Taking Stock (2005).

[4] Մարդու իրավունքների դիտակ (2005).

[5] Գլոբալ համաձայնագիր, Հաղթում է նա ով մտահոգված է. Ֆինանսական շուկաների մոտեցումը փոխվող աշխարհին. Բնապահպանական, սոցիալական և կառավարման խնդիրները վերլուծության, ակտիվների կառավարման և արժեթղթերի արքուվաճառք իրականացնելիս առավել արդյունավետ կիրառման վերաբերյալ ֆինանսական ոլորտի կողմից արված առաջարկություններ: (2005).

## Հավելված

◆

## Օգտագործված գրականության ցանկ (անգլերեն)

◆

## Բառարան

◆

## Հապավումների ցանկ



# Հավելված

## Հարցաշարի պատասխաններն ու վերլուծություն

Բարենպաստ Գործարար և Ներդրումային Միջավայրի համար Լավագույն Փորձի Ուղեցույցի հարցաշարը բաժանվեց 2006թ.-ի Փետրվար ամսին: Ընդհանուր առմամբ, ԵԱՀԿ 17 անդամ երկրներից ստացվեց հարցաշարի 26 պատասխան.

- Ադրբեջան
- Ալբանիա
- Բոսնիա և Հերցոգովինա
- Թուրքմենստան
- Հայաստան
- Հունգարիա
- Ղազախստան
- Մալթա
- Մակեդոնիա
- Մոնտենեգրո
- Ռուսաստան
- Սերբիա
- Սլովակիա
- Վրաստան
- Տաջիկիստան
- Ուկրաինա

Նշված 26 պատասխանները ներկայացվել են՝ 9 միջազգային կազմակերպությունների տեղական գրասենյակների, 10 ներդրումների խրախուսման ազգային գործակալությունների և 6 ՓՄՁ զարգացման գործակալությունների կողմից:

**1. Թվարկված ո՞ր գործոններն են նպաստում նպաստավոր գործարար և ներդրումային միջավայրի կայացմանը.**

| **Գործոն** | **Պատասխանների %** |
|---|---|
| Գործարարության ոլորտը կարգավորող օրենսդրություն և կանոնակարգեր | 73% |
| Ներդրումային խթաններ և օժանդակություն | 65% |
| Կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունները | 54% |
| Քաղաքական և մակրոտնտեսական իրավիճակն և կայունությունը | 38% |
| Աշխարհաքաղաքական դիրքն ու բնական պաշարների առկայությունը | 31% |
| Երկրի իմիջ, միջազգային վարկանիշ | 31% |
| Միջազգային համաձայնագրեր, ազատականություն | 31% |
| Բանկային համակարգ | 23% |
| Կայուն արժութային և ֆիսկալ քաղաքականություն | 19% |
| Ենթակառուցվածք | 15% |
| Միգրանտների դրամական փոխանցումների դերը | 15% |
| Աշխատուժի հմտությունները, կրթական մակարդակն ու արժեքը | 12% |

**2. Որո՞նք են օտարերկրյա ուղղակի ներդրումների համար հիմնական խոչընդոտները.**

| **Գործոն** | **Պատասխանների %** |
|---|---|
| Ընդհանուր օրենսդրությունը | 58% |
| Ֆիզիկական ենթակառուցվածքը | 54% |
| Դատական համակարգը, ներդրողի շահերի պաշտպանությունը | 38% |
| Կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունները | 35% |
| Վարչական բեռը | 35% |
| Կաշառակերությունը | 35% |
| Ձեռնարկության գրանցման և լիցենզավորման հետ կապված դժվարությունները | 27% |
| Երկրի համբավը, տնտեսական և քաղաքական կայունությունը | 27% |
| Հողահատկացումը և շինարարական թույլտվությունները | 23% |
| Հմուտ աշխատուժի առկայությունը | 19% |
| Շուկայի սահմանափակումները (չափ, գնային քաղաքականություն, մենաշնորհների առկայություն) | 15% |
| Աշխարհաքաղաքական դիրքն ու բնական պաշարների առկայությունը | 15% |
| Հարկային և մաքսային կանոնակարգերն ու վարչարարությունը | 12% |
| Բանկային համակարգը | 12% |
| Ներդրումային խթաններ և օժանդակություն | 12% |
| Հաշվապահական ստանդարտները | 8% |

### 3. Որո՞նք են ՓՄՁ զարգացման համար հիմնական խոչընդոտները.

| Գործոն | Պատասխանների % |
|---|---|
| Վարկային ռեսուրսների հասանելիությունը | 54% |
| Օրենսդրությունը ընդհանուր առմամբ՝ նախագծումը, ընդունումը, կիրառկումը | 50% |
| Գործարար հմտությունների բացակայությունը | 50% |
| Կաշառակերությունը | 46% |
| ՓՄՁ օժանդակման ենթակառուցվածքը | 46% |
| Ձեռնարկատիրական գործունեության իրականացման կանոնակարգերն ու դրանց կիրառկումը | 35% |
| Հարկային և մաքսային կանոնակարգերն ու վարչարարությունը | 31% |
| Վարչարարությունն ընդհանուր առմամբ | 27% |
| Շուկայի սահմանափակումները | 27% |
| Կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունները (կամ դրանց բացակայությունը) | 23% |
| Ֆիզիկական ենթակառուցվածք | 19% |
| Խոշոր բիզնեսի հետ համագործակցությունը | 12% |
| Հողի, շինարարական փարածքների հասանելիությունը | 12% |

### 4. Որո՞նք են լավագույն փորձ ցուցաբերած երկրները.

| Երկիր | Հիշատակումների քանակը |
|---|---|
| Էստոնիա | 6 |
| Լատվիա | 4 |
| Իռլանդիա | 4 |
| Չեխիա | 4 |
| Ֆինլանդիա | 4 |
| Լեհաստան | 4 |
| Լիտվա | 3 |
| Նորվեգիա | 2 |
| Միացյալ Թագավորություն | 2 |
| Ղազախստան | 2 |
| Սլովակիա | 2 |
| Հունգարիա | 2 |
| Սլովենիա | 1 |
| Ղրղզստան | 1 |
| Վրաստան | 1 |
| Մոնտենեգրո | 1 |
| Իսլանդիա | 1 |
| Նիդերլանդներ | 1 |
| Շվեդիա | 1 |

## ՀԱՐՑԱՇԱՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Ինչպե՞ս կբնութագրեիք Ձեր երկրի գործարար և ներդրումային միջավայրը:

2. Որո՞նք են օտարերկրյա ուղղակի ներդրումների համար հիմնական խոչընդոտները:

3. Որո՞նք են ՓՄՁ զարգացման և ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար հիմնական խոչընդոտները:

4. Վերջին հինգ տարիների ընթացքում արդյո՞ք որևէ նշանակալից քայլեր են ձեռնարկվել երկրի գործարար և ներդրումային միջավայրի բարելավման համար: Ի՞նչ միջոցառումներ են իրականացվել և որո՞նք են եղել առավելագույնս արդյունավետ: Ինչու՞: Արդյո՞ք - ձեռնարկված միջոցառումներից կան այնպիսիք որոնք ոչ արդյունավետ կամ հիասթափեցնող են եղել: Որո՞նք են և ինչու՞:

5. Առկա՞ են այրդյոք այնպիսի հատուկ օրենքներ կամ կանոնակարգեր, որոնք արդեն ընդունվել կամ վերջերս փոփոխվել են և որոնց ընդունման արդյունքում արձանագրվել է օտարերկրյա ուղղակի ներդրումների աճ:

6. 2006 թ.-ի ընթացքում նախատեսվում են արդյո՞ք այնպիսի օրենսդրական կամ կանոնակարգային փոփոխություններ, որոնք, Ձեր տեսանկյունից, օգտակար կլինեն գործարար և ներդրումային միջավայրի բարելավման համար:

7. Եղե՞լ են արդյոք կառավարության կողմից իրականացված այնպիսի ծրագրեր, որոնք արդյունավետ են եղել օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման և ՓՄՁ զարգացման համար: Առկա՞ են սփյուռքի կողմից դրամային փոխանցումների կամ ուղղակի ֆինանսական միջոցների ներգրավման և դեպի ներդրումներ ուղղորդման ծրագրեր:

8. Ինչպիսի՞ մեխանիզմներ է օգտագործում Ձեր երկիրը օտարերկրյա ներդրումների խթանման համար: Ներդրումների խթանման գործակալությու՞ն: Տարածաշրջանային ներդրումային կառույցնե՞ր: Արտոնություննե՞ր: Որո՞նք են առավելագույնս արդյունավետ եղել: Խնդրում ենք պարզաբանումներ տալ:

9. Որոնք են այն երկրները, և մասնավորապես ԵԱՀԿ անդամ երկրներից, որոնց փորձը գործարար և ներդրումային միջավայրի բարելավման գործընթացում կարելի է ուսանելի համար:

10. Խնդրում ենք Ձեր երկրի գործարար և ներումային միջավայրի վերաբերյալ հայտնել ցանկացած այլ կարծիք կամ մեկնաբանություն, որոնք, Ձեր կարծիքով կարող են օգտակար լինել Ուղեցույցի համար:

# Օգտագործված գրականության ցանկ (անգլերեն)


**Ad Hoc UNCITRAL Arbitral Awards**
1989 Biloune v Ghana Investments Centre, 95 *International Law Reports* 1830

**Adenas, M.**
2005 *Enforcing Contracts in Transition Economies: Contractual Rights and Obligations in Central Europe*, British Institute of International and Comparative Law, London

**Antonyuk, O.V., Kerr,W.A**.
2005 "Meeting TRIPS Commitments in Ukraine, An Important Challenge in the Quest for WTO Accession", 8 *Journal of World Intellectual Property* 271

**Armenia**
2000 Law on Trademarks, Service Marks and Appellations of origin (20 March 2000)
2001 Law of the Republic of Armenia on Joint Stock Companies

**AT Kearney**
2004 "FDI Confi dence Index", *Global Business Policy Council*, Alexandria, Virginia, USA

**Barth, J., Caprio, G., Levine, R.**
2001 *Bank Regulation and Supervision: What Works Best?*, World Bank Policy Research Working Paper 2725

**Basle Committee on Banking Supervision**
1997 Core Principles for Effective Banking Supervision, Basle

**Bati, A.**
2004 *Corporate Governance Reform in Azerbaijan*, 5th Meeting of the OECD Eurasian Corporate Governance Committee

**Bath Chronicle**
2004 "How you can help developing farmers get some fair pay", *Bath Chronicle* (27 February 2004)

**Belarus**
2005 Edict of the President of the Republic of Belarus no. 373 of 15 August 2005, "Certain Issues of Concluding Agreements and Fulfilment of Obligations on the Territory of the Republic of Belarus"

**Black Sea Economic Cooperation Business Council**
2005 "Helping Eliminate Barriers to Business and Improve Business Climate", *Strategic Directions*, http://www.bsec-business.org/sdirect.asp

**Bradford, C.**
2005 *Prioritizing Economic Growth: Enhancing Macroeconomic Policy Choice*, United Nations Conference on Trade and Development G-24 Discussion Paper Series

**Buiter, W.H.**
2004 *What have we learnt from fifteen years of transition in Central and Eastern Europe*, National Bureau of Economic Research

**Bulgaria**
2003 Law on Competition Protection, published in the SG no. 52/1998, as amended, SG no. 112/1998, 81/1999, 28/2002, 9/2003 and 107/2003

**Clark, T.**
2002 "VAT mess puts off foreign investors", *Th e Moscow Times*, 8 August 2002

**Commission on European Contract Law**
1998 Principles of European Contract Law, Parts I and II

**Croatia**
2005 "Prime Minister Ivo Sanader launches service enabling electronic fi ling of forms", *Republic of Croatia Press Release* (3 November 2005), http://www.vlada.hr/default.asp?mode=1&gl=200511030000011&jezik=2&sid=

**Cyprus**
1997 Banking Law (no. 66(I) of 1997) of the Republic of Cyprus

**Dahab, S.**
1985 *The Agricultural Machinery and Implement Industry in Brazil: its historical development and inventive activity*, unpublished Ph.D. dissertation, Yale University, New Haven

**Daintith, T.**
2005 "Contractual Discretion and Administrative Discretion: A Unified Analysis", 68 *Modern Law Review* 554 (2005)

**Deutsche Bank**
2005 *Opening economies succeed*, Deutsche Bank Research (November 2005), http://www.dbresearch.com/PROD/DBR_INTERNET_EN-PROD/PROD0000000000189232.pdf

**Dyck, A.**
2001 "Privatization and Corporate Governance: Principles, Evidence and Future Challenges", 16 *World Bank Research Observer* 59 (2001)

**Earle, J.S.**
2006 "Employment and Wage Effects of Privatization: Evidence from Transition Economies", *Employment Research* (January 2006), http://www.upjohninst.org/publications/newsletter/JSE_106.pdf

**Edmiston, K., Mudd, S., Valev, N.**
2003 *Tax Structures and FDI: The Deterrent Effects of Complexity and Uncertainty*, William Davidson Institute, Working Paper no. 558 (April 2003)

**European Bank for Reconstruction and Development (EBRD)**
2000 "Towards international standards on insolvency: the catalytic role of the World Bank, Law in transition", *Insolvency law and practice* (Spring 2000)
2004 *Strategy for Estonia*, EBRD, www.ebrd.com/about/strategy/country/estonia/strategy.pdf
2005 *Recent legal developments in transition countries*, EBRD (June–December 2005)
2005 *Transition Report* 2005, EBRD, London

2005 *The EBRD-World Bank Business Environment and Enterprise Performance Dataset 2002 and 2005*, http://www.ebrd.com/pubs/econo/beeps.htm

**European Union**

1999 Directive 1999/93/EC of the European Parliament and of the Council of 13 December 1999 on a community framework for electronic signatures, OJ 2000 L13/12

2000 Directive 2000/31/EC of the European Parliament and of the Council of 8 June 2000 on certain legal aspects of information society services, in particular electronic commerce, in the Internal Market, OJ 2004 L178

2000 *European Charter for Small Enterprises*, European Council, 19-20 June 2000, http://europa.eu.int/scadplus/leg/en/lvb/n26002.htm

2002 Council Directive 2002/38/EC of 7 May 2002 amending and amending temporarily Directive 77/388/EEC as regards the value added tax arrangements applicable to radio and television broadcasting services and certain electronically supplied services, OJ 2002 L 128/41

2002 Directive 2002/58/EC of the European Parliament and of the Council of 12 July 2002 concerning the processing of personal data and the protection of privacy in the electronic communications sector, OJ 2002 L 201/37

2003 “The Legal and Market Aspects of Electronic Signatures”, *Study for the European Commission - DG Information Society* (September 2003)

2003 *Responsible entrepreneurship. A collection of good practice cases among small and medium-sized enterprises across Europe*, EU, Entreprise DG, Brussels, http://europa.eu.int/comm/enterprise/csr/index.htm

2003 SME definition: Commission Recommendation of 06 May 2003, OJ L 124 of 20 May 2003, p. 36, http://ec.europa.eu/enterprise/enterprise_policy/sme_defi nition/index_en.htm

2004 Commission Regulation (EC) no. 772/2004 of 27 April 2004 on the application of Article 81(3) of the Treaty to categories of technology transfer agreements, Regulation EC 772/2004, OJ 2004 L123/11

2004 Commission Notice: Guidelines on the application of Article 81 of the EC Treaty to technology transfer agreements, OJ 2004 C101/2

2005 *Commission Staff Working Document Report on the Implementation of the European Charter for Small Enterprises in Moldova and the Countries in the Western Balkans*, SEC(2005)169, Brussels, 8 February 2005

2005 Conference on the European Charter for Small Enterprises, Luxemburg, *Conference Summary Report*, European Commission Enterprise and Industry Directorate-General, 15-16 June 2005, http://europa.eu.int/comm/enterprise/events/charter/doc/2005_lux/lux_summary.pdf

2005 *Report on the Implementation of the European Charter for Small Enterprises in Moldova and the Countries in the Western Balkans*, Brussels, http://www.copca.com/armari/calaix1/000/00/01/103/sec_2005_169_en.pdf

2005 *Taxation mechanisms based on simplified and indirect evaluation of tax liabilities*, S.N. Makedonskiy, EU Tacis, Moscow, http:www.recep.ru

2005 “The activities of the European Union for small and medium-sized enterprises (SMEs)” *SME Envoy Report* SEC(2005)170, Brussels, 8 February 2005

**Ewing, J., Edmondson, G., Kranz, P.**

2005 “Rise of a Powerhouse: How the young knowledge workers of Central Europe are pushing the region to a new level”, *Business Week* 3963 (12 December 2005), 50, http://www.businessweek.com/magazine/content/05_50/b3963021.htm

**Galanter, M.**

1981 “Justice in Many Rooms: Courts, Private Ordering, and Indigenous Law”, 19 *Journal of Legal Pluralism* 1 (1981)

**Greenwood, J., Kimbrough, K.**
1987 "An Investigation into the Theory of Foreign Exchange Controls", 20 *The Canadian Journal of Economics* 271 (1987)

**Guriev, S., Megginson, W.**
2005 *Privatization: What Have We Learned?* (2005), http://siteresources.worldbank.org/INTDECABC2006

**Head, J.W.**
2005 "Getting down to basics: strengthening fi nancial systems in developing countries", 18 *Transactional Lawyer* 257 (2005)

**Hendley, K., Murrell, P., Ryterman, R.**
2000 "Law, Relationships, and Private Enforcement: Transactional Strategies of Russian Enterprises", *Europe-Asia Studies* 52/4 (June 2000), p. 627–656

**Hungary**
1997 Hungarian Law No. XI of 1997 on the Protection of Trademarks and Geographical Indications

**Human Rights Watch**
2005 *World Report 2005*, Events of 2004, USA

**Indem Foundation**
2004 *Business and Corruption: How To Combat Business Participation In Corruption*, Final Report, K.I. Golovshinskii, S.A. Parkhomenko, V.L. Rimskii, G.A. Satarov, INDEM Foundation, Moscow, http://www.anti-corr.ru/cipe/CIPEen.pdf

**International Centre for Settlement of Investment Disputes (ICSID)**
2003 Tecnicas Medioambientales Tecmed S.A. v. T e United Mexican States, Case No. ARB (AF)/00/2 (ICSID 2003)

**International Conference on Reforming the Business Environment**
2005 *Conference Outcomes*, Committee of Donor Agencies For Small Enterprise Development, Cairo, Egypt

**International Finance Corporation (IFC)**
2005 "Ukraine Adopts Law on Business Permits Drafted by IFC", *International Finance Corporation Press Release*, 7 September 2005

**International Institute for the Unification of Private Law (UNIDROIT)**
1994 International Institute for the Unification of Private Law (the 'UNIDROIT') Principles of International Commercial Contracts (1994)

**Iran-United States Claims Tribunal**
1983 "ITT Indus. v Iran", 2 *Iran-U.S. Claims Tribunal Reports* 348 (1983)
1984 Tippetts, Abbett, McCarthy, "Stratton v TAMS-AFFA Consulting Engineers of Iran", 6 *Iran-U.S. Claims Tribunal Reports* 219 (1984)
1985 "International Technical Products Corp v Government of the Islamic Republic of Iran", 9 *Iran-U.S. Claims Tribunal Reports* 206 (1985)

**Jain, B.K.**
2001 *Creating a Climate for Innovation and Entrepreneurship – Emerging Role of Higher Educational Institutions*, Dr. B. K. Jain and Dr. Anita Gupta, Department of Science & Technology, Government of India

**Kähkönen, S., Lee, Y., Meagher, P., Semboja, H.**
2001 *Contracting Practices in an African Economy: Industrial Firms and Suppliers in Tanzania*, University of Maryland, IRIS Center Working Paper 242

**Kasolowsky, B., Th alhammer, D.**
2005 "Austria: Car Dealer v. Defendant Distributor – Competition Law and Arbitration Clause", 8 *International Arbitration Law Review* N1-3 (2005)

**Kogut, B., Spicer, A.**
2002 "Capital market development and mass privatization are logical contradictions: lessons from Russia and the Czech Republic", 11 *Industrial and Corporate Change* 1 (2002)

**Kumar, N.**
2001 *Infrastructure availability, foreign direct investment inflows and their export-orientation: a cross-country exploration* (Research and Information System for Developing Countries 2001), http://www.gdnet.org/pdf/nkumar.pdf

**La Porta, R., Lopez-de-Silane, F. Shleifer, A and Vishny, R.**
1997 *Legal Determinants of External Finance*, NBER Working Paper no. 5879, January 1997

**Lee, C.**
2004 *Model Competition Laws: The World Bank-OECD and UNCTAD Approaches Compared*, 10 August 2004

**Levine, R., Zervos, S.**
1998 "Stock Markets, Banks, and Economic Growth", 88 *American Economic Review* 537 (1998).

**Malta**
2000 Trademark Act of Malta (Act XVI of 2000)

**Mansfield, E.**
1994 "Intellectual Property Protection, Foreign Direct Investment and Technology Transfer", *IFC Discussion Paper* no. 19 (1994)

**Marakand Minerals Limited**
2003 *Accountants' Report on the Khandiza Exploration Asset* (28 November 2003)

**Markarian, G.**
2003 *Rule-of-Law and Commercial Law Issues in Armenia*, Armenian International Policy Research Group, Working Paper No. 03/17, January 2003

**Maskus, K.E.**
2000 *Intellectual Property Rights and Foreign Direct Investment*, Centre for International Economic Studies, Policy Discussion Paper no. 0022

**Megginson, W.L., Netter, J.M.**
2001 "From State to Market: A Survey of Empirical Studies on Privatization", 39 *Journal of Economic Literature* 321 (2001)

**Moldova**
1997 Law No.1134-XIII On Joint Stock Companies, adopted on Apr 2, 1997

**Morriset, J.**
2003 *Using Tax Incentives to Attract Foreign Direct Investment*, World Bank Infrastructure Group, January 2003

**Muir, R., Shen, X.**
2005 *Land Markets: Improving Access to Land and Buildings by Investors*, FIAS, World Bank Group, October 2005

**New Zealand Law Commission**
1999 "Cross-Border Insolvency: Should New Zealand Adopt the UNCITRAL Model Law on Cross-Border Insolvency?", Law Commission Report No. 52, (1999)

**Nemirowsky, H., Wright, J.**
1996 *Issues Surrounding Security Regulation in Latin America and the Carribean*, Inter-American Development Bank, 1999

**North, D.**
1991 "Institutions", 5 *The Journal of Economic Perspectives* 97 (1991)

**O'Rourke, B.**
2001 "The EU: How Ireland Unleashed its "Celtic Tiger" Economy" (Part 1), *Radio Free Europe/Radio Liberty*

**Organisation for Economic Cooperation and Development (OECD)**
1997 *Resale price maintenance*, OECD Doc. No. OCDE/GD(97)229 (1997)
1998 *Competition Policy and Intellectual Property Rights*, OECD Doc. no. DAFFE/CLP (98) 18 (21 September 1998)
1999 A *Framework for the Design and Implementation of Competition Law and Policy*, World Bank & OECD, 1999
2000 *The OECD Guidelines for Multinational Enterprises*, OECD, http://www.oecd.org/dataoecd/56/36/1922428.pdf
2000 *The Bologna Charter on SME Policies*, 1st OECD Ministerial Conference on SMEs, Bologna, Italy, 13-15 June 2000, OECD, http://www.oecd.org/document/17/0,2340,en_2649_201185_1809105_1_1_1_1,00.html
2004 *OECD Principles of Corporate Governance*, OECD
2004 *Effective Policies for Small Business. A Guide for the Policy Review Process and Strategic Plans for Micro, Small and Medium Enterprise Development*, OECD/UNIDO, http://www.unido.org/en/doc/33172
2004 "Fair and Equitable Treatment in International Investor Law", *OECD Working Papers on International Investment* 2004/3, OECD
2004 2nd OECD Conference of Ministers responsible for Small and Medium Enterprise Development (SMES), Istanbul, Turkey, 3-5 June 2004, *Promoting Entrepreneurship and Innovative SMEs in a Global Economy: Towards a More Responsible and Inclusive Globalisation, Executive Summary of the Background Reports*, http://www.oecd.org/dataoecd/5/24/31919590.pdf
2004 *The Istanbul Ministerial Declaration on Fostering the Growth of Innovative and Internationally Competitive SMEs*, OECD, www.oecd.org/document/28/0,2340,en_ 2649_34197_32020176_1_1_1_1,00.html
2004 *Small and Medium-sized Enterprises in Turkey, Issues and Policies*, OECD, http://www.oecd.org/dataoecd/5/11/31932173.pdf
2005 *A Policy Framework for Investment: Draft Preamble, Checklists and Preliminary Annotations*, OECD, 25-27 October 2005, http://www.oecd.org/dataoecd/10/55/35488787.pdf>
2005 "Designing the Future, Making Investment Happen For Employment and Growth In South East Europe",
*OECD Investment Compact*

2005 *Encouraging Linkages between Small and Medium-sized Companies and Multinational Enterprises, An overview of good policy practice by the OECD Investment Committee*, 10 November 2005, Paris, http://www.oecd.org/dataoecd/62/30/35795105.pdf
2005 *Investment Compact for South-East Europe*, OECD/Stability Pact, http://www.investmentcompact.org

**Organization for Security and Co-operation in Europe (OSCE)**
2003 *OSCE Strategy Document for the Economic and Environmental Dimension*, 11th OSCE Ministerial Council, MC(11).JOUR/2, 2 December 2003, Annex 1, Maastricht, http://www.osce.org/item/16350.html
2003 „Promoting Stability and Growth in Central Asia through Expanded Business Opportunities", Speech of Helen Santiago Fink, *Global Compact Policy Dialogue regional meeting*, Almaty, OSCE/OCEEA, 13-14 November 2003
2004 *Best Practices in Combating Corruption*, OSCE (2004), http://www.osce.org/publications/eea/2004/05/12211_87_en.pdf

**Parisi, M.**
2005 "Moving Toward Transparency? An Examination of Regulatory Takings in International Law", 19 *Emory International Law Review* 383 (2005)

**Romania**
2003 Fiscal Code of Romania (Law No. 571/2003), *Official Gazette of Romania* (Part One), no. 927 of 23 Dec 2003

**Russian Federation**
2001 Law of the Russian Federation no. 147-Fz (I) on Natural Monopolies of 17 Aug 1995 (as amended on 8 Aug and 30 Dec 2001)

**Serbia**
2004 Law on Bankruptcy Proceedings, Republic of Serbia, passed by the National Assembly on 23 July 2004, *Official Gazette of the Republic of Serbia*, no. 84/04
2004 Law on Trademarks, Official Gazette of Serbia and Montenegro, No. 61, 24 December 2004. Entered into force 1 January 2005
2005 Code of Ethics for Bankruptcy Receivers
2005 "Second round of bankruptcy trustees receive licenses", *Serbian Government press release*, 25 October 2005

**Spartareanu, M., Smarzynska, B.**
2004 *Do foreign investors care about labour market regulations?*, World Bank Policy Research Working Paper 3275, April 2004

**Stability Pact**
1999 *Sarajevo Summit Declaration of the Heads of State and Government of the participating and facilitating countries of the Stability Pact and the Principals of participating and facilitating International Organizations and Agencies and regional initiatives*, Sarajevo, 30 July 1999, http://www.stabilitypact.org/constituent/990730-sarajevo.asp

**Stanfield, J.D.**
1999 *Creation of Land Markets in Transition Countries: Implications for the Institutions of Land Administration*, Working Paper no. 29, Land Tenure Center, University of Wisconsin-Madison, (1999)

**Suhr, E.**
2004 *Good Intentions and Bad Consequences: How Overregulation Impedes Uzbekistan's Growth*, Center for International Private Enterprise Economic Reform Feature Service, 29 January 2004

**The Economist**
2005 "Simplifying tax systems: The case for flat taxes", *The Economist*, 14 April 2005, http://www.economist.com/displaystory.cfm?story_id=3860731

**Turkey**
1994 Act on the Protection of Competition, act no. 4054, adopted 7 December 1994

**United Kingdom Commission on Intellectual Property Rights**
2002 *Integrating Intellectual Property Rights and Development Policy*, UK Commission on Intellectual Property Rights 2002

**United Nations**
International Labour Organization (ILO)
1998 ILO Declaration on Fundamental Principles and Rights at Work
United Nations Commission on International Trade Law (UNCITRAL)
1994 *Model Law on Procurement of Goods, Construction and Services with Guide to Enactment*, http://www.uncitral.org/pdf/english/texts/procurem/ml-procurement/ml-procure.pdf
2005 *Legislative Guide on Insolvency Law*, http://www.uncitral.org/pdf/english/texts/insolven/05-80722_Ebook.pdf
United Nations Conference on Trade and Development (UNCTAD)
1999 *Trends in International Investment Agreements*, UNCTAD/ITE/IIT/13 (1999)
2004 *World Investment Report 2004*: The Shift Towards Service
2005 *World Investment Report 2005*: Transnational Corporations and the Internationalization of R&D
United Nations Development Programme (UNDP)
2003 *Promoting Stability and Growth in Central Asia through Expanded Business Opportunities*, Global Compact Policy Dialogue regional meeting, Almaty, 13-14 November 2003, http://www.undp.kz/img/docs/en/555.htm
2005 "International Co-operation at Crossroads: Aid, Trade and Security in an Unequal World", *UN Human Development Report 2005*, UNDP, New York, http://hdr.undp.org/reports/global/2005/
2005 "Who Cares Wins: Connecting Financial Markets to a Changing World., Recommendations by the financial industry to better integrate environmental, social and governance issues in analysis, asset management and securities brokerage", *The Global Compact*, UNDP/ Swiss Federal Department United Nations of Foreign Affairs, New York, http://www.innovestgroup.com/pdfs/WhoCaresWins.pdf
United Nations Economic Commission for Europe (UNECE)
2003 "The Development of the SME Sector in the Countries in Transition and Emerging Market Economies in the UNECE Region", *UNECE Workshop on Policy and Regulatory Options for Promoting Industrial Restructuring in ECE Region*, 23 April 2003, http://www.unece.org/ie/industry/ documents/szabot.pdf
2005 *Report on the Forum After Fifteen Years of Market Reforms in Transition Economies: New Challenges and Perspectives for the Industrial sector*, UNECE Committee for Trade, Industry and Enterprise Development, Ninth session, 23-27 May 2005, Geneva,ECE/TRADE/360/Add.13 August 2005
2006 *Public-Private Cooperation in Industrial restructuring*, paper prepared by Professor Sailau Baizakov, Deputy Director General, Institute for Economic Research, Almaty, Kazakhstan, for UNECE/OSCE, New York and Geneva
United Nations Economic and Social Commission for Asia and Pacific (UNESCAP)
2004 "Addressing Supply-Side Constraints and Capacity-Building, Economic and Social Commission For Asia and the Pacific", *Subcommittee On International Trade and Investment*, First Session, 27-29 October 2004

United Nations Educational, Scientific and Cultural Organization (UNESCO)
1971 Universal Copyright Convention as revised at Paris on 24 July 1971
United Nations Industrial Development Organization (UNIDO)
2006 *The UNIDO Cluster/Network Development Programme: The Italian Experience of Industrial Districts*, http://www.unido.org/doc/4310
World Intellectual Property Organization (WIPO)
1971 Berne Convention for the Protection of Literary and Artistic Works (Paris Text 1971)
1996 WIPO Copyright Treaty
1996 WIPO Performances and Phonograms Treaty
2003 *Guide To WIPO Domain Name Dispute Resolution*, WIPO Arbitration and Mediation Center

**United States**
1995 *Antitrust Guidelines for the Licensing of Intellectual Property*, United States Department of Justice and Federal Trade Commission, Washington, DC
2004 "Investor Perceptions of Bulgaria's Competitive Opportunities and Constraints: Labour Market Focus", *USAID Labour Market Project* (October 2004)
2005 "Enhancing Ukraine's Industrial Base & Attracting FDI: Industrial Park Development", USAID Ukraine WTO Accession & Investment Promotion Project
2005 *U.S. Manual of Trademark Examining Procedures*, U.S. Patent and Trademark Office, April 2005
2006 "USTR Reinstates Generalized System of Preferences Benefits for Ukraine", *U.S. Trade Representative press release*, 23 January 2006

**World Bank Group**
2002 *Transition: The First Ten Years. Analysis and Lessons for Eastern Europe and the Former Soviet Union*, IBRD/World Bank, Washington D.C.
2003 *Georgia: An Integrated Trade Development Strategy*, World Bank Poverty Reduction and Economic Management Unit, Europe and Central Asia Region, 5 November 2003, http://www.wds.worldbank.org/servlet/WDSContentServer/WDSP/IB/2003/12/16/000090341_20031216104201/Rendered/INDEX/272640GE.txt
2004 *Doing Business in 2004: Understanding Regulation*, IBRD/IFC, Washington, http://rru.worldbank.org/doingbusiness
2004 "Business Environment in Ukraine", Ukraine SME Survey and Policy Development Project with the financial support of the Ministry of Foreign Affairs of Norway, December 2004, http://www.ifc.org/ifcext/eca.nsf/AttachmentsByTitle/UkraineSMESurvey_2004_Eng/$FILE/UkrSMESurvey_2004_Eng.pdf
2004 "Public Sector Roles in Strengthening Corporate Social Responsibility: Taking Stock", *Corporate Responsibility for Environment and Development*, International Institute for Environment and Development for the Corporate Social Responsibility Practice of the World Bank Group
2005 *Administrative Barriers to Investment within Subjects of the Russian Federation. Estimating Costs of Administrative Barriers to Russian Economy*, IFC/FIAS, Draft for Comments, September 2005, Russian, www.worldbank.org/russia/fias
2005 "Business Environment in Uzbekistan as seen by Small and Medium Enterprises", *Survey results based on 2004*, IFC, Tashkent, http://www2.ifc.org/centralasia/sme/uzsurvey.htm
2005 *Doing Business in 2005: Removing Obstacles to Growth*, IBRD/IFC, Washington, http://rru.worldbank.org/doingbusiness
2005 *World Bank Development Report 2005: A Better Investment Climate for Everyone*
2006 *Doing Business in 2006: Creating Jobs*, IBRD/IFC, Washington, http://rru.worldbank.org/doingbusiness
2006 *Monitoring the Administrative Barriers to Small Business Development in Russia, the Fifth Round*, November 2005, World Bank/USAID/CEFIR, http://www.cefi r.ru/index.php?id=32

**World Economic Forum**
2005 "The Best Places to Do Business",
http://www.weforum.org/site/knowledgenavigator.nsf/Content/_S12848
2005 "Resource-based Economy to Sector Diversification in Russia" (18 Oct 2005),
http://www.weforum.org/site/knowledgenavigator.nsf/Content/_S15467?open&event_id=

**World Trade Organization (WTO)**
1994 Agreement on Trade Related Aspects of Intellectual Property Rights
1994 Agreement on Government Procurement

**Zalm, G.**
2005 "The Other Path to Growth: Private Sector Development" (Speech), *Annual Bank Conference Of Development Economics*, Amsterdam

# *Բառարան*

Ուղեցույցի օգտագործման ընթացքում հետևյալ տերմինները պետք է հասկացվան ստորև ներկայացված իմաստով.

**Ազատ ընթացք** – իրավիճակ, որի ժամանակ շուկայի մասնակիցը շահում է այլոց կողմից իրականացված գործառույթներից, բայց ազատ է մնում այդ գործառույթի հետ կապված ծախսերի իրականացումից, քանի որ չունի վճարում կատարելու պարտավորություն կամ խթան:

**Ազգայնացում** – կառավարության կողմից իրականացվող գործընթաց, որի ընթացքում այն սեփականատիրոջից օտարում է բիզնեսը կամ այլ գույքը:

**Ազգային ռեժիմ** – օտարերկրյա ընկերությունների իրավունքը գործունեություն ծավալել տեղական ընկերությունների հետ նույն օրենքների և կանոնակարգերի ներքո, ինչպես նաև դիտվել դրանց իրավահավասարազոր:

**Անշարժ գույք** – հող և դրան կցված գույք, որը չի կարող տեղաշարժվել առանց հողին կամ ֆիքսված գույքին վնաս պատճառելու:

**Անվճարունակության օրենք (հայտնի է նաև որպես սնանկության օրենք)** – կրեդիտորական պարտքերի վճարման նպատակով ձևավորված իրավական ռեժիմ, որն իր պարտավորություններն մարելու հնարավորություններն սպառած պարտապանին նոր մեկնարկի հնարավորություն է ընձեռնում:

**Առևտրային գաղտնիք** – տեղեկատվություն, ներառյալ բանաձև, մոդել, տվյալների շտեմարան, ծրագիր, սարքավորում, եղանակ կամ գործընթաց, որն (ա) ունի անկախ տնտեսական արժեք, քանի որ ընդհանուր առմամբ հայտնի չէ և պատշաճ միջոցներով հեշտությամբ հասանելի չէ այլ անձանց համար, որոնք կարող են դրա բացահայտումից կամ օգտագործումից տնտեսական արժեք ստանալ, և (բ) գաղտնիության պահպանման համար խելամիտ ջանքեր է պահանջում:

**Առևտրային նշան** - բառ, ֆիրմային անվանում, խորհրդանիշ կամ գծապատկեր, որն օգտագործվում է ընկերության կողմից արտադրվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների ճանաչման և այլ ապրանքներից ու ծառայություններից տարբերակման համար:

**Ավելացված արժեքի հարկ** – սպառողական հարկ, որի կիրառման պարագայում հարկադրումը իրականացվում է արտադրական գործընթացի յուրաքանչյուր փուլում երբ սկզբնական ապրանքի վրա արժեք է ավելանում, ինչպես նաև սպառողի կողմից վերջնական ապրանքի գնման պահին:

**Բաժնետոմսերի թողարկմամբ սեփականաշնորհում** – պետական սեփականություն հանդիսացող ընկերության սեփականաշնորհում արժեթղթերի շուկայում մասնավոր ներդրողներին ընկերության բաժնետոմսերի վաճառքի եղանակով:

**Բարի համբավ** – համբավ, իմիջ և ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտի այնպիսի ակնկալիքներ, համաձայն որոնց կապահովվի սպառողների հետ կրկնվող գործարքների իրականացումը:

**Բացարկ** - «բացարկ տալ» իրավական ենթատեքստում նշանակում է ձեռնպահ մնալ դատական լսումներից կամ այլ վարույթներից շահերի բախման, անկողմնակալության սակավության, կամ անկողմնակալության սակավության վերաբերյալ կասկածի ի հայտ գալու հետևանքով:

**Բույսաբուծի հեղինակային իրավունքը** – նոր, առանձնահատուկ, միատեսակ և կայուն բույսերի բազմազանության ստեղծողին շնորհված հեղինակային իրավունք:

**Գործարար միջավայր** – օտարերկրյա և տեղական ընկերությունների համար տվյալ երկրում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու և շահույթ հետապնդելու հնարավորություն ընձեռնող համակարգ:

**Դրամական փոխանցում** – արտերկրում գտնվող արտագաղթածների կողմից դեպի հայրենիք դրամի փոխանցում:

**Գիլյոտին (վարչական)** – մեծ քանակությամբ կանոնակարգերի կտրուկ վերանայման և այլևս ոչ պիտանիների վերացման եղանակ, որը չի ենթադրում յուրաքանչյուր կանոնակարգի նկատմամբ իրավական գործառույթի իրականացում:

**Գրավ** – վարկի մարումն երաշխավորող գույք: Եթե վարկը մարված չէ իր պայմաններին համապատասխան, ապա պարտատերը կարող է օգտագործել գրավի արժեքը պարտապանի վարկային պարտավորությունների ամբողջական կամ մասնակի բավարերման նպատակով:

**Դոմենային անուն** – Ինտերնետ Պրոտոկոլի (ԻՊ) հասցեներին տրվող տառա-թվաբանական այնպիսի անուն, որը կարող է հեշտությամբ հիշվել օգտագործողների կողմից:

**Դրամական միջոցների համարժեքություն** - բանկի հնարավորությունը դիմակայելու ռիսկերին հիմնվելով միայն բաժնետերերի կողմից վճարված դրամական միջոցների, ինչպես նաև որոշակի այլ պահուստային միջոցների վրա:

**Երաշխավորված գործարքի իրավունք** – իրավական համակարգ, որն իրավունք է տալիս անձնական գույքի սեփականատիրոջը վարկ ստանալու նպատակով որպես երաշխիք գրավադրման ենթարկել այդ գույքը:

**Ժամանակավոր սահմանափակման ցուցում** - դատական կարքով տրվող ժամանակավոր արգելք, որն կարող է շնորհվել դատական վեճի մեկնարկին՝ մինչ վեճի վերջնական կարկավորումը ստատուս քվո-ի պահմապնման նպատակով:

**Իրավասություն** - դատարանի կամ կառավարական այլ մարմնի լիազորությունը վիճարկվող խնդրի վերաբերյալ որոշում կայացնելու:

**Խախտում (հեղինակային իրավունքի)** – հայտագրված գաղափարի, նյութի, բառակապակցության, ոճի, անվան, գյուտի, հեղինակային աշխատանքի այլ արդյունքի ապօրինի ձեռքբերում, օգտագործում կամ հեղինակային իրավունքն կարգավորող օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքի խախտում:

**Խթաններ (ներդրումների համար)** – օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու և դրանցից առավել շահ ստանալու համար օգտագործվող քաղաքականության գործիքներ: Ներդրումային խթանների օրինակները ներառում են. ֆինանսական խթաններ (դրամաշնորհներ և արտոնյալ տոկոսադրույքով տրվող վարկեր), արտոնություններ (հարկային արձակուրդներ և արտոնյալ հարկային դրույքաչափեր), սուբսիդավորված ենթակառուցվածք կամ ծառայություններ, շուկայի պրեֆերենցիաներ և վարչական զիջումներ:

**Կադաստր** – որոշակի փարածաշրջանի, երկրի, կամ թաղամասի փիրույթում անշարժ գույքի վերաբերյալ փեղեկափվության հանրային ռեգիսփր՝ կազմված դիփարկվող փարածաշրջանի չափագրման արդյունքում:

**Կայուն զարգացում** – ներկայի կարիքներին համահունչ զարգացում, որն չի իրականացվում ի հաշիվ ապագա սերունքների սեփական կարիքների բավարարման ունակության:

**Կապիփալի շուկաներ** – միջնա- և երկարաժամկետ ֆինանսական միջոցների շուկաներ, ինչպիսիք են ընկերությունների բաժնետոմսեր և առնվազն մեկ տարի մարման ժամկետ ունեցող պետական ու մասնավոր պարտատոմսեր:

**Կլաստերների վրա հիմնված զարգացում** – տնտեսական զարգացման ռազմավարություն, որը նպատակադրելով տեղական տնտեսություններում ի սկզբանե առկա արդյունաբերական ճյուղերը, հասանելի բոլոր միջոցները ուղղորդում է այդ ճյուղերի հզորացման կարիքների բավարարման վրա, մասնավորապես՝ մասնագիտական վերապատրաստումների, ֆիզիկական ենթակառուցվածքի զարգացման և տեղական կրթական հաստատություններում մասնագիտացված հետազոտական ծրագրերի իրականացման միջոցով:

**Կոլեկտիվ օգտագործման առևտրային նշան** – հատուկ առևտրային նշան, որը գրանցված է կոպերատիվի, ասոցիացիայի, միության կամ կազմակերպությունների այլ միավորումների անդամների բացառիկ օգտագործման նպատակով:

**Կորպորատիվ կառավարում** - գործընթացների, ավանդույթների, քաղաքականությունների, օրենքների և ենթակառույցների համակարգ, որն ազդում է ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների ուղղորդման, կառավարման և վերահսկման վրա:

**Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն** – ընկերության պարտավորվածությունը ձեռնարկատիրական գործունեությունն հետևողականորեն իրականացնել այնպիսի եղանակներով, որոնք համապատասխանում կամ գերազանցում են հասարակության կողմից ակնկալվող էթիկական, իրավական, առևտրային և հասարակական ստանդարտներին:

**Հայտի բողոքարկում** – կառավարական պայմանագրի շնորհման, կամ կառվարական գնումների հնարավորության առաջարկի/հայտի ընդունման կամ մերժման մասին որոշման դատական կարգով բողոքարկում:

**Հանրային տիրույթ** – յուրաքանչյուրի համար հասանելի և առանց օգտագործման, արտատպման ու տարածման համար սահմանափակման, ինչպես նաև հեղինակային իրավունքի պահանջներից ազատ պետական տեղեկատվություն, գիտելիք, կամ արտահայտում:

**Հաշտեցում** – վեճերի լուծման այլընտրանքային չպարտավորեցնող եղանակ, որի ժամանակ նեյտրալ կողմը փորձում է ուղղորդել կողմերին դեպի վեճի կարգավորում: Հաշտեցման առանցքային նպատակն է հանդիսանում առկա տարաձայնություններին լուծում գտնել փոխզիջումների փնտրման միջոցով: Հաշտեցում տերմինը կարող է փոխարինությամբ օգտագործվել միջնորդության հետ, սակայն դրանց մեկնաբանումը առաջին հերթին պայմանավորված է տվյալ ենթատեքստով:

**Հեղինակային իրավունք** – մտավոր ստեղծագործության (ինչպիսիք են գյուտերը, գրականության և գեղարվեստի ոլորտի աշխատանքները, և առևտրում օգտագործվող նշանները, անունները, պատկերներն ու դիզայնը) օրենսդրությամբ պաշտպանված իրավունքներ:

**Մակրոտնտեսական** – վերաբերում է ազգային տնտեսության հիմնական, ընդհանուր բնութագրերին, ինչպիսիք են զբաղվածության կամ ազգային արժույթի արժեզրկման ծավալները:

**Մանրածախ գների պահպանում** – միևնույն ապրանքն ու ծառայություններն շուկայի տարբեր մակարդակներում իրացնող վաճառողների և գնորդների միջև այնպիսի պայմանավորվածություն, համաձայն որի շուկայի մեկ կամ մի քանի մակարդակներում գները ենթարկվում են ֆիքսման կոնկրետ արժեքի կամ տիրույթի շրջակայքում:

**Միասնական դրույքաչափով հարկ** – հարկման այնպիսի համակարգ, համաձայն որի բոլորը ենթակա են հարկման միասնական դրույքաչափով՝ անկախ ստացված շահույթի ծավալի:

**Միջնորդ դատավարություն (արբիտրաժ)** - դատական գործընթացին այլընտրանքային հանդիսացող վեճերի լուծման եղանակ, որի ժամանակ կողմերը պայմանավորվում են վեճը պարտադիր կատարման ենթակա վճռի կայացումը հանձնել երրորդ կողմին:

**Միջնորդություն** – բանավեճ, որում անկախ կողմը (միջնորդը) աջակցություն է ցուցաբերում կողմերի միջև փոխհարաբերություններին՝ դրանց միջև հաշտեցման, կարգավորման կամ համաձայնության ձեռք բերման նպատակով: Միջնորդություն տերմինը կարող է փոխարինությամբ օգտագործվել հաշտեցման հետ, սակայն դրանց մեկնաբանումը առաջին հերթին պայմանավորված է տվյալ ենթատեքստով:

**Մտավոր սեփականություն** – հեղինակային աշխատանքներն (ինչպիսիք են տեքստերը, երաժշտությունը, համակարգչային ծրագրերը, կինոնկարներն ու մշակութային աշխատանքները) պաշտպանող բացառիկ իրավունք:

**Մրցակցային օրենսդրություն** - օրենքների, կանոնակարգերի և կանոնների համակարգ, որն ուղղված է մասնավոր ընկերությունների կողմից շուկայում գերակայող դիրքերի հզորացմանն և չարաշահման բացառմանը:

**Ոչ ֆորմալ տնտեսություն** – իրավական դաշտում գտնվող ընկերությունների այնպիսի գործունեություն, որն ամբողջությամբ չի համապատասխանում հարկերի, աշխատուժի կամ ապրանքի շուկաների վրաբերյալ կանոնակարգերին:

**Ոսկե բաժնետոմս** – կորպորացիայում կամ ձեռնարկատիրական գործունեության այլ սուբյեկտում բաժնետոմսի այնպիսի տարատեսակ, որն սեփականատիրոջը լիազորում է հատուկ իրավունքներով: Վերջիններս սովորաբար գերազանցում են դրա սեփականատիրոջ մասնաբաժնով կամ կառավարման մարմնում ներկայացմամբ պայմանավորված իրավունքները:

**Պակտա սունտ սերվանդա** - իրավունքի նորմերում օգտագործվող սկզբունք, որն ենթադրում է կողմերի պայմանագրային պարտավորությունների աներկբա կատարում:

**Պայմանագրային ազատություն** – իրավական սզբունք, համաձայն որի յուրաքանչյուրն իր սեփական կամքով ազատ է պայմանագիր կնքելու, դրա ձևի և մյուս կողմի ընտրության որոշում կայացնելու:

**Պատենտ** - գյուտի սեփականատիրոջը կառավարության կողմից շնորհվող իրավունք, որն սահմանափակ ժամկետի ընթացքում հնարավորություն է ընձեռնում բացառել այլոց կողմից գյուտի օգտագործումը, ներմուծումը կամ վաճառքը:

**Պետական մասնակցությամբ ընկերություն** – ձեռնարկատիրական գործունեության միավոր, որի բաժնեմասի մեծամասնությունը ուղղակի կամ անուղղակի ձևով տիրապետվում է պետության կամ դրա ցանկացած գործակալության կողմից:

**Սահմանափակում** - դատական ցուցում, որը ստիպում է կողմին իրականացնել կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների իրականացումից:

**Սայբերսքուոթեր** – հայտնի առևտրային նշանը որպես դոմենային անուն գրանցող անհատ՝ հետագայում առևտրային նշանի սեփականատիրոջը դոմենային անվան վերավաճառքի ճանապարհով շահույթի ստացում ակնկալիքով:

**Սեփականաշնորհում** - ակտիվների (հատկապես պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների) իրավական փոխանցումը պետականից մասնավոր սեփականության:

**Սերվիտուտ** - անձի իրավունքը այլ անձանց պատկանող գույքի նկատմամբ:

**Սերտիֆիկացված առևտրային նշան** - առևտրային նշան որը 'հավաստագրում է' ապրանքների կամ ծառայությունների համապատասխանությունը որոշակի չափանիշների (ստանդարտների) կամ որակների կամ չափանիշների առկայությունը:

**Սկզբնական կառուցապատում** – նախկինում քաղաքաշինական աշխատանքների չենթարկված հողի վրա կառուցապատման աշխատանքների իրականացում:

**Սնանկություն** – օրենքով սահմանված կարգով պարտատիրոջ նկատմամբ պարտապանի անվճարունակության ճանաչումը:

**Փոխանցում** (կապիտալի) – օտարերկրյա ներդրողի կողմից ներդրման իրականացման երկրից կապիտալի փոխանցում դեպի իր հայրենիք:

**Փողերի լվացում** – կրիմինալ գործողություններից (ինչպիսիք են թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, մաքսանենգությունը, հափշտակումն ու յուրացումը, կաշառակերությունը, հարկերից խուսափումը, և կազմակերպված հանցագործությունը) ստացված հասույթների փոխարկման գործողություններն լեգիտիմ միջոցների կամ գույքի:

**Փոքր և միջին ձեռնարկություններ (ՓՄՁ-ներ)** – չափի և տեսակի որոշակի սահմանաչափերին (ինչպիսիք են աշխատողների թվաքանակը, հասույթի և/կամ ակտիվների ծավալը) համապատասխանող ընկերություններ:

**Օգտակար մոդել** – սարքավորումների, գործիքների, արդյունաբերական արտադրանքի կամ դրանց մի մասի նոր մոդելի նկատմամբ կիրառվող հեղինակային իրավունք: Օգտակար մոդելները պաշտպանող օրենքները սովորաբար չեն պահանջում գյուտարարության նույնանման բարձրագույն մակարդակ, որն պահանջվում է պատենտի տրամադրման համար:

**Օտարում** – կառավարության կողմից իրականացվող միջոցառում, որի ընթացքում այն սեփականատիրոջից օտարում է բիզնեսը կամ այլ գույքը:

**Օրենքի գերակայություն** – իրավական դաշտի բնութագիր համաձայն որի օրենքը նախատեսում է հստակ սահմանափակումներ պետության և կառավարող վերնախավի առանձին անդամների համար: Օրենքի գերակայությամբ կառավարվող երկրում բոլոր քաղաքացիներն և պետությունը հավասարազոր են օրենքի առջև:

**Ֆիքսված գույք** – շենքեր, շինություններ և գույքային այնպիսի համալիրներ, որոնք ամրակցված լինելով հողին չեն կարող առանձնացվել առանց նշանակալից վնասի պատճառման:

**Ֆրենչայզինգ** - ֆրենչայզառուի (սովորաբար փոքր բիզնես) և ֆրենչայզատուի (սովորաբար խոշոր բիզնես) միջև այնպիսի գործարար հարաբերություններ, որոնց պարագայում առաջինը պարտավորվում է արտադրել ապրանքներ կամ մատուցել ծառայություններ երկրորդի կողմից մշակված «բիզնեսի մոդելին» համապատասխան: Ֆրենչայզառուն սովորաբար լիցենզավորվում է ֆրենչայզատուի առևտրային նշանի օգտագործման նպատակով, և հաճախ մատակարարումները գնում է ֆրենչայզատուից:

# Հապավումների ցանկ

| | |
|---|---|
| **ԱԱԿ** | Անդրազգային կորպորացիա |
| **ԱԲՌ** | Առավել բարենպաստության ռեժիմ |
| **ԱՀԿ** | Առևտրի համաշխարհային կազմակերպություն |
| **ԱՊՀ** | Անկախ պետությունների համագործակցություն |
| **ԲԱԸ** | Բազմազգային ընկերություն |
| **ԲԱԿ** | Բազմազգային կորպորացիա |
| **ԲԹՄ** | Բաժնետոմսերի թողարկմամբ մասնավորեցում |
| **ԲՆԵԳ** | Բազմակողմանի ներդրումների երաշխավորման գործակալություն |
| **ԴԲՀԾ** | Դոյչե բանկի հետազոտական ծառայություն |
| **ԵՁԾ** | Երիտասարդական ձեռնարկատիրության ծառայություն |
| **ԵՆԲ** | Եվրոպական ներդրումային բանկ |
| **ԷԱԳ** | Էգեյան ազատ գոտի |
| **ԻԿԿ** | Ինքնակարգավորվող կազմակերպություն |
| **ԿԱԳ** | Կարգավորիչ ազդեցության գնահատում |
| **ԿԸՑ** | Կաշառակերության ընկալման ցուցանիշ |
| **ԿՍՊ** | Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն |
| **ՀՄՀ** | Հանրային-մասնավոր համագործակցություն |
| **ՀՏԳ** | Հատուկ տնտեսական գոտի |
| **ՄԱԱՋԿ** | Միավորված ազգերի Արդյունաբերական զարգացման կազմակերպություն |
| **ՄԱԱՋՀ** | Միավորված ազգերի Առևտրի և զարգացման համաժողով |
| **ՄԱԹՀԳ** | Միավորված ազգերի Թմրադեղերի և հանցագործության գրասենյակ |
| **ՄԱՄԱԻՀ** | Միավորված ազգերի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողով |
| **ՄիՖԿ** | Միկրոֆինանսավորող կազմակերպություն |
| **ՄՆՄՀԳ** | Միացյալ նահանգների Միջազգային համագործակցության գործակալություն |
| **ՄՍԻ** | Մտավոր սեփականության իրավունք |
| **ՄՖԿ** | Միջազգային ֆինանսական կորպորացիա |
| **ՆՀՀ** | Նախկին Հարավսլավիայի հանրապետություն |
| **ՆՔՇ** | (ՏՀԶԿ-ի) Ներդրումային քաղաքականության շրջանակ |
| **ՊԳՀ** | Պետական գնումների մասին համաձայնագիր (ԱՀԿ) |
| **ՊՄԸ** | Պետական մասնակցությամբ ընկերություն |
| **ՍՆԲ** | Սկանդինավյան ներդրումային բանկ |
| **ՎԶԵԲ** | Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ |
| **ՏՀԶԿ** | Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն |
| **ՓՄՁ** | Փոքր և միջին ձեռնարկություն |
| **ՕՆԽԾ** | Օտարերկրյա ներդրումների խորհրդատվական ծառայություն |
| **ՕՈՒՆ** | Օտարերկրյա ուղղակի ներդրում |